Ամէն բան, որ յայտնի է լինում, լոյս է

# Վասն ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003
*(ԲՈՒՆ ՀԱՅՈՑ ՏՐԷ և ՔԱՂՈՑ 4496 ԱՄԻ)*

11,12 (47,48)

WHATSOVER DOTH MAKE MANIFEST IS LIGHT

# FOR THE SAKE OF JUSTICE

NOVEMBER, DECEMBER 2003

## ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Միավորված ազգերի կազմակերպության հանրային տեղեկատվության վարչություն ........ 4

ՊՈՂՈՍՅԱՆ Վ. Մարդու իրավունքները՝ լեզվաքաղաքական հիմնախնդիրների լուծման միջոց ........ 6

ՄԱՆՈՒԿՅԱՆ Գ. Մարդու իրավունքների կրթությունը՝ որպես Մարդու իրավունքների ապահովման ուղիղ ճանապարհ (թեզիսներ) . 9

ՄԱՆՈՒԿՅԱՆ Մ., ԲՐՈՒՏՅԱՆ Վ. Սոցիալ-բացասական վարքագծով անչափահասների հետ աշխատանքի մանկավարժական հիմնախնդիրները ........ 12

ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Էկոդաստիարակությունը՝ էկոքաղաքականության մաս ........ 18

ՍԱՆԱՍԱՐՅԱՆ Հ. Ջուրը բնակչության թվի «կարգավորման» լծա՞կ (ՀՀ ջրային նոր օրենսգիրքը հակասում է նաև ՄԱԿ-ի կոնվենցիային) ........ 21

ԴԵՐՁՅԱՆ Հ. Դպրոցականների էկոլոգիական-իրավական դաստիարակության իրականացումը բնագիտական առարկաների դասավանդման ընթացքում ........ 31

ԴԱՐԲԻՆՅԱՆ Հ., ՍԻՄՈՆՅԱՆ Ս. Քաղաքական գլոբալիզացիա ........ 33

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ա. Տեխնոլոգիական արդիականացումը համակարգափոխության պայմաններում ........ 44

ԳԱԼՍՏՅԱՆ Խ. Բանակցային գործընթացների ազդեցությունը ՀՀ քաղաքական կյանքի վրա (Ղարաբաղյան հակամարտության կարգավորման օրինակով) ........ 51

АЛИХАНЯН М: Технологии создания имиджа политического деятеля ........ 60

## IN THE ISSUE

Unated Nations Organization Department of Public Information ........ 4

V. POGHOSIAN. ”Human Rights as a Solution of Lingual-Political Problems” ........ 6

G. MANOUKIAN. “The Human Rights Education – as a Direct Way for the Human Rights Promotion” (thesises) ........ 9

M. MANOUKYAN, V. BRUTYAN. “Pedagogical Questions of Work With Teen-Agers Having Abnormal Behavior” ........ 12

A. SAHAKIAN. “Ecoeducation Part of Eco-politics” ........ 18

H. SANASARYAN. “Water as a Source of Influence for “Regulating” the Number of Population? (The New Water Code of the RA also Contradicts the Convention of the United Nations)” ........ 21

H. DERDZYAN. “The Realization of School-Children’s Ecological-Legal Educational Aspect in the Process of Teaching Natural Subjects” .. 31

H. DARBINYAN, S. SIMONYAN. “Political Globalization” ........ 33

A. MARGARYAN. “Technological Modernization During Systemic Change” ........ 44

KH. GALSTYAN. “Influence of Negotiating Processes on Political Life of RA (By the Example of Regulation of the Karabachos Conflict)” ........ 51

M. ALIKHANYAN. “Technologies of Creation of Image of Politician” ........ 60

ԱՍԼԱՆՅԱՆ Ս. Վաղեմության ժամկետի կամ էստոպելի կիրառման անթույլատրելիությունը Մոսկվայի և Կարսի պայմանագրերի առնչությամբ ........ 68

ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության Նժդեհյան ըմբռնումը ........ 71

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Հ. Հայոց ազգային գաղափարախոսության հարցի շուրջ ........ 80

ԶԱՔԱՐՅԱՆ Ս. «Հայկական վերածնության» տեսության որոշ մեթոդաբանական հիմնադրույթների վերլուծություն ........ 88

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ Է. Դատողության և նախադասության հարաբերակցությունը ճանաչողական-հաղորդակցական գործունեության մեջ ........ 97

ԵՐԻՑՅԱՆ Ս. «Կրթակարգը դպրոցի սահմանադրությունն է» (Ի. ՀԱԿՈԲՅԱՆԻ հարցազրույցը) ........ 102

ՃՈՒՂՈՒՐՅԱՆ Ա. Բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչների մասին ........ 106

ԴԱՎԹՅԱՆ Ն. Վճարովի կրթության մասին .. 113

МУСИНЯН Р: Деловые и личные конфликты учителя со школьниками и особенности их преодоления ........ 118

ԱՍԱՏՐՅԱՆ Լ. Դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի ձևավորման մեր փորձից ........ 124

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Ա. ՀՀ ապահովագրական համակարգի բնութագիրը ........ 128

ԹԱՌՈՅԱՆ Մ. Արդարության խորհուրդը «Գիրք սաղմոսաց»-ում ........ 130

ՄԻՆԱՍՅԱՆ Ս. Ինչպիսի՞ն ենք ուզում տեսնել այսօրվա դպրոցը (անգլերեն) ........ 134

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. Արդիականացվող հասարակությունը. Հայաստանի ինքնաբարեփոխման հեռանկարները (գրախոսություն) . 136

«Վասն արդարութեան» հանդեսի՝ 2003 թ. լույս տեսած համարների նյութերի ցանկեր ........ 138



S. ASLANYAN. ”Non-Allowance of the Application of Validity Period and Estoppel Regarding the Moscow and Kars Treaties” ........ 68

A. SARGSYAN. “Garegin Nzhdeh About the Correlation of Politics and Moral” ........ 71

H. MANOUCHARYAN. “On Armenian National Ideology Issue” ........ 80

S. ZAQARYAN. “Analysis of Some Methodological Directions Concepts of “ The Armenian Renaissance” ” ........ 88

E. ALAVERDYAN. “Correlation of Proposition and Suggestion in the Structure of Cognitive-Communication Activities” ........ 97

S. ERITSYAN. “Curriculum of School is the School Constitution” ........ 102

A. JUGHURYAN. “About Standards of Higher Professional Educational” ........ 106

N. DAVTYAN. “About the Paying Education” .. 113

R. MOUSINYAN. “The Teacher and the Pupils - Business and Individual Conflicts: Peculiarities of Conflict Resolution” ........ 118

L. ASATRYAN. “From Our Experience of Formation of Pupils Ecological Culture” ........ 124

A. ARZUMANYAN. “Character Reference of Insurance System of RA” ........ 128

M. TAROYAN. “Mystery of Fairness in Psalter” ........ 130

S. MINASYAN. “How Do We Want to See Our Schools Today?” ........ 134

M. HAROUTYUNYAN. “Becoming Modernized Society: Perspectives for Armenia’s Internal Reforms ” (Review) ........ 136

Lists of the Issues of the Review “For the Sake of Justice” Published in 2003 ........ 138

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը և «Վասն արդարութեան» հանդեսի խմբագրությունը իրենց երախտագիտությունն են հայտնում CORDAID կազմակերպությանը (Նիդերլանդներ)՝ հանդեսի հրատարակությունը հովանավորելու համար:

*The Armenian Constitutional Right-Protective Centre and the editorial staff of the review “For the Sake of Justice” announce their gratitude to the* ***Catholic Organization for Relief and Development*** *(The Netherlands) for sponsoring the review publication.*

## ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

### Հոդվածների ընդունման կար · ը

«Վասն արդարութեան» հանդեսում տպագրության համար ներկայացվող գիտական հոդվածները պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին ու չափանիշներին՝

1. խմբագրությանը հանձնվում են էլ. փոստի միջոցով կամ պնակիտով (դիսկետով).
2. ունենում են համապատասխան ամփոփումներ (անգլերեն, ռուսերեն, հայերեն լեզուներից որևէ երկուսով՝ կախված այն բանից, թե հոդվածն ինչ լեզվով է).
3. պարունակում են գրականության ցանկ.
4. բովանդակում են անհրաժեշտ հղում-ծանոթագրություններ.
5. խմբագրությանն են ներկայացվում՝ հնարավորինս զերծ համակարգչային մուտքագրման սխալներից.
6. ռուսերեն հոդվածները համակարգիչ մուտքագրված են լինում ռուսական տառատեսակով (font) (չօգտագործել Times New Roman, Arial, Courier և այլ բազմալեզու տառատեսակներ).
7. գրաֆիկական ֆայլերն ունենում են նվազագույնը 300 dpi կետային խտություն.
8. և տառը ներկայացվում է մեկ գրանիշով՝ և (եւ-ի փոխարեն):

### Հոդվածների ընտրության կար · ը

«Վասն արդարութեան» հանդեսի խմբագրությունում ստացված հոդվածների նախնական ընտրությունը կատարում է հանդեսի գլխավոր խմբագիրը, որից հետո հոդվածը հնարավոր միջոցներով ուղարկվում է հանդեսի գիտական խմբագրական խորհրդի համապատասխան անդամ(ներ)ին՝ գրախոսության:

Տպագրվում են դրական գրախոսության արժանացած հոդվածները:

Գրախոսության համար խմբագրությունը կարող է դիմել նաև այլ՝ ոչ խմբագրական խորհրդի անդամ գիտնական-մասնագետի: Ընդունելի են նաև հոդվածի հեղինակի ուղարկած՝ իր հոդվածին վերաբերող գրախոսություններ, եթե վերջիններիս հեղինակը գիտությունների դոկտոր է:

Գիտությունների դոկտորների հոդվածները կարող են նաև չգրախոսվել:

Տպագրության նախատեսված հոդվածները, հեղինակների հետ նախապես համաձայնեցնելով, խմբագրվում են: Խմբագրված վերջնական տարբերակի՝ իր կողմից ընդունելի լինելը հավաստում է հոդվածի հեղինակը:

Չտպագրված հոդվածի հեղինակը ցանկության դեպքում իր միջոցներով ետ է ստանում հոդվածի պնակիտը:

### Հոնորարի վճարումը

«Վասն արդարութեան» հանդեսում տպագրվող հոդվածների համար վճարվում է հոնորար: Վճարումը կատարվում է ըստ նիշաթվի: Նիշահաշվարկը կատարվում է համակարգչով: Յանդեսում տպագրվող հոդվածներն ըստ բնույթի լինում են գիտական և տեղեկատվական-վերլուծական, որոնց հոնորարների հաշվարկը կատարվում է տարբեր նիշ-արժեքով (բարձր արժեքով են հաշվարկվում գիտական հոդվածների հոնորարները): Յոնորարները վճարվում են հանդեսի լույս ընծայման հաջորդ շաբաթվա ընթացքում, առձեռն կամ փոխանցումով: Փոստային փոխանցումներ կատարելու համար ցանկալի է, որ հոդվածի հետ հեղինակն էլ. փոստով հաղորդի իր անձնագրային տվյալները (սերիան, համարը, տրման ժամանակը, ում կողմից տրված լինելը, ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարին: Դրամատներում անձնական հաշվեհամար ունենալու դեպքում՝ հեղինակը հաղորդում է միայն հաշվեհամարը):

# ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ*

Միավորված ազգերի կազմակերպության Հանրային տեղեկատվության վարչությունը (ՀՏՎ) մասնագիտացված գործակալություն չէ: Այն ՄԱԿ-ի քարտուղարության վարչություններից ու գրասենյակներից է եւ միջազգային հանրությանը տեղեկացնում է ՄԱԿ-ի գործունեության ու նպատակների մասին: Վարչության հիմնական խնդիրը ՄԱԿ-ի նպատակների վերաբերյալ ճիշտ ըմբռնման ձեւավորումն է: Այն ՄԱԿ-ի համակարգի բարդ աշխատանքը հանրությանն է հասցնում բազմաթիվ տեղեկատվական ձեռնարկումների եւ քարոզարշավների, ինչպես նաեւ ՄԱԿ-ի վեբ հանգրվանի, ռադիոյի եւ հեռուստատեսության, մամլո հաղորդագրությունների, հրատարակությունների, վավերագրական ֆիլմերի, հատուկ միջոցառումների, հանրային ուղեպտույտների եւ գրադարանային նյութերի միջոցով: ՀՏՎ-ն աշխարհում ունի 70 տեղեկատվական կենտրոններ ու ծառայություններ եւ ՄԱԿ-ի ութ տեղեկատվական գրասենյակներ:

ՄԱԿ-ի վերջին տարիների բարեփոխումների ընթացքում վարչությունը նույնպես նոր առաքելություն է որդեգրել, այն է՝ նպաստել ՄԱԿ-ի հիմնական նպատակների իրականացմանը՝ հանրությանը հաղորդակից դարձնելով ՄԱԿ-ի խնդիրներին ու գործունեությանը:

1992թ. Գլխավոր քարտուղարը լիազորեց ՄԱԿ-ի ՀՏՎ-ին եւ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրին (ՄԱԶԾ)՝ հիմնել ՄԱԿ-ի միջանկյալ գրասենյակ Հայաստանում եւ նախկին Խորհրդային Միության մի քանի այլ նորանկախ պետություններում: Այդպիսով՝ 1992թ. Հայաստանի՝ ՄԱԿ-ի անդամ դառնալուց անմիջապես հետո, ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչությունը, սերտորեն համագործակցելով ՄԱԶԾ-ի հետ, ՄԱԿ-ի միջանկյալ գրասենյակի բացման առաջին փուլում իր աշխատանքներն սկսեց Հայաստանում:

Վարչության հիմնական գործունեությունն ու հրամայականները պայմանավորված են հանրային տեղեկատվության տարածմամբ. որպես Քարտուղարության մաս՝ ՀՏՎ-ն Հայաստանում ՄԱԿ-ի համակարգի մասին հանրային տեղեկատվության հիմնական աղբյուրն է: ՀՏՎ-ն՝ որպես կապող օղակ կազմակերպության եւ տեղական լրատվամիջոցների, կրթական հաստատությունների եւ ոչ կառավարական կազմակերպությունների միջեւ, քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մարդասիրական ոլորտներում ՄԱԿ-ի գործունեության եւ նպատակների մասին տեղեկատվական թարմ նյութեր է տրամադրում հանրության տարբեր շերտերին: Թարգմանում է կենտրոնական գրասենյակից ստացված հրատարակությունները, պետական լեզվով պատրաստում տեղեկատվական նյութեր եւ մամլո հաղորդագրություններ՝ արդյունավետ աշխատանքային հարաբերություններ հաստատելով եւ օգտակար տեղեկատվություն մատուցելով տեղական լրատվամիջոցներին, ՈԿԿ-ներին, ակադեմիական, ուսումնական եւ կառավարական հաստատություններին: Տեղեկատվության տարածումից բացի՝ ՀՏՎ-ն, մասնավորապես Գլխավոր քարտուղարի եւ ՄԱԿ-ի այլ բարձրաստիճան պաշտոնյաների՝ տարածաշրջան այցելությունների ժամանակ, կարեւոր ներկայացուցչական գործառույթ է կատարում: **Սակայն նրա · ործունեության հիմնական նպատակը ճիշտ ժամանակին ճիշտ տեղեկատվությունը հանրությանը ճիշտ հասցնելն է:**

## ԵՐԿԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ն**որ տեխնոլոգիաների ներկայիս դարում տպագիր արտադրանքը դեռեւս առաջնահերթ տեղ է գրավում Հայաստանում: Ուստի ՀՏՎ-ն հայերեն է թարգմանել եւ տպագրել մի շարք հրատարակություններ, որոնք ընդհանուր համապարփակ տեղեկատվություն են տալիս առհասարակ ՄԱԿ-ի եւ մասնավորապես ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի վերաբերյալ: Ամեն ջանք գործադրվում է կենտրոնական գրասենյակից ստացվող հրատարակությունների որակյալ թարգմանությունն ապահովելու համար՝ դրանով աջակցելով հայերեն համապատասխան տերմինաբանության մշակմանը: Կարեւոր խնդիր է նաեւ այդ նյութերի ժամանակին եւ ճիշտ բաշխումը:

«**ՄԱԿ-ի լրատուն**» հայերեն եւ անգլերեն համատեղ կանոնավոր լույս տեսնող դեռեւս միակ պարբերականն է: ՀՏՎ-ն ստանձնել է լրատուի նախապատրաստումը եւ հրատարակությունը համակարգելու պարտավորությունը, իսկ երկրում գործող ՄԱԿ-ի գործակալությունները՝ նյութերի եւ լուսանկարների տրամադրումը: Մինչեւ այժմ լույս է տեսել պարբերականի 17 համար:

Հայաստանում գործունեություն ծավալելու ընթացքում ՀՏՎ-ի գործադրած ջանքերի ամենանշանակալից արգասիքներից մեկը «**Հիմնական փաստեր ՄԱԿ-ի մասին**» գրքի հայերեն հրատարակությունն է: Գրքի պատրաստման եւ հրատարակության խնդրում ՀՏՎ-ն սերտորեն համագործակցել է ՀՀ ԱԳՆ-ի հետ: Հրատարակությունը որպես տեղեկատու աղբյուր է ծառայում հասարակության տարբեր շերտերի ու խմբերի, այդ թվում՝ կառավարության, ուսանողների, ուսուցիչների, լրատվամիջոցների, կրթական հանրության, հասարակական կազմակերպությունների եւ բնակչության լայն շրջանների համար:

Հրատարակվել է նաեւ **մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերի մի ամբողջ փաթեթ** (2001թ.), որոնց թարգմանությունն իրականացվել է

* Տպագրվում է ««Միավորված ազգերի կազմակերպությունը» Հայաստանում» գրքից (Երևան, 2003 թ.):

ՅՏՎ-ի աշխատակազմի եւ Միջազգային իրավունքի հայկական ասոցիացիայի ուժերով: Նշված փաստաթղթերի հայերեն հրատարակությունների մեծ պահանջարկի թելադրանքով փաթեթը վերահրատարակվեց (2003թ.):

Յրատարակվել են նաեւ մի շարք հայերեն պաստառներ, որոնք նպաստում են ՅՏՎ-ի նպատակների եւ մանդատի իրականացմանը: «**Մարդու իրավունքների համընդհանուր հռչակա · իրը**», «**ՄԱԿ-ի համակար · ը**», «**ՄԱԿ-ի անդամ պետությունների դրոշները**» եւ այլ պատկերազարդ պաստառներ գրավում են հասարակության ուշադրությունը եւ արդյունավետ միջոց են ՄԱԿ-ի մասին տեղեկատվությունը հասարակության լայն խավերին հասցնելու համար:

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ

**ՀՏՎ**-ի պատրաստած նյութերից ամենից շատ օգտվում են զանգվածային լրատվամիջոցները: Լրատվական գործակալությունների, թերթերի, ռադիոյի եւ հեռուստակայանների լրագրողները մշտական կապի մեջ են ՅՏՎ-ի հետ՝ պահանջելով թարմ տեղեկատվություն ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի միջոցառումների մասին: ՄԱԿ-ի գործակալությունների կողմից կազմակերպվում են մամլո ասուլիսներ լրատվամիջոցներին ՄԱԿ-ի՝ երկրում իրականացվող նախագծերին ծանոթացնելու կամ տեղի հասարակությանը հետաքրքրող զեկույցները եւ ուսումնասիրությունները ներկայացնելու նպատակով: Պարբերաբար պատրաստվում եւ լրատվամիջոցներին են առաքվում նաեւ մամլո հաղորդագրություններ, ինչպես նաեւ Գլխավոր քարտուղարի ուղերձները: Այս ամբողջ տեղեկատվությունը տեղադրվում է նաեւ ՅՏՎ-ի ինտերնետային էջում՝ ապահովելով դրա էլեկտրոնային մատչելիությունը:

Լրագրողները մասնակցում են ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կազմակերպած թեմատիկ ուսուցողական դասընթացներին: ՅՏՎ-ն էական դեր է կատարում այդ դասընթացների կազմակերպման եւ մասնակիցների ընտրության հարցում: Լրագրողներին ՄԱԿ-ի մասին համակողմանիորեն եւ խորությամբ տեղեկացնելու մի այլ հնարավորություն են ընձեռում ՅՏՎ-ի կողմից կենտրոնական գրասենյակում կազմակերպվող դասընթացները լրագրողների համար:

## ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԿ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀՏՎ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

**ՀՏՎ**-ի կառավարական գործընկերը, ըստ նրա տեղեկատվական մանդատի, Յայաստանում արտաքին գործերի նախարարության համապատասխան վարչություններն են, միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպությունները, օրինակ՝ ԵԱՅԿ-ն եւ Եվրոպայի խորհուրդը, ինչպես նաեւ միջազգային ՈԿԿ-ներ, որոնք ՅՏՎ-ի հետ համատեղ կազմակերպում են տարբեր տեղեկատվական միջոցառումներ եւ քարոզարշավներ:

Յանրությանը ՄԱԿ-ի մասին ընդհանուր պատկերացում տալու համար ՅՏՎ-ն՝ որպես հիմնական տեղեկատվական բաժին, սերտորեն համագործակցում է Յայաստանում ՄԱԿ-ի ներկայացուցչությունների հետ: Վարչությունը նախագծում եւ համակարգում է առաջնահերթ խնդիրների եւ հատուկ իրադարձությունների վերաբերյալ ՄԱԿ-ի տեղեկատվական միջոցառումները՝ այդպիսով ներդաշնակեցնելով երկրում ՄԱԿ-ի մասնագիտացած գործակալությունների տեղեկատվական եւ հանրային իրազեկության արշավները: ՄԱԿ-ի ՅՏՎ-ն ակտիվորեն մասնակցում է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի եւ գենդերային խնդիրների շուրջ ՄԱԿ-ի գրասենյակում կազմակերպվող թեմատիկ խմբերի աշխատանքներին:

## ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

**Ք**անի որ մարդու իրավունքները շարունակում են մնալ ՄԱԿ-ի կարեւորագույն թեման, ՅՏՎ-ի կենտրոնական գրասենյակը հատուկ կոչ է արել իր ճյուղային գրասենյակներին՝ կրկնապատկել ջանքերը մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի կատարած մեծածավալ աշխատանքի մասին հանրության իրազեկությունը բարձրացնելու գործում: Ուստի մարդու իրավունքների մասին հիմնական պայմանագրերի ու համապատասխան պայմանագրային մարմնի աշխատանքի հրապարակումը ՅՏՎ-ի մանդատային առաջնահերթությունն է: ՅՏՎ-ին հանձնարարված է վերլուծել երկրների ազգային զեկույցները, բարձրացնել ընդհանուր հասարակության իրազեկությունը համապատասխան մարմինների կողմից այդ զեկույցների վերաբերյալ ներկայացված եզրափակիչ դիտողությունների, ընդհանուր մեկնաբանությունների եւ հանձնարարականների մասին:

Վարչության կարեւոր խնդիրներից է հաղորդակցումը երիտասարդների հետ եւ նրանց ուսուցումը ՄԱԿ-ի ու մարդու իրավունքների մասին: Այսպես, ՅՏՎ-ն, Մարդու իրավունքների տասնամյակի առիթով կազմակերպում է կանոնավոր ուսուցողական դասընթացներ ուսուցիչների եւ դպրոցականների համար: Վերջին 3 տարիների ընթացքում Յայաստանի տարբեր մարզերի մոտ 1500 ուսուցիչներ եւ նույնքան մարդու իրավունքներ եւ քաղաքացիական կրթություն առարկան ուսումնասիրվող աշակերտներ եւ ուսանողներ են այցելել ՅՏՎ: Այդ նպատակով ավելի ու ավելի է սերտանում համագործակցությունը Յայաստանի **«Պատանեկան նվաճումներ»** ՈԿԿ-ի, երկրում ՄԱԿ-ի ներկայացուցչությունների, ԵԱՅԿ-ի երեւանյան գրասենյակի եւ բազմաթիվ տեղական գործընկեր ՈԿԿ-ների հետ: Այդ դասընթացների ընթացքում տարածվել են ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակի եւ տեղական նյութերի մեծ թվով հրատարակություններ:

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՈՑ

***ՎԱԼԵՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ***
*Փիլիսոփայական գիտությունների դոկտոր*

Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների մասին Եվրոպական խարտիան անմիջականորեն վերաբերում է մարդու իրավունքներին, եւ դրա դրույթները պետք է քննարկել մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական եւ ազգային օրենսդրության համատեքստում: Եվրոպական խարտիան, ինչպես նշվում է այդ փաստաթղթի ներածությունում, ըստ էության կազմված է Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի եւ մի շարք այլ փաստաթղթերի ոգով եւ դրանց կոնկրետացումն է: Բոլոր այդ փաստաթղթերի նպատակն է՝ ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը, իսկ Եվրոպական խարտիայի հիմնական նպատակն է՝ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները ճանաչել որպես մշակութային հարստության արտահայտման միջոց: Եվ այս առումով յուրաքանչյուր պետություն, վավերացնելով Եվրոպական խարտիան, պարտավորվում է նրա դրույթները կիրառել իր տարածքում, այսինքն՝ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները դիտում է որպես իր ժողովրդի մշակութային հարստության անբաժանելի մաս:

Այս տեսակետից չափազանց կարեւոր ենք համարում, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Եվրոպական խարտիան, այսինքն՝ այլ մշակույթների եւ այլ լեզուների առկայությունը համարում է մեր մշակութային հարստությունը: Այս հանգամանքն ինքնին հասկանալի եւ ընդունելի է այնքանով, որքանով հանրահայտ է մշակույթների փոխհարստացման կարեւորությունը յուրաքանչյուր մշակույթի համար, եւ մերժելի է մշակութային զավթողականությունը: Այսպիսի մոտեցումն այլ մշակույթներին ու լեզուներին նպաստում է ոչ միայն ազգային մշակույթի, այլեւ առհասարակ ազգի ե՛ւ քաղաքական, ե՛ւ տնտեսական զարգացմանը:

Եվրոպական խարտիայի վավերացումով այս կարեւոր հարցը քաղաքական, մշակութային հարթությունից տեղափոխվում է նաեւ իրավական հարթություն: Այս հանգամանքն իր հերթին նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է որոշակի միջազգային պարտավորություններ, որոնց բարեխիղճ կատարումը յուրաքանչյուր պետության պարտականությունն է: Ավելացնենք նաեւ, որ Հայաստանի Հանրապետությունն ունի նաեւ ներքին պարտավորություն, որը սահմանված է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով. «Ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիները ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի եւ մշակույթի զարգացման իրավունք»:

Այսպիսով՝ միանգամայն պարզ է, թե պետությունն ազգային օրենսդրությամբ եւ միջազգային իրավունքով ստանձնած պարտավորություններով ինչ հիմնական անելիքներ ունի այս բնագավառում: Այս տեսակետից ցանկանում ենք նշել, որ Հայաստանում երբեւէ ականատես չենք եղել, եւ մեզ հայտնի չէ այնպիսի դեպք, երբ ազգային պատկանելության պատճառով որեւէ անձի կամ նրա լեզվի նկատմամբ դրսեւորված լինի խտրականություն: Առանձին դեպքերում, երբ նկատվել են որոշակի բացասական դրսեւորումներ այս կամ այն լեզվի (ասենք՝ ռուսերենի) վերաբերմամբ, դա փաստորեն ուղղված է եղել ոչ թե մշակույթը կամ լեզուն կրողների դեմ, այլ մետրոպոլիայի որոշակի մշակութային զավթողական քաղաքականության, այդ քաղաքականության հայ կողմնակիցների դեմ եւ ավելի շուտ ունեցել է ինքնագիտակցության բարձրացման խնդիր: Այդ երեւույթը, դժբախտաբար, դրսեւորվում է սովորաբար որոշակի ծայրահեղականությամբ եւ միակողմանիությամբ:

Ընդհանուր առմամբ, կարծում ենք՝ բոլորն էլ (այդ թվում՝ նաեւ Հայաստանում ապրող փոքրամասնությունների ներկայացուցիչները) կհամաձայնեն, որ մեզանում երբեւէ չի եղել, եւ կցանկանայինք, որ ապագայում էլ չլինի թեկուզ չնչին խտրականություն որեւէ մշակույթի կամ լեզվի կրողների նկատմամբ՝ անկախ այն բանից՝ նրանք մեր քաղաքացիներն են, թե օտարերկրացիներ:

Մի փոքր անդրադարձ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, որը մի շարք ընդդիմախոսների կարծիքով հակասության մեջ է Եվրոպական խարտիայի հետ եւ խոչընդոտում է փոքրամասնությունների ազգային լեզուների զարգացմանը: Այս առնչությամբ կկամենայինք ընդգծել. մեր համոզմամբ՝ սկզբունքային որեւէ հակասություն չկա: Ընդհակառակը. անաչառ լինելու դեպքում պետք է ընդունել, որ Եվրոպական խարտիան չի վերաբերում պաշտոնական լեզվի եւ փոքրամասնությունների լեզուների փոխհարաբերությանը մրցակցության տեսանկյունից: Ավելի ստույգ՝ Եվրոպական խարտիան միտումնավոր ոդեգրել է մշակույթների փոխազդեցության, փոխհարստացման եւ բազմալեզվության մոտեցումը, որտեղ յուրաքանչյուր լեզու ունի իր ուրույն տեղը: Այս մոտեցումը լիակատար կերպով համապատասխանում է Եվրոպայի խորհրդի որդեգրած արժեքներին,

բնակչության տարբեր խմբերի միջեւ ավելի խոր փոխըմբռնում ստեղծելու նրա ջանքերին: Հակասություն չկա առաջին հերթին այն իմաստով, որ օրենքը որեւէ մեկին չի արգելում օգտագործել կամ սովորել այն լեզուն, որն ինքը կամենում է: Ինչ վերաբերում է հայերենի՝ որպես պետական կամ պաշտոնական լեզվի պարտադիր լինելուն կրթական հաստատություններում եւ պետական մարմինների գործավարություններում, կարծում ենք, դա բնական է եւ ընդունված է բոլոր քաղաքակիրթ պետություններում:

Անտարակույս, հասկանում ենք, որ այս հանգամանքն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մի մասի համար իսկապես ստեղծել է որոշակի դժվարություններ, քանի որ նրանք, մշտապես ապրելով Հայաստանում, չեն յուրացրել հայերենը, այլ բավարարվել են ռուսերենով (հաճախել են ռուսական դպրոցներ, սովորել են բուհերի ռուսական բաժիններում, գործավարությունը շատ տեղերում վարվում էր ռուսերեն, օրենքները զուգահեռ հրատարակվում էին ռուսերեն եւ այլն): Ի դեպ, այս մոտեցումը հատուկ էր ոչ միայն ազգային փոքրամասնություններին, այլեւ բազմաթիվ հայերի, որոնք բնականաբար ունեն նույն դժվարությունները, ինչ եւ ազգային փոքրամասնությունները: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ խտրականության մասին խոսելն իսկապես ավելորդ է: Ընդհակառակը, խտրականություն են դրսեւորում ազգային փոքրամասնությունների այն ներկայացուցիչները եւ այն հայերը, որոնք Հայաստանում փորձում են հաղորդակցվել ոչ թե հայերեն, այլ ռուսերեն՝ դրանով ցուցաբերելով անհարգալից վերաբերմունք պաշտոնական լեզվի նկատմամբ: Բնականաբար, խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ հաղորդակցվողները միմյանց հասկանում են ռուսերենի միջոցով:

Որքան տեղյակ ենք, այսօր փոքրամասնությունների բազմաթիվ ներկայացուցիչներ դժգոհում են ոչ թե իրենց ազգային լեզվով դպրոցների կամ դասարանների, այլ՝ ռուսական դպրոցների բացակայությունից, որը, մեղմ ասած, տարօրինակ է: Մեր պատկերացմամբ՝ բնական կլիներ, եթե նրանք իրենց երեխաներին սովորելու ուղարկեին հայկական դպրոց, որովհետեւ այդ երեխաներն ապրում են հայկական միջավայրում, եւ նրանց ձեռնտու է հայերենի իմացությունը, քանզի դրանով ձեռք են բերում լրացուցիչ հնարավորություններ՝ մեր երկրում իրենց գործունեությունը հետագայում ծավալելու և ընդլայնելու առումով: Ինչ վերաբերում է, մասնավորապես, ռուսերենին, ապա ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պետք է հայերի հետ համատեղ (եւ միասնաբար) բոլոր միջոցներով պայքարեն այդ լեզվի ուսուցման մակարդակի բարձրացման համար: Եվ ոչ միայն ռուսերենի, նաեւ այլ օտար լեզուների ուսուցման մակարդակի բարձրացման համար:

Իհարկե, շատ խնդիրների լուծումը պայմանավորված է կրթական համակարգի արդի մակարդակով, մասնավորապես՝ ռուսերենի ուսուցման մակարդակով, որը մենք կորցրինք՝ չփոխարինելով ոչնչով:

Այս մասին այսօր չենք խոսում. դա առանձին քննարկման առարկա է:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ Սահմանադրությունը եւ «Լեզվի մասին» օրենքը լիարժեք հնարավորություններ են ստեղծում ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածության համար. մասնավորապես օրենքի հոդված 1-ով դա երաշխավորվում է:

Այսինքն՝ փոքրամասնությունների լեզուների գործածության ու զարգացման համար սկզբունքային իրավական սահմանափակում գոյություն չունի: Այլ հարց է, թե ՀՀ Սահմանադրությամբ, Եվրոպական խարտիայով ստանձնած պարտավորություններն ինչպես են կատարվում: Հասկանալի է, որ պետության հնարավորություններն այս առումով բավական սուղ են, եւ պետությունը պարզապես ի վիճակի չէ այդ պարտավորություններն ամբողջ ծավալով կատարել: Իհարկե, դա ամենեւին չի նշանակում, թե պետությունը պետք է խուսափի իր պարտավորությունները կատարելուց: Այստեղ չափազանց կարեւոր է այս բնագավառում պետական ճշգրիտ քաղաքականության ե՛ւ մշակումը, ե՛ւ իրականացումը: Մասնավորապես՝ պետական քաղաքականությունը պարտավոր է մատնանշել այդ հիմնահարցերի լուծման աստիճանական ընթացքը, հիմնական միտումները, նպատակը եւ դրան հասնելու ուղիները:

Համենայն դեպս, կրթության և գիտության նախարարության վերջին նախաձեռնությունը՝ օտար լեզուն փոքր խմբերով ուսուցանելը վերացնելու առումով, չի նպաստում այդ հիմնախնդիրների լուծմանը:

Լեզվական խնդրի լուծմանը, կարծում ենք, մեծապես նպաստում է այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը մի շարք պետությունների հետ կնքել է մշակութային համագործակցության զարգացման վերաբերյալ պայմանագրեր, որոնք ունեն նաեւ անմիջականորեն լեզվի խնդիրները շոշափող դրույթներ: Նկատի ունենք այն պետությունները, որոնց պետական լեզուն համապատասխանում է մեր ազգային փոքրամասնությունների լեզուներին, այսինքն՝ Ռուսաստանը, Հունաստանը, Ուկրաինան եւ այլն, որոնց հետ կնքված համապատասխան պայմանագրերում արդեն կան այդ դրույթները: Խնդիրն այդ դրույթների գործնական կիրառումն է եւ, մյուս կողմից, պետության հետեւողական քաղաքականությունը՝ այդ հնարավորություններն ավելի իրատեսական հարթություն տեղափոխելու եւ խորացնելու առումով:

Ինչ վերաբերում է այն փոքրամասնություններին, որոնք այդպիսի հովանավոր պետություններ չունեն (ասորիները, եզդիները եւ այլն), ինչ խոսք, մեր պետության անմիջական պարտականությունն է՝ նրանց համար ստեղծել բոլոր հնարավորություններն իրենց ազգային լեզվի պահպանման ու զարգացման համար:

Ինչպես արդեն նշել ենք, լեզվական փոքրամասնությունների վերաբերյալ Եվրոպական խարտիան մարդու իրավունքների կոնկրետացումն է այդ ոլորտում, եւ այս փաստաթղթի դրույթների իրականա-

ցումն իրատեսական կարող է լինել այն դեպքերում, երբ առհասարակ առկա է մարդու իրավունքների պաշտպանության ըմբռնում, երբ բոլորը հարգում են այլոց իրավունքները եւ արժանապատվությունը, երբ հասարակության մեջ ձեւավորվում է հանդուրժողականության մթնոլորտ: Այդ մթնոլորտի չգոյության պարագայում Եվրոպական խարտիայի մասին խոսելը դառնում է անիմաստ: Իհարկե, կարելի եւ անհրաժեշտ է արդեն այսօր որոշակի քայլեր ձեռնարկել այդ բնագավառում (ասենք՝ բացել մի քանի դասարաններ), սակայն ընդհանուր առմամբ դրանք ի չիք կդառնան, եթե ապահովված չէ մարդու իրավունքների պաշտպանությունը: Ինչի նման է, եթե, ասենք, դպրոցում փոքրամասնությունների լեզվով ստեղծվել է հատուկ դասարան, բայց այդ լեզուն կրողին հետագայում աշխատանքի չեն ընդունում ոչ հայ լինելու պատճառով: Կարծում ենք՝ ավելի լավ դեպքը հակառակն է, այսինքն՝ այդպիսի դասարաններ չկան, բայց շրջապատում ոչ մեկը մարդուն ծուռ աչքով չի նայում այլ ազգի ներկայացուցիչ լինելու պատճառով: Իհարկե, կա նաեւ ավելի լավ տարբերակը. կա համընդհանուր հանդուրժողականություն, եւ ապահովված են նաեւ ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ կարող ենք հանգել մի ընդհանուր եզրակացության. ե՛ւ հայերը, ե՛ւ ոչ հայերը, որպես մեկ պետության քաղաքացիներ, պետք է պայքարեն յուրաքանչյուրի իրավունքների պաշտպանության համար, պահանջեն պետությունից եւ պաշտոնատար անձանցից՝ հարգել մարդու իրավունքները. դա Սահմանադրությամբ եւ միջազգային պայմանագրերով ամրագրված նրանց անմիջական պարտականությունն է: Այս հիմնախնդիրը կարող է լուծվել միայն այն դեպքում, եթե հանրապետության բոլոր քաղաքացիները, անկախ ազգությունից, լինեն միակամ:

---

## HUMAN RIGHTS AS A SOLUTION OF LINGUAL-POLITICAL PROBLEMS

VALERI POGHOSIAN
Doctor of Philosophy

**Summary**

The article discusses the important question closely related with human rights such as the problem of preservation and development of regional or minority languages. This issue, which is important both for the Republic of Armenia and other states, becomes urgent after Armenia ratified the European Charter for Regional or Minority Languages. The author thinks that this issue can be seriously developed only in the case of respecting human rights in Armenia in general.

The Republic of Armenia after ratifying the Charter assumed several international obligations and their fulfillment is its responsibility. Besides that the Republic of Armenia has the same obligation, which is stated by the Constitution of the Republic of Armenia (article 37). In the author's opinion presently the problem of regional and minority languages can be solved not only by the creating of Russian schools, by the absence of which national minorities are uncontented, but also by increasing the level of studying the languages in schools. Besides that Armenia must complete certain agreements with the states whose state languages is our minority languags (Russia, Greece, Ukraine and others) in order to solve some problems by this way. The Republic must itself find ways of developing those languages that are not in the same status (Yesidis, Assyrians).

## ПРАВА ЧЕЛОВЕКА КАК РЕШЕНИЕ ЯЗИЧНО-ПОЛИТИЧЕСКИХ ПРОБЛЕМ

ВАЛЕРИЙ ПОГОСЯН
Доктор философских наук

**Резюме**

В статье обсуждается вопрос прямо касающийся прав человека - сохранение и развитие региональных языков и языков меньшинств. Эта проблема очень важна как для Республики Армения, так и для других государств, и становится более неотложной в связи с тем, что Республика Армения ратифицировала Европейскую хартию о региональных языках или языках меньшинств. По мнению автора эта проблема в основном может быть серьезно развита только в том случае, когда в Республике вообще установиться уважение к правам человека.

Республика Армения, ратифицируя Европейскую хартию, приняла несколько международных обязательств, выполнение которых ее ответственность. Кроме этого Армения имеет такие же обязательства, которые закреплены Конституцией РА (статья 37). По мнению автора в настоящее время вопрос языков национальных меньшинств может быть решен не средством открытия русских школ, отсутствием которых национальные меньшинства очень не довольны, но посредством увеличения уровня обучения языков в школах. Кроме этого Армения должна заключать соответствующие соглашения с теми государствами, государственные языки которых в нашей республике языки меньшинств (Россия, Греция, Украина и другие), для того ,чтобы этим путем решить некоторые вопросы. Республика должна сама заботиться о развитии тех языков меньшинств, которые не в таком статусе (ассорийский, езидский), как другие.

**ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ**
*Իրավաբան, ՄԱԶԾ ավ ային փորձա ետ*

# ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ
(թեզիսներ)

1. Մարդկության առջև ծառացած, ահագնացող ներկա գերխնդիրները (տնտեսական անհավասարաչափ և անօգուտ աճ՝ գլոբալիզացիայի բացասական դրսևորումներով, ահաբեկչություն, պատերազմներ ու զինված բախումներ, համաճարակներ, էկոլոգիական անհավասարակշռություն և այլն) կասկած չեն թողնում, որ ժողովուրդների գերակա նպատակը դեռ երկար ժամանակ կշարունակի մնալ համընդհանուր խաղաղության և անվտանգության պահպանումը, ազգերի իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի վրա հիմնված բարեկամական հարաբերությունների զարգացումը[1]:

Բաղձալի նպատակը մոտեցնելու համար վերջին տարիներին իրականացվել են մի շարք փորձագիտական համակողմանի վերլուծություններ, և համապատասխանաբար մշակվել ծրագրային փաստաթղթեր, որոնց թվում՝ Մարդու իրավունքների համաշխարհային երկրորդ համաժողովի ընդունած Վիեննայի Հռչակագիրն ու Գործողությունների ծրագիրը (1993թ.), Հազարամյակի հռչակագիրը (2000թ.), ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի «Մարդկային զարգացումը և Մարդու իրավունքները» զեկույցը (2000թ.) և այլն:

Այս հիմնարար փաստաթղթերում իրավացիորեն կարևորված, երբեմն՝ առանցքային նշանակություն է տրված **Մարդու իրավունքների ապահովմանը**:

2. Իրավագիտության պատմությունը վկայում է, որ օրինականության պահպանման, հետևաբար՝ նաև մարդկային արժանապատվության համընդհանուր հարգանքի և մարդու իրավունքների ապահովման համար պատժական օրենսդրության կիրառումը բավարար չէ:

Ավելին՝ հաճախ դատա-իրավական մարմինների գործունեությունը, տնտեսական սանկցիաները, պատժիչ, հակաահաբեկչական գործողությունները և՛ ազգային, և՛ միջազգային մակարդակներում ոչ միայն արդյունավետ չեն, այլև նոր խնդիրներ են առաջ բերում:

3. Մարդկային արժանապատվության համընդհանուր հարգանքի և Մարդու իրավունքների ապահովման գործում, մեր համոզմամբ, առանձնահատուկ և առաջնային դեր ունի Մարդու իրավունքների կրթությունը: Այդ դերն ի հայտ է գալիս մարդկային հասարակության զարգացման համար կրթության ունեցած նշանակությամբ՝ ընդհանուր առմամբ, և Մարդու իրավունքների կրթության որոշակի առանձնահատուկ դերով՝ մասնավորապես:

Հայտնի է, որ կրթությունն ընդհանրապես երկարատև գործընթաց է, և նրա հիմնական արդյունքներն ստացվում են ոչ թե տարիների, այլ տասնամյակների ընթացքում: Բայց ի թիվս այլ պատճառների՝ շտապողականության ու անհամբերության հետևանքով կրթության դերը հաճախ ըստ պատշաճի չի գիտակցվում և գնահատվում: Փորձը[2] ցույց է տալիս, որ կրթությունը հուսալի ճանապարհ և եզակի միջոց է՝

- կայուն մարդկային զարգացման համար,
- համակեցության արդարացի նորմերի, դրական ավանդույթների ձևավորման համար,
- գիտության և մշակույթի նվաճումներին իրազեկ, իրավագիտակցությամբ օժտված և քաղաքականապես ակտիվ քաղաքացու ձևավորման համար,
- ժողովրդավարության զարգացման և քաղաքացիական հասարակության ձևավորման համար:

4. Մարդու իրավունքների կրթության առանձնահատուկ դերը պայմանավորված է բուն Մարդու իրավունքների ուսմունքի էությամբ՝

**Մարդու իրավունքներն ի վերուստ տրված, անհատի մարդկային էությունը բնորոշող և նրանից անկապտելի, անօտարելի ու ինքնին անբաժանելի իրավունքների ամբողջություն է:**

Մարդու իրավունքներն ի հայտ են գալիս հասարակության զարգացման որոշակի փուլում՝ պետության և իրավունքի ծագման հետ միաժամանակ, և գոյություն ունեն միայն իշխանական, ուժային, ուղղահայաց բնույթի հարաբերություններում, որոնցում սուբյեկտները de jure՝ իրավահավասար, de facto՝ խիստ անհավասար հնարավորություններով օժտված անհատը և պետությունն են: Մարդու իրավունքների հասկացության բովանդակությունն իր ողջ ծավալով ամբողջանում է նրա յոթ հատկանիշներով՝ համընդհանրությամբ, անկապտելիությամբ, անօտարելիությամբ, անձեռնմխելիությամբ, անբաժանելիությամբ, անհատականությամբ և մարտնչողությամբ[3]:

5. Պետությունների և պետական ու քաղաքական գործիչների կողմից մարդու իրավունքները ենթակա են քաղաքականացման մշտական վտանգին: Դրանք երբեմն կարող են դառնալ ներքին կամ արտաքին հակամարտությունների, նույնիսկ զինված բախումների պատճառ կամ դիվանագիտական ճարպիկ հնարամտություններով օգտագործվել որպես այդպիսիք հրահրելու պատրվակ:

6. Մարդու իրավունքների կրթությունը ոչ միայն դասագրքերում, օրենքներում, միջազգային համաձայնագրերում թվարկված անհատի իրավունքներին հասարակության իրազեկումն է, այլև Մարդու իրավունքների ուսմունքի, այդ հասկացության բովանդակության, նրա բնույթի, առանձնահատկությունների, հատկանիշների, պաշտպանության համակարգերի ու միջոցների ուսուցումն ու յուրացումը:

7. Մարդու իրավունքների կրթությունը միջոց է՝

1. Անհատի իրավական պաշտպանունակության բարձրացման համար: Դա իրականանում է Մարդու իրավունքների կրթության հետևյալ գործառույթներով՝

- Սեփական իրավունքների, ուժի և հնարավորությունների գիտակցման շնորհիվ ամրապնդվում է անհատի ինքնավստահությունը:

- Անհատին հնարավորություն է ընձեռվում գործնականում կիրառել սեփական իրավունքները կամ նվազագույնը՝դիմակայել, պաշտպանվել իր իրավունքների ոտնահարումից:

- Անհատը մղվում է քաղաքացիական ակտիվության ոչ միայն սեփական իրավունքների պաշտպանության, այլև հասարակական նշանակության խնդիրներ լուծելու անհրաժեշտության դեպքերում:

Հասարակական ինքնագիտակցության ձևավորման համար:

2. Իրավախախտումների և հանցագործությունների խաղաղ և անարյուն կանխման համար:

3. Արդյունավետ կառավարման համար[4]:

4. Հակամարտությունները (անհատների, խմբերի, ազգերի, պետությունների միջև) հաշտությամբ ու խաղաղությամբ լուծելու համար:

8. Մարդու իրավունքների կրթությունն առաջին քայլն է մարդու իրավունքների ապահովման ճանապարհին: Այն հանրակողմանի միջոց, ճշմարիտ և ուղիղ ճանապարհ է զարգացման բոլոր աստիճաններում և բոլոր հասարակությունների համար: Մարդու իրավունքների կրթությունը կարող է կազմակերպվել տարբեր մեթոդներով, մոտեցումներով, ճանապարհներով՝ ըստ տվյալ հասարակության պատմամշակութային առանձնահատկությունների: Մարդու իրավունքների կրթությունը, ինչպես հանրակրթությունը, պետք է շարունակական գործընթաց լինի բոլոր հասարակությունների համար:

9. Ամեն մի քայլ, գործողություն, պատճառ անխուսափելիորեն իր որոշակի հետևանքն է ունենում:

Բնական է, որ Մարդու իրավունքների վերաբերյալ բանավոր քարոզչությունը, միջազգային փաստաթղթերի՝ հռչակագրերի, համաձայնագրերի և այլ գրականության բազմացումն ու տարածումը, համակիր անձանց հայտնաբերումը և միավորումների ստեղծումը, հանդիպումների, ժողովների, սեմինարների, դասընթացների կազմակերպումը չեն կարող անհետևանք մնալ և կտան որոշակի արդյունքներ:

Մարդու իրավունքների կրթությունը շատ ավելի արդյունավետ կիրականացվի, եթե կոնկրետ երկրի, հասարակության համար մշակվի Մարդու իրավունքների կրթության ռազմավարություն, որով կորոշվեն առկա հիմնախնդիրները, նպատակները, գործառույթները, թիրախները, ակնկալվող արդյունքները:

11. Մարդու իրավունքների կրթությամբ կարող է բարձրանալ իրազեկության մակարդակը Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերին, կզարգանա իրավական մշակույթը, կձևավորվեն ու կամրապնդվեն առաջադեմ իրավական ավանդույթներ, կավելանա Մարդու իրավունքների պաշտպանների թիվը, կհզորանան իրավապաշտպան և այլ ոչ կառավարական կազմակերպությունները:

12. Մարդու իրավունքների կրթության կարիք ունի յուրաքանչյուր հասարակություն, յուրաքանչյուր անհատ՝անկախ տարիքից, կրթությունից, դիրքից, պաշտոնից[5]: Հետևաբար, շատ կարևոր է թիրախ խմբերի առաջնահերթության որոշումը: Այստեղ պետք է առաջնություն տրվի այն խմբերին, որոնք իրենց գործունեության բնույթով, կարծես մի հատուկ առաքելությամբ, ստացած գիտելիքները կփոխանցեն հասարակության այլ խմբերի և անդամների, ինչպիսիք են՝ կրթական հաստատությունների դասախոսները, ուսուցիչները, դպրոցների տնօրենները, լրագրողները, ոչ կառավարական կազմակերպությունների անդամները, իրավաբանները և այլն[6]:

Կարևոր է, որ յուրաքանչյուր հասարակություն, յուրաքանչյուր անհատ հավատա, որ Մարդու իրավունքներն արդարություն են բերում բոլոր ազգերին, յուրաքանչյուր տղամարդու և կնոջ, յուրաքանչյուր երեխայի: Որոշ ժողովուրդներ պատմական անարդարության զոհ են, և դա էական խոչընդոտ է այդպիսի հասարակության մեջ Մարդու իրավունքների համընդհանուր հարգանքի արմատավորման համար[7]: Միջազգային իրավունքը պետք է նպաստի ոչ թե տեղային, այլ համընդհանուր, գլոբալ արդարության հաստատման գործին, քանզի արդարությունը չի կարող համընդհանուր չլինել:

---

[1] ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդված 1:

[2] ՄԱԿ –ի Զարգացման Ծրագրի 1996թ. Մարդկային զարգացման զեկույցում ասվում է. «Ոչինչ այնպես պարզորոշ չի ցուցադրում կրթության արժեքը, ինչպես Պակիստանի և Կորեայի Հանրապետության օրինակը: 1960 թվականին այս երկու երկրներն ու-

նեին եկամուտների հավասար մակարդակ, բայց Պակիստանում նախնական դպրոց հաճախող երեխաները կազմում էին 30, իսկ Կորեայում՝ 94 տոկոս: Եվ դա պատճառներից մեկն է այն բանի, որ հետագա 25 տարիների ընթացքում մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշը Կորեայում երեք անգամ գերազանցեց Պակիստանի նույն ցուցանիշը» (Доклад о развитии человека за 1996 год, стр. R-5-1):

3 Ավելի մանրամասն տե՛ս «Մարդու իրավունքներ», Ձեռնարկ ուսուցչի համար, Վանաձոր 2002, էջ 10-14. «Մարդու իրավունքները և Մարդկային զարգացումը», Հայաստան - 2000, էջ 21-23. Марек Новицкий, "Что такое права человека?", Варшава, 1997г.

4 Եթե գործադիր կամ իրավապահ մարմնի պաշտոնյան պատշաճ կրթություն և համապատասխան հմտություններ չունի, ապա անօգուտ է նրանից պահանջել ավելին, քան նա օբյեկտիվորեն ի զորու է: Անիրազեկությունը, հմտությունների պակասը մեղք չէ: Եվ բարոյական օրինակելի նկարագիրն անգամ չի կարող լրացնել կրթության պակասը:

5 Բոլոր ժամանակների իմաստուններից մեկը՝ Սոկրատեսը, հայտարարում էր. «Ես գիտեմ, որ ես ոչինչ չգիտեմ»:

6 1996 թվականից ՀՄԻԿ-ի Մարդու իրավունքների դպրոցի ավելի քան 200 շրջանավարտները Հայաստանի բոլոր մարզերում հաջողությամբ իրականացնում են այդ կարևոր առաքելությունը:

7 Օրինակ՝ ցեղասպանության սարսափներ ապրած հասարակության մեջ Մարդու իրավունքների գաղափարների տարածումն արդյունավետ կլինի, եթե դրան նախորդել են ճշմարտության բացահայտումը, հանցագործների դատավարությունները և արդարության, այդ թվում՝ պատմական արդարության վերականգնումը: Դրանով այդ հասարակությունը պարարտ հող կդառնա Մարդու իրավունքների գաղափարների արմատավորման, ժողովրդավարության զարգացման համար:

---

## THE HUMAN RIGHTS EDUCATION - AS A DIRECT WAY FOR THE HUMAN RIGHTS PROMOTION
(thesises)

GEVORK MANOUKIAN
Lawyer, UNDP National Expert

### Summary

The article, in essence, is a series of thesises which fleetingly glances at the risen problems of the world where pivotal significance is given to the problem of Human Rights promotion, and for the solution of the above mentioned the Human Rights Education is considered as a direct way and the most reliable medium.

Here are presented the role of the Human Rights Education, its peculiarities, priority basing and functions.

Some conclusions that are drawn on the basis of the existing experience in Armenia in the sphere of Human Rights Education, can be useful not only for the Human Rights Education quality improvement in Armenia, but also for apply in other countries.

## ОБРАЗОВАНИЕ ПРАВ ЧЕЛОВЕКА - КАК ПРЯМОЙ ПУТЬ ДЛЯ ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА
(тезисы)

ГЕВОРК МАНУКЯН
Юрист, национальный эксперт ПРООН

### Резюме

Статья, по сути, представляет собой ряд тезисов, с помощью которых бросается мимолетный взгляд проблемам восставшими сегодня перед миром, где придается стержневое значение проблеме обеспечения Прав Человека, и для решения которого правозащитное образование рассматривается как прямой путь и наиболее надежное средство.

Представляются роль правозащитного образования, особенности, обоснования приоритетов, функции.

На основе опыта существующего в сфере правозащитного образования в Армении делаються выводы, которые могут быть полезны не только для улучшения правозащитного образования в Армении, но и для использования опыта Армении в других странах.

# ՍՈՑԻԱԼ-ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

***ՄՆԱՑԱԿԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ***
*Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

***ՎԱՉԻԿ ԲՐՈՒՏՅԱՆ***
*Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ*

Շեղվող վարքագիծ տերմինը նշանակում է հասարակության մեջ ընդունված նորմերին և դերային սահմանումներին չհամապատասխանող վարքագիծ: Շեղվող վարքագիծը վերջին ժամանակներս անվանում են դեվիանտային (լատ. deviantio - շեղում) կամ, ոչ մեծ հաճախականությամբ, դելինկվենտային (լատ. delin-guens - օրինախախտ): Դեվիանտային վարքագիծ ասելով՝ հասկանում են արարքների համակարգ կամ առանձին արարքներ, գործողություններ, որոնք հասարակության մեջ ընդունված նորմերից շեղվում են: Ամենից հաճախ դեվիանտային վարքագիծ հասկացությունը մարդու վարքագծի բացասական շեղումն է, որը հակասում է հասարակության մեջ ընդունված իրավական և բարոյական նորմերին[1]:

Մարդու դելինկվենտային վարքագիծն արդեն վկայում է , որ շեղվող վարքագիծը դուրս է եկել օրենքի շրջանակներից, դրսևորվել է քրեորեն պատժելի գործողություններում, որոնք ենթակա են վարչական ներգործությունների:

Գոյություն ունեն մարդու դեվիանտային վարքագծի ձևավորման զանազան տեսություններ[2]: Այդ թվում՝ կենսաբանական. մարդու արտաքին տեսքի յուրահատկությունը կանխորոշում է մարդու հակումը օրինախախտմանը (Լոմբրոզո, Շելդոն), հոգեբանական. մարդու հոգեկան առանձնահատկություններն այն հիմքն են, որոնք որոշում են նրա հակումը կոնֆլիկտների և օրինախախտումների (Ֆրոյդ), սոցիոլոգիական. մարդու դեվիանտային վարքագիծը հանդիսանում է նրա յուրացրած բացասական սոցիալական փորձի հետևանքը, որը ձևավորում է հակասություններ դաստիարակության արդյունքի և միջավայրի պահանջների միջև (Դյուրկհեյմ, Մերտոն, Միլլեր և այլն): Ե՛վ կենսաբանական, և՛ հոգեբանական տեսություններն անձնավորության մեջ առանձնացնում են այն հատկականը, որը կարող է հանգեցնել դրա դեվիանտային զարգացմանը: Փաստերը վկայում են, որ մարդը ծննդի պահից կարող է ունենալ դեվիացիայի տրամադրվածություն: Սակայն դա կարող է իրագործվել միայն նրա համար անբարենպաստ կենսագործունեության և դաստիարակության պայմաններում՝ ստեղծելով նրա անձի հենց այն հոգեբանական հիմքերը, որոնք էլ հետագայում որոշում են բացասական (դեվիանտ կամ դելինկվենտ) վարքագիծը:

Մարդու սոցիալ-բացասականորեն շեղվող վարքագծի հիմքում ընկած են նրա սոցիալական դաստիարակության, սոցիալական աններդաշնակ փորձի յուրացման արդյունքները[3]:

Դա դրսևորվում է անձնավորության բացասական ուղղվածության մեջ (հետաքրքրություններում, պահանջմունքներում, վարքի մոտիվներում, նպատակներում, իդեալներում, նեգատիվ սովորություններում), որոնք առաջ են բերում դրական վերաբերմունք՝ դառնալով անձի հակասոցիալական, հակաբարոյական վարքագծի կարգավորիչներ[4]:

Սոցիալ-բացասական վարքագծով անձանց հետ աշխատանքի խնդիրներն արդյունավետորեն լուծելու համար անհրաժեշտ է ի հայտ բերել այն հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են դրանց ձևավորումը: Մարդու դեվիանտային վարքի տարբեր հետազոտությունների տվյալներով՝ այդպիսի գործոնները բավականաչափ շատ են, ուստի խմբավորվում են տարբեր հիմունքներով:

Գործոնների և դրանց բաղկացուցիչների խմբեր են[5]՝

Շեղումներ հոգեկան և ֆիզիոլոգիական զարգացման մեջ՝

ա) մտավոր զարգացման ցածր մակարդակը՝ ի ծնե կամ որպես գանգուղեղային վնասվածքի արդյունք.

բ) ակտիվ-կամային ոլորտի հուզականությամբ պայմանավորված շեղումներ, որոնք առաջացնում են բարձր գրգռվածություն, աֆեկտներ, իմպուլսիվություն գործողություններում և արարքներում, շրջապատողներին ծաղրելու, չարախնդալու հաճույք, դեսպոտիզմ, թափառաշրջիկություն և այլն.

գ) անձի ձևավորման պրոցեսի անավարտություն, որը հանգեցնում է տարեկիցների հետ փոխհարաբերության բարդությունների: Յնարավոր շեղումները և երեխայի զարգացման յուրահատկությունը առաջ են քաշում գործոնների հաջորդ խումբը, որոնք ազդում են նրա դեվիանտային ձևավորման վրա:

Դաստիարակության պայմանների և մեթոդների անհամապատասխանություն երեխայի անհատական առանձնահատկություններին[6]:

Երեխայի զարգացման մեջ զանազան շեղումներից «բխում են» առանձնահատուկ դաստիարակության մեթոդներ: Դրանք պետք է կողմնորոշեն երեխայի այս կամ այն հնարավորությունների զսպման կամ խթանման զարգացումը՝ ճանաչողական, զգայական և կամային ոլորտներում, փոխհատուցողական մեխանիզմների զարգացումը, որոնք թույլ են տալիս հաղթահարել թերությունները և այլն:

Կարգավորիչ ներգործության անհամապատասխանությունը դեռահասի զարգացման յուրահատկությանը[7]:

Դեռահասության փուլում զարգացման բարդությունը և յուրահատկությունը թելադրում է առավել նպատակահարմար և լավագույն դաստիարակչական ներգործություն ապահովելու անհրաժեշտություն, քանի որ այդ տարիքն ինքնին բարդ ու հակասական է: Պատահական չէ, որ դաստիարակության մեջ որպես առավել բարդ գնահատվում է դեռահասության, պատանեկան տարիքը՝ անցումային փուլը (11-13, 14-15 տարեկան): Դեռահասները, որպես կանոն, դպրոցականներ են, որոնք գտնվում են ծնողների (կամ պետության) խնամքի տակ, նրանց համար առաջնայինը ուսումն է: Դա մանկության ավարտի և դրանից «աճելու» բարդ փուլն է: Պատանեկան տարիքը տառացիորեն «երրորդ աշխարհ» է՝ մանկության և հասունության միջև: Կենսաբանորեն այն ֆիզիկական հասունացման ավարտի փուլն է: Պատանեկան տարիքի պրոբլեմների ոտնահարումը կամ անտեսումը հանգեցնում է շեղվող վարքագծի.

ա) ճգնաժամային երևույթներ՝ բնութագրվում են պատանեկան տարիքում հոգեֆիզիոլոգիական զարգացմամբ,

սեռական հասունացման փուլում օրգանիզմի արագացված կամ անհամաչափ զարգացմամբ,

սիրտ-անոթային համակարգի զարգացման անբավարարությամբ, որն ազդում է պատանու ֆիզիկական և հոգեկան ինքնազգացողության վրա,

սեռական զարգացման փուլում էնդոկրին համակարգի «հորմոնալ փոթորիկով», որը դրսևորվում է բարձր գրգռականությամբ, հուզական անկայունությամբ.

բ) մեծահասակների՝ ծնողների և ուսուցիչների հետ փոխհարաբերությունների լարվածություն, որը դրսևորվում է փոքրերի և ավագների բարոյական «կոնֆլիկտում». հասունության ոչ համարժեք զարգացում, երբ ներկայացվող պահանջները չեն ընդունվում.

գ) «ենթարկման բարոյականությունը» «հավասար բարոյականության» հարաբերության փոխելու ձգտում.

դ) խիստ քննադատական վերաբերմունք ավագների վարքագծի և նրանց գնահատման հարցերում.

ե) տարեկիցների հետ հարաբերությունների մեջ փոփոխություններ. շփման կարիք, ինքնահաստատման չափազանց մեծ ձգտում, որոնք երբեմն արտահայտվում են բացասականորեն:

Անձնավորության ձևավորման միջավայրի բացասական գործոններ՝

ա) ընտանիքի պրոբլեմները՝ ոչ լրիվ ընտանիքներ, մի երեխայով ընտանիքներ, բազմաերեխա ընտանիքներ, դիստանտ ընտանիքներ և այլն.

բ) անբարոյական իրավիճակ ընտանիքում. հարբեցողություն, վեճեր, կռիվներ, կոպտություն փոխհարաբերությունների մեջ, անազնվություն և այլն, ինչը նմանակման բացասական օրինակ է ծառայում, ձևավորում համապատասխան աշխարհայացք.

գ) ընտանիքի, ընտանեկան իրադրության բացասական գործոններ, որոնք հանգեցնում են տան, ընտանիքի հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորման:

Ձևավորվում է «փողոցի երեխաների» կատեգորիա: Դրան նպաստում են՝

ա) ագրեսիվ իրադրությունը տանը, կոպտությունը երեխայի հանդեպ.

- երեխայի պրոբլեմների, հետաքրքրությունների հանդեպ տևական անուշադրությունը, ծնողների անձնական պրոբլեմների փոխանցումը և երեխային ինքնուրույն թողնելը տևական ժամանակ.

բ) երեխայի դաստիարակությունը պապին ու տատին «փոխանցելը»՝ առանց ծնողների համապատասխան աջակցության.

գ) դաստիարակության բացթողումներ, երեխայի մոտ առողջ հետաքրքրությունների, զբաղմունքների, նստակեցության և այլնի բացակայություն.

դ) մարդու զարգացման պրոցեսում միջավայրի ներգործության բացասական գործոնները.

ե) մերձավոր շրջապատի բացասական ազդեցությունը, մեծերի, ծնողների հակամանկավարժական վարքագիծը, տարեկիցների բացասական վարքագիծը և այլն.

զ) զանգվածային լրատվության միջոցների, հատկապես հեռուստատեսության, տեսաֆիլմերի բացասական ազդեցությունը:

Կան նաև այլ միջավայրային գործոններ, որոնք բացասաբար են ներգործում մարդու դաստիարակության վրա:

Երեխայի, դեռահասի դաստիարակության մեջ թերությունները[8]՝

ա) ընտանեկան դաստիարակության սխալներ.

բ) «ջերմոցային» պայմաններ, երեխայի հեռացումը բարդ կենսական պրոբլեմներից, ցանկացած ակտիվ գործունեությունից, որոնք հանգեցնում են չորության, մանկամտության և մարդկային ողբերգություններին կարեկցելու անընդունակության ձևավորման, խանգարում կենսական դժվարությունները ճգնաժամային իրավիճակներում հաղթահարելուն.

գ) սխալներն ուսումնական պրոցեսում և բացթողումներ կրթական հաստատությունում, հատկապես՝ մանկապարտեզում և դպրոցում.

դ) դաստիարակության բացասական բարոյական կողմնորոշիչներ.

ե) երեխային, դեռահասին կյանքի ու գործունեության բացասական որոշակի մոդելներով «դաստիարակում».

զ) միջավայրային բացասական «սպասումներ» երեխայի, դեռահասի հանդեպ՝ անբարեհաջող ընտանիքից, որն ունի համապատասխան շրջապատ, հանդես է բերում կարգ ու կանոնի խախտումներ և այլն.

է) երեխայի, դեռահասի հակումը սպիրտային խմիչքների, թմրանյութերի, ծխախոտի, մոլեխաղերի.

ը) դաստիարակչական ներգործության մեջ ընտանիքում ծնողների կողմից միասնության և փոխհամաձայնեցվածության բացակայություն[9].

թ) վերադաստիարակության համակարգի թերություններ, իրավախախտների ուղղման և նրանց՝ առօրյա կյանքին հետագա հարմարվելու թերություններ:

Յենց իր՝ երեխայի, դեռահասի բացասական անձնային դիրքորոշումը՝

ա) շեղումներ դեռահասի ինքնագնահատականում.

- բարձր՝ հանգեցնում է չափազանց ինքնահավանության, որն ինքնադրսևորման հակաբարոյական ընդունակության հետ մղում է իրավախախտումների,

- ցածր՝ ծնում է անվստահություն, վարքային երկակիություն, անձի երկատվածություն, ինչն այդպիսի անձի համար պրոբլեմներ է ստեղծում կոլեկտիվում, խաթարում ինքնադրսևորումը.

բ) շեղումներ դեռահասների անձնային հավակնություններում: Դրանք, որպես կանոն, բխում են ինքնագնահատման շեղումներից: Հավակնությունները կանխորոշում են դեռահասի անձնային դիրքորոշումը և նրա ակտիվությունը նպատակներին հասնելիս.

գ) անտարբերություն բարոյական կատարելագործման հանդեպ.

դ) դեռահասների բացասականորեն իրագործվող ինքնահաստատման պահանջ՝ վարքագծի շեղումներ, անառողջ մրցակցություն.

ե) երեխայի, դեռահասի ձևավորման բարդություն, պահանջմունքների և ինքնաուղղման ակտիվ ցանկություն.

զ) դեռահասի ձգտումը շփման, երիտասարդական խմբերում մասնակցելուն, այդ թվում նաև՝ հակասոցիալական ուղղվածությամբ:

Հայտնի է հետևյալ տիպաբանությունը՝ դեվիանտային վարքագծով և հակահասարակական գիտակցության միավորումներով՝

- պատահական խումբ, օրինակ ՝ կռիվներ մարզադաշտերում, դիսկոտեկներում և այլ վայրերում, որն ունի չգրված խմբային նորմեր ու արժեքներ,

- ռետրիստական խումբ (ռետրիզմ եզրով սոցիոլոգիայում և հոգեբանության մեջ արտահայտվում է մարդու ձգտումը՝ փախչելու իրականությունից և կենսական դժվարություններից): Իրականությունից հեռանալու ծայրահեղ տարբերակը սուիցիդն է (ինքնասպանություն): Ռետրիստական խմբերի սովորական զբաղմունքն անիմաստ ժամանցն է, կասկածելի զվարճալիքները, տոքսիկոմանիան և թմրամոլությունը,

- ագրեսիվ խումբը հիմնված է արժեքների ստորակարգության և մշակույթի նվազագույնի մասին առավել պարզունակ պատկերացումների վրա:

Քրեածին խմբերի համար հատկապես բնորոշ գծեր են ներշնչվողությունն ու կոնֆորմիզմը: Այդպիսի խմբերին անվանում են երիտասարդական բանդաներ[10]:

Առանձնացվում են երեխաների և դեռահասների դեվիանտային վարքագծի սոցիալական-բացասական ձևերի կանխարգելման և հաղթահարման հետևյալ հիմնական մանկավարժական գործունեության ուղղությունները[11]՝

1. սոցիալական-շեղվող վարքագծի կանխարգելման մեջ ընտանիքի դերի մեծացումը[12]:

Շատ պրոբլեմներ կարելի է լուծել, եթե հնարավոր լինի ստեղծել ընտանեկան կյանքի և ընտանեկան դաստիարակության առավել բարեհաջող պայմաններ երեխաների համար: Այդ ուղղության իրագործումը պահանջում է հիմնախնդիրների համախմբի լուծում՝ արտա և ներընտանեկան բնույթի:

ա) Նախ և առաջ հարկավոր է ապագա ծնողներին նախապատրաստել ընտանեկան կյանքի և երեխաների դաստիարակության[13]: Ընդհանուր առմամբ՝ երիտասարդների նախապատրաստումն ընտանեկան կյանքին և երեխաների դաստիարակությանը ներառում է հետևյալ բաժինները՝

- ընտանիքում փոխհարաբերության հիմունքները,

- ներընտանեկան կոնֆլիկտներ, դրանց ծագման պատճառները, կանխարգելման հնարավորությունները և հաղթահարման ուղիները,

- տնային տնտեսություն վարելու հիմունքները, ընտանիքի տնտեսագիտությունը,

- ընտանեկան դաստիարակության հիմունքները երեխայի, դեռահասի տարիքային զարգացման զանազան փուլերում.

բ) բարենպաստ բարոյական մթնոլորտի ստեղծումը ընտանիքում և ներընտանեկան փոխհարաբերություններում:

Հարկավոր է ընդգծել, որ անբարոյական իրավիճակը (հարբեցողություն, կռիվներ, հիստերիկ ճիչեր, կոպտություն) բացի բացասական օրինակից կարող է հանգեցնել երեխայի մոտ լուրջ հոգեկան ցնցումների, որոնց հաղթահարումը հետագայում շատ դժվար է: Ընտանեկան դաստիարակության և ընտանիքի պրոբլեմները բացասաբար են ազդում աճող մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման վրա.

գ) սխալների կանխարգելումը ընտանեկան դաստիարակության մեջ.

- ծնողների հակամանկավարժական վարքագիծը որպես նմանակման օրինակ,

- ծնողների և երեխաների միջև կապի կորուստը,

- դաստիարակության պրոցեսում ծնողների կողմից թույլ տրվող տիպական սխալներ. թույլատրող - հանդուրժող տոնը՝ «մեր երեխան միշտ ճիշտ է» և այլն.

դ) երեխայի հաստատուն բարոյական կողմնորոշիչների, բարոյական դիրքորոշումների ձևավորումը.

ե) վաղ մանկությունից կամային որակների և սեփական արժանապատվության զգացման դաստիարակումը, ինչը թույլ կտա ձևավորել բարոյակամային որակներ.

զ) երեխայի հանդեպ բռնություն թույլ չտալը, ինչը կճնշի կամքը կամ, ընդհակառակը, կձևավորի ուժի պաշտամունք, որը խթանում է թույլերի հանդեպ ագրեսիվության դաստիարակումը:

Մասնագետ-հոգեբանները խորհուրդ են տալիս դաստիարակներին՝ դաստիարակության մեջ հարկադրանք կիրառելիս հաշվի առնել հետևյալը[14]՝

- չկիրառել ֆիզիկական պատիժ՝ 3 տարեկանից փոքր երեխաների հանդեպ, քանզի դա ազդում է նրանց ակտիվության վրա,

- ծեռնպահ մնալ երեխաներին պատժելուց, հատկապես դեռահասներին՝ հասակակիցների ներկայությամբ: Հրապարակային ստորացումը ճնշում է կամքը, վնասում հոգեկանը,

- զերծ մնալ ուժի կիրառմամբ պատժից՝ որևէ մեղքի համար, 10 տարեկանից մեծ աղջիկներին և 14 տարեկանից մեծ տղաներին,

- զերծ մնալ երեխային սառնասրտորեն, անխղճու-

թյամբ պատժելուց:

Անթույլատրելի համարել պատժի կիրառմամբ երեխայի արժանապատվության ստորացումը:

է) Թույլ չտալ երեխաներին ու դեռահասներին՝ հակվել սպիրտային խմիչքների, ծխելու, մոլեխաղերի.

ը) երեխային մղել ինքնադաստիարակության և վարժեցնել ինքն իր վրա աշխատելու մեթոդիկային:

2. Կրթական հաստատությունների դաստիարակչական դերի բարձրացումը երեխաների և դեռահասների դեվիանտային վարքագծի կանխարգելման և հաղթահարման գործում [15]:

Կրթական հաստատության դաստիարակչական դերի բարձրացման ուղիներն են՝

- դասավանդող կազմի նախապատրաստության որակի բարձրացումը, նրանց բարձր մանկավարժական կուլտուրայի ձևավորումը,

- առավել բարենպաստ իրավիճակի ստեղծումը կրթական հաստատության պայմաններում՝ մանկավարժական գործունեության համար,

- դասավանդող կազմին ինքնակատարելագործման, մանկավարժական վարպետության և մանկավարժական կուլտուրայի բարձրացման մղելը,

- կրթական հաստատություններում սոցիալական ծառայության ստեղծումը, որը նպաստում է դեվիանտային վարքագծով երեխաների ու դեռահասների հետ աշխատանքի անհատականացմանը, օգնում է ուսուցչին և ծնողներին՝ նրանց հետ աշխատանքում,

- արտաուսումնական դաստիարակչական աշխատանքի համակարգի զարգացումը երեխաների և դեռահասների հետ՝ կրթական հաստատության պայմաններում:

3. Նպատակահարմար փոխներգործության զարգացումը. ընտանիքի և դպրոցի, բնակության վայրի վարչական մարմինների դերը երեխաների և դեռահասների դեվիանտային վարքագծի կանխարգելման և հաղթահարման գործում [16]:

Ընտանիքի և դպրոցի միասնությունը միավորում և ուժեղացնում է դաստիարակչական ազդեցությունը երեխաների և դեռահասների վրա: Այդ նպատակով կիրառվում է՝

- մեթոդական սեմինարների կազմակերպումը դպրոցներում՝ ծնողների համար (ծնողական լսարաններ, ծնողական սեմինար),

- ծնողական կոմիտեների դերի բարձրացումը դպրոցի կյանքում, մանկապարտեզում, ծնողների և ուսուցիչների միջև կապի ուժեղացումը,

- ծնողական հովանավոր կազմակերպությունների ստեղծումը կրթական հաստատությունում,

- ծնողներին դասարանի, դպրոցի միջոցառումներին ակտիվ մասնակցելուն մղելը,

- ուսուցիչների այցերը երեխաների տներ,

- ծնողների օգնությունն ու աջակցությունը դաստիարակչական աշխատանքում՝ երեխաների հետ ուսուցչի, դպրոցի սոցիալական մանկավարժի կողմից:

4. Առավել նպատակահարմար ներգործությամբ երեխայի շփման, փոխազդեցության ղեկավարումը նրա զարգացման, դաստիարակության պրոցեսում:

5. Խորհրդատվության արտադպրոցական համակարգի և ընտանիքի ու երեխաների օգնության զարգացումը շեղված վարքագծի հաղթահարման գործում:

Ընտանիքի հետ աշխատելու կենտրոններում բացվում են երեխաների՝ այնտեղ մնալու ցերեկային բաժանմունքներ: Դրանցում երեխաները հնարավորություն ունեն բարենպաստ պայմաններում դրսևորել իրենց անձնային հնարավորությունները, ստանալ խորհրդատվություններ, ձեռք բերել նոր ընկերներ:

6. Երեխաների և դեռահասների դեվիանտային վարքագծի վերադաստիարակության և ուղղման համար հատուկ հաստատությունների դերի բարձրացումը:

Այդօրինակ հաստատությունները փակ կամ կիսափակ տիպի են: Երեխաներն այնտեղ հաճախում են կամ դատարանի վճռով, կամ անչափահասների գործերով բաժնի ուղղորդմամբ: Վերադաստիարակության և ուղղման համար կիրառում են աշխատանքային թերապիան, կրթական պրոցեսը, մշակութային-ժամանցային գործունեությունը, կոլեկտիվի դաստիարակիչ ներգործությունը, անհատական աշխատանքը:

7. Երեխաների, պատանիների սոցիալ-մանկավարժական պրոբլեմների հաղթահարման կենտրոնների ցանցի զարգացումը. մանկավարժական շտկման, մանկավարժական վերականգնման, բժշկական, սոցիալական, մանկավարժական կենտրոնների՝ մանկական և պատանեկան ալկոհոլիզմի, թմրամոլության հաղթահարման համար, ինչպես նաև բռնության զոհերի, սոցիալական վիկտիմոլոգիայի վերականգնման ուղղությամբ (վիկտիմոլոգիա - լատ. Victima- զոհ, logos - գիտություն, ուսմունք բռնության զոհի վարքագծի մասին):

Մանկավարժական շտկման կենտրոններ:

Դրանք աշխատում են փոքր տարիքի երեխաների հետ: Երեխայի վաղ մանկավարժական շտկումը նպաստում է նրա առավել լրիվ զարգացմանը, իսկ հետագայում՝ նրա նորմալ ինքնահաստատմանը հասարակության մեջ, շեղվող վարքագծի կանխարգելմանը: Այդպիսի կենտրոնի արդյունավետ աշխատանքի համար հարկավոր են՝

- հատուկ կենտրոններ, որոնք աշխատում են որոշակի ուղղություններով՝ կախված երեխաների պրոբլեմներից,

- հատուկ պատրաստված լայն պրոֆիլի մասնագետներ՝ բժշկական, հոգեբանական և մանկավարժական ուղղվածությամբ,

- մանկավարժական կաբինետների և ախտորոշիչ կենտրոնների տեխնիկական հագեցվածություն,

- ուսուցիչների, սոցիալական ծառայությունների, ընտանիքների, մանկաբույժների լայն տեղեկացվածությունը մանկավարժական շտկման կենտրոնների և դրանց հնարավորությունների մասին,

- մանկավարժական շտկման կենտրոնների փոխկապակցվածությունը հատուկ մանկապարտեզների և դպրոցների հետ՝ երեխաների ժամանակին հարմարվելուն նպաստելու և փոխներգործելու համար:

Մանկավարժական վերականգնման կենտրոններ:

Դրանց կարիքը ևս մեծ է: Դրանք կարող են կողմն-

որոշված լինել զանազան կատեգորիայի մարդկանց հետ աշխատելու համար, որոնք մանկավարժական շտկման կարիք են զգում՝ շփման կորսված փորձի, մասնագիտական գործունեության և այլնի վերականգնման համար: Դեզադապտիվ երեխաների ու պատանիների ամեն մի կատեգորիա պահանջում է հատուկ անհատական կամ խմբային ախտորոշում և վերականգնման մեթոդի որոշում:

Հատուկ ուշադրության են արժանի բռնության զոհերի հետ աշխատանքի մանկավարժական պրոբլեմները:

Ժամանակակից պրակտիկան վկայում է հատուկ վերականգնողական կենտրոնների ստեղծման անհրաժեշտության մասին՝ այն անձանց ադապտացման համար, ովքեր հատուկ կրթական, պենիտենցիար (պատիժ կրելու) հաստատություններից դուրս են եկել՝ այնտեղ գտնվելու ժամկետի ավարտից հետո: Այդ պատանիները հաճախ վերադառնում են նախկին միջավայր:

8. Զանգվածային լրատվության միջոցների դրական հնարավորությունների օգտագործումը և երեխաների ու դեռահասների պատնեշումը դրանց բացասական ներգործությունից:

Հայտնի է ԶԼՄ-ների իսկայական դերը երեխաների ու դեռահասների աշխարհայացքի ձևավորման մեջ: Ժամանակակից ԶԼՄ-ները տարածում են բացառիկ բազմակերպ, բազմապլանային ինֆորմացիա՝ առանց հաշվի առնելու լսարանի առանձնահատկությունները: Հայրենական և արտասահմանյան մասնագետների հետազոտությունները վկայում են երիտասարդության վրա ինֆորմացիոն և տեսաարտադրանքի կործանարար ազդեցության մասին, որոնք պրոպագանդում են բռնություն, ազատ սեքս, հեշտ բիզնեսի գաղափարներ: Դրանք աստիճանաբար ձևավորում են գործողությունների մոդելներ այն մարդկանց մոտ, ովքեր չունեն ամուր բարոյական նկարագիր. դրանք յուրատեսակ ուսումնական ձեռնարկներ են՝ քրեական գործունեության գծով:

Սակայն հարկավոր է ընդգծել, որ ամեն օր հեռուստատեսությամբ առաջարկվում է նաև շատ օգտակար ինֆորմացիա երեխաների ու դեռահասների համար:

Այդ պայմաններում կտրուկ մեծանում է ծնողների դերը երեխաների ու հեռուստատեսության «շփման» գործընթացը ղեկավարելիս:

Ժամանակակից պայմաններում հրատարակվում է գրականություն, որը կարող է դառնալ դաստիարակության բացասական գործոն և հանգեցնել երեխաների ու դեռահասների հայացքների ու հետաքրքրությունների այլասերմանը:

ԶԼՄ-ների դաստիարակչական դերի ուժեղացմանը նպաստող ուղղություններից մեկը, ըստ միջազգային փորձի, հանդիսանում է հասարակական կենտրոնների ստեղծումը՝ դրանց գործունեության բարոյական ուղղվածության վերահսկման համար: Այդպիսի հասարակական կառույցները կարող են նպաստել ԶԼՄ-ների դրական դաստիարակչական հնարավորությունների ուժեղացմանը:

Յուրաքանչյուր մարդու հատուկ են ինֆորմացիոն պահանջմունքներ: Ինֆորմացիոն պահանջմունքներն ի հայտ են գալիս որպես սոցիալական հասունության, ակտիվության և անձի ինքնիրագործման գործոններ: Գոյություն ունի մարդու ինֆորմացիոն-մանկավարժական կուլտուրայի հասկացություն:

9. Երեխաների և դեռահասների մասնակցելը դրական հասարակական կենտրոններում, կազմակերպություններում (մարզական, մշակութային, զվարճանքի, տուրիստական, թատերական և այլն):

Այդպիսի կենտրոնները ստեղծվում են քաղաքներում: Դրանցից շատերն ստեղծվում են որպես հասարակական, ոչ պետական կառույցներ, որոնցում երիտասարդները արտաուսումնական ժամանակի մեջ և իրենց գործունեությամբ ակտիվորեն նպաստում են իրենց մեջ առողջ հետաքրքրությունների զարգացմանը:

10. Ինքնադաստիարակության, ինքնադաստիարակչական գործունեության ակտիվացումը բացասական հատկանիշների և սովորությունների ուղղման ու հաղթահարման ուղղությամբ, երիտասարդին օգնելը ինքն իր վրա աշխատելիս:

Հարկավոր է ընդգծել, որ երիտասարդության ինքնադաստիարակության ակտիվացումը ոչ միայն ընտանիքի գործն է, այլև կրթական հաստատությունների, հատուկ մանկավարժական շտկման կենտրոնների մանկավարժների: Մարդու ինքնադաստիարակության իրականացումը նրա բացասական վարքագծի հաղթահարման մեջ տեղ ունի, երբ նա բավարար չափով ինքնաքննադատ է, ընդունակ է գիտակցել իր գործողությունները, արարքներն ու դրանց հետևանքները, տիրապետում է ինքնաճանաչման մեթոդների և մեթոդիկաների, ինքնաղեկավարմանը, իր հանդեպ նպատակաուղղված աշխատանքին: Առանձնապես կարևոր է այլ մարդկանց հետ փոխհարաբերվելիս ճգնաժամային իրադրություններում իրեն ղեկավարելու մարդու ընդունակությունը:

Այսպիսով՝ դիտարկված են մարդու սոցիալական շեղվող (դեվիանտային) վարքագծի էությունը, բովանդակությունը և դրա ծագման պատճառները, ինչպես նաև սոցիալ-մանկավարժական գործունեության հիմնական ուղղությունները երեխաների ու դեռահասների շեղվող վարքագծի կանխարգելման և հաղթահարման ուղղությամբ: Բերված ուղղություններից յուրաքանչյուրն ունի իր պոտենցիալը՝ պրոբլեմի լուծման մեջ: Սոցիալ-բացասական վարքագծի կանխարգելման ու հաղթահարման գործում հաջողությունը շատ բանով կախված է նրանից, թե ո՞ր չափով են բոլոր շարադրված ուղղություններն իրագործվում գործնականում: Հարկավոր է ստեղծել համակարգ, որն ընդգրկում է ընտանիքը, կրթական հաստատությունները, վարչական մարմինները, երեխաների ու դեռահասների հետ աշխատելու պետական ու ոչ պետական կենտրոնները, որոնք կողմնորոշված են երեխաների մասին հոգ տանելու, նրանց դաստիարակելու, շեղվող վարքագիծը կանխելու և

հաղթահարելու: Դրանում է սոցիալական մանկավարժության կարևորագույն նշանակությունը:

1 Никитина В.А. Социальная педагогика, М., Гуманит. изд. центр ВЛАДОС-2002, с. 133.

2 Беличева С.А. Основы превентивной психологии, М., 1993, с. 9.

3 Герасимов В.Н. Основы превентивной педагогики, М., 1995, с. 23.

4 Клейберг Ю.А. Социальные нормы и отклонения, М., 1997, с. 43.

5 Девиантное поведение детей и подростков: Проблемы и пути их решения./ под ред. В.А. Никитина/, М., 1996, с. 48.

6 Ковалчук Я.И. Индивидуальный подход в воспитании ребенка, М., 1981, с. 44.

7 Беличева С.А. Характеристика современного состояния проблем девиантного поведения несовершеннолетных и пути ее решения: матер. первый нац. конф, М., 1995, с. 91-95.

8 Натанзон Э.Ш. Трудный школьник и педагогический коллектив. Пособия для учителья, М., Просвещение, 1984, с. 87.

9 Лесгафт П.Ф. Семейное воспитание ребенка и ее значение, М., 1991, с. 62.

10 Васильев В.П. Юридическая психология, СПб., 1997, с. 168.

11 Рабочая книга социального педагога: В 2 ч. - Часть 2, гл. 13, Орел: Книга, 1995, с. 113-164.

12 Азаров Ю.П. Искусство воспитывать, М., 1995, с. 97.

13 Гребенщиков И.В. Основы семейной жизни, М., 1991, с. 103.

14 Шилова Т.А. Психологическая типология школьников с отставаниями в учении и откланениями в поведений: Кн. для учителья и школьного психолога, М., 1995, с. 108.

15 Малинин Г.А. Воспитательная система Шацкого, М., 1993, с. 31.

16 Игошев К.Е., Минковский Г.М. Семья, дети, школа, М., 1989, с. 53.

## PEDAGOGICAL QUESTIONS OF WORK WITH TEEN-AGERS HAVING ABNORMAL BEHAVIOR

MNATSAKAN MANOUKYAN
Doctor of Pedagogy, Professor

VACHIK BRUTYAN
Dissertator of Yerevan Armenian State Pedagogical University General Pedagogical Department Named After Kh. Abovyan

**Summary**

In the work studied the essence, contents of abnormal behavior of a man, its reasons and also the main directions of social-pedagogical activity for prevention and overcoming of abnormal behavior of children and youths. Each of the given directions has its potential in the solving of the problem. The success in prevention and overcoming of abnormal behavior of young people much depends on the degree of the above mentioned direction which is realized in practice. It is necessary to compose a system including family, educational bodies, state and non-state center on work with children and youths, oriented on care about children, their upbringing prevention and overcoming of abnormal behavior.

## ПЕДАГОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ РАБОТЫ С НЕСОВЕРШЕННОЛЕТНИМИ СОЦИАЛЬНО-НЕГАТИВНОГО ПОВЕДЕНИЯ

МНАЦАКАН МАНУКЯН
Доктор педагогических наук, профессор

ВАЧИК БРУТЯН
Соискатель кафедры общей педагогики Ереванского армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

Резюме

В работе рассмотрены сущность, содержание социально отклоняющегося (девиантного) поведения человека и причины его возникновения, а также основные направления социально-педагогической деятельности по предупреждению и преодолению отклоняющегося поведения детей и подростков. Каждое из приведенных направлений имеет свой потенциал в решении проблемы.Успех в деле предупреждения и преодоления социально-негативного поведения молодежи во многом зависит от того, в какой степени все изложенные направления находят реализацию на практике. Необходимо создание системы, охватывающей семью, образовательные учреждения, административные органы, государственные и негосударственные центры по работе с детьми и подростками, ориентированные на заботу о детях, на их воспитание, предупреждение и преодоление отклоняющегося поведения.

# ԷԿՈԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷԿՈՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍ

*ԱՐԵԳՆԱԶ ՍԱՀԱԿՅԱՆ*
*Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ*

Մարդկային հասարակությունն իր զարգացման արշալույսին հանդիսանում էր բնության մասնիկ և վերջինիս հետ կապված էր պարզ նյութափոխանակությամբ: Այս շրջանում բնական ռեսուրսները նրա համար կենսապահովման միջոցներ էին, ինքը՝պարզ, անվտանգ սպառող:

Սակայն մարդն իր բարձրագույն նյարդային գործունեությամբ տարբերվում էր բնական մյուս կենսածներից և չէր բավարարվում այն ամենով, ինչ կարող էր ստանալ անմիջապես բնությունից:

Հետագայում մարդկային հասարակության աստիճանական զարգացումը մարդուն բնության սպառողից դարձրեց բնության վերափոխող: Արտադրական միջոցների զարգացումը, նյութական բարիքների այլընտրանքային աղբյուրների ստեղծումը, մարդկային թվաճը խախտում էր բնական հավասարակշռությունն ու բնական ներդաշնակությունը: Արդյունքում՝ մարդու և բնության միջև առաջացավ փոխանակության հատուկ ձև՝ մարդածին կամ անթրոպոգեն: Այդ փոխանակությունը բնության համար ունի բացասական հաշվեկշիռ և ծառայում է մարդկության հարաճուն պահանջմունքների բավարարմանը:

Սկզբում անհետացան մարդու կողմից անխնա հարստահարված որոշ կենսածներ (բույսեր, կենդանիներ), այնուհետև կրճատվեցին բնական էկոհամակարգերը (արոտավայրեր, անտառներ, մարգագետիններ), էրոզիայի ենթարկվեց հողը, սկսվեց համատարած աղտոտում, ի հետևանս որի՝ էկոլոգիական ճգնաժամ: Կրկնենք. ճգնաժամի պատճառ դարձան բնության անխնա և ագահ հարստահարումը, բնական պաշարների ոչ խելամիտ շահագործումը, մարդկային ընչաքաղցությամբ պայմանավորված դաժան պատերազմները և այնպիսի սինթետիկ նյութերի արտադրությունը, որոնց քայքայման համար բնության մեջ երկրորդային սպառողներ չէին նախատեսված:

Եթե նախորդների հետևանքները գոնե մասամբ վերացնելու ուղղությամբ մարդը փոփոխակի հաջողությունների է հասնում, ապա վերջինիս բացասական ազդեցության չեզոքացմանն ուղղված բոլոր ջանքերն առայժմ քիչ արդյունավետ կամ ընդհանրապես արդյունավետ չեն:

Երկիր մոլորակն աստիճանաբար դառնում է մարդու բարձր մտավոր կարողությունների շնորհիվ ստեղծված «բարիքների» աղբանոց, չքայքայվող նյութերի գերեզմանոց:

Էկոլոգիական ճգնաժամի ծավալներն առանձնապես ընդլայնվեցին XX դարի երկրորդ կեսից:

Եթե մինչև XX դարը մարդու գործունեությունն առաջադրում էր լոկալ (տեղային) բնույթի խնդիրներ, ապա դրանից հետո խնդիրները դարձան գլոբալ և ընդգրկեցին նույնիսկ տիեզերքը:

Ակադեմիկոս Վ. Ի. Վերնադսկու բնութագրմամբ՝ XX դարը դարձավ մեկնարկային՝ կենսոլորտից (բիոսֆերա) բանական (նոոսֆերա) ոլորտի անցնելու համար: Դա առանձնակի շեշտադրում ստացավ նշված դարի 40-60 թթ., երբ մարդը ոտք դրեց ատոմային և տիեզերական նվաճումների դարաշրջան: Սպառման ոլորտները տեղափոխվեցին նոր հարթություն և առաջադրեցին նոր խնդիրներ:

Երկար ժամանակ մարդը բնությանը նայել է որպես անսպառ պաշարների աղբյուրի: Սակայն բախվելով իր տնտեսական գործունեության բացասական արդյունքներին՝ նա աստիճանաբար հանգել է այդ պաշարներն ավելի ռացիոնալ օգտագործելու անհրաժեշտության գիտակցմանը:

Հնդկական առածը հաստատում է. «Երկիրը մենք ժառանգություն չենք ստացել մեր նախնիներից, այլ պարտք ենք վերցրել մեր սերունդներից»: Այո՛, պարտք ենք վերցրել, և հիմա եկել է այդ պարտքը վերադարձնելու ժամանակը: Մենք պարզապես պարտավոր ենք վերադարձնել պարտքը, այն էլ՝ հավելավճարով: Խնդրի լրջության գիտակցումը միավորում է մարդկության ջանքերը ամբողջ աշխարհում մի հասկացության մեջ, որը կոչվում է էկոլոգիական քաղաքականություն: Այն ներառում է միջազգային, պետական և հասարակական միջոցառումների համակարգ, որն ուղղված է մարդկային հասարակության և բնության փոխհարաբերությունների օպտիմալացմանը: Այդ քաղաքականության բուն նպատակը բնության պահպանությունն է ու էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը:

«Բնության պահպանություն» տերմինն առաջին անգամ լայնորեն սկսեց շրջանառվել 1913թ. Շվեյցարիայում անցկացված բնապահպանական առաջին Միջազգային համագումարից հետո: Ներկայումս ամբողջ աշխարհում մշակվում են բնապահպանական համալիր ծրագրեր, որոնք ընդգրկում են երկու կարգի միջոցառումներ.

- բնական պաշարների արդյունավետ օգտագործում և վերականգնում.
- միջավայրն աղտոտող թափոնների ազդեցության հնարավոր չեզոքացում:

Բնական պաշար է համարվում բնության ցանկացած օբյեկտ, որը մարդն օգտագործում է տնտեսական, արդյունաբերական կամ կենսապահովման նպատակով: Բնական պաշարներ են համարվում օդը, ջուրը, հողը, արեգակնային ու ռադիոակտիվ ճառագայթումը, օգտակար հանածոները, բույսերն ու կենդանիները: Բնական պաշարների արդյունավետ օգտագործման ու պահպանության համար կարևոր նշանակությաւն ունի դրանց ճիշտ դասակարգումը (տե՛ս հաջորդ էջի սխեման):

Բնական պաշարների այս դասակարգումը խիստ պայմանական է և լիովին չի արտացոլում իրերի իսկական վիճակը:

Այսպես, օրինակ, ջուրը համարվում է անսպառ պաշար, և նրա քանակը մի քանի անգամ գերազանցում է հասարակության տնտեսական ու արդյունաբերական սպառումը: Երկրագնդի ամբողջ բնակչությունն օգտագործում է քաղցրահամ ջրի միայն 12%-ը: Բայց մարդկությանը սպառնում է մաքուր ջրի




պակասը, որի պաշարը տարեցտարի կրճատվում է, որովհետև մարդիկ սերնդից սերունդ, դարեր շարունակ աղտոտված ջրերն ու արդյունաբերական թափոնները լցրել են գետերի, լճերի ու ծովերի մեջ: Անմասն չեն մնացել նաև գրունտային ջրերը, որոնք մշտապես աղտոտվում են հողի մեջ թաղված զանազան քիմիական նյութերից ու ռադիոակտիվ թափոններից:

Մեր մոլորակի բնակչության մեկ միլիարդից ավելին այսօր մաքուր ջրի պակաս է զգում, և նրանցից շատերը վատորակ կամ աղտոտված ջուր օգտագործելու հետևանքով տառապում են զանազան հիվանդություններից: ՄԱԿ-ի վիճակագրական տվյալներով՝ աշխարհի հիվանդանոցներում բուժվող յուրաքանչյուր չորրորդ մարդը տառապում է ջրի հետ կապված ախտահարումից: Անկախ ջրի աղտոտման ձևից և տևողությունից՝ կարելի է խոսել էկոլոգիական աղետի մասին, քանի որ անպայման խախտվում է հազարամյակների ընթացքում ստեղծված էկոհամակարգի հավասարակշռությունը, և վտանգվում է դրա գոյությունը:

Մյուս անսպառ պաշարներից է մթնոլորտային օդը: Իսկապես, մթնոլորտի հսկայական շերտը հուսալիորեն ծածկում է Երկիր մոլորակը և մի քանի հազար տոննայով գերազանցում բոլոր կենսաձևերին անհրաժեշտ քանակը: Պատկերն ավելի հուսադրող կթվա, եթե նկատի ունենանք, որ բնական ճանապարհով (բույսերի միջոցով) վերականգնվում են մթնոլորտի որոշ բաղադրամասեր (թթվածին, ազոտ), և չեզոքացվում են վնասակար արտանետումները: Սակայն այստեղ ևս միանշանակ խախտված է բնական հավասարակշռությունը, և մթնոլորտի աղտոտումը բազմակի անգամ առաջընթաց աճ ունի նրա բնական մաքրման գործընթացի նկատմամբ: Մթնոլորտի աղտոտման հետ կապված վտանգների թվին են պատկանում թթվային անձրևները, սմոգը, ջերմոցային էֆեկտը, օզոնային անցքերի առաջացումը և այլն: Տեխնոգեն այս վտանգների վերացման համար բնությունն ինքնակարգավորման մեխանիզմներ չունի, և աղետի կանխման միակ ճանապարհը մարդու խելամիտ վերաբերմունքն է:

Բնական մյուս կարևորագույն անսպառ պաշարներից է արեգակնային ճառագայթումը: Թվում է՝ այս առումով ոչ մի խնդիր չկա, և Արեգակը հավերժ պետք է փայլի երկնակամարում: Անշուշտ, արեգակնային էներգիան դեռ մի քանի հազարամյակ շռայլորեն կյանք կպարգևի Երկիր մոլորակին: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Երկիր հասնող արեգակնային էներգիայի միայն 1%-ն է վերածվում օգտակար էներգիայի և կուտակվում բույսերի կողմից ստեղծված նյութերի մեջ: Էներգիայի մնացած մասն անդրադարձվում է կամ կլանվում ջերմության ձևով:

Մնում է ենթադրել, թե ի՛նչ վտանգ է սպառնում մեր մոլորակին օրեցօր կրճատվող բուսածածկերի և աճող քաղաքների անհամաչափ հարաբերակցությունից:

Արեգակնային էներգիայի անսպառության հարցը կասկածի տակ է դնում նաև այն հանգամանքը, որ դարերով ճառագված էներգիայի հիմնական մասը կուտակված է բնական վառելանյութերի՝ գազի, նավթի և քարածխի ձևով: Դրանց պաշարները սպառվում են ոչ միայն մարդու կողմից ոչ խելամիտ շահագործման հետևանքով, այլ նաև գոյացման շատ դանդաղ տեմպերի պատճառով: Բնական այդ վառելանյութերն առաջացել են հազարամյակների ընթացքում, այն դեպքում, երբ օգտագործումը միայն վերջին երկու հարյուրամյակում մի քանի հազար անգամ գերազանցել է նախորդ դարերում օգտագործված ամբողջ վառելիքի ընդհանուր քանակը:

Ելնելով վերը նշվածից՝ մնում է ենթադրել, թե ինչ վիճակ է այն պաշարների հարցում, որոնք համարվում են սպառվող, եթե այսօր անսպառ պաշարների պահպանությունն անգամ համարվում է հրատապ լուծում պահանջող էկոլոգիական խնդիր:

Երկիր մոլորակը մեր տունն է, մեր ապաստանը, իսկ նրա առողջությունը՝ մեր գոյության միակ նախապայմանը: «Երբ արթնանում ես, կարգի՛ բեր քո մոլորակը»,-խուրհուրդ էր տալիս Փոքրիկ Իշխանը:

Հատկապես այս մտահոգությամբ դաստիարակված Երկիր Մոլորակի Քաղաքացին կարող է մտածել ապագա սերունդների առաջ իր պարտքի ու պատասխանատվության մասին: Այդ պատասխանատվության դաստիարակման կարևորագույն ձևերից մեկն էլ էկոլոգիական կրթությունն է:

Պետք է փաստել, սակայն, որ այս հարցի վերաբերյալ մեզանում միանշանակ կարծիք գոյություն չունի:

Ո՞ր տարիքից և ո՞ր կրթական աստիճանից սկսել էկոլոգիական կրթությունը, ի՞նչ ծրագրեր և դասագրքեր օգտագործել, ինչպե՞ս էկոլոգիական գիտելիքներն ինտեգրել ամբողջ կրթական համակարգին: Սրանք հարցեր են, որոնց շուրջ գոյություն ունեցող տարակարծությունը դեռևս հաղթահարված չէ, և քննարկումները շարունակվում են: Կարծիքները բազմաթիվ են, բազմամաբնույթ և հաճախ՝ տրամագծորեն հակառակ:

Մասնագետների մի խումբ գտնում է, որ էկոլոգիական կրթությունն առանձին բնագավառ է և պետք է ուսուցանվի որպես առանձին առարկա: Թե որքան արդյունավետ կլինի այսպիսի ձեռնարկումը ապագա քաղաքացու էկոդաստիարակության ընդհանուր պլանում, մենք ծանոթ ենք արդեն մի քանի տարի մեր դպրոցներում փորձարկվող էկոլոգիական զանազան ձեռնարկների ներդրման անհաջող փորձերից: Այստեղ խնդիրը բոլորովին էլ այն չէ, որ չկան որակյալ դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ:

Դա, իհարկե, այդպես է և չնչին պատճառ չէ: Բայց դա գլխավոր և առաջնային պատճառը չէ:

Ինչպես արդեն ասվեց, էկոկրթությունն ընդամենը էկոդաստիարակության մի բնագավառն է:

Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես էկոլոգիական քաղաքականության անբաժանելի մաս, ենթադրում է ավելի խելամիտ և լուրջ մոտեցում: Այն պետք է ներառի համալիր միջոցառումների ծրագիր, որի ստորաբաժանումներից կարելի է համարել՝

- ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը.
- գեղագիտական դաստիարակությունը.
- սոցիալ-հոգեբանական դաստիարակությունը:

**Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն**. հայրենասիրության դաստիարակման միջոցով ձևավորել պարտքի ու պատասխանատվության զգացում, ազգային հպարտություն, ազգային արժեքների պահպանության պատվախնդրություն: «Իմ տունն իմ ամրոցն է» հոգեբանության փոխարեն մշակել «իմ փողոցը, իմ բնակավայրը, իմ հայրենիքն իմ ամրոցն է» հոգեբանություն: Ձևավորել ոչ միայն իր շահերը պահպանող, այլև իր հարևանի իրավունքները հարգող քաղաքացի:

**Գեղա·իտական դաստիարակություն.** արմատավորել այն գաղափարը, որ միայն անաղարտ ներդաշնակության մեջ կարող է լինել իսկական գեղեցկությունը: Այսօրվա նուրբ հոգով զգայուն անհատը չի կարող վաղը անհոգի գործարար լինել:

**Սոցիալ-հո·եբանական.** էկոլոգիական ճգնաժամի հաղթահարման համար նորմալ կենսամիջավայրից բացի ոչ պակաս կարևոր խնդիր կարելի է համարել մարդկային հարաբերությունների էկոլոգիական մաքրության հաստատումը: Ցավոք, այս բնագավառը մշտապես դուրս է մնում էկոլոգների ուշադրությունից: Մինչդեռ գռեհիկ, անկիրթ հարաբերությունները և սպառողական հոգեբանությունը էկոլոգիական ճգնաժամի ավելի պակաս սպառնալիքներ չեն, քան գործարանների արտանետած վնասակար թափոնները կամ կտրված անտառաշերտերն ու որոշ կենդանիների անհետացման վտանգը:

Ամփոփելով՝ նշենք. էկոլոգիական դաստիարակությունն ավելի լուրջ և համալիր մոտեցում է պահանջում, քան նորացված դասագրքերի կամ լրացուցիչ դասաժամերի հատկացումն է: Էկոլոգիական դաստիարակությունը պիտի լինի պետական հոգածության և պետական հովանավորության առարկա, ավելին՝ դա նույնիսկ առանձին պետության խնդիր չէ, և չեն կարող լինել առանձնացված էկոլոգիական խնդիրներ և մասնակի լուծումներ: Պարզապես ժամանակն է հաղթահարել միջազգային բոլոր տարաձայնությունները, բարի կամք դրսևորել ու միասնական ուժերով հաղթահարել էկոլոգիական ճգնաժամը: Երկիր մոլորակը շատ երկար է հանդուրժել մարդու ոտնձգությունները, բայց պետք է հիշել, որ նրա համբերությունը ևս անսպառ չէ: Ուրեմն՝ վերադարձնենք պարտքերը, քանի դեռ ուշ չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. А. В. Михеев и др., Охрана природы, Москва, “Просвещение”, 1987.
2. В. Е. Борейко, Экологическая этика, М., 2002.
3. К. Н. Благосклонов, К. В. Авилова, Город и природа, М., 2002.

## ECOEDUCATION PART OF ECOPOLITICS

AREGNAZ SAHAKIAN
Dissertator of Yerevan Armenian State Pedagogical University
General Pedagogical Department Named After Kh. Abovyan

**Summary**

The scientific-technical progress broke the natural balance and a special form of exchange appeared: human born and anthropological. It has a negative impact on the nature and serves for the economical rights of mankind. The result is that many natural resources, such as energy resources, drinking water, fresh air, lands used for agriculture and others are under danger. An ecological crisis appeared, which endangers not only the future, but also the existence of humanity. The solution of this problem requires general efforts, good will and a clever attitude on behalf of all humanity. All these efforts must be directed not only towards the restoration of the natural balance, but also towards the upbringing of a society filled with a conscience of debt and responsibility before the nature. It is not a matter of separate countries, and there cannot be separate ecological problems and individual solutions. It is time to overcome all international arguments and put an end to the ecological crisis through performing good will and united strength.

## ЭКОВОСПИТАНИЕ - ЧАСТЬ ЭКОПОЛИТИКИ

АРЕГНАЗ САAКЯН
Соискатель кафедры общей педагогики Ереванского армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

Резюме

Научно-технический прогрес нарушил естественное равновесие природы, возникла особая форма обмена - антропогенная. Она для природы имеет отрицательный баланс и призванна служить хозяйственной цели человека. В итоге, под угрозой исчезновения оказались такие природные ресурсы, как энергоресурсы, земля пригодная для сельского хозяйства, вода, чистый воздух и другие.

Налицо экологический кризис, который не только угрожает будущему человечества, но и нынешнему существованию.

Разрешение вопроса требует всечеловеческих усилий, добрых намерений и разумных отношения. Эти усилия должны направится как на восстановление естественного равновесия, так и на воспитание разумнго общества.

Эта задача не отдельных государств, и невозможно частичное решение вопроса.

Давно пора отбросить все межгосударственные разногласия, проявить добрую волю и сообща преодолеть экологический кризис.

ՀԱԿՈԲ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ
Քիմիական գիտությունների թեկնածու

# ՋՈՒՐԸ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ «ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ» ԼԾԱ՞Կ

## ՀՀ ջրային նոր օրենսգիրքը հակասում է նաև ՄԱԿ-ի կոնվենցիային

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2002 թվականի հունիսի 4-ին ընդունեց ջրային նոր օրենսգիրք, որի նախագիծը կազմվել է USAID-ի և Համաշխարհային դրամատան (բանկի) դրամաշնորհներով:

Շահագրգիռ կողմը, օգտագործելով քարոզչական բոլոր միջոցները, ջրային նոր օրենսգրքի ընդունումը ներկայացնում է որպես ներկա և գալիք սերունդների շահերից բխող աննախադեպ մի իրադարձություն:

Եվ իրոք, կատարվածն աննախադեպ էր. մարդկության պատմության մեջ առաջին անգամ փորձ արվեց բնակչության հիմնական զանգվածին զրկել ջրից օգտվելու իր բնատուր իրավունքից (բացահայտ ոտնձգություն մարդու ապրելու իրավունքի նկատմամբ, այն էլ՝ օրենսդրորեն):

Ջրային նոր օրենսգրքի ընդունմամբ ՀՀ իրավական համակարգ ներմուծվեցին հեղափոխական այնպիսի գաղափարներ, որոնց կործանարար հետևանքները պարզորոշ են: Նոր օրենսգրքով ջրային ոլորտը տարվում է դեպի սեփականաշնորհում, ջուրը դառնում է ապրանք և մտնում շրջանառու ապրանքների ցանկ, ձևավորվում է ջրային շուկա, պայմաններ են ստեղծվում շահույթ հետապնդող գործունեություն ծավալելու համար:

Նոր օրենսգրքի նախագծի քննարկումների ընթացքում Հայաստանի «Կանաչների միությունն» իր առաջարկություններն ու դիտողությունները ներկայացրել է օրենսգրքի նախագծի աշխատախմբին, ՀՀ Կառավարությանը, Ազգային ժողովին և պատգամավորներից շատերին: Դրանք նաև հրապարակվել են[1]: «Կանաչների միության» հարցադրումներում գլխավոր մտահոգությունը վերաբերում է ջրային ոլորտի սեփականության իրավունքի, ջուրն ապրանք դարձնելու և այդտեղ շահույթ հետապնդելու բախտորոշ խնդիրներին:

Նախագծի աշխատախմբի ղեկավարներից ու անդամներից ոմանք պաշտոնական քննարկումներում հայտարարում էին, թե դիտողություններից շատերը տեղին են, որ ճիշտ չէ ջուրն ապրանք դարձնելը և ոլորտն ապապետականացում տանելը: Նրանք խոստանում էին, որ ՀՀ Ազգային ժողովի հաստատման կներկայացվի նախագծի մեկ այլ տարբերակ:

Կարճ ժամանակ անց Ազգային ժողով ներկայացվեց նախագծի փոփոխված տարբերակը: Ելնելով աշխատախմբի հավաստիացումներից՝ կարծում էինք, թե օրենսգրքի նախագծից հանվել են ջրային ոլորտը սեփականաշնորհում տանող և ջուրն ապրանք դարձնող կործանարար դրույթները: Սակայն ընդունված օրենսգրքից միանգամայն ակնհայտորեն մակաբերվում է, որ դա արված է միայն առերևույթ, մինչդեռ իրականում, ճիշտ է, նշված դրույթներն արտահայտող ձևակերպումները թեև հանված են հոդվածների վերնագրերից, բայց, ըստ էության, պահպանված են նախագծի բովանդակության մեջ, իսկ որոշ գաղափարներ ու դրույթներ վերախմբավորվել ու տարրալուծվել են մյուս հոդվածներում, առանձին բառեր ու եզրեր փոխարինվել են հոմանիշներով ևն: Եթե նախկին նախագիծը պարունակում էր 219, ապա «բարեփոխվածը»՝ միայն 121 հոդված: Նախկին տարբերակից հանվել են «Ջրային ռեսուրսների սեփականության իրավունքի բովանդակությունը», «Ջրային օբյեկտների, ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի սեփականության իրավունքի բովանդակությունը» և այլ գլուխներ, բազմաթիվ հոդվածներ, «սեփականաշնորհում», «ռեսուրսավճար» և այլ բառեր ու եզրեր: Միայն մեկ օրինակ. Ազգային ժողով ներկայացված Նախագծի առաջին տարբերակում «ջրային օբյեկտ» հասկացությունն օգտագործված էր տասնյակ հոդվածներում, այն առկա է նաև ՀՀ գործող օրենքներում և իրավական նորմատիվային փաստաթղթերում: «Ջրային օբյեկտ» բառակապակցությունը համապատասխանում է նաև բնակչության ընկալումներին: Միայն օրենսգրքի հեղինակներին հայտնի պատճառներով նոր օրենսգրքում «ջրային օբյեկտ»-ը փոխարինվել է «ջրային համակարգ»-ով՝ այն դեպքում, երբ մեր ընկալմամբ ջրային օբյեկտը ջրային համակարգի բաղադրամասերից միայն մեկն է:

Նախագծի այդ տարբերակը հապճեպորեն ընդունվեց Ազգային ժողովի արտահերթ նիստում: Իրականում՝ ընդունվեց նախագծի հին տարբերակը, քանզի ջրային համակարգը դեպի մասնավորեցում տանելը, ջուրն ապրանք համարելը, ռեսուրսավճար սահմանելը, ինչպես նաև ոլորտում շուկայական հարաբերություններ հիմնելը, հետևաբար և շահույթ հետապնդող գործողություններ ծավալելն արտացոլված են ջրային նոր օրենսգրքի ամբողջ բովանդակությունում:

Օրենսգիրքն ընդունվեց երրորդ ընթերցմամբ, ինչը տպավորություն է ստեղծում, թե օրենսգրքի քննարկումներն ու ընդունումը լուրջ ու հետևողական աշխատանքի արդյունք են: Սակայն ափսոսանքով պետք է նշենք, որ բոլոր ընթերցումներն իրականացվեցին ընդամենը 20 օրվա ընթացքում, իսկ երկրորդ ու երրորդ ընթերցումների քվեարկությունները կատարվեցին առանց լուրջ քննարկումների՝ այն դեպքում, երբ առաջին ընթերցման ժամանակ խնդրով շահագրգիռ պատգամավորներն իրենց գործընկերներին հավաստիացնում էին, թե երկրորդ և երրորդ ընթերցումներում հանգուցային խնդիրները բազմակողմանիորեն ու մանրամասնաբար կքննարկվեն, և անհրաժեշտ փոփոխություններ կկատարվեն, իսկ այժմ հարկ է նախագիծն ընդունել միայն որպես հիմք:

Առաջին ընթերցումից մի քանի օր անց՝ «Կայուն զարգացման ազգային գնահատման զեկույց»-ի ներկայացման ժամանակ (21.05.2002), ջրային նոր օրենսգրքի ստեղծման և ընդունման հարցում բուռն գործունեություն ծավալած պատգամավոր Գագիկ Թադևոսյանին ասվեց, որ խնդրի լուրջ քննարկման և առաջարկություններ ներկայացնելու համար անհրաժեշտ է գոնե մեկ կամ երկու ամսով հետաձգել օրենսգրքի նախագծի երկրորդ ընթերցումը, սակայն նա պատճառաբանեց, թե օրենսգրքի վավերացման ժամանակացույցը ՀՀ Կառավարության հետ համաձայնեցված է, և անհնար է այն փոխել:

2002 թվականի հունիսի 4-ին ՀՀ գյուղակադեմիայում պետք է տեղի ունենար ջրային նոր օրենսգրքի նախագծի քննարկումը, սակայն հրավիրվածներին հայտնեցին, թե քննարկումը կկայանա մի քանի օր անց, քանզի Ազգային Ժողովի պատգամավոր Գ. Թադևոսյանն այսօր կառավարություն է հրավիրվել և այդ պատճառով խնդրել է քննարկումը հետաձգել: Բայց, ինչպես հենց տեղում պարզվեց, նա մասնակցում էր ԱԺ այդօրվա արտահերթ նիստին, ուր քննարկվում էր ջրային նոր օրենսգրքի նախագիծը: Այդ նիստում, ինչպես լսեցինք ռադիոյով, նա իր հակիրճ ելույթն ավարտեց հետևյալ խոսքով. «Օրենսգիրքը երրորդ ընթերցման ներկայացնելուց առաջ ցանկանում եմ հայտնել, որ երեկ մեր հանձնաժողովի նիստում ջրային ռեսուրսների կառավարման վարչությունից ներկայացրին, որ երկրորդ ընթերցումից հետո կատարվել են միայն խմբագրական բնույթի՝ բառերի, տառասխալների փոփոխություններ, ինչը, ըստ էության, երկրորդ ընթերցումից հետո, իրավական կարգավորման առումով, ոչինչ չի փոխել: Մենք մեկ անգամ ևս շնորհակալություն ենք հայտնում մեր բոլոր գործընկերներին, պատգամավորական խմբերին և խմբակցություններին, որոնք ակտիվորեն մասնակցեցին օրենսգրքի ընդունման պրոցեսին: Մենք առաջարկում ենք օրենքն ընդունել 3-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ»:

Քվեարկության արդյունքն ապշեցուցիչ է. կողմ՝ 89, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3:

Զարմանալի է, որ տեսադաշտում չերևացին, ինչպես ցույց տվեց քվեարկությունը, ազգի և պետության շահերը կարևորող պատգամավորները: Այստեղ, թերևս, վճռորոշ դեր կատարեց նրբորեն մշակված և նույն կերպ մատուցված քարոզչությունը, երբ դրա իրականացնողներն իրենց ելույթներում մեծ ոգևորությամբ ու հիացմունքով երաշխավորում էին, թե ջրային նոր օրենսգրքի ընդունմամբ կապահովվի մեր ազգի ու պետության բարգավաճումը:

Օրենսգիրքն ընդունելուց մեկ շաբաթ առաջ՝ մայիսի 27-ին, Նախագծի երկրորդ ընթերցման ժամանակ (քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 84, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2) լուրջ քննարկում չծավալվեց, միայն լավատեսական կոչեր էին հնչում. «... Կառավարության և Ազգային ժողովի համագործակցության արդյունքում կարելի է լուրջ հաջողությունների հասնել, այդ թվում մեր երկրի համար կարևորագույն նշանակություն ունեցող այնպիսի օրինագծի ստեղծման գործում, ինչպիսին է ջրային օրենսգիրքը, որն ունի քաղաքական, սոցիալական և տնտեսական կարևոր նշանակություն» (պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի ելույթից):

Ջրային նոր օրենսգրքի ընդունմամբ ջրային ոլորտում հեղաշրջում կատարվեց: Արդյո՞ք այդքան դժվար է տեսնել, որ նոր օրենսգիրքը ոչ թե կյանքի, լինելության, այլ՝ կորստի ու մահվան ուղեցույց է թե՛ ազգային, պետական համակարգերի, թե՛ բնակչության մեծամասնության համար: Ցավալի և ամոթաբեր է, որ օտար պատվիրատուն այս անգամ ևս Հայաստանն օգտագործեց որպես փորձարարական բազա[2]:

Մեր հանրապետությունում այս օրենսգրքի ստեղծումը, ճիշտ կլինի ասել՝ ծայրաստիճան վտանգավոր գաղափարների դյուրին տեղայնացումը, թերևս, պայմանավորված է այն բանով, որ գործընթացը դրված էր բարձր հիմքերի վրա: Այն է՝ կային նպատակ և դրան հասնելուն անհրաժեշտ ֆինանսական ու քարոզչական միջոցներ և, իհարկե, ամենակարևորը (իմա՝ ամենավտանգավորը)՝ պետության ու ժողովրդի հոգսերն ու ապագան անտեսող պաշտոնատար անձինք, ազգային արժանապատվության գիտակցումից համարյա զուրկ ազգային փորձագետներ, սեփական առևտրային և այլ հոգսերով ծանրաբեռնված պատգամավորներ: Նաև չպետք է մոռանալ, որ ջրային ոլորտում «բարեփոխումներն» իրականացվեցին մի զորեղ մարդու (Գագիկ Մարտիրոսյան) գլխավորությամբ, որը տարիներ առաջ հեշտությամբ «բարեփոխեց» հանրապետության էներգետիկայի ոլորտը՝ լուրջ հարված հասցնելով սոցիալական կացությանը և ազգային անվտանգությանը:

Ջրային ոլորտում կատարված աղետաբեր հեղաշրջումը մեր հանրապետության բնակչության շրջանում որևէ անհանգստություն չառաջացրեց. կարծում ենք՝ այն պարզ պատճառով, որ, նախ՝ խնդրին առնչվող քարոզչությունը միակողմանի էր և է, իսկ օրենսգրքում ամրագրված գլխավոր նպատակը կիսաքողարկված է (հետևանքները մարդկանց պարզ կդառնան միայն տարիներ անց, երբ հետդարձի ճանապարհներն արդեն համարյա փակված կլինեն): Բնակչության անտարբերությունը, թերևս, բխում է նաև այն բանից, որ մարդիկ իրենց ավանդական աշխարհընկալմամբ չեն կարողանում հավատալ ու պատկերացնել, թե հնարավոր է մարդուն զրկել ջրից, նույնն է թե՝ օդից:

ՀՀ ջրային նոր օրենսգիրքը դառնալու է ուղեցույց՝ մյուս երկրներում այդ կարգի օրենքներ ընդունելու համար: Այս տեսանկյունից պարզ է, թե ինչու դրա անցնելիք ուղին հարթելու համար լուրջ գործունեություն է ծավալվում. գաղափարախոսության հովանավորները մեծ գումարներ են հատկացրել այդ օրենսգրքի ստեղծման համար (ըստ վստահելի որոշ տեղեկությունների՝ ջրային նոր օրենսգրքի և Սևանա լճին առնչվող 2-3 փոքրածավալ միջոցառումների համար «ամերիկյան օգնության» միջոցներից ծախսվել է մեկ միլիոն ամերիկյան դոլար: Նշված առումով անհրաժեշտ է, որ օգնության հայ համոզիչները (լոբբիստներ) ուշադրություն դարձնեն նաև այն խնդրին, թե ինչ նպատակներով են ծախսվում հատկացված գումարները): Օրենսգրքի ջատագովներից ոմանք պարգևներ են ստացել, օրենսգրքին վերաբերող գիտական թեզեր են գրում, ինչպես նաև իրականացվել է օրենսգրքի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատումը (ՇՄԱՌԳ) ևն:

Վերոհիշյալների իրականացումը կարելի է ող-

ջունել, եթե դրանք կատարվում են խնդրին անշահախնդիր պարզաբանումներ ու ճիշտ լուծում տալու նպատակով: Սակայն այլ տպավորություն է ստեղծվում: Օրինակ, ՇՄԱՌԳ-ն իրականացվել է ծայրաստիճան սեղմ ժամկետում և, պահանջվածի համեմատ, չնչին ֆինանսական հատկացման պայմաններում, երբ դա, մեր պատկերացմամբ, պետք է որ պահանջեր ավելի մեծ ֆինանսատեխնիկական միջոցներ, քան օրենսգրքի նախագծի ստեղծումը:

Հետապնդվող նպատակի և կատարված գործողությունների ուղղվածքի համադրումից կարելի է եզրակացնել, որ, թերևս, հորինվում է օրենսգրքի վստահության յուրօրինակ հավաստագիր:

### Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը

Այս կարևոր աշխատանքի մասին տեղեկացանք, երբ ջրային նոր օրենսգիրքն ընդունելուց երեք օր անց (07.06.2002թ.) կազմակերպվեց նշված օրենսգրքի նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության (հետայսու՝ Հաշվետվություն) հասարակական ունկնդրումը: Սա տոնահանդես էր հիշեցնում. մեր երկրի պաշտոնյաներն ու փորձագետները միջազգային կազմակերպություններին և նրանց պատվիրակներին շնորհակալություն էին հայտնում ֆինանսական օգնության համար և շնորհավորում՝ նրանց գաղափարների իրականացման, իսկ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները շնորհավորում էին ՀՀ Կառավարությանը և ծրագիրն իրականացնող աշխատակազմին՝ կարճ ժամկետում ջրային օրենսգրքի նախագծի պատրաստման և վավերացման առթիվ: Հյուրերը, ճանաչելով մեզ, մտածված կերպով սիրաշահում էին մեր ինքնասիրությունը: Նրանք հաճախ շեշտում էին, որ տաղանդավոր ու ընտրյալ ազգային մասնագետներն աննկարագրելի մեծ աշխատանք են կատարել, և, շնորհիվ ջրային նոր օրենսգրքի ու վերջին տարիներին ընդունված մի քանի այլ օրենքների, Հայաստանը դասվում է աշխարհի ամենաառաջադեմ և զարգացած երկրների շարքում:

Ջրային օրենսգրքի նախագծի ՇՄԱՌԳ-ի իրականացումը նույնպես մեծ գովեստի արժանացավ: Այն ներկայացվեց որպես այդ ոլորտում աշխարհում իր նմանը չունեցող և ամենաբարձր մակարդակով կատարված աշխատանք: Մեկ տարի անց ինչ-որ չափով վերահաստատվեց այդ գովերգությունը[3]:

Այդ ունկնդրման ընթացքում լուրջ քննարկման համար պայմաններ չկային: Ըստ նախօրոք կազմած ընթացակարգի, ինչպես դա արվում է «ունկնդրումներ» կոչվող միջոցառումներում, բոլոր զեկուցումներն արեցին ջրային օրենսգրքի նախագծի և նրա ՇՄԱՌԳ-ի պատվիրատուն և իրականացնողները: Դահլիճում, եզակի բացառությամբ, միակարծություն էր:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ օրենսգրքի նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության, այն էլ՝ ռազմավարական գնահատման իրականացումը կարևորագույն ընթացակարգ է, և հույս ենք հայտնում, որ հետագայում բախտորոշ ծրագրերը կյանքի կկոչվեն միայն նմանատիպ փորձաքննության դրական եզրակացությունից հետո: Բայց ո՜չ այնպես, ինչպես կատարվեց ջրային նոր օրենսգրքի նախագծի պարագայում, երբ այդ կարևորագույն աշխատանքը կատարելու համար խիստ սեղմ ժամանակ և չնչին ֆինանսներ էին հատկացվել, իսկ նախագիծն իրականացնողներից ոմանք մասնակցել են Հաշվետվության աշխատանքներին: Սակայն ամենամերժելին այն է , որ օրենսգրքի նախագծի և դրա ՇՄԱՌԳ-ի իրականացման պատվիրատուն ու ֆինանսավորողը ոչ թե ՀՀ Կառավարությունը կամ մեր իշխանության մյուս օղակներն են, այլ, դժբախտաբար, իրենց նպատակները հետապնդող օտարները. «ՀՀ ջրային օրենսգրքի 10-ամյա կիրարկման փորձը բացահայտեց նրա մի շարք բացասական կողմեր, ինչի պատճառով նա այսօր գրեթե կորցրել է իր գործունեությունը: Արդյունքում՝ ջրային ոլորտը գտնվում է անմխիթար վիճակում: Օրենսգրքին բնորոշ բացերը վերացնելու և այսօրվա քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավիճակին համապատասխան ջրային ոլորտում հարաբերությունները կարգավորելու նպատակով ARD կազմակերպությունը USAID-ի ֆինանսավորմամբ աջակցեց նոր ՀՀ ջրային օրենսգրքի մշակմանը և դրա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը» (Հաշվետվություն, էջ 41):

Ահա թե ինչ ծավալի է հասել դրսի թելադրանքը, այն էլ՝ արդեն բացահայտ: Անբացատրելի է, թե ինչո՞ւ ինքնիշխան երկրի ջրային ոլորտի «հարաբերությունները կարգավորելու» խնդրում այս աստիճան շահագրգռություն են ցուցաբերում օտարները:

Նշենք, որ մեր նպատակն այդ Հաշվետվության ընդհանուր վերլուծությունը չէ, և այստեղ չենք անդրադառնալու դրանում առկա օգտակար և ընդունելի վերլուծումներին ու եզրահանգումներին, այլ միայն խոսելու ենք որոշ թերությունների մասին, որոնք, մեր կարծիքով, բախտորոշ են:

Եվ այսպես, Հաշվետվությունում կարդում ենք. «Չնայած գործող ջրային օրենսգրքով սահմանված է միայն, որ Հայաստանի Հանրապետությունում ջրօգտագործումը վճարովի է, և բոլոր ջրօգտագործողները պարտավոր են վճարել ստացված ջրի համար, սակայն տնտեսական և սոցիալական բնույթի հիմնախնդիրների լուծման տեսանկյունից չի պարունակում այնպիսի սկզբունքային հարցերի, մոտեցումների վերաբերյալ լուծումներ, ինչպիսիք են՝ ... ջրօգտագործման ոլորտում վճարումների սահմանման հիմքերը և գանձման մեխանիզմները, ինչպես նաև սոցիալական արդարության ապահովման սկզբունքները, մասնավոր հատվածի ներգրավման (ներդրումների) մեխանիզմները ..., սոցիալական բնույթի հիմնախնդիրները, որոնք հաշվի կառնեն ջրի մատչելիությունը, հասանելիությունը, բաշխման առաջնայնությունները և արդարությունը: Բացի այդ՝ գործող ջրային օրենսգրքով (ԳՋՕ) լուծված չեն նաև ջրամատակարարման, ջրահեռացման ոլորտներում մասնավոր ներդրումների ներգրավման ձևերը, մեխանիզմները, կանոնակարգերը, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությունները գործարարության առարկա դարձնելու հնարավորությունը: Ջրերի օգտագործման և պահպանման ոլորտում բացթողում է համարվում այնպիսի գաղափարների բացակայությունը, ինչպիսիք են ջրային օբյեկտների դասակարգումը (ըստ տարածքի և նշանակության), ... ջրային շուկայի ստեղծման սկզբունքները...: ԳՋՕ-ում դեկ-

լարատիվ բնույթ կրող կամ կիրառման մեխանիզմ չունեցող հարցերին են դասվում ջրային քաղաքականությունը, ջրերի օգտագործման իրավունքը և դրանց պահպանման պայմանները...» ( էջ 4- 6):

Նույն Հաշվետվությունում ջրային նոր օրենսգրքի նախագիծը, այսինքն՝ ջրային նոր օրենսգիրքը, ներկայացվում է որպես բնակչության ու շրջակա միջավայրի շահերից բխող փաստաթուղթ. «ՇՄԱՌԳ-ի իրականացումը թույլ տվեց համոզվել, որ ջրային օրենսգրքի նախագծում (ՋՕՆ) ամրագրված պարզ և գործունակ ինստիտուցիոնալ կառույցը, որտեղ հստակ տարանջատված են ջրերի օգտագործման և պահպանության բնագավառում պետական կառավարումն իրականացնող մարմինների ֆունկցիաները, անշուշտ **կնպաստի ջրային ռեսուրսների խելամիտ և ռացիոնալ օ·տա·ործմանն ու պահպանությանը**, ինչն իր հերթին կնվազեցնի ջրային ռեսուրսների և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը: ... ՋՕՆ-ում **տնտեսական և սոցիալական հարցերի լուծումը հնարավորություն է տալիս տնտեսական լծակներ ստեղծել** ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի օգտագործման և պահպանության գործում, բավարար **ֆինանսական միջոցներ ներ·րավել** դրանց **պահպանության, անվտան· օ·տա·ործման և վերական·նման ·ործում**՝ այդպիսով կանխելով վնասակար ազդեցությունը մարդու և շրջակա միջավայրի վրա: ՋՕՆ-ում ներառված տարբերակված և **ճկուն սակա·նային քաղաքականության**, **ֆինանսական օ·նության տրամադրման, սոցիալական արդարության ապահովմանն** ուղղված այլ հարցերը կնպաստեն **սպառողների (քաղաքացիների) շահերի պաշտպանությանը**, ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը: ՋՕՆ-ի առավելություններից է նաև այն, որ ջրի հետագա սերունդների համար պահպանվող քանակն ամրագրված է որպես ազգային պաշար» (էջ 42-43) :

Այժմ փորձենք պարզել, թե վերը մեջբերված եզրակացություններն ինչքանո՞վ են համապատասխանում իրականությանը: Դրա համար անհրաժեշտ է հնարավորինս հակիրճ անդրադառնալ մեջբերումներում առկա խնդիրներից մի քանիսին:

Ա) Ինչպես պարզ երևում է, նախկին օրենսգրքում վճարումների և գանձման մեխանիզմների բացակայությանը հակադրվում է ջրային նոր օրենսգրքում ամրագրված, այսպես կոչված, «ճկուն սակագնային քաղաքականություն»-ը:

Գովաբանված «ճկուն սակագնային քաղաքականության» իմաստը հասկանալու համար ջրային նոր օրենսգրքից որոշ մեջբերումներ կատարենք.

Հոդված 1. «**Կար·ավորվող սակա·ին**՝ արդյունահանված, առաքված, մշակված և (կամ) տեղափոխված ջրի միավորի համար Կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված գին կամ գների համակարգ,

**հաշվարկային սակա·ին**՝ արդյունահանված, առաքված, մշակված և (կամ) տեղափոխված ջրի միավորի համար փաստացի կատարված ծախսերով և **ողջամիտ շահույթով** հաշվարկված գին»:

Հոդվածը 79. «Կարգավորվող սակագների ձևավորման սկզբունքներն են՝ 1) ծառայության արժեքի սահմանումը (ներառյալ՝ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված օգտագործման և պահպանման ծախսերը), հիմնական միջոցների մաշվածության փոխհատուցման ապահովումը, **2 ) ողջամիտ շահույթի** ստացման հնարավորության ապահովումը, **3) վարկերի սպասարկման ծախսերի** ներառումը, 4) պահանջվող ծառայության նվազագույն չափանիշների սահմանումը, 5) սակագնային կարգավորման միջոցով մատուցվող ծառայությունների որակի ապահովման և սպառողների վճարունակության հաշվի առնելը, 6) սպառման ծավալով, տարվա եղանակով, օրվա ժամերով, ծառայությունների տեսակներով պայմանավորված սակագների տարբերակումը, 7) հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը, 8) ջրի ազգային ծրագրի պահանջների պահպանումը, 9) հիմնավորված տեխնոլոգիական կորուստների ներառումը, 10) օրենսդրությամբ նախատեսված՝ հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը, 11) արդյունավետ ջրօգտագործման և ջրերի ստանդարտների պահպանման խթանների ստեղծումը, 12) մատուցվող ծառայության որակի բարձրացման խթանների ստեղծումը: Սահմանված կարգավորվող սակագինը կարող է արտահայտել ինչպես որոշակի թվային արժեք, այնպես էլ որոշակի պարամետրերից կախված հաշվարկային **բանաձև** ...»:

Մեջբերված հոդվածների սահմանումները դիտարկելիս մի պահ թվում է, թե խոսքը վերաբերում է ոչ թե կենարար ջրին, այլ, ասենք, ծխախոտին, ալկոհոլային խմիչքներին կամ խաղատներին: Սրանց պարագայում, բնականաբար, հասկանալի կլիներ, որ մեր իշխանությունները փորձում են օրենսդրորեն կանխարգելել այդ ոլորտների վտանգավոր զարգացումները:

Հետաքրքիր է իմանալ՝ 79-րդ հոդվածում թվարկված սակագների գոյացման բաղադրամասերի և 5-րդ հոդվածի պահանջի (կարգավորվող սակագնի չափը պետք է մոտեցվի հաշվարկային սակագնին) ներառմամբ արդյոք հաշվարկվե՞լ է, թե հետագա 10-20 տարիներին ի՜նչ չափերի են հասնելու խմելու և ոռոգման ջրի մեկ խորանարդ մետրի դիմաց վճարումները: Եվ եթե սակագներում ներառվելու են, օրինակ, վարկերի սպասարկման ծախսերը, ապա առատորեն վարկեր վերցնող պետական այրերն ինչո՞ւ մինչ վարկ վերցնելը հաշվի չեն առնում բնակչության կարծիքը: Բնակչությունը, եթե ծանոթ լինի վարկային պայմաններին ու նախապայմաններին, միգուցե ընդվզի վարկեր վերցնելու դեմ կամ համաձայնի ոչ թե 200-300 մլն, այլ, ասենք, 10-15 մլն դոլար վերցնելուն: Ավելի քան 10 տարի է, ինչ մեր կառավարությունը վարկեր է վերցնում և բնակչությանը դիտում է միայն որպես դրանց մարման երաշխավոր, երբ բնակչությունը, ըստ էության, մեկուսացված է վարկեր ստանալու և ծախսելու գործընթացից: Այդ հարցում գլխավոր միջնորդ-դերակատարները, նախ, այսպես կոչված, «ազգային» փորձագետներն են, ապա նոր միայն՝ պետական բարձրաստիճան պաշտոնյաները, ինչը կարող է հաստատել վարկային ծրագրերի մանրակրկիտ զննումը: Արդեն բոլորը գիտեն, որ վերցրած վարկերը մեծամասամբ փոշիանում են. զգալի մասը բաժին է հասնում վարկատուին, մյուս մասն օգտագործվում է կառավարման համակարգի «բարեփոխումների», ծրագրերի իրականացման գրասենյակների նորոգման ու թանկարժեք սարքավորումների ձեռք բերման,

գործուղումների, բարձր աշխատավարձերի հատկացման և այլ միջոցառումների համար, իսկ վարկերի մարման ամբողջ բեռը, ինչպես արդեն ասվեց, կրելու է այն բնակչությունը, որի գերակշիռ մասն արդեն չքավորության մեջ է կամ դրա եզրին:

Ապշեցուցիչ է, որ սակագներում օրենսդրորեն ներառվում է «**ողջամիտ շահույթի** ստացման հնարավորության ապահովում»-ը: Շահույթի այդ տեսակը կարող է անցնել բանականության ցանկացած սահման, իսկ այն, որ սակագինը կարող է արտահայտել ինչպես որոշակի թվային արժեք, այնպես էլ որոշակի պարամետրերից կախված հաշվարկային **բանաձև,** ոլորտը դարձնելու է զավեշտի ու ողբերգության միահյուսվածք: Այդ սահմանումները կարող են առավել սանձարձակ դարձնել կեղեքման, ստրկացման ու ավերման մոլուցք ունեցողներին:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ ներկայացնել մի ուշագրավ փաստ, որը, ճիշտ է, չի առնչվում Հաշվետվության հետ (Հաշվետվության առարկան՝ ջրային նոր օրենսգրքի 5-րդ տարբերակն է), սակայն պարզորոշ ցույց կտա, թե շահույթ ստանալու համար ճանապարհ հարթելու գործում ինչ ջանքեր են թափվում: Այսպես, ջրային նոր օրենսգրքի նախագծի առաջին տարբերակի՝ «Համատեղ կազմակերպության ստեղծմամբ պետական ջրային օբյեկտի օգտագործման իրավունքի փոխանցումը» հոդվածում (հոդված 63) ասվում էր, թե սույն հոդվածին համապատասխան ստեղծվող համատեղ կազմակերպության կազմակերպական-իրավական տեսակը սահմանվում է ՀՀ Կառավարության կողմից, սակայն այն **չի կարող լինել շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն**: Այդ հոդվածը լուրջ քննադատությունից հետո հանվեց օրենսգրքի նախագծից, սակայն, կարծում ենք, այն պահպանվել է օրենսգրքի «ծալքերում» կամ արտահայտվել ենթաօրենսդրական ակտերում: Դժվար չէ գուշակել, թե ինչու են ձգտում բացառել բարեգործության և, ընդհանրապես, շահույթ չհետապնդելու հնարավորությունները:

Ոչ ոք չի կարող առարկել, որ շատուշատ ոլորտներում պետք է ապահովվի ծախսածածկումն ու շահույթ ստանալը, բայց ո՛չ ջրային ոլորտում: Առանց հաշվի առնելու մարդու ապրելու և դրանից բխող մյուս իրավունքները, դարավոր կենսակերպը, ազգային ու կրոնական ավանդույթները՝ ջրին մոտենում են որպես սովորական ապրանքի, ավելին՝ ջուր-ապրանքը ենթարկում են բացարձակորեն ազատականացված շուկայի մարդակուլ կանոններին:

Կարծես հետզհետե հասկանալի է դառնում, թե իրենից ինչ է ներկայացնում առաջին հայացքից մեղմ ու ոչինչ չասող, սակայն սարսափազդու «ճկուն սակագնային քաղաքականություն»-ը: Անհասկանալի է, թե ինչից ելնելով է Հաշվետվության մեջ այդ քաղաքականությունը կապվում տնտեսական և սոցիալական խնդիրների բարելավման հետ, երբ ակնառու է, որ կապիտալի դաժան օրենքների պայմաններում «ճկուն սակագնային քաղաքականության» դրույթներով ղեկավարվելու դեպքում խոսք անգամ չի կարող լինել տնտեսության բարգավաճման և սոցիալական իրավիճակի բարելավման մասին: Հակառակը՝ մեծանալու են անապատացած տարածքները, նվազելու է հողի բերքատվությունը, տարածվելու է աղքատությունը, առավել է ակտիվանալու արտագաղթը, քայքայվելու են բնական համակարգերը, նվազելու են ջրային պաշարները...

Բ) Դժվար է համաձայնել, թե սոցիալական արդարության, ջրի մատչելիության ու բաշխման առաջնայնության խնդիրներում ջրային նոր օրենսգիրքը նախկինից լավն է: Ամենևի՛ն: Ի հակադրություն ջրային նոր օրենսգրքի՝ նախկինով հնարավորինս կարգավորված էին սոցիալական արդարության, բնակչության համար ջրի մատչելի լինելու, բաշխման առաջնայնության խնդիրները: Վերջինս հատկապես ցայտուն արտահայտված է նախկին օրենսգրքի ստորև բերվող հոդվածներում:

Հոդված 9. «Ջրերի վիճակի վրա ազդող նոր և վերակառուցվող ձեռնարկությունների, կառուցվածքների և այլ օբյեկտների նախագծման, տեղաբաշխման, շինարարության և շահագործման հանձնման, ինչպես նաև նոր տեխնոլոգիական պրոցեսների արմատավորման ժամանակ պետք է ապահովվի ջրերի արդյունավետ օգտագործումը, **առաջին հերթին բնակչությանը խմելու և կենցաղային կարիքների համար ջրով ապահովելու պայմանով...**»:

Հոդված 20. «Ջրային օբյեկտներն օգտագործման են տրվում **ամենից առաջ բնակչությանը՝ խմելու և կենցաղային կարիքների բավարարման համար:** Ջրային օբյեկտները միաժամանակ մի քանի նպատակով օգտագործման տալու դեպքում, **բնակչությանը խմելու և կենցաղային կարիքների համար ջրօ·տա·ործումը չի կարող սահմանափակվել՝ հօ·ուտ այլ նպատակներով ջրօ·տա·ործման**»:

Նոր օրենսգրքում այսպիսի սահմանումներ ընդհանրապես չկան:

Անհրաժեշտ է նաև հետևյալ համադրումը. նախկին օրենսգրքի 2-րդ հոդվածը սահմանում էր. «ՀՀ Ջրային **օրենս·րքի խնդիրներն են՝ բնակչության և տնտեսության կարիքների համար ջրային հարաբերությունների կար·ավորումը՝** ջրերի արդյունավետ օգտագործումն ապահովելու, ջրերը աղտոտումից, աղբակալումից և սպառվելուց ապահովելու, ջրերի վրա վնասակար ներգործությունը կանխելու և վերացնելու, ջրային օբյեկտների վիճակը բարելավելու նպատակով, **ինչպես նաև պետական կառավարման տեղական մարմինների, ձեռնարկությունների, կազմակերպությունների, հիմնարկների ու քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը,** օրինականության ամրապնդումը ջրային հարաբերությունների բնագավառում»,: Մինչդեռ նոր օրենսգրքի 7-րդ հոդվածի սահմանումը հետևյալն է. «Սույն օրենսգրքի խնդիրներն են՝ 1) ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծումը, 2) ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցումը, ջրերի ստանդարտների ու ազգային ջրային պաշարի մակարդակի պահպանումը և վերահսկողության իրականացումը, 3) ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը, 4) ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը, 5) բնակչությանն ու տնտեսությանը **կար·ավորվող սակա·ներով** անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը...»:

Ինչպես տեսնում ենք, նախկին օրենսգրքում բնակչության կարիքների ապահովումն առաջնային է, իսկ նորում՝ այդ խնդիրը երկրորդային է, այն էլ՝

վերապահումով՝ միայն **կար · ավորվող սակա · նով**:

Ահա և սոցիալական հիմնախնդիրների, ջրի մատչելիության և առաջնայնության հարցերում նոր օրենսգրքի բարոյական չափանիշը: Ազատականացված շուկա և ուրիշ ոչի՜նչ: Այս է ՀՀ ջրային նոր օրենսգրքի առաքելությունը:

Ուսումնասիրողները հեշտությամբ կհամոզվեն, որ ջրային նոր օրենսգրքում սոցիալական հարցերի լուծում չի նկատվում: Այդ օրենսգիրքն ակնհայտորեն խորացնելու է սոցիալական շերտավորումն ու լարվածությունը, ծառայելու է անարդարության հաստատմանը: Պարզից էլ պարզ է, որ իշխելու է ազատ շուկայի դաժան կարգը. առանձին անհատների համար կապահովվի գերշահույթ, ունևորների համար՝ անխափան և որակյալ ջրամատակարարում, իսկ անվճարունակները ջրից կզրկվեն:

Ճիշտ է, օրենսգրքով անվճարունակներին պետությունից հավելավճար է երաշխավորվում, սակայն դա չիրականացվելիք մի ցանկություն է, ճիշտ կլինի ասել՝ խաբկանք, քանզի մեր կառավարությունն այդպիսի հնարավորություններ չունի և ապագայում էլ դժվար թե ունենա: Հակառակը: Համազգային ունեցվածքը վաճառելու հետևանքով պետական բյուջեի մուտքերն օրեցօր նվազում և նվազելու են, մյուս կողմից՝ ռազմավարական ոլորտների և օբյեկտների ապապետականացումը կառավարությանը զրկելու է ոչ միայն սոցիալական հարցեր լուծելու, այլև նույնիսկ արտակարգ իրավիճակում անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու հնարավորություններից: Այլ հարց է, եթե փոխվի պետական քաղաքականությունը, և այն հարմարեցվի մեր ազգի ու պետության շահերին (ազգայնացնել ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներն ու օբյեկտները, արգելք դնել դեռ պետությանը պատկանողների մասնավորեցման վրա), ինչը, ցավոք, տեսադաշտում չի երևում, անգամ՝ չի ուրվագծվում:

Թողնենք ապագայի գուշակումը և խոսենք այսօրվա մասին: Օրինակ, «Բաշխիչ ցանցերի» վաճառքի ընթացքում նույնպես ասվում էր, թե պետությունն անվճարունակներին ֆինանսներ կհատկացնի, սակայն գործարքը կնքելուց ամիսներ անց պարզվեց, որ ՀՀ Կառավարությունը չկարողացավ լուծել նույնիսկ սոցիալական առաջնահերթ աջակցության արտոնություն ունեցող ընդամենը հինգ հազար ընտանիքի ապահովության խնդիրը: Այժմ նրանք ոչ միայն լուրջ խնդիրներ ունեն էլեկտրաէներգիայից օգտվելու հարցում, այլև էլցանցերի նոր տերը նրանցից պահանջում է վճարել տարիների ընթացքում կուտակված պարտքը: Մեկ այլ օրինակ. օրերս պաշտոնապես հայտարարվեց, որ 2004 թվականի հունվարի 1-ից մեկ խորանարդ մետր խմելու ջրի վարձը, այժմ ընդունված 56 դրամի (46 դրամ՝ ջրի, 10 դրամ՝ ջրահեռացման) փոխարեն, մայրաքաղաքում դառնալու է 120, մարզերում՝ 150, իսկ մոտակա 3 տարիներին՝ 300 դրամ: Հանրապետության պաշտոնատար անձինք գտնում են , որ դա չի նշանակում, թե ջրի գինը թանկանում է: Այսպես, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը հայտարարեց, որ այդ աճը բնակչության գրպանին չի «խփի», քանզի ջրաչափեր դնելուց հետո մարդիկ ջուրը խնայողաբար կօգտագործեն և, ըստ հաշվարկների, կվճարեն ոչ ավելին, քան վճարում էին: Ահա և մեր կառավարության «կարողությունները»՝ բնակչության սոցիալական խնդիրները լուծելու գործում:

Միայն ջրային նոր օրենսգրքով չէ, որ սոցիալական խնդիրների լուծման գործը, զուտ ձևականորեն, տրվում է կառավարությանը: Արդեն կարելի է ասել, որ այդպիսի սահմանումը զուտ դեկլարատիվ է և հիմնազուրկ: Բնակչության մեծամասնության աշխատավարձն ու թոշակն այնքան է, որ նրանք օգնության կարիք ունեն՝ ջրի, սննդամթերքի, հագուստի, էներգիայի, տրանսպորտի, առողջապահության, լուսավորության և այլ խնդիրներում, իսկ, ինչպես ասվեց, պետական գանձարանը կիսադատարկ է և շարունակում է դատարկվել: Հետևաբար, օրենսդիրները և խոշոր գործարքներ կնքողները, անվճարունակներին պետությունից հատկացումներ սահմանելով կամ երաշխավորելով, փաստորեն, մարդկանց մոլորեցնում են:

Գ) Հաշվետվությունում նախկին օրենսգրքի թերություններից է համարվում՝ մասնավոր ներդրումների ներգրավման ձևերի, ջրօգտագործման թույլտվությունները գործարարության առարկա դարձնելու և ջրային շուկայի ստեղծման սկզբունքների բացակայությունը, մինչդեռ նաև հենց այդ սկզբունքների առկայությամբ է, որ նոր օրենսգիրքը պատուհաս է դարձել ժողովրդի համար:

Ներդրումներ ասելով՝ մարդիկ, առաջին հերթին, հասկանում են ներդրման ոլորտի հուսալիության և անվտանգության ապահովում, տեխնոլոգիաների կատարելագործում, ինչը, հնարավորությունների սահմաններում, պայմաններ կստեղծի բնական համակարգերի, մարդու առողջության և սոցիալական իրավիճակի բարելավման համար: Օրենքի իշխանության երկրներում թերևս այդպես է: Սակայն այլ է պատկերը գաղութային և դրսից թելադրվող քաղաքականության ենթակա երկրներում: Օրինակ, մեր երկրում կատարված ներդրումները (վարկեր, դրամաշնորհներ, մասնավոր ներդրումներ) բերել են հիմնականում անցանկալի և նույնիսկ ողբերգական հետևանքներ: Դրանցից են. հանրային ունեցվածքը օտարերկրյա քաղաքացիներին կամ տրանսազգային ընկերություններին հանձնելը, աշխատատեղերի նվազումը և առկա գործազրկության պայմաններում օտարերկրյա աշխատուժի ներմուծումը[4], սպասարկման, ծառայությունների և ապրանքի գների կտրուկ բարձրացումը, պետական և ազգային անվտանգության խաթարումը... Մեր երկրի կարգերի նկատմամբ առանձին ներդրողների կողմից ոչ հարգալից և որոշ դեպքերում ամբարտավան վերաբերմունքը հասել է այն աստիճանի, որ, օրինակ, Նոր Հաճնի գործարաններից մեկում աշխատողների հանգստյան օրը ոչ թե կիրակին է, ինչպես ընդունված է մեր երկրում, այլ շաբաթ օրը, ինչպես ընդունված է «Թալմուդ»-ում: Դժգոհողներին առաջարկվում է գործարանից հեռանալ:

Որոշ ոլորտներում կատարված ներդրումները ցույց են տալիս, որ դրանք լինում են ոչ միայն անարդյունավետ, այլև՝ զուտ ձևական: Օրինակ, «ներդրում» է համարվում որոշ ձեռնարկություններում հարակից արտադրամասերի սարքավորումների վաճառքի հաշվին աշխատակիցներին աշխատավարձ տալը...

Հանրապետությունում ներդրումային ոլորտում տիրող քաոսում, պարզ է, խոսք չի կարող լինել հիմնավորված-չհիմնավորված, օգտակար-վնասարար

ներդրումների մասին: Մեր երկրում հանրային ունեցվածքի ապապետականացման և դրան զուգորդվող ներդրումային քաղաքականության տրամաբանությունը զավեշտական է: Դա նմանվում է այն բանին, որ, ասենք, գյուղացուն «բարեփոխումների» անվան տակ համոզեն-պարտադրեն, որ նա իր անասուններին և հողատարածքի մթերատվություն-բերքատվությունը (հարևաններից պարտք վերցնելու կամ իր միջոցների հաշվին) բարձրացնի և արդեն շահույթ ապահովող այդ ունեցվածքը վաճառի (այն էլ` անհեթեթության հասնող ցածր գներով և պայմանով, որ գնորդը պետք է լինի ուրիշ բնակավայրից ու օտարազգի), ապա իր ընտանիքի գոյությունը կապի միայն շահույթից հատկացվելիք բաժնեմասի հետ: Հարց է ծագում` արդյոք այդ ընտանիքը կարո՞ղ է ապագա ունենալ:

Հայաստանի Հանրապետության ապագան վարկերի և մասնավոր ներդրումների հետ կապող և բարեկեցիկ կյանք խոստացող մեր պաշտոնյաները նաև պարտավոր են նկատել, որ ՀՀ իշխանությունները գործնականում զրկված են իրենց իսկ երկրում իրականացվող ներդրումները վերահսկելու հնարավորությունից:

Հաշվետվությունում պատշաճորեն չի վերլուծված ջրային ոլորտում սեփականության իրավունքի և մասնավորեցման հետ կապված սոցիալ-տնտեսական և բնապահպանական խնդիրները և միջազգային փորձը: Չնայած որ այդ հարցերն արդեն ներկայացվել են ջրային օրենսգրքի նախագծին վերաբերող հոդվածում, սակայն, հաշվի առնելով այն, որ շահագրգիռ կողմը ներկայացնող ազգային փորձագետները, հիմք ընդունելով օրենսգրքում առկա խորամանկ ձևակերպումները, ամեն կերպ փորձում են համոզել` իբրև նոր օրենսգրքում ջուրն ապրանք չէ, մասնավորեցման մասին անգամ ակնարկ չկա, և ջրային ոլորտը պետության բացառիկ սեփականությունն է: Նրանց մերկացնողը հենց իրենց ստեղծած նոր օրենսգրքի ընդհանուր բովանդակությունն է: Ցավալի է, որ այդ օրենսգրքի նախագծի առաջին ընթերցման ժամանակ (14.05.2002թ.) հարցը ներկայացնող պատգամավորներից մեկի` Հ. Հակոբյանի զեկույցից մասնակիորեն այն տպավորությունն է ստեղծվում, որ նա, առատ փաստերի պայմաններում, կարծես թե չի նկատում ջրային ծառայությունների և օբյեկտների-համակարգերի` դեպի ապապետականացում տանող դրույթները: Ահա դրանից մի հատված. «Մենք քննարկում ենք հանրապետության ու ժողովրդի համար շատ կարևոր մի օրենքի նախագիծ, որի անհրաժեշտությունը կա` հաշվի առնելով համակարգում ստեղծված իրավիճակը: Իսկ համակարգում իրավիճակը հետևյալն է, եթե ամբողջ հողի և ամբողջ արդյունաբերության նկատմամբ մենք ընդունեցինք սեփականաշնորհման քաղաքականությունը, **ապա այս օրենքի նախա · ծով այժմ դա չկա:** Ճիշտ է, թե սխալ, հայտնի չէ: Ջրային համակարգը այժմ գտնվում է պետության հովանավորության տակ, որտեղ որ ներդրումների պակասի պատճառով ամբողջ համակարգում եղած կառույցները մաշվել են, որի պատճառով ջրի հսկայական կորուստներ կան»:

Որպես պատասխան գլոբալացման և հանրային ունեցվածքը տրանս-ազգային ընկերություններին հանձնելու խնդիրներում ոգևորված, այսինքն` անհեռատես քաղաքականություն որդեգրած մեր պետականքաղաքական գործիչներին և փորձագետներին` անհրաժեշտ ենք համարում որոշ քաղվածքներ ներկայացնել «Ջուրն ապրանք դարձնելը` սխալ դեղատոմս» աշխատությունից: «Հենց այն ժամանակ, երբ կառավարությունները խույս են տալիս ջրային ռեսուրսների կառավարման, հսկողության և կարգավորման պատասխանատվություններից, ջրի, սննդամթերքի, ուժանյութի փոխադրման անդրազգային (տրանսազգային) հսկա ընկերություններն իրենց հսկողության տակ են վերցնում ջուրը` դառնալով ջրուղիների և ամբարտակների, ջրերի շշալցման և արտահանման սեփականատերը: Նրանք մշակում են ջրի աղազրկման և զտման տեխնոլոգիաներ, շինում են ջրային կառույցներ, սեփականաշնորհման ճանապարհով իրենց հսկողության տակ են վերցնում ջուրը` տիրանալով թաղային և շրջանային ծառայություններին, օրինակ` կոյուղու և ջրամատակարարման ծառայություններին:

Երբ այդ ընկերությունները վիճում են, թե ջրային ծառայությունների սեփականաշնորհումը սոցիալապես օգտակար է, ապա դրա արդյունքում սոցիալական և միջավայրի խնդիրները դառնում են երկրորդական. գլխավոր է դառնում տնտեսականի հրամայականը և ընկերությունների շահույթն առավելագույնի հասցնելը: Նրանց նպատակը ջուրն ապրանք դարձնելն է:

Ես դեմ չեմ մասնավոր հատվածի կողմից շինությունների կառուցմանը, բայց դեմ եմ ջրային ծառայությունների և մատակարարման մասնավորեցմանը: Ճիշտ է, կառավարությունները իրենց երկրներում ջրի պահպանման գործում անհաջող գործ են կատարել, սակայն դրա լուծումն այս արժեքավոր ռեսուրսը` ջուրը, միջազգային ընկերություններին հանձնելը չէ: Այն ընկերություններին, որոնք խուսափում են ազգային պետական օրենքից և գործում են միջազգային օրենքներին անհամապատասխան` կառավարվելով միայն իրենց գործարքային-ընկերական առևտրի համաձայնագրերով:

Իշխանության կենտրոնացումը մի ընկերության ձեռքում և պետությունների անկարողությունը ջրային ծառայությունների կառավարումը հետ վերցնելու խնդրում ընկերություններին հնարավորություն է տալիս պետությանը պարտադրելու իրենց ցանկությունները: Այն նվազեցնում է քաղաքացիների նաև ժողովրդավարական ուժը:

Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում ջրային աշխատողների միությունը բացատրում է. «… Մարդկանց կյանքը կախված է ջրային ռեսուրսների արդար բաշխումից… ջուրը կյանք տվող սակավ ռեսուրս է, որը, հետևաբար, պետք է մնա համայնքի ձեռքում հանրային մատակարարման բաժնի միջոցով: **Ջուրը շահույթի համար չպետք է մատակարարվի, այլ կարիքները բավարարելու համար**»:

Քանի որ ջրի մատակարարման ծառայությունը բավականաչափ շահ չի բերում, ապա ջրային ընկերությունները փորձում են աստիճանաբար տիրանալ ջրի կառույցներին և ջրային իրավունքներին: Այդ նպատակով ստեղծում են մոնոպոլիաներ: Համաշխարհային բանկը քաջալերում է նման մոնոպոլիաների ստեղծումը:

… Ջրի գնի հարցն էր, որ հարյուր հազարավոր

բոլիվիացիների նետեց փողոց՝ բողոքի, երբ «Բեխտելը», Համաշխարհային բանկից քաջալերված, կրկնապատկեց ջրի հարկը:

...Աշխարհի բնակչության 12 տոկոսր օգտագործում է ջրի 85 տոկոսը: Ջրի սեփականաշնորհումը կտանի դեպի 2 շարքի աշխարհ – մարդիկ, որոնք կկարողանան ջուր գնել, և մարդիկ, որոնք չեն կարողանա ջուր գնել: Դա միլիոնավոր մարդկանց կստիպի ընտրելու իրենց կարիքները՝ ջուր կամ առողջապահական խնամք: Օրինակ, Անգլիայում բարձր ջրային հարկը ստիպեց մարդկանց ընտրելու՝ լվանալ թե չլվանալ սննդամթերքը, ընդունել լոգանք, թե չընդունել և այլն:

Միայն այն դեպքում, երբ ջուրը պահպանվում է որպես հանրային սեփականություն, մատակարարվում և պաշտպանվում է պետությունների կողմից, միայն այդ դեպքում ջուրը կարող է բացառվել առևտրական սակարկությունների գիշատիչ չափանիշներից:

Համաշխարհային բանկը ասում է, որ **աղքատներին ջրի նպաստ կտրվի**: Որևէ մեկը, ով ծանոթ է հատկապես 3-րդ աշխարհի խնդիրներին, գիտե, որ նման բան գոյություն չունի:

Մենք դեմ ենք առել մեր ժամանակի ամենամեծ մարտահրավերին: Պատասխանները տնտեսության համաշխարհայնացման ժխտման մեջ են... »[5]:

Հաշվետվության մեջ առկա այն եզրահանգումը, որ նախկին օրենսգրքում ջրային քաղաքականությունը և ջրերի օգտագործման իրավունքը դեկլարատիվ բնույթի էին և կիրառման մեխանիզմ չունեին, նույնպես վերանայման կարիք ունի: Պետք է ասել, որ ի տարբերություն նոր օրենսգրքից բխող քաղաքականության՝ նախկինը հնարավորինս ապահովում էր բնակչության՝ ջրից օգտվելու իրավունքը: Նաև այն պնդումը, թե նոր օրենսգրքով ապահովվելու է սպառողների շահերի պաշտպանությունը, արդարացի է միայն այնքանով, որքանով «սպառող» ասելով հասկացվի՝ վճարունակ սպառող:

Կարող ենք պնդել, որ ջրային նոր օրենսգիրքը տնտեսական, սոցիալական, սոցիալական արդարության, ջրի մատչելիության, մարդու և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության կանխման, ջրի խնայողության և այն գալիք սերունդների համար պահպանելու խնդիրներում տրամագծորեն զիջում է նախկին օրենսգրքին, ինչպես նաև չի համապատասխանում ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներին:

## «Ջուրը բոլորի համար է»

2002 թվականին ՄԱԿ-ի Կոմիտեն վավերացրել է «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» Կոնվենցիայի «Ընդհանուր մեկնաբանություն»-ը, նույնն է՝ «Ջրի իրավունքի մասին Պարզաբանում»-ը: Մեծ գնահատանքի արժանի և հիացմունք առաջացնող այդ փաստաթուղթը հույս է ներշնչում, որ ՄԱԿ-ը այսուհետ հավատարիմ կմնա մարդու իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև իր վրա վերցրած մյուս առաքելություններին և այլևս չի աջակցի միջազգային և ազգային իրավական փաստաթղթերում կասկածելի ու վտանգավոր գաղափարների թափանցմանը:

Այդ փաստաթղթում մասնավորապես ասված է.

«**Իր նշանակությամբ ջուրը մարդու համար թթվածնից հետո ·րավում է երկրորդ տեղը**:

**Ջուրն առաջին հերթին սոցիալական և մշակութային բարիք է, այլ ոչ թե որպես միայն տնտեսական ապրանք:**

Խմելու ջրի իրավունքը պետք է դիտարկել այլ իրավունքների հետ շաղկապված, **որոնցից ·լխավորը հանդիսանում է ապրելու իրավունքը և մարդկային արժանապատվության իրավունքը**:

Ջուրը երբեք չպետք է օգտագործվի որպես քաղաքական և տնտեսական ճնշման լծակ: Առևտրի ազատականացման համաձայնագրերը չպետք է սահմանափակեն երկրի ջրի իրավունքի իրականացման կարողությունը, և որ ներդնող կողմերը, վարկային պայմանագրերով և միջազգային այլ փաստաթղթերով փոխառություններ և վարկեր տրամադրելիս, պետք է հաշվի առնեն ջրի իրավունքը:

Վերջին 50 տարիներին նոր խնդիր է ի հայտ է եկել: Դա պոմպերով ընդերքի ջրերի չափից ավելի արտամղումն է, որի հետևանքով արտամղված ջրի վերականգնում տեղի չի ունենում:

Ջրին վերաբերող նորույթն այն է, որ տրանսազգային մասնավոր ընկերությունների և միջազգային առևտրի պրակտիկայում ջուրը համարվում է շուկայական ապրանք, որին պետք է վերաբերվել շուկայի օրենքներով: Վերջին տասնամյակներում այդ գաղափարն իրականացվել է տասնյակ շրջաններում, ուր ապրում են միլիոնավոր մարդիկ: Ջրին գին դրեցին այնտեղ, ուր մարդիկ այդ կենսական բարիքից օգտվում էին անվճար: Մասնավոր ընկերությունները ստացան կառավարման, շահագործման և նույնիսկ ջրամատակարարման հասարակական համակարգերի տիրապետման իրավունք: Ծաղկում ապրեց շշալցված ջրի առևտուրը: Հանդես են եկել միջազգային սահմաններով և օվկիանոսներով մեծ քանակության ջուր տեղափոխելու առաջարկություններ (գլխավոր նպատակը ջրամատակարարման և կառավարումը մասնավոր ընկերություններին հանձնելն է):

Ջրամատակարարման ոլորտի հապճեպ սեփականաշնորհման անցնելն արդեն խնդիր ու մտահոգություններ է առաջացրել՝ կապված այն հանգամանքի հետ, որ ջուրը կարևորագույն դեր է կատարում հասարակական ու մշակութային հարաբերություններում, ունի նաև էկոլոգիական ասպեկտներ, որոնք չեն կարող պաշտպանված և ապահոված լինել շուկայական ուժերի կողմից: Վարչական որոշ նպատակներ և մշակութային արժեքներ պետական մեծ աջակցություն ու ներգրավում են պահանջում, քանի որ սեփականաշնորհման որոշ ասպեկտներ կարող են անդառնալի հետևանքներ ունենալ:

Նախկինում ջրի շրջանառությունը սահմանափակվում էր ազգային և քաղաքական շրջանակներում: Այժմ ջուրը տեղափոխում են ուրիշ երկրներ և նույնիսկ մայրցամաքներ: Ջրի գլոբալ շուկան ջրով հարուստ երկրներում կարող է հանգեցնել բնակչության համար ջրի անբավարարության, ինչպես նաև էկոլոգիական խնդիրների:

Միջազգային առևտրի կանոնները բարդ են ու հակասական: Նրանց միասնականացնելու փորձերը բերում են շատ բարդ սխեմաների՝ առանց պատշաճորեն հաշվի առնելու էկոլոգիական, սոցիալական

և տնտեսական հետևանքները: Քանի որ ջրի միջազգային առևտրի հետ անմիջապես կապված իրավական նախադեպեր չկան, ապա դժվար է կանխատեսել այդ բնագավառում ընթացող և ապագա բանավեճերի արդյունքները: Սակայն ջրի արտահանման շուկայական հետաքրքրություններն աճում են, ինչն ավելի է բարդացնում ջրին առնչվող միջազգային հարաբերությունները:

Իրավաբանները վիճում են ջրի մեծածավալ առևտրի բնագավառում Առևտրի համաշխարհային կազմակերպության իսկողության, սահմանի որոշման (լիմիտավորման) կամ կարգավորման կարողությունների վերաբերյալ: Նրանք մասնավորապես կարծում են, որ ջրի մեծածավալ առևտուրը կարող է հակասել առևտրի և տարիֆների (սակագների) մասին Գլխավոր համաձայնագրի այն դրույթին, որով չափից ավելի և ոչ արդյունավետ օգտագործման դեպքում ջրային պաշարները համարվում են «չվերականգնվող» և սպառվող:

Ջրի սեփականաշնորհման ոլորտում առկա են վտանգավոր իրողություններ և կանխակալություններ. մասնավորի ձեռքն է անցնում հասարակական սեփականությունը՝ ջրի արտադրությունը, բաշխումը, ջրի ու ջրային ծառայությունների կառավարումը:

Սեփականաշնորհման պայմանագրերի կնքման արդյունքում կարող է վատանալ ջրի որակի պաշտպանությունը: Մասնավոր ընկերությունները շահագրգռված չեն ջրի աղտոտվածության մակարդակի նվազեցմամբ լուծել բնակչության առողջության երկարաժամկետ խնդիրները: Ընդհակառակը, ելնելով իրենց շահերից՝ ջրի աղտոտվածության և դրա հետևանքների մասին տալիս են նվազեցված կամ ոչ ճիշտ տվյալներ: Այդ իսկ պատճառով պահանջվում է ջրի որակի պետական և հասարակական մոնիտորինգ իրականացնելիս հանդես գալ խիստ քաղաքականությամբ:

**Սեփականաշնորհման փորձը ցույց է տալիս, որ օտարերկրյա ընկերությունն անմիջապես բարձրացնում է ջրի ·ինը, և աղքատ բնակչությունը զրկվում է այն ծառայությունից, որը նախկինում ուներ:**

Յամաշխարհային բանկի աջակցությամբ մասնավոր ընկերություններն իրենց ձեռքն են վերցրել Բուրկինա Ֆասոյից մինչև Յեմեն ընկած երկրների ջրամատակարարման իսկողությունը: Վարկեր տալու պայմաններով սեփականաշնորհվել է այդ երկրների ջրամատակարարման համակարգը:

**Ջրամատակարարման հապճեպ սեփականաշնորհման անցնելն արդեն խնդիր ու մտահո·ություններ է առաջացրել՝ կապված այն հարցի հետ, որ ջուրը կարևորա·ույն դեր է կատարում հասարակական ու մշակութային հարաբերություններում և ունի էկոլո·իական ասպեկտներ, որոնք շուկայական ուժերի կողմից չեն կարող պաշտպանված ու ապահովված լինել: Սեփականաշնորհման որոշ ասպեկտներ կարող են անդառնալի հետևանքներ ունենալ:**

**Ջրային ծառայություններին տիրանալու ձ·տումը սովորաբար առաջանում է թույլ պետական մասնահատված (սեկտոր) ունեցող երկրներում,** և հենց այդտեղ է, որ մեծ է անհաջող սեփականաշնորհման ռիսկը: Ուժեղ իշխանություններ ունեցող պետություններում սեփականաշնորհման գրավչությունը մեծ չէ:

Ջրամատակարարման սեփականաշնորհումը չպետք է կատարվի առանձնապես աղքատ շրջաններում, որոնք, որպես կանոն, ուժեղ քաղաքական ձայն և կենսական պահանջմունքները բավարարող միջոցներ չունեն, ինչպես հարուստ բնակիչները: **Այդպիսի սեփականաշնորհումը կարող է խորացնել հասարակության սոցիալական անհավասարությունը և ջրի տնտեսական անմատչելիությունը** (սեփականաշնորհման ջատագովները հաճախ խոսում են ջրի օգտագործման վարձի սպասվող կրճատումների մասին, **չնայած խոստումների, որպես կանոն, տեղի է ունենում վճարների աճ**):

Յաճախ խոսվում է ոչ արդյունավետ դրամական ներդրումների վերացման մասին՝ առանձնապես այն դեպքում, եթե դա կապված է ջրամատակարարման վրա կատարված ծախսերը ցանկացած եղանակով հետ ստանալու ձգտման հետ:

Խմելու ջրի մատչելիությունը պետք է ապահովի յուրաքանչյուր տնային տնտեսության (դա կարող է լինել միայնակ մարդ կամ ընտանիք, կամ միասին ապրող մարդկանց խումբ), ուսումնական հաստատության և աշխատանքային տեղամասի համար» [6]:

Ինչպես տեսնում ենք, ՅՅ ջրային նոր օրենսգիրքը հակասում է ՄԱԿ-ի Կոնվենցիային (գլխավորապես՝ օրենսգրքի 7, 21- 56, 76, 77, 79 հոդվածները):

ՄԱԿ-ի Կոնվենցիայի պահանջներին չի համապատասխանում նաև ջրային ոլորտում ՅՅ իշխանությունների վարած քաղաքականությունը: Օրինակ, նշված Կոնվենցիայում ասված է. «Ջրամատակարարումը հանդիսանում է պետության հիմնական պարտականություններից մեկը: Անհրաժեշտ ջրամատակարարում չապահովող պետական կառույցները խախտում են մարդու իրավունքները և միջազգային պայմանագրերը»:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՅՅ ջրային օրենսգիրքը մերժելի է:

Ջրի բնագավառում Յայաստանի Յանրապետության որդեգրած քաղաքականությունը հիմնավորված չէ: Այդ քաղաքականությունը պետք է բխի ժողովրդի ու պետության շահերից և ապահովի նրանց անվտանգությունը:

Պետք է հրաժարվել ջուրն ապրանք համարելու, ջրային ոլորտը դեպի մասնավորեցում տանելու, այդտեղ առք ու վաճառքի իշխանություն հաստատելու, շահույթ հետապնդելու գաղափարներից:

Ջուրը բնության բարիք է, և ոչ մեկին վերապահված չէ հաշվի չառնել այդ: Մարդուն ջրից զրկելը նույնն է թե՝ զրկել օդից:

---

[1] «Գարուն», 2002թ., թիվ 4:

[2] Քսաներորդ դարի սկզբին «աշխարհը կառավարելու» նպատակով ստեղծված սիոնիզմի և ամերիկյան իմպերիալիզմի միությունը Միջին Արևելքում տարածվելու համար հենարան էր փնտրում Հայաստանում, Սիրիայում և Պաղեստինում; Международный сионизм, история и политика, ,,Наука,, 1977, с. 115:

[3] «Հայաստանի ջրային օրենսգիրքը նորանկախ երկրներում

առաջին և միակ օրենսդրական փաստաթուղթն է, որը շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման ընթացակարգ է անցել» (Новости РЕЦ Кавказ, 2003г., выпуск 4, с. 14):

[4] Ըստ տվյալների՝ ԱՄՆ դեսպանատան կառուցման աշխատանքներում ընդգրկված տեղացի բանվորն ամսական ստանում է 200, իսկ Թուրքիայից եկածները՝ 1000 դոլար, Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ օտարերկրյա օպերատորն ամսական ստանում է 18500, իսկ «Զվարթնոց» օդանավակայանի նույնպես օտարերկրացի կառավարիչը՝ 33000 դոլար ...):

[5] Maude Barlow, Water Science and Technology, Vol. 43, N 4, pp 79-84, 2001, www.iwapublishing.com .

[6] Նյութը վերցված է. "Инновации в рациональное природопользование и охрану окружающей среды" գրքից, Ярославль, НПП "Кадастр", 2003, с. 100-121.

[7] Նույն տեղում, էջ 15:

[8] "Предложения по переходу к Устойчивому развитию стран, охваченных деятельностью региональных экологических центров", Тбилиси, 2002 г.

[9] «Կայուն զարգացման ազգային գնահատման զեկույց», Երևան, 2002թ., էջ 22-23:

[10] Նույն տեղում, էջ 7:

[11] "Голос Армении", 30 VIII, 2003 г.

---

# WATER AS A SOURCE OF IMFLUENCE FOR "REGULATING" THE NUMBER OF POPULATION?

## The New Water Code of the RA also Contradicts the Convention of the United Nations

HAKOB SANASARYAN
Candidate of Chemistry

### Generalization

The RA (Republic of Armenia) new water code main direction and contents come from "Steady Development" aim with isn't scientifically grounded and not familiar to human being. Hence, the new water code isn't grounded and it's at the same time a document, which tramples down the human rights and dignity. It's main aims are revolutionary, they come from out and deal with population and national goods. It contradicts the UNO Convention and isn't conformed with Armenian legislation and also has some contradictions between the codex's articles.

It's natural that the new water code will help to enlarge deserted places, will deteriorate the crop capacity, will spread the poverty will decay natural systems and will decrease the natural water's usage.

Whatever new water code can be called a right which will help to call water-goods, to create a water market, for individuals or companies to create a profitable right.

The code is incomplete; it doesn't include the whole water sphere.

### CONCLUSIONS

The RA new water code can be refused. In water sphere the AR civilization isn't grounded. That civilization must touch the people's goals and must provide their safety.

People should refuse to consider water as good, but to give concrete expression to water sphere, not to provide buying and selling in order to chase profit.

Water is a wonder of nature and none has the right not to consider it. To deprive human being of water means to deprive of air.

# ВОДА - РЫЧАГ ДЛЯ "РЕГУЛИРОВАНИЯ" ЧИСЛА НАСЕЛЕНИЯ?

## Новый водный кодекс РА противоречит также конвенции ООН

АКОБ САНАСАРЯН
Кандидат химических наук

### Заключение

Идейное направление и содержание нового водного кодекса Республики Армения вытекают из научно не обоснованной и не соответствующей бытию человека идеи концепции "Устойчивого развития". И следовательно, по существу, новый водный кодекс - документ необоснованный и попирающий достоинство и права человека. Основные идеи этого закона революционны, ввезены извне и направлены против интересов населения и государства. Он также противоречит конвенции ООН и не согласован с законодательством Республики Армения. Также есть несоответствия между отдельными статьями нового водного кодекса.

Очевидно, новый водный кодекс будет способствовать расширению опустыниваемых территорий, падению плодородия земли, распространению нищеты, разрушению природных систем, уменьшению водных ресурсов.

Новый водный кодекс, пожалуй, можно назвать законом, который превращает воду в товар, создает свободный рынок в водной сфере, гарантирует прибыль для частных лиц и корпораций.

Закон также неполноценен – он не вовлекает всю водную сферу.

### ВЫВОДЫ

Новый водный кодекс Республики Армения неприемлем.

Политика Республики Армения в водной сфере не обоснована. Эта политика исходит из интересов государства и народа и обеспечить их безопасность.

Необходимо отказаться от идей превращения воды в товар, от приватизации в водной сфере, от установления в ней власти купли-продажи и преследования прибыли.

Вода - это дар природы и никто не имеет права не учитывать это. Лишение человека воды все равно, что лишение его воздуха.

***ՀԱՍՄԻԿ ԴԵՐՁՅԱՆ***
*Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ*

# ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Էկոլոգիական դաստիարակությունը սովորողների մեջ էկոլոգիական պատասխանատվության զգացումի ձևավորման կարևորագույն միջոցներից է: Վերջին տասնամյակներում տեղի ունեցած բազմաթիվ խոշոր աղետները փաստեցին, որ արդի հսկայական նյութա-էներգատար արտադրության պայմաններում այդ արտադրությունների ամեն մի մասնակից իր անպատասխանատվության հետևանքով կարող է դառնալ բազմաթիվ դժբախտությունների պատճառ: Էկոլոգիական դաստիարակությունն ակնհայտորեն ոչ միայն ինչ-որ հատուկ էկոլոգիական առարկաների ուսումնասիրությունն է (որն, անշուշտ, անհրաժեշտ է), որքան դպրոցականների կողմից իրականացվող գործողություններում բնապահպանական խնդիրների հանդեպ բարձր պատասխանատվության դաստիարակումը և իրենց բնապահպանավտանգ գործողությունների հետևանքների կանխատեսումը: Գլխավորը բարոյականության հիմնախնդիրն է, որը տվյալ դեպքում «հատվում է» իրավունքի հիմնախնդրի հետ: Համաձայն ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի՝ «Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը»: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է անշեղորեն կատարել պետական մարմինների կողմից ընդունված այն իրավական ակտերի պահանջները, որոնք ուղղակիորեն առնչվում են բնական ռեսուրսների բանական օգտագործման, վերահսկողության, հնարավորության դեպքում՝ նաև վերարտադրման խնդիրներին:

Էկոլոգիայի վերաբերյալ նվազագույն գիտելիքների տիրապետումն անհրաժեշտ է քաղաքացու էկոլոգիական կուլտուրայի ձևավորման համար, ուստի ակնհայտ է, որ բոլոր նախադպրոցական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ անկախ պրոֆիլից, անհրաժեշտաբար պետք է դասավանդվեն էկոլոգիական գիտելիքների հիմունքները: Վերջինիս դասավանդման պարտադիր լինելը ՀՀ պետական էկոլոգիական քաղաքականության կարևորագույն սկզբունքներից է: Սովորողները դպրոցական հասակից դառնում են մեր պետության էկոլոգիական քաղաքականության բնագավառի իրավունքների և պարտականությունների կրողներ: Վերջինի՝ պարտականությունների իմացությունն ու դրանք իրականացնելու պատրաստակամությունը կարևոր են այնքանով, որքանով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը նախատեսում է վարչական, իսկ քրեական օրենսգիրքը՝ քրեական պատասխանատվություն էկոլոգիայի բնագավառում կատարված իրավախախտումների և հանցագործությունների համար:

Ի մտի ունենալով վերն ասվածը և ելնելով դրանից՝ մանկավարժները մատչելի և հասկանալի ձևով երեխաներին պետք է բացատրեն՝ ինչպես պահել իրենց շրջապատող բնական միջավայրում:

Դպրոցականների էկոլոգիական-իրավական դաստիարակության գործընթացը հանրակրթական առարկաների ուսումնասիրման ժամանակ իրականացվում է փուլերով:

Առաջին փուլն սկսվում է տարրական դպրոցից, երբ իրականացվում է շրջակա միջավայրի հետ երեխաների ծանոթացման գործընթացը: 3-րդ դասարանն ավարտող դպրոցականներն արդեն կուտակում են տարրական իրավական գիտելիքների պաշար, ինչպես նաև՝ օրենքի ուժով շրջակա բնական միջավայրի պահպանության մասին պատկերացումներ: Տարրական դպրոցում դպրոցականներն ստանում են ընդհանուր տեղեկություններ բնական կենսամիջավայրի աղտոտման դեմ պայքարի նպատակների և միջոցների, բնական զանազան օբյեկտների քայքայման և ոչնչացման վերաբերյալ, ծանոթանում են տեղական բնապահպանական մարմինների գործառույթներին, այդ մարմինների գործունեությանը, ինչպես նաև՝ հայրենի երկրի բնական հարստությունների խնայողության հիմնախնդիրներին: Բացի այդ՝ ուսումնական էքսկուրսիաների ընթացքում տարրական դպրոցի սովորողների մեջ մշակվում են որոշակի հոգածու վերաբերմունք և ձգտումներ՝ անաղարտ պահելու շրջակա միջավայրը, իրենց վարքով չխաթարելու բնության կատարելությունը:

Երկրորդ փուլում (4-8-րդ դասարաններ) տեղի է ունենում բնության՝ որպես հասարակական և պետական սեփականության մասին ունեցած գիտելիքների և պատկերացումների կատարելագործում, ինչպես նաև պատկերացում է տրվում բնական հարստությունների պահպանության և շահագործման կարգավորման իրավական մեխանիզմների մասին: Դրանց հիման վրա ձևավորվում են դպրոցականների էկոլոգիական-իրավական համոզմունքները: Դա, անտարակույս, պայմանավորված է նախ՝ սովորողների հոգեբանաֆիզիոլոգիական հնարավորությունների՝ դեռահասությանը բնորոշ կտրուկ աճով, ապա՝ հանրակրթական մի շարք բնական առարկաների ուսումնասիրությամբ (աշխարհագրություն, ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա և այլն): Թվարկված ուսումնական առարկաների դասաժամերին ոչ միայն հաղորդվում է էկոլոգիական հիմնախնդիրների իրավական ասպեկտներին վերաբերող այլազան տեղեկատվություն, այլև դպրոցականները սովորում են վերլուծել, համադրել և համեմատել հասարակական կյանքի ընկալելի փաստերն ու երևույթները, որոնք կարգավորվում են բնապահպանական իրավունքների նորմերով: Արդյունքում՝ ըստ ներքբերյալ խմբերի տարբերակվում են սովորողների կողմից յուրացված էկոլոգիական-իրավական նյութերը և բնության իրավական պահպանության բնագավառում գիտելիքները՝

ա) օրենքով պահպանվող բնական ռեսուրսների և տարածքների հիմնական տեսակները, դրանց նշանակությունը հասարակության տնտեսական կյանքում.

բ) բնության նկատմամբ բացասական անթրոպոգեն միջոցները, դրանց կիրառման հետևանքները.

գ) բնօգտագործման նկատմամբ վերահսկողության իրավական համակարգի տարրերը և շրջակա բնական միջավայրի պահպանությունը.

դ) բնական հարստությունների պահպանության վերականգնման և արդյունավետ շահագործման գործունեության բովանդակությունը, ձևերն ու մեթոդները:

Երրորդ փուլը ներառում է միջնակարգ դպրոցի 9-10 -րդ դասարանների սովորողների էկոլոգիական կրթությունը: Այն բնութագրվում է աշխարհագրության, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի մասին գիտելիքների գործնական

ուղղվածության բարձր մակարդակով: Այդ առարկաների ուսումնասիրման արդյունքում խորացվում և համակարգվում են բնապահպանական գիտելիքները, սովորողների մոտ շարունակում են ձևավորվել դրանց էկոլոգիական-իրավական կառուցվածքի մասին պատկերացումները: Տվյալ փուլի կարևորագույն առանձնահատկությունը համարվում է դասերի ընթացքում ՀՀ օրենսդրության գործող դրույթների ուսումնասիրումը, որով կարգավորվում է շրջակա բնական միջավայրի պահպանությունը: Միաժամանակ` սովորողները պարբերաբար ծանոթանում են այն միջոցառումներին, որոնք վերաբերում են շրջակա բնական միջավայրի պահպանությանը, օգտագործմանը և վերականգնմանը:

Այսպիսով` աճող սերնդի էկոլոգիական-իրավական դաստիարակության համար բնագիտական ցիկլի հանրակրթական առարկաների դերը դրսևորվում է հետևյալում`

♦ բավական ընդարձակ ձևով լուսաբանվում են հասարակության և բնական միջավայրի փոխհարաբերության իրավական ասպեկտները, քանի որ կան լայն հնարավորություններ բացահայտելու ժամանակակից բնապահպանական հիմնախնդիրները` իրենց բոլոր բարդություններով և հակասություններով.

♦ հանդիսանում են բնագիտական հիմք բնության պահպանության վերաբերյալ հայրենական օրենսդրության կարևորագույն կողմերի բացահայտման համար (մարդասիրությունը, գիտականությունը և այլն): Այդ պլանի վրա կարևոր դեր է խաղում ֆլորայի և ֆաունայի զանազան ներկայացուցիչների մորֆոլոգիայի և էկոլոգիայի առանձնահատկությունների վերաբերյալ ուսումնական նյութը.

♦ համեմատած այլ ուսումնական առարկաների հետ` մեծ չափով բարձրացնում են շրջակա բնական միջավայրի իրավական պաշտպանության բնագավառում աշակերտների ինտելեկտուալ հակվածությունը, նպաստում աճող սերնդի համապատասխան բնաճանաչողական հնարավորությունների հարստացմանը և զարգացմանը.

♦ աշակերտները միայն բնագիտական ոլորտի առարկաների ուսումնասիրման գործընթացում է, որ ծանոթանում են Հայաստանի բնական հարստությունների պահպանման և շահագործման կանոններին, բնապահպանական գործունեության ակտիվ ձևերին, ձեռք են բերում գործնական կարողություններ շրջակա բնական միջավայրի ռացիոնալ օգտագործման համար:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 05.07.1995):
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (առ 15.04.2001թ. փոփոխություններով և լրացումներով), «Մխիթար Գոշ», Երևան, 2001թ.:
3. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունվել է 18.04.2003թ.):
4. Акимова Т. А., Хаскин В. В. Экология, М., 2001.
5. Петрова В. В. Правовая охрана природы в СССР, учебное пособие, М., “Юрид. лит.”, 1976.
6. Розанов С. И. Общая экология, Санкт-Петербург, 2001.
7. Гайсин И. Г. Эколого-нравственное воспитание учащихся в процессе изучения естественно-научных дисциплин, М., 1995.
8. Дерябо С. Д., Ясвин В. А. Экологическая педагогика и психология, “Феникс”, 1996.
9. Зверев И. Д. Экология в школьном обучении. Новый аспект образования, М., “Знание”, 1980.
10. Зверев И. Д. Ответственность перед природой. Биология в школе, 1987.
11. Иванов С. Н. Дифференцация обучения как средство индивидуализации целостного педагогического процесса. Сб. науч. тр., Минск, 1990.


## THE REALIZATION OF SCHOOL-CHILDREN’S ECOLOGICAL-LEGAL EDUCATION IN THE PROCESS OF TEACHING NATURAL SUBJECTS


HASMIK DERDZYAN

Dissertator of Yerevan Armenian State Pedagogical University General Pedagogical Department Named After Kh. Abovyan


**Summary**


In author’s opinion, Ecological education of school-children is one of the most important tasks of forming feeling of ecological responsibility.

Since school age they become bearers of rights and duties in the field of state ecological policy. The process of Ecological-Legal education of school-children during studies on general education subjects is carried out by stages.

The first stage begins in primary school, when environment in learned.

The school stage (4-8 classes) takes place, in the process of improving the pupils’ knowledge and ideas of nature as social and state property are perfected their nation about natural resources and its use are formed.

The third stage includes studies in 9-10 classes of secondary school. In the stage the main attention is put to legislation of the Armenian Republic which controls protection of the environment.


## ОСУЩЕСТВЛЕНИЕ ЭКОЛОГИЧЕСКО-ПРАВОВОГО ВОСПИТАНИЯ ШКОЛЬНИКОВ В ПРОЦЕССЕ ПРЕПОДАВАНИЯ ЕСТЕСТВОВЕДЧЕСКИХ ПРЕДМЕТОВ


АСМИК ДЕРЦЯН

Соискатель кафедры общей педагогики Ереванского армянского государственного педагогического университета им. Х. Абовяна


**Резюме**


По мнению автора, экологическое воспитание учащихся является одним из важнейших задач для формирования чувства экологической ответственности.

Учащиеся со школьного возраста становятся носителями прав и обязанностей в сфере государственной экологической политики. Процесс эколого-правового воспитания школьников во время изучения общеобразовательных дисциплин осуществляется поэтапно.

Первый этап начинается с начальной школы, когда проводится изучение окружающей среды.

Второй этап (4-5 классы) осуществляется во время совершенствования у школьника имеющихся его знаний и представлений о природе как об общественной и государственной собственности, формирования у него представлений о защите природных богатств и об их использовании.

Главной особенностью третьего этапа, охватывающего обучение в 9 -10 классах средней школы, необходимо считать изучение основ законодательства Республики Армения, регулирующих охрану окружающей среды.

***ՀՐԱՅՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ***
*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
***ՍԻԼՎԱ ՍԻՄՈՆՅԱՆ***

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱ

«Գլոբալիզացիա» (global – համաշխարհային, globalization – համաշխարհայնացում)[1] հասկացությունն իր ժամանակակից նշանակությամբ լայն կիրառություն է ստացել դեռ անցյալ դարի 60-ական թվականների վերջին, երբ շատ երկրների գիտնականներ, անհանգստացած աշխարհում կուտակված հակասությունների խորացմամբ, սկիզբ դրեցին գլոբալ համակարգային փոփոխությունների և դրանց հնարավոր հետևանքների հետազոտմանը: Ոմանք համարում են, որ գլոբալացումը մշակութային երևույթ է և, այլ իրողությունների թվում, ուղղորդում է մշակութային որոշակի արժեքների համընդհանուր տարածումն ու պարտադրումը: Ուրիշները գլոբալացումը համարում են քաղաքական հայեցակարգ, որն առաջին հերթին մարտահրավեր է նետում ազգային ինքնությանը և անկախ երկրների իրավունքներին: Գիտնականներից շատերը «գլոբալացումը համարում են տնտեսական երևույթ և բնութագրում որպես ապրանքների, ծառայությունների, կապիտալի, գաղափարների և տեխնոլոգիաների գլոբալ շուկաների ձևավորման, ինչպես նաև պետությունների, դրանցում գոյություն ունեցող ինստիտուտների, ազգային մշակույթների և այլ սուբյեկտների փոխկապակցվածության և փոխազդեցության ուժգնացող գործընթաց»[2]:

Ամերիկացի հետազոտող Տ. Ֆրիդմանի բնորոշմամբ՝ գլոբալիզացիան շուկաների, ազգ-պետությունների, տեխնոլոգիաների անսպասելի ինտեգրացումն է, որը թույլ է տալիս անհատներին, կորպորացիաներին և ազգ-պետություններին հասնել աշխարհի ցանկացած կետին ավելի արագ և էժան, քան երբևիցե նախկինում...:

Գլոբալիզացիան նշանակում է ազատ շուկայի կապիտալի ներթափանցում գործնականորեն աշխարհի բոլոր երկրներ: Գլոբալիզացիան ունի տնտեսական կանոնների իր սեփական «հավաքածուն», որոնք հիմնվում են ազգային տնտեսությունների վերակարգավորումների, սեփականաշնորհումների և հայտնագործությունների վրա և միտված են արտասահմանյան կապիտալի համար իրենց գրավչությունը մեծացնելուն:

Շուկաների և մշակույթների գլոբալիզացիայի ընթացքում գլոբալիզացիան բացատրող նոր լիբերալ տեսությունը ենթադրում է առանձին երկրների ինքնիշխանության թուլացումը, «աշխարհի քաղաքացու» նոր տիպի ձևավորումը, որոնց լոյալությունը ուղղված է արդեն ոչ թե առանձին կառավարություններին, այլ արտապետական կառույցներին[3]:

Գլոբալացումը միաժամանակ դիտարկվում է որպես և՛ սոցիալական, և՛ պատմական երևույթ, որն առնչվում է տնտեսական ակտիվության արագ աճին, ընդ որում՝ ոչ թե մեկ պետության ներսում, այլ՝ տարբեր պետությունների միջև:

Իբրև պատմական միտում՝ գլոբալիզացիան նորություն չէ: Սակայն օբյեկտիվ գործընթացի զարգացման ներկա փուլում գործ ունենք մասշտաբների էական ընդլայնման հետ, որն իր հերթին հին արժեքների նկատմամբ վերաբերմունքի վերանայում և վերագնահատում է պահանջում: Գլոբալացումը համաշխարհային ինտեգրացում է: Այդպիսի ծավալուն գործընթացները բնորոշ են եղել աշխարհին պատմական որոշակի փուլերում: Նորն այսօր միայն ինտեգրացման արդյունավետության ու աստիճանի և այն երկրների ու մարդկանց թվի մեջ է, որոնք ի վիճակի են կամ պարտադրված են մասնակցելու այդ գործընթացներին և կրելու են դրանց ազդեցությունը:

Ժամանակակից գլոբալիստիկայում սկզբունքային նշանակություն ունի այն հարցը, թե ո՞ր հիմնախնդիրները համարել համամարդկային: Այս հարցին պատասխանելն այնքան էլ հեշտ չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից: Ժամանակակից աշխարհը շատ բարդ է, բազմազան, հարաշարժ և հակասական: Նախկինում մեր մոլորակը չի ենթարկվել այնպիսի ֆիզիկական և քաղաքական գերծանրաբեռնվածությունների, որպիսին արդի դարաշրջանում: Երբեք մարդն այսքան չի արդյունահանել և երբեք այսօրինակ անօգնական չի հայտնվել իր իսկ մեղքով ստեղծված արհավիրքների առջև: «Ցավոք, մարդկությունը չափազանց ուշ սկսեց գիտակցել, որ այս երկրագունդը իր հնարավորություններով անսահմանափակ չէ, որ նրա ռեսուրսներն անսպառ չեն, որ այն ամբողջ մարդկության ընդհանուր տունն է, և այդ տունը խնամքի և հոգատարության կարիք ունի»[4]: Համենայն դեպս, ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող հիմնախնդիրները, հակասությունները և դժվարությունները միանման բնույթ և մասշտաբներ չունեն: Դրանց մի մասը հետևանք է համաշխարհային քաղաքականության, մյուսները՝ գիտատեխնիկական հեղափոխության և մարդու տնտեսական գործունեության, երրորդները՝ բնական պայմանների, ուր բնակվում է մարդը: Դրանցից միայն մի քանիսն ունեն գլոբալ բնույթ, իսկ մյուսները լոկալ և ռեգիոնալ բնույթի են:

Շատ գլոբալագետներ տարբեր երկրներում փորձում են կազմել համամարդկային հիմնախնդիրների ցանկը: 1991 թ. Մյունխենում լույս տեսած «Մարդկային ներուժի և համաշխարհային պրոբլեմների հանրագիտարանի» հեղինակները որպես գլոբալ թվարկել են ավելի քան 12 հազար հիմնախնդիրներ:

Ընդհանրացված և համաձայնեցված չափանիշներից կազմված համակարգի համաձայն՝ գլոբալ են համարվում հետևյալ ժամանակակից խնդիրները, որոնք կամ երբ՝

- այս կամ այն չափով բախվում են մարդկության, բոլոր պետությունների և ազգերի, երկրագնդի ամեն մի առանձին բնակչի կենսական հետաքրքրությունները.
- չնայած առանձին երկրներում կամ շրջաններում իրենց դրսևորման բնույթին՝ վերջին հաշվով ձեռք են բերում համաշխարհային մասշտաբներ.
- ձեռք են բերում սուր բնույթ և սպառնում են ոչ

միայն մարդկության դրական զարգացմանը, այլ նաև քաղաքակրթության գոյությանը, եթե չգտնվեն այդ խնդիրների լուծման կառուցողական ուղիները.

• իրենց լուծման համար պահանջում են համաշխարհային հանրության, բոլոր երկրների ու ազգերի միահամուռ ջանքերը:

Կարևոր է նշել, որ գլոբալ հիմնախնդիրները բնութագրվում են համամոլորակային մասշտաբներով, սրությամբ, հարաշարժությամբ, համալիրությամբ և փոխկապակցվածությամբ:

Այս համատեքստում գիտնականներն առաջին հերթին խոսում են միջուկային պատերազմի առաջացման գոյություն ունեցող վտանգի, ողջ աշխարհում խաղաղության հաստատման, շրջակա միջավայրի պահպանման, էթնոքաղաքական, էներգետիկ, պարենային, ժողովրդագրական, համաշխարհային օվկիանոսի հարստությունից ճիշտ օգտվել կարողանալու, տիեզերքի նվաճման, զարգացող երկրների տնտեսական հետամնացության հաղթահարման, կյանքի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների վերացման, բուժման խնդիրների շուրջ:

Ժամանակակից գլոբալիզացիան իրենից ներկայացնում է կենսական նշանակություն ունեցող համամարդկային խնդիրների մասին գիտելիքների փոխկապակցված համակարգ: Գլոբալիզացիոն զարգացման գործընթացում մեծ ուշադրություն է հատկացվում ինչպես այն խնդիրներին, որոնք ունեն քաղաքական բնույթ կամ կապված են քաղաքական ոլորտի հետ, այնպես էլ դրանց լուծման ուղիների ուսումնասիրությանը և հայտնաբերմանը: Այդ պատճառով մեր օրերում գլոբալիզացիան եւ քաղաքագիտությունը գտնվում են սերտ կապի մեջ:

Սա էլ հանգեցրեց նոր գիտական ուղղության՝ քաղաքական գլոբալիզացիայի ձևավորմանը:

Քաղաքագիտական տեսանկյունից՝ գլոբալ խնդիրներ երևույթի ուսումնասիրության մեջ ռուս քաղաքագետ Մ. Վասիլևն առանձնացնում է չորս հիմնական մոտեցումներ՝

1. Համամարդկային խնդիրների ուսումնասիրումը քաղաքական ասպեկտով:

2. Առանձին համամարդկային խնդիրների և դրանց՝ ինչպես միջազգային կապերի համակարգի, այնպես էլ համաշխարհային քաղաքականության որոշակի ուղղությունների փոխադարձ կապերի քաղաքագիտական վերլուծությունը:

3. Որոշակի տարածշրջաններում գլոբալ խնդիրների դրսևորման, վերջիններիս՝ տվյալ տարածաշրջանում քաղաքական իրավիճակի զարգացման վրա ազդեցության ուսումնասիրումը:

4. Քաղաքագլոբալիստիկական ուսումնասիրությունների տեսամեթոդաբանական հիմքերի ձևավորումը[5]:

Առաջին մոտեցման շրջանակներում շատ արդիական է համամարդկային խնդիրների առաջացման և սրման պատճառների ուսումնասիրությունը: Ըստ գիտնականների՝ համամարդկային խնդիրները կապվում են սահմանափակումների կամ, ինչպես ընդունված է անվանել, մարդկային հասարակության աճի սահմանների գոյության հետ: Հարկ է նշել, որ այս սահմանափակումները մասնագետների մի մասը մարդկային զարգացման ճանապարհին չի համարում անհաղթահարելի: Այդ խնդիրները բաժանվում են 2 խմբի՝ ներքին և արտաքին:

Որոշ գլոբալիստներ (Ջ. Ֆորեստեր, Դ. Մեդոուզ) նշում են, որ աշխարհի սահմանները ֆիզիկական բնույթ ունեն և շատ ընդհանուր ձևով արտահայտվում են նրա ավարտելիության ու հեշտ կործանելիության մեջ: Այդ սահմանները կոչվում են արտաքին, և դրանց հետ են կապվում այնպիսի համակարգային խնդիրներ, ինչպիսիք են բնական ռեսուրսներով ապահովման, շրջակա միջավայրի աղտոտման, ուրբանիզացիայի և այլ խնդիրներ: Առաջին անգամ արտաքին սահմանները մանրամասնորեն ներկայացվեցին Հռոմեական ակումբի համար պատրաստված Մեդոուզի «Աճման սահմանները» զեկուցման մեջ[6]:

Համամարդկային խնդիրների ուսումնասիրման համար Մեդոուզն առաջին անգամ կիրառեց համակարգչային մոդելը, որի հիման վրա փորձեցին կանխատեսել մարդկության զարգացման հնարավոր ուղիները գլոբալ խնդիրների սրման պայմաններում. Մեդոուզն ու նրա գործընկերները եկան այն համոզման, որ մարդկային հանրության «անսահմանափակ աճի» դեպքում մարդկությունը կկործանվի արդեն XXI դարի կեսերին՝ արտաքին սահմաններին հասնելու պատճառով: Այդպիսի հեռանկարից խուսափելու համար առաջարկվեց գլոբալ հավասարակշռության հայեցակարգը, որը ենթադրում է համաշխարհային համակարգի այնպիսի վիճակ, երբ բնակչության քանակը և արդյունաբերական արտադրությունը մնում են անփոփոխ, իսկ դրանց փոփոխությանը նպաստող ուժերը պետք է լինեն հստակ կարգավորված հավասարակշռության մեջ[7]:

Գիտնականների մեկ այլ խումբ (Է. Լասլո, Գ. Բիերման) համարում են, որ մարդկության զարգացման ուղիների մեջ որոշիչ են ոչ թե արտաքին, այլ ներքին սահմանները: Ներքին սահման ասելով՝ հասկանում են մարդկանց և հասարակության կենսագործունեության մեջ հոգեբանական, մշակութային և հիմնականում քաղաքական սահմանները, որոնք դրսևորվում են անհատական և հանրային ղեկավարման, ինչպես նաև անպատասխանատու և անհեռատես քաղաքական գործունեության մեջ[8] (տե՛ս աղյուսակ 1):

Այսպիսով՝ քաղաքական ղեկավարման պատասխանատվությունը և տեղեկացված լինելը ժամանակակից աշխարհում հանդիսանում են կարևոր գործոններ, որոնք ազդում են գլոբալ հիմնախնդիրների վրա: Ներկայումս տեղի է ունենում միջազգային հարաբերությունների և դրանց զարգացման հետ կապված կոնկրետ որոշումներ ընդունող քաղաքական գործիչների այսպես կոչված՝ պատասխանատվության գլոբալիզացիա:

Կոմպետենտ ղեկավարումը ենթադրում է համաշխարհային քաղաքական գործընթացների բազմագործունեության և դրա սահմանների առկայության հաշվառում, քանի որ այդ սահմանների հաստատումը կարող է հանգեցնել գլոբալ աղետի:

Քաղաքական որոշումների ընդունումը կապված է մարդկության հիմնախնդիրների ազդեցության պայմաններում համաշխարհային հանրության զարգացման կանխատեսման հետ:

Ապագայի կանխատեսման հետ միասին էական նշանակություն ունի նաև համաշխարհային հանրության էվոլյուցիայի նախորդ փուլերում խոր հակասությունների առաջացման պատճառների հետադարձ վերլուծությունը, ինչպես նաև այդ հակասությունների

**Աղյուսակ 1**

**Մարդկության զար · ացման սահմանները, որոնք նպաստում են · լոբալ խնդիրների առաջացմանը**

Մարդկության զարգացման սահմաններ

| Արտաքին սահմաններ | Ներքին սահմաններ |
| --- | --- |
| Չվերականգնվող ռեսուրսների օգտագործում<br>Մթերքների արտադրություն<br>Շրջակա միջավայրի աղտոտում<br>Ազգաբնակչության աճ<br>Քաղաքների աճ | Քաղաքական սահմանափակումներ<br>Մշակութային սահմանափակումներ<br>Հոգեբանական արգելքներ<br>Վատ անհատական և հանրային ղեկավարում<br>Անպատասխանատվություն և անհեռատեսություն պետական կառավարման մեջ |

լուծման պատմական փորձի ուսումնասիրությունը: Անցյալին անդրադառնալը ցույց է տալիս, որ քաղաքական որոշումների հիմնավորման նշված մեթոդները շատ հաճախ մնացել են դրանց կարճաժամկետ բնույթ ունեցող մոտիվացիայի տեսքով:

Այսպես, ամերիկացի գիտնական Դ. Հելերը գլոբալ ռազմաքաղաքական խնդիրների ուսումնասիրության ժամանակ կատարեց հանակարգային վերլուծություն 1816-1965 թվականների ժամանակահատվածում 43 պետություններում տեղի ունեցած 215 պատերազմների և մի պատերազմից մյուսին անցման 172 դեպքերի վերաբերյալ: Գիտնականը եկավ այն համոզման, որ պատերազմ հայտարարելու որոշման վրա ազդող առավել կարևոր որոշիչ գործոնը ոչ թե պատերազմներ վարելու պատմական փորձն է, այլ տվյալ պահին երկրի ռազմական հզորությունն ու ուժը[9]:

Քաղաքական գործնթացների գլոբալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համամարդկային խնդիրների սրումը միջազգային կառույցների առջև դնում է մարդկության կուտակած պատմական փորձի, հսկայական գիտելիքների և գիտության նվաճումների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը: Դա հնարավորություն է տալիս մարդկությանը՝ համապատասխան հրատապությամբ արձագանքել գլոբալ մարտահրավերների և, ի վերջո, նպաստում է քաղաքական համակարգերի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև հասարակության էլ ավելի ժողովրդավարացմանը: Ամերիկացի գիտնական Ա. Տոֆֆերը նշված հարցերի վերլուծությանն է նվիրել «Իշխանության տեղաշարժը, գիտելիքը, հարստությունը եւ հարկադրանքը 21-րդ դարի շեմին» գիրքը: Հեղինակը ելնում է այն բանից, որ ժամանակակից գլոբալ զարգացումը տանում է դեպի նոր քաղաքակրթության ծնունդ, որի ընթացքում նկատելիորեն կփոխվի քաղաքական իշխանությունը հասարակության մեջ: Համաձայն հեղինակի՝ իշխանության բազմաթիվ «գործիքներից» կարևորագույններն են հարստությունը, գիտելիքը և բռնությունը:

Բռնությունը իշխանության նվազ ազդեցիկ զենքն է. այն կիրառվում է հիմնականում որպես հարկադրման եւ պատժի միջոց:

Հարստությունը իշխանության առավել ճկուն զենք է, քանի որ կարող է կիրառվել և՛ որպես խրախուսման, և՛ որպես պատժի միջոց, ինչպես նաև կարող է ձևափոխվել ազդեցության այլ միջոցների:

Գիտելիքը, ըստ ամերիկացի գլոբալագետի, իշխանության ամենահուսալի և հիմնական գործիքն է: Իշխանության այս գործիքը թույլ է տալիս խուսափել հնարավոր բոլոր բարդություններից բռնության գործադրման և հարստության օգտագործման միջոցով: Գիտելիքը կարող է կիրառվել նաև որպես հարկադրանքի միջոց. այն կօգնի հարկադրել մյուսներին իրենց պահել այնպես, որ չխախտեն գիտելիքին տիրապետողի անհատական շահերը: Գիտելիքը, որը կիրառվում է որպես քաղաքական գործիք, տիրոջը տալիս է ամենախսկական, իրական իշխանություն: Գիտելիքի վերահսկողությունը ձեռք է բերում շատ կարևոր նշանակություն իշխանության համար պայքարում: Միևնույն ժամանակ՝ գիտելիքը ժողովրդավարական իշխանության ամենամեծ աղբյուրն է: Այդ առումով Ա. Տոֆֆերը նշում է. «Եթե մենք չհասկանանք, թե ինչպես և ում են հաղորդվում գիտելիքները, մենք չենք կարող ոչ պաշտպանվել իշխանության ոչ ճիշտ կիրառումից, ոչ էլ ստեղծել ավելի լավ, ժողովրդավարական հասարակություն, որի հույսն ապագա տեխնոլոգիական պրոցեսն է»[10]:

Գլոբալ խնդիրների քաղաքագիտական ուսումնասիրության երկրորդ մոտեցումը կապված է համամարդկային առանձին խնդիրների վերլուծության հետ: Դրանք նվիրված են կոնկրետ հարցերի՝ կապված էկոլոգիայի ոլորտում իրականացվող քաղաքականությանը, խաղաղության պահպանմանը, էներգետիկայի, բնական ռեսուրսների օգտագործմանը, տիեզերքի և համաշխարհային օվկիանոսի հետազոտմանը: Ժամանակակից գլոբալիստիկայի տեսադաշտում են գտնվում նաև ջրային ռեսուրսների և հողի օգտագործումը, մարդկությանը մթերքներով և օգտակար հանածոներով ապահովումը, կրթության զարգացումը:

Այսօր կարելի է պնդել, որ քաղաքագլոբալիստիկական ուսումնասիրություններն ընդլայնում են քաղաքական գիտությունների ոլորտը, նպաստում են քաղաքագիտական բնույթի գիտելիքների նոր և ավանդական գիտությունների հետ սերտ փոխկապակցվածության ձևավորմանը:

Ֆրանսիացի գիտնական Բ. դե Ժուվելենն առաջինը հիշատակեց այնպիսի արտահայտություն, ինչպիսին է քաղաքական էկոլոգիան, որը բնության կառավարմամբ է զբաղվում: Այս գիտության հետազոտման օբյեկտը հասարակության և շրջակա միջավայրի միջև եղած հակասությունը և այդ հակասության լուծման միջոցներն են: Իր հերթին` այդ նոր գիտական ուղղությունն ազդում է ավանդական քաղաքագիտության զարգացման վրա:

Քաղաքական-էկոլոգիական հետազոտություններում «համաշխարհային կառավարման» տեսության կողմնակիցները ձգտում են գտնել նոր փաստարկներ դրա հիմնավորման համար: Նրանք փորձում են ապացուցել, որ էկոսֆերայի պահպանմանն ուղղված գլոբալ մասշտաբի երկարաժամկետ և համատեղ գործողությունների անհրաժեշտությունը կարող է առավելագույնս բավարարվել համաշխարհային հանրության կենտրոնացված կառավարման հաստատման դեպքում:

Քաղաքագլոբալիստիկական հետազոտությունները գտնվում են կազմավորման, ձևավորման փուլում: Այնուհանդերձ, այսօր այդ գիտական ուղղությունները հաջողությամբ են վերլուծում շատ կոնկրետ գլոբալ խնդիրների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը, ինչպես նաև դրանց հետ կապված քաղաքական պրոցեսներն ու երևույթները:

Սխալ ժողովրդագրական քաղաքականությունն առաջ է բերում մարդկանց տարերային միգրացիա` աշխատանք որոնելու նպատակով: Պատերազմներն ու ռազմական կոնֆլիկտներն անխուսափելիորեն ստիպում են մարդկանց թողնել իրենց բնակավայրերը և գաղթել, դառնալ փախստականներ: Արդի աշխարհում շատ են, այսպես կոչված, էկոլոգիական փախստականները (օրինակ` Չեռնոբիլի աղետից հետո):

Մոլորակային խնդիրների քաղաքագիտական ուսումնասիրման երրորդ մոտեցումը քննարկելիս հարկ է հիշել, որ վերջինս բնորոշ է համաշխարհային հանրության առանձին գոտիներում դրսևորվող համամարդկային խնդիրների վերլուծությանը: Գլոբալ պրոցեսներն ընթանում են շատ անհամաչափ և ոչ համասեռ: Աշխարհի տարբեր մասերում կոնկրետ «համամարդկային» խնդրի արդիականությունը տարբեր է, և միևնույն խնդիրը տարբեր տեղերում տարբեր կերպ է արտահայտվում: Ասվածը պարզաբանենք ժողովրդագրական խնդրի օրինակով, որի բնույթը և զարգացման դինամիկան կախված է կոնկրետ տարածաշրջանից և երկրից:

Մեր մոլորակի մասշտաբներով` ամբողջությամբ վերցված, և առանձին երկրներում` մասնավորաբար, XX դարի ավարտին ի հայտ եկան ոչ հասարակ և հակասական ժողովրդագրական գործոններ: Դրանք բնորոշվում են զարգացող երկրների բավական մեծ խմբում ազգաբնակչության «պայթունային» աճով, իսկ մի շարք զարգացած արդյունաբերական երկրներում, ընդհակառակը, աճի «բացասական» վիճակագրությամբ: Անտարակուսելի է, որ ժողովրդագրական գործընթացներն ազդում են ազգային և տարածաշրջանային անվտանգության վրա: Զարգացած արդյունաբերական երկրներում ծնելիության ցուցանիշի ցածր մակարդակը և բնակչության ծերացման պրոցեսը կստեղծեն լուրջ խնդիրներ XXI դարում այդ երկրների զինված ուժերի հավաքագրման գործընթացում: Զարգացող երկրները, ընդհակառակը, իրենց տրամադրության տակ կունենան պահանջվածից շատ թվով երիտասարդներ` ընդունակ ծառայության (ներքին և արտաքին կոնֆլիկտներին մասնակցելու համար): Այսպիսի երկրներում սպասվում է սոցիալական և տնտեսական լարվածություն, որը հաճախ սրվում է հենց բնակչության աճով, ինչն էլ ընդունակ է ստեղծել վերոհիշյալ կոնֆլիկտները:

Քաղաքագլոբալիստիկական ուսումնասիրությունների տեսական և մեթոդաբանական հիմքերը ձևավորվում են համամարդկային հիմնախնդիրների հետազոտման` մեր կողմից առանձնացված չորրորդ մոտեցման մեջ: Այս պրոցեսը, մեր կարծիքով, բնորոշվում է առաջին հերթին ժամանակակից քաղաքագիտության և գլոբալագիտության փոխհարստացմամբ և փոխազդեցությամբ: Այսպես, գոյություն ունեն հրատապ ուսումնասիրության ենթակա կարևոր խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է գլոբալագետների և քաղաքագետների համատեղ ջանքերի միավորում: Դրանցից են`

• համամարդկային խնդիրների, համաշխարհային քաղաքական զարգացման գործոնի գիտակցում.

• միջազգային ոլորտում համամարդկային սրվող խնդիրների ազդեցությամբ քաղաքական պրոցեսների գլոբալիզացիայի գիտակցում: Շատ գլոբալիստական ուսումնասիրություններում կիրառվում են քաղաքական գիտության հիմնական դրույթները: Ընդ որում` նկատվում է դիտարկվող երկու գիտական ուղղությունների փոխլրացում, ինչը նպաստում է դրանց միջև եղած կապի ամրապնդմանը և դրանց ինտեգրացմանը նոր քաղաքական ուղղությունում` քաղաքական գլոբալիստիկայում: Օրինակ` ժամանակակից գլոբալիստիկայում մեծ նշանակություն է տրվում համամարդկային նոր արժեքների ձևավորմանը և տարածմանը, որոնցով ղեկավարվելը նպաստում է համամարդկային խնդիրների արդյունավետ լուծմանը:

Գլոբալիստիկայի մասնագետներն արժեքների համակարգում կարևոր տեղ են հատկացնում քաղաքական բնույթի արժեքներին և քաղաքական կողմնորոշումներին: Այդպիսի արժեքների դասին են պատկանում`

• մարդկանց, հասարակության և ողջ մարդկության անվտանգությունը.

• պետության ներսում և միջազգային ասպարեզում գործելու ազատությունը.

• կառավարության գործունեության կառուցողական բնույթը.

• մարդկանց, հասարակության, բնության և ապագա սերունդների առջև պատասխանատվությունը.

• քաղաքական բազմակարծությունը.

• նացիոնալիզմի նվազումը.

• ինֆորմացիայի մատչելիությունը.

• ժամանակակից աշխարհի քաղաքական կառուցվածքների և համակարգերի կառավարելիությունը:

Փաստորեն` գլոբալիստիկայի և քաղաքական գիտությունների շահերի հատման տիրույթում գտնվող այդօրինակ արժեքների թվարկումը կարելի է շարունակել: Պետք է նշել, որ գլոբալ խնդիրների քաղաքագլոբալիստիկական վերլուծության հետևանքով ստացված նոր տվյալները հանգեցնում են ավանդական արժեքների և արժեքային կողմնորոշումների մեկնաբանությունների փոփոխությանը: Այդպիսի փո-

փոխման օրինակ է ազգային անվտանգության հայեցակարգի վերարժևորումը: Մինչև վերջերս ազգային անվտանգությունը մեկնաբանվում էր որպես այս կամ այն երկիրը զինված ագրեսիայից ապահովագրող քաղաքական երաշխիքների և հուսալի պաշտպանական միջոցների միասնություն: Այսօր ազգային անվտանգությունը մեկնաբանվում է. «Ազգային անվտանգությունը երկրի և նրա տարածքի ֆիզիկական ամբողջականությունը պահպանելու, ժողովրդի անվտանգ և բարեկեցիկ կյանքն ապահովելու, երկիրը պատուհասից զերծ պահելու ներունակությունն է: Դա երկրի համար ընդունելի պայմաններով աշխարհի հետ քաղաքական և տնտեսական հարաբերությունների ապահովումն է, նրա բնատարածքի, ինստիտուտների, կառավարման միջոցների վտանգազերծումը և, վերջապես, սահմանների պաշտպանությունը»[11]:

Քաղաքագլոբալիստիկական ուսումնասիրությունները պարզեցին նաև մոլորակի էկոլոգիական իրավիճակի բարելավման կարևորությունը և հրատապությունը: Ամենակարևոր տեղաշարժը, որը տեղի է ունեցել 1972թ. Ստոկհոլմում անցկացված ՄԱԿ-ի Մարդկային միջավայրի հարցերով կոնֆերանսի և 1992թ. Ռիո Դե Ժանեյրոյում անցկացված ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման հարցերով կոնֆերանսի միջև ընկած քսան տարիների ընթացքում, գլոբալ ճգնաժամի գիտակցության արմատավորումն է[12]: Այսպիսի գնահատականը նպաստեց այն բանին, որ քաղաքական արժեքների դաշտում փորձագետները սկսեցին ավելի հաճախ առաջնությունը տալ էկոլոգիական անվտանգությանը՝ միաժամանակ ուշադրության կենտրոնում պահելով ազգային անվտանգության ապահովման ռազմաքաղաքական ասպեկտը:

Ներկայումս ազգային անվտանգության ապահովումը կապակցվում է պաշտպանվածության հետ ոչ միայն ռազմական սպառնալիքներից, այլև էկոլոգիական և էներգետիկ ճգնաժամերից, «ժողովրդագրական պայթյուններից», բնական ռեսուրսների սպառումից և համամարդկային խնդիրների սրման բացասական հետևանքներից:

Այսպիսով՝ վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ քաղաքագիտության հասկացություններն ու հայեցակարգերը սկսեցին առավել լայն կիրառվել համամարդկային խնդիրների ուսումնասիրության ժամանակ:

Քաղաքական գլոբալիստիկայի հետագա զարգացումը կարող է ընդլայնել և հարստացնել քաղաքագիտության ոլորտը, ինչպես նաև խթան հանդիսանալ հենց գլոբալիստիկայի հետագա զարգացման համար: Կարող ենք ասել, որ քաղաքական գլոբալիստիկան ընդունակ է ոչ ավանդական ձևով լուսաբանելու միջազգային հարաբերությունների և աշխարհի զարգացման մի շարք կարևոր խնդիրներ:

Գլոբալ խնդիրների հետագա սրումը գտնվում է ինչպես գիտնականների և քաղաքական գործիչների, այնպես էլ մշակութային գործիչների լայն շրջանակների ուշադրության կենտրոնում: Ռուս գիտնական Ն. Կատովը նշում է. «Հիմա, հավանաբար առաջին անգամ, ողջ մարդկությունը նմանվել է մեկ մարդու, որը հստակորեն գիտակցում է իր մահկանացու լինելը»[13]:

Գլոբալ խնդիրների վտանգավոր, առավել ցավոտ միտումները հետևյալ կերպ է ներկայացրել ռուս ֆանտաստ գրող Ա. Ազիմովը. «Մենք ապրում ենք մի դարաշրջանում, երբ գերբնակեցումը, շրջակա միջավայրի աղտոտումը, ջերմոցային էֆեկտը, միջուկային զենքերի կուտակումից բխող վտանգը, անտառների և կենդանի բնության կործանումը սպառնում են մեզ քաղաքակրթության ոչնչացմամբ և երկրի կենսագործունեության կտրուկ անկմամբ»[14]:

Գլոբալ խնդիրներից բխում են մարդկության հետագա գոյության լուրջ սպառնալիքներ: Հարց է ծագում՝ ինչպե՞ս կարելի է դասակարգել բազմաթիվ և բազմաբնույթ գլոբալ խնդիրների մասին կուտակված գիտելիքները: Գլոբալագետները համամարդկային խնդիրների մեջ առանձնացնում են գլոբալ խնդիրների 3 հիմնական խումբ:

1. **Առաջին խումբն** ընդգրկում է միջազգային հարաբերություններին առնչվող խնդիրները, արտացոլում է դրանց բնորոշ հակասությունները և օբյեկտիվորեն անհրաժեշտ վերափոխումները: Այս տիպի համաշխարհային հիմնախնդիրների լուծման գործում մեծ նշանակություն ունեն քաղաքական նախադրյալները:

2. **Երկրորդ խմբում** ընդգրկվում են գլոբալ խնդիրները, որոնց առաջացման և դրսևորման ոլորտ են հանդիսանում անձի և հասարակության փոխհարաբերությունները: Այդ խնդիրներն անմիջականորեն վերաբերում են մարդուն և նրա ապագային:

3. **Երրորդ խմբին են** դասվում մարդու և բնության փոխհարաբերությունների, փոխազդեցության բնագավառի գլոբալ խնդիրները: Դրանցից են շրջակա միջավայրի հնարավորությունների և մարդկության կենսագործունեության կարիքների անհավասարակշռության խնդիրները: Համաշխարհային մասշտաբով այդպիսի հարցերի լուծման համար քաղաքականի կողքին կարևորվում են նաև գիտատեխնիկական նախադրյալները (տե՛ս աղյուսակ 2):

Առաջին խմբին է պատկանում արդիականության առանցքային խնդիրը՝ պահպանման խնդիրը: Մարդկային հանրության ողջ կենսագործունեության հանընդհանուր ինտերնացիոնալիզացիայի և համաշխարային տնտեսության ստեղծման հետ մեկտեղ առաջ եկան աշխարհը վերափոխել ցանկացող ուժեր, և պատերազմները ձեռք բերեցին համաշխարհային, գլոբալ բնույթ:

Մարդկության հասարակական կյանքի ինտերնացիոնալիզացիայի օբյեկտիվ օրինաչափությունը հաճախ դրսևորվել է քաղաքական, միջպետական, ազգային, կրոնական հակասությունների սրումով, որոնք հանգեցրել են զինված ընդհարումների: Այդպիսի կոնֆլիկտները խլել են և շարունակում են խլել միլիոնավոր մարդկային կյանքեր, ոչնչացրել մարդկային հանճարի կողմից ստեղծված նյութական արժեքներ:

Մարդկության համար իսկական վտանգ են ներկայացնում ներկայումս կուտակված միջուկային ներքին պաշարները:

Այսօր 433 միջուկային ռեսուրսներ արտադրում են աշխարհի էլեկտրաէներգիայի մոտ 17%-ը: 8 երկրներում միջուկային եղանակով արտադրվում է էլեկտրաէներգիայի 40%-ը: Այս ոլորտում ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը՝ ԱԷՄԳ-ն, որը միջազգային կազմակերպություն է ՄԱԿ-ի կառուցվածքում, նպաստում է միջուկային էներգիայի խաղաղ օգտագործմանը, չափանիշներ է սահմանում միջուկային անվտանգության և շրջակա միջավայրի պաշտ-

**Աղյուսակ 2**




պանության համար[15]: Դրանց հզորությունն այնքան է, որ կարող է բազմաթիվ անգամ ոչնչացնել ամեն ինչ Երկրի վրա: Միջուկային սպառնալիքից և բռնությունից զերծ խաղաղության հաստատումը չափազանց դժվար և կարևոր խնդիր է: Դրա լուծումը կարելի է գտնել միայն բոլոր պետությունների և ժողովուրդների, մոլորակի ողջ մարդկության համատեղ ջանքերով: Այդպիսի մոտեցումը պահանջում է յուրաքանչյուր անհատից` մոլորակի խաղաղության գործում իր դերի, պատասխանատվության գիտակցում, նոր հոգևոր արժեքների մշակում:

Համամարդկային խնդիրների քննարկվող խմբին է պատկանում նաև բազմաթիվ զարգացող երկրների տնտեսական հետամնացության հաղթահարումը:

Միավորված ազգերի կազմակերպությունը շարունակում է մնալ միակ կազմակերպությունը, որի գործունեությունը նվիրված է այն նպատակին, որ տնտեսական էքսպանսիան և գլոբալացումը հանգեցնեն մարդկանց բարեկեցության բարձրացմանը, կայուն զարգացմանը, չքավորության վերացմանը, արդար առևտրին[16]: Վերոհիշյալ երկրներում գոյություն ունեն մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ, որոնցից են սովը, կրթության ոլորտի հետամնացությունը, առողջապահական համակարգի ցածր մակարդակը, գործազրկության մեծ տոկոսը, զանգվածային աղքատությունը, կյանքի համար անհրաժեշտ տարրական պայմանների բացակայությունը և այլն:

Գլոբալ խնդիրների երկրորդ խմբին, ինչպես արդեն նշել ենք, պատկանում են հասարակություն-անհատ տիպի խնդիրները, որոնք հիմնականում վերաբերում են մարդուն` որպես բիոսոցիոլոգիական էակի: Այդպիսի խնդիրների լուծումը պահանջում է ամբողջ մարդկության այնպիսի բազմապլանային աշխատանքի իրականացում, ինչպիսին է պայքարը սովի և թերսնման դեմ, գիտատեխնիկական առաջընթացի բացասական հետևանքների, մարդկության հոգևոր միջավայրի «աղտոտության» դեմ, առողջապահության, կրթության հրատապ հարցերի լուծումը:

«Գլոբալիզացիան կարող է ոչ թե աղքատության և այլ սոցիալական չարիքների պատճառ դառնալ, այլ դիտվել որպես լավագույն տարբերակ այդպիսի խնդիրները հաղթահարելու համար», – նշել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը 2003թ. փետրվարին Նյու Յորքում կայացած համաշխարհային տնտեսական ֆորումի ժամանակ[17]:

Թվարկված հիմնախնդիրների մեջ միջազգային հանրության և գիտական շրջանակների մեծ ուշադրությանն է արժանանում «ժողովրդագրական պայթյունի»` մոլորակի ազգաբնակչության աննախադեպ աճի խնդիրը:

1960-ականներին աշխարհի բնակչության արագ աճը դարձավ ՄԱԿ-ի անհանգստության առարկա: Աշխարհի բնակչությունը 1960-1999թթ. երկու անգամ ավելացավ` 1999թ. հոկտեմբերին անցնելով 6 միլիարդի սահմանը: Չնայած 1969-1999թթ. ժամանակահատվածում աճի տեմպերը 2%-ից նվազեցին 1,3%-ի, ամեն տարի բնակչության ընդհանուր քանակը շարունակում է ավելանալ 77 միլիոնով: Աճի 95%-ը դիտվում է զարգացող երկներում: 2050թ. աշխարհի բնակչությունը կկազմի 7.9-ից 10,9 միլիարդ, ավելի ճշգրիտ հաշվարկներով` 9,3 միլիարդ[18]:

Մոլորակի ժողովրդագրական վիճակը մեր օրերում սրվում է նաև այն պատճառով, որ երկրի ազգաբնակչության աճի զգալի մասը բաժին է ընկնում զարգացող երկրներին, որոնց բնակչությունը XXI դարի սկզբին կկազմի մոլորակի բնակչության 4/5-րդ մասը: Այդ երկրներն իրենց տնտեսական հետամնացության պատճառով չեն կարող ապահովել բնակչության համար կյանքի նորմալ պայմաններ: Այս խմբի գլոբալ խնդիրների համար առաջնային նշանակություն ունի ճիշտ սոցիալական և ժողովրդագրական քաղաքականությունը:

Գլոբալ խնդիրների երրորդ խումբը հասարակություն-բնություն տիպի խնդիրներն են: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այնպիսի համամարդկային խնդիրների վրա, ինչպիսիք են էկոլոգիական, կլիմայական, հանքային, էներգետիկ և այլ խնդիրներ: Մեր օրերում առանձնակի կարևորություն են ձեռք բերել էկոլոգիական խնդիրները:

«Բնապահպանական լուրջ խնդիրների առկայությունը միջազգային ասպարեզում անհամեմատ ավելի ակնհայտ է դարձել վերջին երկու տասնամյակների ընթացքում, ինչը հանդիսանում է միջավայրի արագընթաց դեգրադացիայի և մարդկությանը սպառնացող

էկոլոգիական վտանգների լրջության վերաբերյալ հասարակական իրազեկության աճի արդյունքը: Չնայած պատկերը շարունակում է մնալ անորոշ, և այն պնդումը, որ մենք արդեն «անցել ենք սահմանները», վիճելի են համարվում, սակայն գնալով ավելի ակնհայտ է դառնում, որ մարդկության սոցիալական և տնտեսական գործունեությունը չափից դուրս մեծ ճնշում է գործադրում կենսոլորտի ֆիզիկական սահմանների վրա, և որ մենք բառիս կոպիտ, բայց իրական իմաստով լցնում ենք մեզ մատչելի էկոլոգիական տարածությունը»[19]:

Շատ գիտնականներ գտնում են, որ ներկայումս էկոլոգիական վտանգը մարդկության գոյության ամենամեծ սպառնալիքն է: Դա բացատրվում է նրանով, որ մարդու տնտեսական գործունեության մեջ երկար տարիներ իշխել է բնությունից հնարավորինս շատ վերցնելու միտումը: Սակայն արդյունաբերության զարգացմանը և դրա թափոնների մեծացմանը զուգահեռ` խախտվել է բնական միջավայրի ամբողջականությունն ու փոխկապակցվածությունը, որի հետևանքով ծագել է բնության, բնական վիճակի անցումային ձևախեղումների իրական սպառնալիք: Դա կապված է օդի և ջրի աղտոտման, բնական ռեսուրսների նվազման, բույսերի և կենդանիների շատ տեսակների ոչնչացման, ամբողջությամբ վերցրած` կենսաբանական ռեսուրսների աղքատացման, չվերականգնվող էներգետիկ պոտենցիալի կրճատման (գազ, նավթ, քարածուխ) և այլնի հետ: Ընդ որում` էկոլոգիական պրոցեսների բոլոր օղակներում առաջացած դժվարություններն անխուսափելիորեն հանգեցնում են դժվարությունների նաև այլ օղակներում: Ֆրանսիացի գիտնական Ժ. Կուստոն գրում է. «Եթե առաջ բնությունն էր սպառնում մարդկությանը, ապա այժմ մարդկությունն է սպառնում բնությանը»[20]:

Ներկայումս համաշխարհային մասշտաբով արդյունաբերության զարգացումը հանգեցրել է նրան, որ շրջակա միջավայրին պատճառվող վնասն ունի ոչ թե լոկալ, այլ գլոբալ բնույթ:

Բնության վրա մարդկանց ազդեցությունը նկատելիորեն փոխել է նաև մեր մոլորակի արտաքին տեսքը: Այսպես. ազդեցության հետևանք են XX դարի վերջին քառորդում առաջացած ավելի քան 9 մլն քառակուսի կմ տարածք ունեցող անապատները: Բացի այդ` 30 մլն քառակուսի կմ (ցամաքի մակերեսի1/5 մասը) գտնվում է ամայացման վտանգի տակ: Այդ վտանգը սպառնում է ավելի քան 100 երկրների:

Վերջին 500 տարիների ընթացքում մարդկությունը ոչնչացրել է մոլորակի անտառների 2/3-ը: Ցավոք, այդ պրոցեսները շարունակվում են նաև այժմ:

Վերջին շրջանում գիտնականների մեծ մասին անհանգստացնում է երկրի կլիմայի գլոբալ տաքացման հեռանկարը, որը կապվում է ջերմոցային էֆեկտի հետ:

Գլոբալ տաքացմանը դիմակայելու նպատակով Ռիո Դե Ժանեյրոյում մշակվեց և ստորագրվեց ՄԱԿ-ի` կլիմայի փոփոխության 1992թ. շրջանակային կոնվեցիան[21]:

Կլիմայի փոփոխությունը ողբերգություն է ողջ մարդկության համար: Որոշ գիտնականների կարծիքով` չվերահսկվող, չկարգավորվող ջերմոցային էֆեկտը կարող է կործանել մարդկային քաղաքակրթությունն առաջիկա 500 տարիների ընթացքում:

Գիտնականների հաշվարկներով` մոլորակի մասշտաբով նույնիսկ 1°C –ով ջերմաստիճանի բարձրացումը խիստ վտանգավոր է:

Ակնհայտ է, որ մարդու գործունեությունը հանգեցնում է մթնոլորտում «ջերմոցային գազերի» ստեղծմանը, որի հետևանքով ընդհանուր ջերմաստիճանն աստիճանաբար բարձրանում է:

«Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական փորձագետների խմբի տվյալների համաձայն` կանխատեսվում է, որ գլոբալ ջերմաստիճանը մինչև 2100թ. կբարձրանա 3,5 աստիճանով: Սա վերջին 10 հազար տարվա ընթացքում արձանագրված ամենամեծ կլիմայական փոփոխությունն է` գլոբալ միջավայրի վրա խիստ էական ազդեցությամբ »[22]:

Ջերմային կայունության խախտումը XXI դարի կեսերին կհանգեցնի մթնոլորտային շրջապտույտի եւ հողի խոնավացման պայմանների նկատելի փոփոխության: Դա էլ կհանգեցնի հողագործության և այլ տնտեսական գործունեության համար օպտիմալ գոտիների տեղաշարժի, որը կանդրադառնա միլիարդավոր մարդկանց կենսական շահերի վրա, կառաջացնի զանգվածային հոսքեր և, ի վերջո, կունենա ծանր սոցիալական և քաղաքական հետևանքներ:

Քաղաքական գլոբալիստիկայի մասնագետների կարծիքով` գլոբալ խնդիրների հետագա սրումը կհանգեցնի համաշխարհային մասշտաբով այնպիսի բացասական երևույթների, ինչպիսիք են` շրջակա միջավայրի դեգրադացիան, սովը, բնակչության մեծամասնության այլասերումը, բնակչության հարկադրված հոսքերը, մանկամահացության թվի աճը, գործազրկության աճը, կյանքի, ապագայի հույսերի կորուստը: Այդ ամենը կհանգեցնի համաշխարհային հանրության քաղաքական մթնոլորտի կտրուկ վատթարացման, մարդկության հետագա գոյությունը կդրվի վտանգի տակ: Այս ամենից խուսափելու համար անհրաժեշտ է վարել արդյունավետ և հավասարակշռված էկոլոգիական, էներգետիկ և հումքային քաղաքականություն ինչպես ազգային, տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մասշտաբներով:

Գլոբալ խնդիրների լուծումը պահանջում է համաշխարհային հանրության կողմից համաձայնեցված, նպատակաուղղված քաղաքական ռազմավարության կիրառում, որում պետք է առանձնացնել 2 ուղղություն`

• գիտատեխնիկական քաղաքականություն.

• համաշխարհային և ազգային քաղաքականություն:

Գիտատեխնիկական առաջընթացի ձեռքբերումների և համաշխարհային տնտեսության կազմակերպման առաջավոր ձևերի վրա հիմնված արդյունավետ գիտատեխնիկական և տնտեսական քաղաքականությունը կարևորագույն պայման է էկոլոգիական, էներգետիկ, հումքային և համամարդկային խնդիրների լուծման համար:

Ներկայումս մեծ հույսեր են կապում տեխնոլոգիական հեղաշրջման հետ, որում արտահայտվում են երկու հիմնական ուղղություններ`

1. շրջակա միջավայրի պաշտպանության, էներգիայի և հումքի ստացման ու օգտագործման, տարբեր նյութերի վերամշակման միջոցների կատարելագործում և արդիականացում.

2. նշված բնագավառներում սկզբունքորեն նոր տեխնոլոգիաների ստեղծում և կիրառում:

Ավանդական տեխնոլոգիաների կատարելագործումը հանգեցնում է արտադրության մեջ բնական ռե-

**Աղյուսակ 3**

**Գլոբալ խնդիրների դասակար · ումը**




սուրսների առավել ռացիոնալ օգտագործման, տնտեսական շրջանառության մեջ դժվար մատչելի հանքավայրերի ներգրավման: Այն կապված է նաև հումքի արդյունահանման և վերամշակման առավել արդյունավետ մեթոդների ստեղծման հետ, որը հնարավոր է դարձնում դրանց կրկնակի օգտագործման լայն ներդրումը:

Համամարդկային խնդիրների լուծման համար անհրաժեշտ է կայուն խաղաղություն, միջազգային կայունություն, որը ձեռք կբերվի ժամանակակից համաշխարհային հանրության արդար, ժողովրդավարական սկզբունքների հիման վրա, քաղաքական բարեփոխումների արդյունքում: Միջազգային կայունությունը ենթադրում է հրաժարում առճակատման դոկտրինաներից, ուժային քաղաքականությունից, այլ պետությունների գործերին ուղղակի և անուղղակի միջամտելուց՝ ելնելով այն բանից, որ ոչ մի երկիր իրավասու չէ թելադրել իր կամքը այլ երկրի:

Մարդու կողմից ստեղծված կործանարար միջոցների առկայությունը և խաղաղության անկայունությունը խիստ հրատապ են դարձնում ապառազմականացման անհրաժեշտությունը, սպառազինությունների աստիճանական կրճատումը, Երկրի վրա կյանքի գոյությանն անմիջականորեն սպառնացող զանգվածային ոչնչացման միջոցների հետագա սահմանափակումը:

Մոլորակի քաղաքական կյանքում նոր պետությունների և նոր ժողովուրդների ակտիվ ներգրավումը արդիականացնում է նաև միջազգային հարաբերությունների ժողովրդավարացման և հումանիզացիայի հարցը: Գլոբալ խնդրի արդյունավետ և ռացիոնալ լուծումը կգտնվի միայն այն դեպքում, երբ դրա լուծմանը մասնակցում են բոլոր երկրները, երբ հաշվի են առնվում բոլոր պետությունների դիրքորոշումները, շահերը և առանձնահատկությունները:

Միջազգային հարաբերությունների ժողովրդավարացումը մարդկային հանրության բոլոր անդամների կողմից խնդիրների լուծման առավելագույն ինտերնացիոնալիզացիան է:

Միջազգային հարաբերությունների հումանիզացիան վերոհիշյալ գործընթացի վրա բարոյականության ազդեցության աճն է, նրա «մարդկայնացումը»՝ ուղղված մարդու ազատության և իրավունքների առավել լրիվ ապահովմանը:

Կայուն խաղաղության և պետությունների բազմակողմանի համագործակցության կարևոր պայման և երաշխիք է հանդիսանում միջազգային անվտանգության ապահովումը, համընդհանուր մոտեցման ձևավորումը, այսինքն՝ նոր միջազգային քաղաքական կարգի հաստատումը՝ հիմնված բոլոր պետությունների կողմից խաղաղ գոյակցության սկզբունքների վրա:

Քաղաքականության մեջ միջազգային քաղաքական կարգը միջազգային քաղաքական հարաբերությունների նոր, որոշակի կառուցվածքն է՝ ձևավորված միջազգային իրավունքի համապատասխան նորմերի և սկզբունքների, միջազգային պայմանագրերի հիման վրա, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների, հիմնարկների և այլ հաստատությունների շրջանակում:

Գլոբալ խնդիրների լուծումն անհնար է առանց մարդկային գիտակցության էկոլոգիզացիայի: Դա սերտորեն կապված է մարդկության էլ ավելի մեծ մասի կողմից այն գաղափարի գիտակցման հետ, որ մարդկային ցեղի գոյության շարունակումը և նրա բարեկեցությունն անհնար է առանց բնական ռեուրսների բանական օգտագործման, որոնք մարդկության կենսագործունեությունն ապահովող կարևորագույն գործոններն են: Կարևոր է հաստատել այնպիսի համամարդկային գիտակցություն, որը չի ընդունում համաշխարհային զարգացման հնարավորությունը շրջակա միջավայրի դեգրադացիայի հաշվին:

Էկոլոգիական ճիշտ միտքը կնպաստի բնության և հասարակության միջև ներդաշնակ հարաբերությունների հաստատմանը:

Գլոբալ խնդիրների լուծումն ապահովել կարող է միայն այն մարդը, ով ազատ է ագրեսիայի գաղափարախոսությունից, բռնության հոգեբանությունից, էլիտարիզմից և էգոիզմից: Նա պետք է զուրկ լինի կուրացնող նացիոնալիզմից, մտքի լճացումից և տեխնոկրատական մոտեցումներից:

Գլոբալ խնդիրների սպառնալիքից մարդկության ազատագրումը կապված է ողջ աշխարհում սոցիալական արդարության և իրավական հավասարության հաստատման հետ:

Քաղաքական գլոբալիզացիայի շրջանակներում մշակվել են միջազգային հարաբերությունների բարեփոխման քաղաքական հայեցակարգեր և նախագծեր, որոնք կնպաստեն գլոբալ խնդիրների լուծմանը: Առաջիններից է «օրգանական աճի» հայեցակարգը՝ շարադրված Մ. Մասարևիչի և Է. Պեստելի «Մարդկության խաչմերուկում» գրքում (1974թ.), որը հայտնի է որպես Հռոմեական ակումբի երկրորդ զեկուցում: Հեղինակները գտնում են, որ XX դարի երկրորդ կեսի մարդկային հասարակության հիմնական բնութագիրը նրան բնորոշ «ճգնաժամային սինդրոմն» է: Այն պետք է որոշիչ խթան հանդիսանա նոր համաշխարհային քաղաքական համակարգի անցնելուն, որը կգտնվի «օրգանական աճի» պայմաններում: Նրանք գտնում են, որ այդ վիճակում համակարգը կզարգանա որպես միասնական օրգանիզմ, յուրաքանչյուր մաս կկատարի իր առանձնահատուկ դերը, կօգտվի իր համար նախատեսված ընդհանուր բարիքներից և կապահովի իր զարգացումը հօգուտ համընդհանուր շահերի: Ըստ գիտնական գլոբալագետների՝ համաշխարհային մասշտաբի քաղաքական փոփոխությունները պահանջում են գլոբալ իշխանական կառուցվածքների ստեղծում: Այս գաղափարն իր արտացոլումն է գտել փոփոխությունների իրականացման համար «համաշխարհային ինստիտուտների» նախագծում, որը շարադրված է Կ. Տինբերգենի «Միջազգային կարգի վերանայում» աշխատությունում: Հեղինակն առաջարկում է ստեղծել «Համաշխարհային ադմինիստրացիա՝ մթերքների գծով», «Հանքային ռեսուրսների համաշխարհային գործակալություն», «Տեխնոլոգիական զարգացման համաշխարհային ադմինիստրացիա», «Համաշխարհային գանձատուն» և այլն:

Իշխանության գլոբալ կենտրոնի գաղափարն իր հետագա զարգացումը ստացավ ֆրանսիացի գլոբալագետներ Մ.Գերնեյի «Երրորդ աշխարհ, աշխարհի երեք քառորդը», Բ. Գրանոտյեի «Համաշխարհային կառավարության համար» աշխատություններում:

Գլոբալ կառավարման նկատմամբ առավել արմատական դիրքորոշում է դրսևորում մոնդալիստների հասարակական շարժումը, որը դեռ 1949-ին Փարիզում ձևավորել է իր առաջին ինստիտուտը՝ Աշխարհի քաղաքացիների միջազգային գրանցման ինստիտուտը /IRWC/:

Մոնդալիզմը /mond – ֆրանսերեն՝ աշխարհ/ հայեցակարգ է, որը հիմնավորում է համաշխարհային պետության ստեղծման անհրաժեշտությունն ու ուղիները: Նրանք գտնում են, որ գլոբալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է իշխանության «աստիճանական և գիտակցական» անցում ինքնիշխան պետություններից դեպի համաշխարհային հանրության կառավարման գլոբալ կառուցվածքները:

Անցյալ դարի 70-ականների վերջին և 80-ականների առաջին կեսին գլոբալիստիկայում ձևավորվեց մեկ այլ մոտեցում, որի կողմնակիցները ենթադրում էին, որ շուտով կգա «ազգային պետությունների կաթվածի դարաշրջանը»: Այս կապակցությամբ գլոբալ խնդիրների լուծման ուղիները կապում էին համաշխարհային պառլամենտի ստեղծման հետ, որը կարող էր ստեղծվել համաշխարհային կառավարության կողմից:

Պետք է նշել, որ զգալի թվով նորանկախ պետությունների ձևավորումը, շատ ազգերի ու ժողովուրդների անկախ պետական կառուցվածքների ստեղծման ձգտումը ցույց տվեցին, որ պետության՝ որպես համաշխարհային քաղաքականության հիմնական սուբյեկտի, դերի նվազման մասին կանխատեսումներն անհիմն էին և գործնականում չհաստատվեցին:

Լոնդոնի ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտի համաձայն՝ տարբեր երկրներում գոյություն ունեն ավելի քան 300 էթնիկական խմբեր, որոնք դժգոհ են իրենց քաղաքական վիճակից և ձգտում են ստեղծել սեփական պետությունները՝ գոյություն ունեցող սահմանների վերափոխումով: Ահա թե ինչու XXI դարը կարող է դառնալ համատարած «էթնիկական կոնֆլիկտների դարաշրջան»:

80-ական թվականներին գլոբալագետները համընդհանուր խնդիրների սրման պայմաններում փորձում էին գտնել համաշխարհային զարգացման քաղաքական օրինաչափություններ: Այն ձևակերպվեց Շրջակա միջավայրի պահպանման միջազգային կոմիտեի կողմից կազմված զեկույցում (Գ. Բրունտլանդ, 1989թ.) և ստացավ «Կայուն զարգացման հայեցակարգ» անվանումը, որն այնպիսի զարգացում է, որը բավարարում է արդի պահանջները և վտանգի չի ենթարկում ապագա սերունդների՝ սեփական պահանջները բավարարելու հնարավորությունը:

XX դարի 90-ական թվականներին համաշխարհային կառավարման գաղափարն իր տեղը զիջեց գլոբալ համագործակցության գաղափարին, որը ենթադրում էր ազգային պետությունների՝ որպես միջազգային հարաբերությունների և համաշխարհային քաղաքականության հիմնական սուբյեկտների, գլոբալ համագործակցություն:

Այս հայեցակարգը շարադրված է «Մեր գլոբալ հարևանությունը» զեկույցում (Խ. Կառլսոն և Շ. Ռեմֆալ): Ըստ «գլոբալ կառավարման և համագործակցության» հայեցակարգի՝ նրա մեջ ներգրավված են ոչ միայն պետությունները և միջպետական կազմակերպությունները, այլև ոչ պետական կազմակերպություններ, քաղաքական շարժումներ, գիտական շրջաններ և

զանգվածային տեղեկատվության միջոցներ:

Ժամանակակից քաղաքագիտության մեջ ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում «գլոբալ քաղաքացիական հասարակության» գաղափարը, որն ընկալվում է իբրև գլոբալ մասշտաբով կազմակերպված մարդկային հանրություն, որը, անկախ ազգային պատկանելությունից կամ քաղաքացիությունից, կրողն է համամարդկային արժեքների:

Գլոբալ քաղաքացիական հասարակության քաղաքական հիմքը ոչ պետական կազմակերպությունների՝ էկոլոգիական, մշակութային, կրոնական, հակառազմական և այլ, գլոբալ շարժումն է:

Գլոբալ քաղաքացիական հասարակությունը տնտեսական տեսանկյունից հիմնված է գլոբալ գործարար հատվածի վրա, որը ներկայացվում է անհատ ձեռներեցությամբ և գլխավորապես անդրազգային կորպորացիաներով: Որոշ գլոբալիստ գիտնականներ, ընդգծելով մասնավոր բիզնեսի սոցիալական պատասխանատվությունը, այնուհանդերձ զգուշացնում են մասնավոր անհատների ձեռքում տնտեսական հզորության և ուժի անսահման կուտակման վտանգի մասին: Գլոբալ քաղաքացիական հասարակության տեխնոլոգիական հիմքը կապի նորագույն տեխնոլոգիաների զարգացումն է, որն ապահովում է տեղեկատվության հսկայական հոսքը միջպետական սահմաններով և մեծ հեռավորությունների վրա: Դա համաշխարհային զարգացման մեջ ստացել է «հաղորդակցման գլոբալ հեղաշրջում» անվանումը:

Ներկայումս քաղաքական գլոբալիստիկայում ակտիվորեն մշակվում է պետության նոր մոդելը՝ արդեն ոչ միայն իրավական և սոցիալական, այլև էկոլոգիական և սոցիալ-բնական: Նման տիպի պետությունը պետք է դառնա ոչ միայն մարդկանց կյանքի արդյունավետ կազմակերպման և կենսական կարիքների բավարարման միջոց՝ ապահովելով յուրաքանչյուր անհատի իրավունքներն ու ազատությունները, այլև պարտավոր է նույն ձևով հոգալ ապագա սերունդների, նրանց անվտանգության, շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, բնական ռեսուրսների օգտագործման մասին: Դրանք պետության սկզբունքորեն նոր գործառույթներ են, քանի որ պետության բոլոր նախորդ ձևերը լավագույն դեպքում միայն արձանագրել են այդ գործառույթներն իրենց հիմնական օրենքներում, բայց երբեք չեն կիրառել դրանք: Ենթադրվում է, որ ժողովրդավարությունն աստիճանաբար ժամանակակից ձևից կվերածվի նոոկրատիայի, որտեղ կգերիշխի ոչ թե մեծամասնության որոշումը, այլ ռացիոնալ որոշումը, որը կարտահայտի ոչ միայն քվեարկողների շահերը, այլև սոցիոբնական փոխհարաբերության բոլոր մասնակիցների և շրջակա միջավայրի շահերը:

Գլոբալացման սպառնալիքների և առավելությունների գնահատման ելակետը պետք է դառնա այն, որ գլոբալացումը օբյեկտիվ իրողություն է, պարզապես անհրաժեշտ է որոշել սեփական երկրի վերաբերմունքը, տեղը և վարքագիծը դրա շրջանակներում, և որ յուրաքանչյուր առանձին պետության համար գլոբալացման գործընթացների ներգործությունն ու հետևանքները յուրօրինակ բնույթ ունեն: Քանի որ գլոբալացման գործընթացները նախ և առաջ ընդգրկում են արագ զարգացող երկրների շատ փոքր խումբ, և մեծ թվով երկրներ պարզապես դուրս են մնում այդ գործընթացից, վերջիններիս համար գլոբալացման օգուտներն այնքան ակնհայտ չեն, որքան բացասական հետևանքները:

Սակայն թե՛ տեղական, թե՛ ազգային ու գլոբալ մակարդակների գնահատման չափանիշը բոլոր դեպքերում նույնն է. գլոբալացումը կհանգեցնի՞ մարդկանց կենսամակարդակի, միջավայրի սոցիալական ապահովության, քաղաքական իրավունքների ամրապնդմանը, կպահպանի՞ մշակութային բազմազանությունը և ազգային ինքնատիպությունը, թե՞ ոչ: Այս առումով Հայաստանը ևս բացառություն չէ:

Հայաստանի համար գլոբալացման էությունը նախ և առաջ հանգում է մշակութային ու սոցիալ-տնտեսական հետևանքների, քանի որ համաշխարհային շուկայում ինտեգրացումը մի կողմից մեծ հնարավորություններ է ընձեռում, մյուս կողմից՝ որոշակի և ոչ միանշանակ խնդիրներ է առաջադրում: Հայաստանի համար գլոբալացման վտանգը եռմիասնական է և սպառնում է՝

1. տնտեսական ինքնուրույնությանը՝ վերածելով նրան տնտեսական կցորդի, «մետրոպոլիա - գաղութի», ժամանակակից ընկալմամբ՝ օբյեկտի.

2. մշակութային ինքնությանը՝ խաթարելով ազգային կերպն ու ինքնատիպությունը.

3. քաղաքական ինքնիշխանությանը:

Հենց այս հնարավոր բացասական հետևանքներն են դառնում գլոբալացման երևույթի՝ իբրև լուրջ սպառնալիքի ընկալման հիմքը և հանգեցնում են շատ երկրներում դրա դեմ պայքարի կոչերի:

Հայաստանի խնդիրն է՝ լավագույնս հարմարվել գլոբալացվող համաշխարհային հանրությանը՝ հնարավորինս օգտագործելով գլոբալացման առավելությունները՝ զուգահեռաբար նվազագույնի հասցնելով դրա բացասական ներգործությունը:

---

1 Տե՛ս Բառարան, Oxford, Քաղաքագիտություն և քաղաքականություն, 2003, էջ 587:

2 Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001, էջ 122:

3 Տե՛ս А. Уткин, Глобализация; процесс и осмысление, М., 2001, с. 9-10.

4 Ռ.Հ. Պետրոսյան, Քաղաքագիտություն, Երևան, 2002, էջ 394:

5 Տե՛ս М.А.Василик, М.С.Вершинин, Политология, Словарь-справочник, М., 2001 с. 541.

6 Հռոմեական ակումբը միջազգային կազմակերպություն է, հիմնադրվել 1968 թ. գլոբալ խնդիրները ուսումնասիրելու նպատակով:

7 Տե՛ս М. А. Василик, М.С. Вершинин, Политология, М., 1999, с. 544.

8 Տե՛ս նույնը, էջ 544-545:

9 Տե՛ս նույնը, էջ 54:

10 Նույնը, էջ 547:

11 Ա. Հովսեփյան, Ս. Հովհաննիսյան, Քաղաքականության պատմական դասերը և արդիականությունը, Երևան,1999թ., էջ 141:

12 Միջազգային հարաբերությունների արդի տեսություն, խմբագրությամբ Քեն Բութի և Սթիվ Սմիթի, Երևան, 2001, էջ 99:

13 М. А. Василик, М. С. Вершинин, указ. тр., с. 551.

14 Նույն տեղում:

15 Տե՛ս Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին, Երևան, 2002, էջ 223:

16 Նույն տեղում, էջ 137:

17 «Բանբեր» 6, 2002, էջ 1:

[18] Տե՛ս Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին, Երևան, 2002, էջ 185:

[19] Միջազգային հարաբերությունների արդի տեսությունը, խմբագրությամբ Քեն Բութի և Սթիվ Սմիթի, Երևան, 2001, էջ 99:

[20] М. А. Василик, М. С. Вершинин, указ. тр., М.1999, с. 556.

[21] Տե՛ս Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին, Երևան 2002 թ., էջ 213:

[22] Փաստաթղթեր Միավորված ազգերի կազմակերպության մասին, Երևան, 2002, էջ 213:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Р. Т. Мухаев, Политология, учебник, М., 2002.
2. М. А. Василик, М. С. Вершинин, Политология, М., 1993.
3. М. А. Василик, М. С. Вершинин, Политология, Словарь – справочник, М., 2001.
4. В. П. Пугачев, А. М. Соловьев, Введение в политологию, М., 2002.
5. Н. А. Нартов, Геополитика, учебник, М., 1999.
6. А. Уткин, Глобализация; процесс и осмысление, М., 2001.
7. К. С. Гаджиев, Геополитика, М., 1997.
8. И. А. Родионова, Глобальные проблемы человечества, М., 1994.
9. Р. А. 0. Хамелева, Природа политической власти, СПб, 1996.
10. Ռ.Հ Պետրոսյան, «Քաղաքագիտություն», Երևան 2002:
11. Тойнби А., Постижение истории, М., 1991.
12. Шведков Ю. А., Противоречия глобализации. Ежемесячник “США, Канада”, но.12, 2000.
13. Միջազգային հարաբերությունների արդի տեսությունը, խմբագրությամբ Քեն Բութի և Սթիվ Սմիթի, Երևան, 2001:
14. Huntington S., American Politics: The Promouse of Disharmong. Cambridge, 1981.
15. Василенко И. А., Политическая глобалистика, М., 2000.
16. «Բանբեր», 6, 2002:
17. В. И. Павлов, Тематика курса “Мировой политический курс” /вестник Московского университета. Политические науки, 1995.


## POLITICAL GLOBALIZATION


HRAYR DARBINYAN
Doctor of History, Professor

SILVA SIMONYAN


### Summary


In the second half of the XX century in the world history an unprecedented aggravation of global problems occurred, which transformed.

The politics reacted to this world scaled phenomenon by originating the science of political globalization, which became a system of knowledge of global problems of political aspect.

Within the bounds of globalization the scientists make great efforts to diagnose the unhealthy symptoms of vital functions of our civilization.

In this scientific branch finding effective methods for the struggh against dangerous diseases of human society is of utmost significance.

In such methods great importance is attached to the project of transformations of global scale and political reforms.

In editions of world problems the major function of political globalization is the prognostication of perspectives of civilizations evolution.

In such type of investigations great attention is paid to political formation of the society in the future as well as to the proceeding world wide political prognostications.


## ПОЛИТИЧЕСКАЯ ГЛОБАЛИЗАЦИЯ


ГРАЙР ДАРБИНЯН
Доктор исторических наук, профессор

СИЛЬВА СИМОНЯН


### Резюме


Во второй половине XX века в мировой истории произошли беспрецедентные обострения глобальных задач, которые трансформировались в важнейшие факторы развития человечества.

Этому явлению планетарного масштаба политилогия среагировала созданием науки политической глобализации, которая переросла в систему знаний глобальных задач с политическим уклоном.

В рамках политической глобализации ученные прилогают огромные усилия максимально точно диагнозировать болезненные явления нормальной жизнедеятельности нашей цивилизации.

В представленном научном направлении важное значение придается поискам результативных методов борьбы с опасными болезнями человеческого общества.

В аналогичных методах важное место занимают преобразования глобальных масштабов /направленных на постоянное улучшение жизнедеятельности и материальной обеспеченности общества/ в плане политических реформ.

В условиях планетарных задач важнейшей функцией политиеской глобализации является максимально правильное прогнозирование преспектив дальнейшего развития человечества, его цивилизованной эволюции.

В исследованиях подобного рода большое внимание уделяется политическому формированию общества в будущем и сущности политического прогнизорования предующих времен.

# ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

**ԱՇՈՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ**
*Տնտեսագիտության թեկնածու*

Հայաստանի Հանրապետության տնտեսության արդիականացման հրամայականները բխում են համաշխարհային տնտեսության սրընթաց գլոբալացմանը համարժեքորեն արձագանքելու պահանջներից: Դա առաջին հերթին ենթադրում է այդ երևույթի ծավալման հեռանկարների ճշգրիտ գնահատում և, դրանից ելնելով, ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարական առաջնահերթությունների հստակեցում: Առանց այս առանցքային խնդրի լուծման ավելորդ է խոսել արդիականացմանը միտված որևէ լուրջ տնտեսական քաղաքականության իրականացման մասին:

Փաստենք, որ անցումային երկրների, այդ թվում և Հայաստանի տնտեսության բարեփոխումների հիմքում, փաստորեն, դրվեցին, այսպես կոչված, «վաշինգտոնյան համաձայնության» սկզբունքները, որոնք միջազգային ֆինանսական կառույցների կողմից առաջարկվում էին ոչ միայն ետխորհրդային երկրներին, այլև ընդհանրապես երրորդ աշխարհի պետություններին: Այդպիսի քաղաքականությունը ենթադրում էր՝ հնարավորինս արագ ու համընդգրկուն մասնավորեցում, գների, արտաքին առևտրի ու կապիտալի շուկաների համապարփակ ազատականացում, տնտեսության վրա պետության «ճնշման» թուլացում և այլն:

Որոշ տեսաբաններ «վաշինգտոնյան համաձայնության» սկզբունքների պարտադրումը երրորդ աշխարհի և ետխորհրդային երկրների ճնշող մեծամասնությանը բացատրում էին առավելապես նրանց տնտեսությունները համաշխարհային տնտեսությանն ամեն կերպ ինտեգրելու ձգտումներով: Մասնավորապես, ամերիկյան հանրահայտ տեսաբան Զ. Հելբրեյթի կարծիքով՝ բարեփոխման այդպիսի մոդելի կիրառումը «գլոբալիզացիայի նկատմամբ հավատի յուրահատուկ խորհրդանիշ էր»[1]: Այս դիտարկման մեջ, անշուշտ, ճշմարտություն կա: Ակնհայտ է, որ համաշխարհային տնտեսությունը գնալով ավելի ու ավելի համապարփակ է դառնում, ըստ այդմ՝ ազգային տնտեսությունների զարգացման գրավականը դառնում է միջազգային շուկաներին առավելագույնս ինտեգրումն ու դրա հաշվին զարգացման պարտադրանքներին համարժեք արձագանքումը: Նախընթաց տասնամյակում ինֆորմացիոն տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը հանգեցրել է նրան, որ միջազգային շուկաները դարձել են ավելի թափանցիկ ու մատչելի, միևնույն ժամանակ՝ էլ ավելի են խստացել մրցակցության պայմաններն ու ինտենսիվությունը:

Զարգացած երկրների խոշոր անդրազգային կորպորացիաները, բնականաբար, արագորեն հարմարվում են նոր իրողություններին, շատ դեպքերում իրենք են հարուցում և ուղղորդում նոր զարգացումները, աշխատում են հնարավորինս արագ ձերբազատվել անարդյունավետ ու զարգացումը կաշկանդող կառուցվածքներից, ձգտում են իրենց արտադրություններն ու ծառայությունների մատուցման բնագավառները դարձնել առավել ճկուն, հարաշարժ և, որ ամենակարևորն է, հիմնված նորամուծությունների և շարունակական նորացման վրա:

Այս հանգամանքները, անկասկած, ազդում են երրորդ աշխարհի և հատկապես անցումային փուլում գտնվող երկրների զարգացումների վրա: Հայաստանն այդ երկրների թվում է: Զարգացած երկրներում տեղի ունեցող վերոնշյալ գործընթացներն անցումային երկրներում, այդ թվում և Հայաստանում առաջ են բերում նոր հնարավորություններ՝ մեր տնտեսության հնացած արտադրական, տեխնոլոգիական, կազմակերպական և ինստիտուցիոնալ կառուցվածքները նորացնելու ու ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Մեր կարծիքով՝ համաշխարհային տնտեսության գլոբալացումը մի շարք նոր իրողություններ է ծնում, որոնց պահանջների հետ հաշվի չնստելը պարզապես խելամիտ չէր լինի: Գլոբալացման ակնառու իրողություններից մեկը նորագույն տեխնոլոգիաների հենքի վրա աշխարհի երկրների հետագա տարբերակումն է: Ըստ այդմ՝ զարգացած ու առաջատար երկրների ընտրանին, օգտագործելով գիտական ու ինժեներական մտքի նվաճումները, տեխնոլոգիապես էլ ավելի առաջ է անցնում մնացած երկրներից: Ակնհայտ է դառնում, որ աշխարհի զարգացած երկրներն ու անդրազգային ընկերությունները ներկայումս կարողանում են «սանձել» բարձրակարգ տեխնոլոգիաները, ինչը թույլ է տալիս իրենց հսկողության տակ վերցնել դրանց հիման վրա ձևավորված ապրանքային շուկաները:

Համաշխարհային շուկայի գլոբալացումը, թերևս, առավել լուրջ խնդիրներ է հարուցում տարածքով ոչ մեծ, բազային ռեսուրսներով և էներգակիրներով ոչ հարուստ, փոքրաթիվ բնակչությամբ, հետևաբար և՝ սահմանափակ ներքին շուկա ունեցող այնպիսի երկրների համար, ինչպիսին Հայաստանն է: Այդ պայմաններում անիմաստ են դառնում ինքնաբավ ու ինքնապարփակ տնտեսության գոյության մասին բոլոր փաստարկները: Ավելորդ է ասել, որ նման զարգացումը փակուղային է. այն պարզապես կհանգեցնի խորհրդային ժամանակներից ժառանգված տնտեսության հնացած ու անմրցունակ տեխնոլոգիական կառուցվածքի կոնսերվացման և, իբրև հետևանք, կխորացնի աղքատությունը և հետամնացությունը,

կփակի առաջադիմության ճանապարհը:

Ակնհայտ է, որ անցումային շրջանն ուղեկցվում է տնտեսության աննախադեպ չափերի անկմամբ: Օրինակ՝ Հայաստանում տնտեսության ամենամեծ անկումը գրանցվել է 1991-94թթ.: Այդ ընթացքում երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը կրճատվել է 50,6 տոկոսով: Ընդ որում՝ ՀՀ ՀՆԱ ծավալի ամենամեծ անկումը (42 տոկոս) գրանցվել է 1992թ., որը ԱՊՀ համանման միջին ցուցանիշը գերազանցել է 6 անգամ[2]:

Իհարկե, անցումային տնտեսության անկումն ինչ-որ իմաստով օրինաչափ է, ինչը փաստում են մի շարք հայտնի տեսաբաններ: Հունգարացի տնտեսագետ Յա. Կորնային նույնիսկ այդ երևույթին հատուկ բնորոշում է տվել՝ «տրանսֆորմացիոն անկում»[3], երբ տնտեսության համակարգափոխությունն անխուսափելիորեն ուղեկցվում է տնտեսության լայնամասշտաբ անկմամբ: Այս տեսակետը զարգացրել է նաև Վ. Պոլտերովիչը[4]: Տնտեսական անկմանը զուգահեռ՝ անցումային տնտեսության մեջ տեղի է ունենում նրա տեխնոլոգիական կառուցվածքի հետագա վատթարացում: Այդ պատճառով համակարգափոխության գլխավոր խնդիրը հենց տնտեսության տեխնոլոգիական արդիականացումն է այն հաշվով, որպեսզի այն միջազգային չափանիշներով դառնա մրցունակ:

Համաշխարհային տնտեսության արդի զարգացումներն այնպիսին են, որ հստակորեն առանձնանում են տնտեսության չորս խումբ ճյուղեր, որոնք տարբերվում են բնակչության զբաղվածության և եկամուտների ձևավորման մեջ ունեցած տեղով, պահանջվող ռեսուրսների ու կիրառվող տեխնոլոգիաների յուրահատկությամբ, ինչպես նաև բնության վրա ունեցած «ճնշման» աստիճանով: Դրանք են՝

• հումք արդյունահանող և դրա նախնական մշակմամբ զբաղվող ճյուղեր.

• ծանր արդյունաբերություն՝ հիմնված նյութատար, էներգատար և աշխատատար արտադրությունների վրա, որոնք աչքի են ընկնում բնական միջավայրի վրա լուրջ բացասական ազդեցությամբ.

• բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրություններ, որոնց բնորոշ է բարձր աստիճանի գիտատարությունը, ցածր նյութա-, էներգա- և աշխատատարությունը, ինչպես նաև՝ բնության վրա թույլ ներգործությունը.

• «փափուկ» տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրություններ, որոնց հիմքում ինֆորմացիոն տեխնոլոգիաներն են (ծրագրային ապահովում, համակարգային ինտեգրացիա, բիզնես-խորհրդատվություն, աուտսորսինգ (արտահոսք), ուսուցում և այլն):

Համաշխարհային տնտեսության մեջ ներկայումս ընթացող նման կառուցվածքային տեղաշարժերի պայմաններում տեղի է ունենում ծանր արդյունաբերության հումքատար, էներգատար, աշխատատար և բնապահպանական տեսանկյունից վտանգավոր արտադրությունների փոխանցում զարգացած երկրներից զարգացող երկրներին: Այդ գործընթացին նպաստում է ինչպես թույլ զարգացած երկրների աշխատուժի ցածր արժեքը, այնպես էլ մրցակցության ինտենսիվությունը: Մյուս կողմից՝ տեղի է ունենում «ուղեղների արտահոսք» զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ: Այս գործընթացները որոշակի առումով նաև բնորոշ են Հայաստանին:

Մյուս կողմից՝ երրորդ աշխարհի այն երկրները, որոնք տնօրինում են զարգացած մտավոր ներուժի, կարող են միջազգային շուկաներում ունենալ իրենց կայուն տեղը՝ շնորհիվ «փափուկ» տեխնոլոգիաների հիման վրա ստեղծված ապրանքների արտահանման: Այս երկրների հիմնական խնդիրը հենց մարդկային կապիտալի զարգացման ու ընդլայնված վերարտադրության համար առավելագույն բարենպաստ պայմաններ ստեղծելն է: Մեր կարծիքով՝ նման սցենարը որոշակի իմաստով բարձր տեխնոլոգիաների զարգացման փուլը շրջանցելու այլընտրանքներից մեկն է: Հայաստանի համար բարձր տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ կարող է նախընտրելի լինել նաև տեխնոլոգիաների այս խմբի զարգացման սցենարը:

Հայաստանի տնտեսությունն այժմ կառուցվածքային լուրջ խնդիրներ ունի. ԽՍՀՄ-ից ժառանգած արտադրությունների ճնշող մեծամասնությունը կաթվածահար վիճակում է թե՛ շրջափակումների հետևանքով կորսված շուկաների, թե՛ տեխնոլոգիաների հնացածության, ուստի և՝ արտադրանքի անմրցունակության պատճառով: Նույնիսկ շրջափակումների վերացման պարագայում ՀՀ տնտեսության տեխնոլոգիական կառուցվածքը բոլորովին անհամապատասխան է շուկայական իրողություններին:

ԽՍՀՄ-ից ժառանգած վերարտադրական կառուցվածքը բացառապես հարմարեցված էր տնտեսության՝ որպես մեկ «միասնական ֆաբրիկայի» գործառույթներին: Այդպիսի կառուցվածքն ի սկզբանե բացառում էր մրցակցությունը և «կրկնությունները»: Այդպիսով՝ անկախության արշալույսին տնտեսական ողջ համալիրը պահանջում էր արմատական վերակառուցում և արդիականացում, դրանց արդյունքում՝ դեպի գիտատեխնոլոգիական նորամուծությունները կողմնորոշված տնտեսության մրցունակ հատվածների ձևավորում: Համակարգային տնտեսական բարեփոխումների սկզբին՝ 1990-1993թթ., Հայաստանում տիրապետող էին այն մտայնությունները, թե «վաշինգտոնյան համաձայնության» սկզբունքների հիման վրա գների համատարած ազատականացումը, տնտեսության «բացումը», մեծաշնորհների զսպումը և զանգվածային մասնավորեցումը կարող են մեխանիկորեն տնտեսության առաջադիմական կառուցվածքային փոփոխություններ հարուցել այնպես, որպեսզի հաղթահարվեն վերարտադրության ձևախախտված համամասնությունները, և տնտեսության մեջ մրցակցային պայմաններ կստեղծվեն:

Մեր կարծիքով՝ նման խնդրադրումը բավական միակողմանի էր: Այդ քայլերի արդյունքում շուկայական սկզբունքները կարող էին գործել միայն ավանդական ու պարզ տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությունների պարագայում, որոնք գլխավո-

րապես միտված էին դեպի ներքին շուկայի պահանջարկը: Ասենք՝ հացաթխման, հրուշակեղենի, սննդամթերքի, հագուստեղենի կամ կոշկեղենի արտադրության պարագայում այդպիսի մոտեցումներն արդարացված էին, քանզի այստեղ լուրջ ներդրումների, տեխնոլոգիաների արդիականացումների կամ կառուցվածքների փոփոխությունների մեծ անհրաժեշտություն չկար:

Սակայն երբ հարցը վերաբերում է քիչ թե շատ զարգացած տեխնոլոգիական արտադրություններին, որոնք կողմնորոշված են դեպի արտաքին շուկաներ, ապա զանգվածային մասնավորեցումը, գների ազատականացումը կամ տնտեսության ներփակ վիճակի վերացումը կարող էին ընդամենն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ հանդիսանալ մրցունակ արտադրանք թողարկելու համար: Բարձր տեխնոլոգիական և միջազգային շուկաներում մրցունակ արտադրությունների զարգացումը հրամայաբար պահանջում է մեծածավալ երկարաժամկետ ներդրումներ, առանց որոնց մրցունակ արտադրանքի թողարկման ու, առավել ևս, դրանց արտահանման մասին խոսելն ավելորդ է: Հայաստանի տնտեսության գլխավոր խնդիրը, այդպիսով, երկարաժամկետ ներդրումների միջոցով տեխնոլոգիաների արդիականացման մեջ է: Այս խնդիրը, ի վերջո, պետք է լուծեր համակարգային բարեփոխումների քաղաքականությունը:

Այդուհանդերձ, հատկապես ետխորհրդային տարածքի երկրներում ընթացող բարեփոխումների քաղաքականության հիմքում, մեր կարծիքով, երբեմն դրվում են տեսական հիմնադրույթներ, որոնք առնվազն մի քանի տասնամյակի վաղեմություն ունեն: Այդպիսի հիմնադրույթներից մեկն այս է. զարգացող երկրները կարող են առանց լրացուցիչ նախապատրաստական ծախսերի անմիջականորեն օգտագործել զարգացած երկրների ստեղծած նոր տեխնիկան և բարձր արդյունաբերական տեխնոլոգիաները: Այլ կերպ ասած՝ վճռական նշանակություն էր տրվում մրցակցային առավելությունների ձևավորման մեջ զարգացման թռիչքաձևության գործոնին:

Ենթադրվում էր, որ համաշխարհային առևտրի խորացումը հանգեցնելու էր նրան, որ նորագույն տեխնոլոգիաները, մասնագիտական գիտելիքները և արդիական կառավարման համակարգերը, շատ արագ փոխանցվելով երրորդ աշխարհի երկրներին, կդառնային ավելի արագ տնտեսական աճի գործուն ազդակներ: Այս գաղափարի եռանդուն ջատագովներից մեկը՝ ամերիկյան տնտեսագետ Վ. Ա. Լյուիսը, զարգացումն ապահովող գործոնների մեջ շեշտը դնում էր հատկապես կապիտալի կուտակման սահմանափակումների հաղթահարման և ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման վրա[5]:

Սակայն կյանքը ցույց տվեց, որ ներդրումների (ինչպես արտաքին, այնպես էլ ներքին) հոսքերի ակտիվացումը դեռևս տնտեսական զարգացման ռեալ երաշխիք լինել չի կարող: Միևնույն ժամանակ, ամբողջությամբ չի հաստատվում այն հետևությունը, թե երրորդ աշխարհի առավել թույլ զարգացած և անցումային փուլում գտնվող երկրները պետք է ավելի արագ տեմպերով զարգանան, քան զարգացման մեջ առաջ անցած երկրները:

Դժվար է, իհարկե, վերջին տասնամյակի ընթացքում ԱՊՀ երկրներում, այդ թվում և Հայաստանում տեղի ունեցող գործընթացներին «զարգացում» բնորոշումը տալ, սակայն փաստ է, որ այս ընթացքում հարստության և աղքատության միջև անջրպետն այդ երկրներում ծայրահեղորեն մեծացել է: Ահավասիկ՝ հայաստանյան սոցիալական իրողությունները դրա վկայությունն են: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վերլուծության՝ 1998-1999թթ. իրականացված տնային տնտեսությունների ամբողջական հետազոտության արդյունքներով՝ ՀՀ 20 տոկոս ամենաապահովված (վերին քվանտիլային խումբ) և 20 տոկոս ամենաաղքատ (ստորին քվանտիլային խումբ) ընտանիքների եկամուտների հարաբերակցությունը կազմել է 32,2, իսկ ըստ ծախսերի՝ 6,6[6]: Բնակչության եկամուտների բևեռացման աստիճանը նկարագրում է նաև Ջինիի գործակցի բավականաչափ բարձր մակարդակը՝ 0,570 (2001թ)[7]:

Ռազմավարական տեսանկյունից՝ ազատական մոդելի ընտրությունը, թերևս, միանգամայն արդարացված էր. ազատ ձեռնարկատիրության և տնտեսական որոշումների ընդունման ապակենտրոնացված համակարգին անցումն այլընտրանք չուներ, քանի որ վարչահրամայական տնտեսակարգի էքստենսիվ ու ռեսուրսների ծախսողական մեխանիզմների վրա հիմնված համակարգն այլևս անկարող էր ապահովել տնտեսական աճի և բարեկեցության հետագա բարձրացման պահանջները: Տնտեսաքաղաքական համակարգափոխության ազատական մոդելին գերապատվություն տալը ինչպես Հայաստանի, այնպես էլ ԱՊՀ երկրների կառավարությունների կողմից, թերևս, մի շարք բացատրություններ ուներ: Նախ՝ միայն այդպիսի մոդելի ընտրության դեպքում էր հնարավոր ակնկալել Արևմուտքի հզոր ֆինանսական կառույցների (Համաշխարհային բանկ (ՀԲ), Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) համապարփակ աջակցությունը վարվող տնտեսական ուղեգծին: Երկրորդ՝ ազատական վերափոխումների սկզբնափուլում բարեփոխական կառավարությունները վայելում էին հասարակության անվերապահ աջակցությունը, կամ էլ, ծայրահեղ դեպքում, բացակայում էր ընդգծված դիմակայությունը վարվող ուղեգծին: Երրորդ՝ հասարակության մեջ նկատելի ոգևորություն կար ժողովրդավարության արտաքին հատկանիշների յուրացման և Արևմուտքի տնտեսական ու սոցիալական ձեռքբերումների փորձն ընդօրինակելու առումով, և, միաժամանակ, թերագնահատվում էին հնարավոր բարդությունները:

Մյուս կողմից՝ տրամաբանական կլիներ ակնկալել, որ բարեփոխումների նպատակների մեջ հիմնականը պետք է լինի հասարակության և տնտեսության արդիականացման պահանջը: Այդուհանդերձ, համակարգային տնտեսական բարեփոխումների

դրական ձեռքբերումների կողքին բավականաչափ մեծ են նաև կորուստները: Հետաքրքիր է, որ ԱՊՀ երկրների, այդ թվում և Հայաստանի տասնամյա տնտեսաքաղաքական բարեփոխումների արդյունքներն առավելապես բացասական շեշտադրումներով են գնահատում այդ վերափոխումների հիմնական խորհրդատուները՝ ՀԲ մասնագետները:

Դիտարկվող տասնամյակում այս տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրին տարբեր կերպ ու տարբեր չափով է հաջողվել վերականգնել իր տնտեսությունը: ԱՊՀ երկրներում, օրինակ, տնտեսական անկումը շարունակվել է մինչև 1996 թվականը, և միայն այդ թվականի վերջին է ՀՆԱ-ն կայունացել 1990 թ. 50 տոկոսի մակարդակին: 1995-2000 թթ. ԱՊՀ երկրներում հնարավոր է եղել վերականգնել 1990 թվականի ՀՆԱ մակարդակի ընդամենը 63 տոկոսը: Հայաստանն այս երկրների խմբի մեջ է. տասը տարվա ընթացքում հաջողվել է վերականգնել տնտեսության ընդամենը 67 տոկոսը: Ընդ որում՝ Հայաստանը ԱՊՀ երկրների այն խմբի մեջ է (Վրաստան, Մոլդովա), որտեղ 1990-94թթ. ամենամեծ տնտեսական անկումն է գրանցվել (60-80 տոկոս): 2000 թ. Ռուսաստանում ՀՆԱ-ն կազմել է 1990թ. մակարդակի 64 տոկոսը, Ղրղզստանում՝ 66 տոկոսը, Ղազախստանում՝ 90 տոկոսը, Բելառուսում՝ 88 տոկոսը: Ամենացածր ցուցանիշներ ունեն Վրաստանը, որը վերականգնել է իր տնտեսության 29 տոկոսը, Մոլդովան՝ 35 տոկոսը, և Ուկրաինան՝ 43 տոկոսը[8]:

Ըստ ՀԲ փորձագետների գնահատականների՝ Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան երկրների տնտեսություններն արագ վերականգնվեցին, քանի որ այդ երկրների կառավարությունները կարողացան ակտիվորեն խրախուսել նոր ձեռնարկությունների ստեղծումը: Ազատական բարեփոխումների արդյունքում հաջողած երկրներում, դիցուք, Լեհաստանում կամ Հունգարիայում, բացված աշխատատեղերի առնվազն 50 տոկոսը բաժին է ընկնում նոր և շուկայում մրցունակ ձեռնարկություններին, մինչդեռ Հայաստանում այդ ցուցանիշը 26-28 տոկոս է[9]:

Փաստորեն, հակասական բարեփոխումների արդյունքում Հայաստանը ԱՊՀ մի շարք այլ երկրների հետ հայտնվել է «ցածր տնտեսական հավասարակշռության ծուղակում», որից դուրս գալու համար պետք է արագացնի տնտեսական աճը: Դրա համար անհրաժեշտ է խրախուսել նոր ձեռնարկությունների մուտքը դեպի շուկա, բոլորի համար ապահովել «խաղի» հավասար կանոններ: ՀԲ փորձագետները սահմանել են այն չափանիշը, որով կարելի է փաստել, որ տնտեսական բարեփոխումների փուլը կամ, ինչպես ասում են, «անցումային շրջանը», ավարտվել է: Ըստ այդմ՝ անցումային փուլը կարելի է ավարտված համարել, երբ մրցունակության առումով այլևս տարբերություն չկա երկրի հին և նոր տնտեսական հատվածների (միավորների) միջև[10]:

Մեր կարծիքով՝ ՀԲ փորձագետները միանգամայն իրավացիորեն իրենց դիտարկման արդյունքում եզրակացրել են, որ Հայաստանում առկա է ճգնաժամի մեջ հայտնվելու մեծ հավանականություն: Այդպիսի ճգնաժամը ներունակ է կայուն և տևական լինել, քանի որ առկա դրական փոփոխությունների նկատմամբ պահանջարկը չեզոքացվում է բազմաթիվ բացասական գործոններով[11]: Ահա այս մեկնակետերից Հայաստանում իրականացվող ազատական բարեփոխումների արդյունքները գնահատելիս կարելի է մի շարք հետևություններ անել:

Առաջին՝ մասնավորեցման մեխանիզմների ընտրության մեջ օրենսդիր և գործադիր իշխանությունները կողմնորոշվել են ոչ թե տնտեսական արդյունավետության, այլ որոշ երկրների փորձի մեխանիկական ընդօրինակման ու առավելապես կարճաժամկետ քաղաքական նպատակահարմարության պահանջներով: Կյանքը ցույց տվեց, որ պետական սեփականության կարգավիճակի մեխանիկական փոփոխությունն ամենևին չի լուծում արդյունավետության խնդիրը:

Երկրորդ՝ ազգային տնտեսության պատշաճ մրցունակության ապահովման խնդիրն ընկալվում էր խիստ միագծորեն: Ենթադրվում էր, որ ինչքան լայն բացվեն երկրի մաքսային սահմանները, այնքան ավելի շուտ ներքին արտադրողներն իրենց մրցունակության պարամետրերը կմոտեցնեն միջազգային չափանիշներին: Մինչդեռ այդպիսի քաղաքականության հետևանքով տնտեսության ավանդական ճյուղերի արտադրությունները (թեթև, սննդի, տեքստիլ, կոշիկի և այլն) կաթվածահար եղան՝ դրսից մեծ մասամբ դեմպինգային գներով ներմուծված ապրանքների հետ անհավասար մրցակցության հետևանքով:

Երրորդ՝ ազատական բարեփոխումների հեղինակների կողմից անտեսվում էին երկրաշարժի, ղարաբաղյան պատերազմի ու դրանով պայմանավորված շրջափակումների հարուցած սահմանափակումները: Նշված գործոնների ազդեցությամբ աղավաղված արժեչափերի համակարգում հայտնված տնտեսության բարեփոխումներն ի սկզբանե շրջանցում էին արհեստականորեն առաջացած իրավիճակի մարտահրավերները:

Չորրորդ՝ բարեփոխումների ընթացքում անտեսվում էին նվազագույն սոցիալական սահմանափակումները: Եթե վերափոխումներ ապրող խոշոր երկրներում զանգվածային գործազրկության կամ նույնիսկ աղքատության պարագայում հնարավորություններ կան ռեսուրսների վերաբաշխման ու վերախմբավորման միջոցով մեղմել սրված սոցիալական հակասությունները ու բացառել այդ հողի վրա ծագող բախումները, ապա Հայաստանի նման փոքր երկրներում այդ կերպ մանևրելու հնարավորությունները շատ փոքր են:

Հինգերորդ՝ միակողմանիորեն անցկացված ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումները չուղեկցվեցին տնտեսության մեջ ռեալ ֆունկցիոնալ տեղաշարժերով: Այս պայմաններում, չնայած շարունակ մատուցվող մակրոտնտեսական «կայունության ու հավասարակշռության» ապահովման կարգախոսներին, այդուհանդերձ, մեր կարծիքով,

մակրոտնտեսական իրավիճակը երկարաժամկետ առումով մնում է խիստ լարված:

Հավելենք, որ Հայաստանի տնտեսաքաղաքական բարեփոխումների մեջ գերագնահատվում էին տակավին չկայացած շուկայական մեխանիզմների ինքնակազմակերպման ու ինքնակարգավորման հնարավորությունները: Անտեսվում էր զարգացած երկրների փորձով հաստատված մի շատ պարզ ճշմարտություն. դեռևս լինելության գործընթացի մեջ գտնվող շուկայական ինստիտուտներն ու ենթակառույցներն ի զորու չեն հավասարակշռելու տարերային և հաճախ տրամագծորեն հակադիր ու հակամարտող մասնավոր շահերը:

Այսպես կոչված «ֆինանսական կայունացման» արդյունքում, երբ ինֆլյացիան ամեն կերպ զսպելու նպատակով պարզապես դրամազրկվում է ազգային տնտեսությունը, տեղի է ունենում մի կողմից՝ հօգուտ տնտեսության սպեկուլյատիվ հատվածի դրամական ռեսուրսների անարդյունավետ վերաբաշխում, մյուս կողմից՝ չվճարումների հիմնախնդրի սրում և չհաշվառվող ու ստվերում գործող ձեռնարկատիրության մասշտաբների աննախադեպ ընդլայնում:

Ետխորհրդային շատ փորձագետ-գիտնականներ հակված են ուղիղ համեմատական կապ տեսնել տնտեսական ազատության աստիճանի և տնտեսական աճի միջև: Մինչդեռ ազատականության զուտ քանակական ու միակողմանի ըմբռնումը շատ դեպքերում կարող է խեղաթյուրել իրական վիճակը: Համակարգայնորեն կերպափոխվող տնտեսության համար տնտեսական աճի բարձր մակարդակը, մեր կարծիքով, էական չափանիշ չի կարող լինել այն պարագայում, երբ այդ աճը ձեռք է բերվում գոյություն ունեցող վերարտադրական անհամամասնությունների ու կառուցվածքային ձևախեղումների պահպանման ճանապարհով: Ավելի կարևոր է, թե տնտեսության ռեալ հատվածն ինչպե՞ս է վերափոխվում նոր՝ շուկայական խաղի կանոնների ու ավելի արդիական տեխնոլոգիաների հենքի վրա:

Սա նշանակում է, որ տնտեսության համակարգափոխության պայմաններում պետք է «տնտեսական զարգացում» հասկացությունը հստակորեն տարանջատել «տնտեսական աճ» հասկացությունից: Այսինքն՝ տնտեսության ինստիտուցիոնալ և արմատական կառուցվածքային վերափոխումների փուլում գերապատվությունը պետք է տրվի գիտության և բարձրակարգ տեխնոլոգիաների հիման վրա տնտեսական զարգացման, այն է՝ նորացման և արդիականացման խնդրի լուծմանը, իսկ տնտեսական աճը պետք է ընկալվի և արժևորվի որպես տնտեսական զարգացման օբյեկտիվ հետևանք:

Մեր կարծիքով՝ ճիշտ է նկատում ժամանակակից ինստիտուցիոնալիզմի խոշոր տեսաբաններից մեկը՝ Դ. Նորթը, շեշտելով, թե տնտեսական զարգացման հետազոտողների հիմնական սխալն այն է, որ նրանք տնտեսական աճի գլխավոր գործոն են համարում տեխնոլոգիայի զարգացման մակարդակը: Իրականում «աճի հանգուցային գործոնը ինստիտուցիոնալ կառուցվածքն է և նրա ազդեցությունը ոչ միայն հայտնագործությունների և նորամուծությունների, այլև արտադրական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման, ապրանքների և ռեսուրսների շուկաներում տրանսակցիոն ծախքերի իջեցման, պայմանագրերի կատարման վրա վերահսկողության իրավական մեխանիզմների ստեղծման, սեփականության իրավունքների պաշտպանության խթանների վրա, իսկ ամենակարևորն է՝ այդ խթանների պահպանման վրա»[12]:

Բնականաբար, տնտեսության համակարգափոխության գործընթացները դիտարկելիս և, առավել ևս, նոր քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել նախընթաց զարգացման ողջ ժամանակահատվածի թողած ժառանգությունը: Այս առումով հարկ է նկատել, որ, գտնվելով զարգացման որոշակի փուլում, հասարակության համար չափազանց բարդ է արագորեն արմատապես փոխել զարգացման վեկտորը: Իրավացի է Դ. Նորթը, երբ գրում է, որ «երկարաժամկետ լճացման տնտեսությունը շատ դժվար է միանգամից վերածել կայուն ու դինամիկ աճի տնտեսության և հակառակը»[13]: Այս երևույթի պատճառը, թերևս, անցյալից ժառանգած ինստիտուտների առկայությունը և մարդկանց վարքագծի վրա դրանց որոշիչ ազդեցությունն է: Ինստիտուտները, ժամանակակից ինստիտուցիոնալիզմի ըմբռնման համաձայն, այնպիսի համակարգեր են, որոնք մարդիկ ստեղծում են, որպեսզի նվազեցնեն միմյանց միջև եղած հարաբերությունների անորոշությունը: Դրանք օրենքներն են, վարքագծի նորմերը, կարգերը, ձևական կանոնները, սովորույթները, ավանդույթները և այլն:

Ինստիտուտները, փաստորեն, ձևավորում են խթանների այնպիսի համակարգեր, որոնք, ի վերջո, պայմանավորում են հասարակության զարգացման այս կամ այն պարադիգմը, նրա առաջադիմության այս կամ այն ուղղությունը: Հարկ է նկատի առնել, որ վարքագծի ձևականոնները, հանդիսանալով մշակութային արժեքների ածանցյալներ, ևս էապես պայմանավորում են ինստիտուցիոնալ միջավայրի յուրահատկությունները՝ հարուցելով փոփոխությունների աստիճանականությունը և փուլայնությունը: Այս է պատճառը, որ եթե ձևական կանոնները, ասենք՝ օրենքները, կարելի է փոփոխել ակնթարթորեն, ապա վարքագծի ձևականոնները միանգամից փոխելն անհնար է. սրանց փոփոխությունը տևական ժամանակ է պահանջում: Այս պայմաններում կտրուկ փոփոխություններն ու թռիչքները գործնականում դառնում են անհնար:

Իբրև ամփոփում՝ կարելի է արձանագրել, որ ինչպես Հայաստանի, այնպես էլ նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունների տնտեսական բարեփոխումների հիմքում դրվել է արևմտյան տիրապետող տնտեսագիտական դպրոցի՝ ընդհանուր տնտեսական հավասարակշռության համադրույթը: Ուստի տնտեսական համակարգափոխության բացասական արդյունքները պետք է վերագրել կայացած շուկայական

համակարգերի գործողության նկատմամբ սկզբունքորեն կիրառելի այդ համադրույթի ոչ համապատասխան գործադրմանը:

Խոսքն այն մասին է, որ դեռևս չկայացած շուկայի անկատար ինստիտուցիոնալ միջավայրը գործնականում անարդյունավետ է դարձնում ընդհանուր հավասարակշռության սկզբունքի գործադրումը: Այս իրողությունն անցումային տնտեսությունների վերաբերմամբ առաջինը նկատել և ձևակերպել են Ռ. Քոուզը[14] և Դ. Նորթը[15] : Միաժամանակ պետք է փաստել, որ տեսության մեջ ավելի վաղ այդ հարցերին անդրադարձել են Յո. Շումպետերը[16], Ռ. Նելսոնը և Ս. Ուինթերը[17]: Վերջիններիս մոտեցումը տեսության մեջ հայտնի է որպես «էվոլյուցիոն համադրույթ», որի գաղափարական հիմնավորումները, մեր կարծիքով, առավել քան կիրառելի են անցումային տնտեսությունների համակարգափոխության գործընթացների նկատմամբ:

Ակնհայտ է, որ Հայաստանի տնտեսության մեջ, որտեղ արագորեն փլուզվում են նախկին համակարգի ինստիտուտները, գործարար վարքագծի նորմերն ու վարքականոնները և, ամբողջությամբ վերցրած, ձեռնարկչության արժեչափերի համակարգը, և այդ գործընթացներն այնքան հարաշարժ են ու դժվար կառավարելի, որ դրանց գնահատումը հավասարակշռության չափանիշով կարող է անբացատրելի փակուղային իրավիճակների հանգեցնել: Մասնավորապես, պետական բյուջեի խրոնիկական դեֆիցիտը, ներքին ու արտաքին պարտքի անկառավարելի աճը, տնտեսության ռեալ հատվածում ներդրումների սակավությունը, տնտեսության ստվերային և չհաշվառվող հատվածի անթույլատրելի մեծ բաժինը, բնակչության եկամուտների ծայրահեղ բևեռացումը, աղքատության խորացումն ու աննախադեպ կոռուպցիան միայն մասամբ են բացատրելի ավանդական տնտեսագիտական դրույթների տեսանկյունից:

Վերը շարադրված փաստարկներից ելնելով՝ կարծում ենք, որ ընդհանուր տնտեսական հավասարակշռության տեսության դիրքերից առաջարկվող լուծումները ոչ միայն չեն բարելավում երկրի տնտեսության մրցակցային դիրքերը, այլ ընդհակառակը՝ վատթարացնում են: Խոսքը մակրոտնտեսական քաղաքականության ընտրված տարբերակի, մեր համոզմամբ, միակողմանի կիրառության մասին է: Հատկապես կոշտ դրամավարկային քաղաքականությունը, երկրի կենտրոնական բանկի կողմից ցածր սղաճն ապահովելու նկատառումներով դրամական զանգվածի չափից դուրս զսպումը, որպես կանոն, հանգեցնում են տնտեսության դրամազրկմանը, ինչը, այլ բացասական հետևանքներով հանդերձ (տնտեսության դոլարացում, ստվերային կամ անդրամ՝ բարտերային գործարքների աճ, վճարումների ճգնաժամ և այլն), հանգեցնում է նաև տնտեսության կառուցվածքային և տեխնոլոգիական արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարության:

Ելնելով ստեղծված իրավիճակից, իբրև մակրոտնտեսական քաղաքականության այլընտրանք՝ առաջարկում ենք էվոլյուցիոն սկզբունքների վրա հիմնված դրամավարկային քաղաքականության տարբերակի կիրառում, ինչը, մասնավորապես, ենթադրում է կառավարելի սղաճի շրջանակներում (մեր պայմաններում՝ տարեկան 8-12 տոկոս) դրամական զանգվածի ծավալների ավելացում և ստեղծված հավելյալ լիկվիդայնության հաշվին (հատուկ մասնագիտացված կառույցների միջոցով) տնտեսության տեխնոլոգիական արդիականացման ծախսերի ֆինանսավորում:

Վերջին տասնամյակում երկրում հաստատված տնտեսական աճը, որը սոսկ վերականգնողական աճ է ու հիմնված է առավելապես ներմուծման փոխարինման, ինչպես նաև՝ էժան ու գրագետ աշխատուժի օգտագործման վրա, մեր կարծիքով, երկարաժամկետ առումով հարատև լինել չի կարող ու ժամանակի ընթացքում կարող է մարել, եթե չփոխվեն ինչպես բարեփոխումների տրամաբանությունը, այնպես էլ տնտեսական քաղաքականության շեշտադրումները:

Հայաստանի տնտեսության մեջ հաստատված տնտեսական աճը, ըստ էության, թույլ ու խարխուլ հիմքեր ունի, առաջին հերթին՝ կառուցվածքային լուրջ խնդիրների պատճառով: ԽՍՀՄ-ից ժառանգված արտադրությունների ճնշող մեծամասնությունը կաթվածահար վիճակում է թե՛ շրջափակումների հետևանքով կորսված շուկաների, թե՛ տեխնոլոգիաների հնացածության, ուստի և՝ արտադրանքի անմրցունակության պատճառով: Կարծում ենք՝ եթե նույնիսկ շրջափակումները հանվեն, այդուհանդերձ, ՀՀ տնտեսության տեխնոլոգիական կառուցվածքը մեծ մասով անհամապատասխան է համաշխարհային շուկայի իրողություններին:

Մինչդեռ այժմ փաստ է, որ տնտեսական աճի հիմնական մասն ստացվում է ավելացված արժեքի հարաբերականորեն ոչ մեծ բաժին ունեցող ճյուղերի հաշվին (ադամանդագործություն, ոսկերչություն, սննդի արդյունաբերություն և այլն): Ակնհայտ է, որ առայժմ համաշխարհային տնտեսությանը ՀՀ տնտեսության ինտեգրացման աստիճանն անբավարար է, ընդ որում՝ շատ ցածր է այդ ինտեգրացման որակը: Արտահանման կառուցվածքը, բացառությամբ ադամանդագործության, սննդամթերքի, ծրագրային ապահովման և, որոշ չափով, թեթև արդյունաբերության արտադրանքի գծով, չի համապատասխանում Հայաստանի տնտեսության կառուցվածքին, ինչպես նաև զարգացման ներուժին, և այդ առումով չի արտահայտում երկրի մրցակցային առավելությունները և թերությունները: Ուստի գիտության և նորագույն տեխնոլոգիաների հենքի վրա տնտեսությունը նորամուծությունների վրա հիմնված տնտեսական աճի ռեժիմի փոխադրելը, մեր համոզմամբ, այլընտրանք չունի:

Կարծում ենք, որ տնտեսությունը նորամուծությունների ռեժիմի փոխադրելու առումով Հայաստանն ունի ինչպես լուրջ պարտադրանքներ, այնպես էլ բավականաչափ նպաստավոր պայմաններ: Պար-

տադրանքները կապված են հաղորդակցության էժան ուղիների անմատչելիության և դեպի բաց ծով ելքի բացակայության, սահմանափակ ներքին շուկայի և փոքրաթիվ բնակչության առկայության հետ: Դատ-կապես վերջին հանգամանքներն էապես նվազեց-նում են արտաքին ներդրողների, առաջին հերթին` խոշոր անդրազգային ընկերությունների հետաքրքրու-թյունները ՀՀ տնտեսության նկատմամբ: Տնտեսու-թյունը նորամուծությունների ռեժիմի փոխադրման նպաստավոր պայմանները, մեր համոզմամբ, կապ-ված են առաջին հերթին երկրի մարդկային ռեսուրս-ների բարձր որակի, համեմատաբար էժան ու գրագետ աշխատուժի, գիտատեխնիկական զարգացած ներ-ուժի, ինչպես նաև` աշխարհով մեկ սփռված ու լուրջ կարողություններ ունեցող հայկական գաղթօջախ-ների հնարավոր օժանդակության հետ:

---

[1] Джеймс К. Гелбрейт. Кризис глобализации. “Проблемы теории и практики управления”. 1999. N 6. с. 42-50.

[2] ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ վիճակագրական-վերլուծական զեկույց, 2001թ. էջ 9:

[3] Kornai J. Transformational Recession. The Main Causes// Jornal of Comparative Economics, 19 N.1, 1994. p. 39-63.

[4] Полетерович В.М. Трансформационный спад в России: Экономика и математические методы. 32. N.1. 1996. с. 54-59.

[5] Lewis,W. Arthur The Theory of Economic Growth. Reprint, New York. Harper Torchbooks, 1970. p. 98.

[6] ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ վիճակագրական-վերլուծ. զեկույց, 2001թ., էջ 13:

[7] ՀՀ. Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավա-րական ծրագիր. «Հայացք տնտեսությանը», թիվ 12 (24), հոկտեմբեր 2002թ., էջ 9:

[8] «Անցումային շրջան. առաջին տասնամյակի վերլուծություն և դասեր` Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրների անցումային երկրների համար», 2002թ., էջ 14:

[9] «Հայաստան. աճի խոչընդոտները և կառավարության քա-ղաքականությունը». ՀԲ. հաշվետվություն, 2001թ., հոկտեմ-բեր, էջ 26-28:

[10] Տե՛ս նույն տեղը, էջ 15:

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 17:

[12] Д. С. Норт. “Парадокс Запада”, http//www.ie.boom.ru/North.3htm.

[13] Տե՛ս նույն տեղը, http//www.ie.boom.ru/North.3h.

[14] Коуз Р. Фирма, рынок и право. М., “Дело”, 1993.

[15] Норт Д. Институты, институциональные изменения и функционирование экономики. М., “Начала”,1997.

[16] Шумпетер Й. Теория экономического развития (исследование предпринимательства, прибыли, капитала, кредита, процента и цикла конъюнктуры). М.: “Прогресс”, 1982.

[17] Р.Нельсон и С. Дж.Уинтер. “Эволюционная теория экономических изменений”, Москва, изд. ЗАО “Финстатинформ”, 2000, с. 474.

---

## TECHNOLOGICAL MODERNIZATION DURING SYSTEMIC CHANGE

ATOM MARGARYAN
Candidate of Economiy

### Summary

The challenges facing the modernization of the Republic of Armenia’s economy stem from the need to respond to the rapid globalization of the world economy. At the heart of the country’s economic reforms have, in essence, been the so-called “Washington agreement” principles that were suggested by international finance organizations not only to the former Soviet states but also Third World countries.

A unilateral implementation of such policy does not contribute in any way to the formation of a competitive economy. The article puts forward new approaches that, if implemented, would help to put the Armenian economy under an innovative regime based on high technologies within the next decade.

## ТЕХНОЛОГИЧЕСКАЯ МОДЕРНИЗАЦИЯ В УСЛОВИЯХ СИСТЕМНОЙ ТРАНСФОРМАЦИИ

АТОМ МАРКАРЯН
Кандидат экономических наук

### Резюме

Задачи и вызовы модернизации экономики Республики Армении вытекают от потребностей соответствующей реакции к процессам быстрой глобализации мировой экономики. В основу реформ экономики фактически были положены так называемые принципы “вашингтонского консенсуса”, которые международные финансовые организации предлагали не только постсоциалистическим но и всем странам третьего мира.

Одностороннее применение такой политики отнюдь не способствует формированию технологически конкурентоспособной экономики. В этой статье предложены новые подходы, применение которых в ближащее десятилетие сможет перевести экономику в инновационный режим развития на основе высоких технологий.

**ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ**
*Քաղաքական գիտությունների թեկնածու*

# ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Բանակցությունների միջոցով հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում առաջացած հակասությունների ու հակամարտությունների կարգավորման պրակտիկան, ընդհանուր առմամբ, նոր երևույթ է Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքի համար: Բանն այն է, որ տասնամյակներ շարունակ ինչպես ողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանում պատշաճ ուշադրության չեն արժանացել բանակցությունների՝ որպես հակամարտությունների և հակասությունների կարգավորման առավել ընդունելի և քաղաքակիրթ եղանակի ուսումնասիրման, քաղաքական կոնֆլիկտների ծագման և դրանց կարգավորման եղանակների ուսումնասիրման, բանակցային տեխնոլոգիաների, ներքաղաքական բանակցությունների հետ կապված հիմնահարցերը: Բանակցություններն ավանդաբար (ոչ միայն մեր հանրապետությունում) ընկալվել են իրենց դրսևորման մի ոլորտով միայն՝ միջազգային հարաբերությունների ասպարեզում: Սակայն նույնիսկ այդ առումով էլ բանակցությունները դիտարկվել են զուտ որպես «հակամարտության շարունակություն բանակցությունների սեղանի շուրջ»: Բանակցությունների կիրառման տիրույթի այդպիսի սահմանափակվածությունն իր հերթին կախված էր մի շարք պատճառներից և գործոններից, որոնք էական ազդեցություն էին թողնում բանակցությունների համապատասխան ուղղությունների զարգացման վրա:

Նախ և առաջ պետք է նշել, որ բանակցությունների լայն կիրառումը՝ որպես քաղաքականության սուբյեկտների միջև հակասությունների և հակամարտությունների կարգավորման, նրանց համագործակցության և քաղաքական երկխոսության ապահովման եղանակ, մեծապես պայմանավորված է հասարակության քաղաքական կազմակերպվածության ձևով, և, ընդհակառակը, քաղաքական համակարգի այս կամ այն ձևը նպաստում է բանակցությունների այս կամ այն կողմի զարգացմանը: Այս առումով, իհարկե, բացառություն չի կազմել նաև Հայաստանի քաղաքական համակարգը: Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի պատմությունն ասվածի վկայությունն է: Գործող ամբողջատիրական համակարգը տասնամյակներ շարունակ էապես խոչընդոտում էր բանակցությունների կիրառմանը՝ որպես հասարակության քաղաքական համակարգի տարբեր մակարդակներում գործող քաղաքականության սուբյեկտների միջև փոխհարաբերությունների կարգավորման եղանակ: Վարչահրամայական համակարգի առկայության պայմաններում նվազագույնի էր հասցված ինչպես իշխանության տարբեր սուբյեկտների, այնպես էլ հասարակական-քաղաքական ուժերի կամ էլ տնտեսվարող սուբյեկտների միջև բանակցությունների հնարավորությունը: Իշխանության համակարգում հստակ գործող «հրաման-ենթարկում» կառուցակարգը գործնականում չէր նախատեսում քաղաքականության սուբյեկտների միջև շահերի համաձայնեցման այլ եղանակներ: Իշխանության չափից դուրս կենտրոնացված և աստիճանակարգված կառուցվածքն անհնար էր դարձնում որևէ հորիզոնական փոխհարաբերություն ինչպես իշխանական կառույցների, այնպես էլ իշխանությունների և հասարակական-քաղաքական ուժերի միջև: Իհարկե, միամտություն կլինի կարծել, թե նույնիսկ այդ պայմաններում իշխանական կառույցների ներսում կամ միջև առաջացած կոնֆլիկտների ու հակասությունների լուծման համար բանակցություններ չեն կիրառվել, սակայն դրանք առավելապես կրել են բացառիկ բնույթ և բնորոշ չեն եղել համակարգին, իսկ բանակցությունները հանդես չեն եկել որպես կոնֆլիկտների կարգավորման ինստիտուցիոնալ մեխանիզմ:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը նույնպես, նախկին սոցիալիստական ճամբարի շատ երկրների նման, բռնեց անկախ պետականության և ժողովրդավարական հասարակության կերտման բարդ ու դժվար ուղին: Նոր պայմաններում արդեն, ժողովրդավարական գործընթացներին զուգահեռ, էապես մեծանում են քաղաքական բանակցությունների կիրառման հնարավորությունները՝ ընդգրկելով և՛ արտաքին քաղաքականության, և՛ ներքաղաքական հարաբերությունների ոլորտներն ամբողջությամբ: Բանակցություններն այսօր հանդիսանում են ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման և դրանց բնականոն գործառնության, պառլամենտարիզմի ամրապնդման, իշխանության տարբեր ճյուղերի միջև համագործակցության ապահովման, իշխանությունների և հասարակական-քաղաքական ուժերի միջև քաղաքական երկխոսության հաստատման կարևոր մեխանիզմներ: Բանակցությունների կիրառումը ընդգրկում է քաղաքական հարաբերությունների նորանոր ոլորտներ՝ դառնալով համընդհանուր երևույթ: Այս կապակցությամբ Լ. Բելանժեն նշում է. «Եթե բանակցությունները պետք է դառնան սոցիալական պրակտիկա, ապա չպետք է ընկալվեն որպես բացառություն»[1]: Միաժամանակ նշվում է վնասակար հետևանքների մասին, որոնք կարող են առաջանալ այն դեպքում, երբ բանակցությունները դառնան որոշումների ընդունման միակ ձևը: «Բանակցությունների գաղափարը, ունիվերսալ և դոգմատիկ դառնալով, կարող է ծնել անիշխանության մասին թյուր պատկերացումներ»[2]: Բանակցությունների հաճախակի կիրառումը, Վ. Իսրայելյանի կարծիքով, մեծացնում է բանակցությունների սուբյեկտների ներառվածության աստիճանը, որն իր հերթին

կարող է հանգեցնել մի շարք հիմնախնդիրների, մասնավորապես՝ մեծացնել բանակցային սուբյեկտների «սխալի արժեքը»[3]: Սակայն, մյուս կողմից, անժխտելի է բանակցությունների աճող դերը մեր հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում:

Քաղաքական բանակցությունների ազդեցությունը հասարակության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքական կյանքի վրա, մեր կարծիքով, առավել ցայտուն է արտահայտվում ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի համատեքստում:

Անվիճելի է, թերևս, որ Հայաստանի անկախացումից ի վեր հայ ժողովրդի համար ամենաարդիական և կենսական նշանակություն ունեցող, և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքականության անկյունաքարը հանդիսացող հիմնախնդիրը եղել և մնում է ղարաբաղյան հակամարտությունը, որը բազմիցս դարձել է ներքաղաքական շահարկումների ու սակարկությունների առարկա: Ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման բանակցություններին անդրադառնալը ամենևին պատահական չէ, քանի որ մեր իրականության մեջ բանակցությունների մասին խոսելիս՝ այն, առաջին հերթին, զուգորդվում է ղարաբաղյան խնդրի կարգավորման բանակցային գործընթացների հետ:

Ղարաբաղյան հակամարտության մասին մանավանդ վերջին տարիներին բավական շատ է գրվել և՛ մեզ մոտ, և՛ արտերկրում. բավական է հիշատակել միայն այն, որ ժամանակակից էթնոքաղաքական հակամարտություններին վերաբերող գրեթե բոլոր դասագրքերում ղարաբաղյան հակամարտությունը նշվում է որպես դասական օրինակ: Այս հիմնախնդրին վերաբերող բազմաբնույթ աշխատությունները հիմնականում անդրադառնում են հակամարտության ծագման ակունքներին, տարաբնույթ հիմքերին, պատմական դեպքերի և իրադարձությունների ժամանակագրությանը: Մասնավորապես՝ կարելի է հիշատակել Ն. Հովհաննիսյանի, Ս. Զոլյանի, Ա. Մանասյանի և այլոց աշխատությունները: Հակամարտության կարգավորմանը նվիրված բանակցությունների մասին համեմատաբար քիչ է գրված թերևս այն պարզ պատճառով, որ արդեն մի քանի տարի շարունակվող բանակցությունները պարուրված են գաղտնիության մութ շղարշով, որը, մերթընդմերթ, այս կամ այն մարտավարական շահերից ելնելով, գաղտնազերծում են բանակցող կողմերը:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը մեզ հետաքրքրում է նաև այլ առումով: Մենք կփորձենք, ներկայացնելով բանակցային գործընթացի ժամանակագրությունը՝ սկսած 1991 թ., ցույց տալ բանակցությունների ազդեցությունը ՀՀ քաղաքական կյանքի վրա: Սխալված չենք լինի, եթե նշենք նաև հետադարձ կապի առկայությունը ՀՀ քաղաքական կյանքում՝ իշխանության գործունեության և բանակցություններում ձեռք բերված հաջողությունների միջև: Այս թեզը զարգացնելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է, որ ղարաբաղյան կարգավորման շուրջ տարվող բանակցությունները դիտարկվեն միասնական ամբողջության մեջ, որպես բազմափուլ գործընթաց, որոնցից յուրաքանչյուրը մյուսի տրամաբանական շարունակությունն է:

Խոսելով ղարաբաղյան հակամարտութան ծագման և զարգացման դինամիկայի մասին՝ պետք է նշել, որ այն բավական հին պատմություն ունի, ըստ շատ հեղինակների՝ առավել հին է ղարաբաղյան հիմնախնդիրը[4]: Պատմության ընթացքում բազմիցս փորձ է արվել լուծել այդ կոնֆլիկտը: Այդպիսի փորձերից մեկն էր նաև բոլոր ժամանակների ամենամեծ «էթնոինժեներ» Ի. Ստալինի կողմից Խորհրդային Միության կազմավորման հենց սկզբից Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանական ԽՍՀ-ին: Սակայն խորհրդային պետության գոյության ավելի քան 70-ամյա ընթացքում, ընդհակառակը, հակամարտությունը չկարգավորվեց. տարիներ շարունակ թաքնված (լատենտ) կերպով գոյատևելով՝ վերաճեց տարածաշրջանի ամենաարյունահեղ հակամարտության հայերի և ադրբեջանցիների միջև:

ԽՍՀՄ կազմալուծման գործընթացը նոր հեռանկարներ բացեց ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման համար: Առաջին անգամ խորհրդային 70-ամյա տիրապետության ընթացքում թելադրանքի փոխարեն պայմաններ էին ստեղծվում քաղաքական երկխոսության և միջնորդությունների համար: Չափազանց մեծ էին նաև այն սպասումները, թե կոմունիզմի պարտությունից հետո ԽՍՀՄ հիմնախնդիրները, հատկապես՝ ղարաբաղյան հակամարտությունը, կլուծվեն ժողովրդավարության սկզբունքներին համահունչ, մարդու իրավունքների հարգման սկզբունքի հիման վրա: Սակայն քաղաքական պրակտիկան հակամարտության կարգավորման այլ ուղի նախանշեց: Խորհրդային Միության կենտրոնական և Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունների կողմից հետևողականորեն անտեսվող Լեռնային Ղարաբաղի ժողովրդի օրինական պահանջներն ի վերջո հանգեցրին հակամարտության սրման, որը վերաճեց լայնածավալ ռազմական առճակատման Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև. հակամարտություն ներքաշվեց նաև Հայաստանի Հանրապետությունը:

Հակամարտող կողմերին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնելու առաջին լուրջ փորձ կարելի է համարել «Ժելեզնովոդսկյան բանակցությունները»: Այդ հանդիպման նախաձեռնողները հանդիսացան Ռուսաստանի և Ղազախստանի նախագահներ Բ. Ելցինն ու Ն. Նազարբաևը: Նրանց գլխավորած պատվիրակությունները 1991 թ. սեպտեմբերի 20-23-ը այցելեցին Բաքու, Ստեփանակերտ և Երևան, որից հետո Ժելեզնովոդսկում (սեպտեմբերի 25) կնքվեց «Ժելեզնովոդսկյան հայտարարագիրը» (պաշտոնապես փաստաթուղթը կոչվում էր «Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևի միջնորդական առաքելության արդյունքների մասին համատեղ հայտարարագիր»)[5]: Ինչպես նշում է Ս. Զոլյանը, Ժելեզնովոդսկյան գործընթացն օբյեկտիվորեն թելադրված էր ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում և Ադրբեջանում փոփոխված իրավիճակով (հեղինակն առաջին հերթին ի նկատի ունի 1991 թ. օգոստոսին Մոսկվայում կոմունիստների իրականացրած անհաջող հեղաշրջման փորձը)[6]: Սակայն Ժելեզնովոդսկյան գործընթացի սկիզբը պայմանավորված էր, ըստ հեղինակի, ոչ այնքան հակամարտող կողմերի ցանկությամբ, որքան միութենական ժառանգության հիմնական հավակնորդ հանդիսացող Ռուսաստանի կամքով: Դեռևս գոյություն

ունեցող ԽՍՀՄ-ի պայմաններում ի շահ ժելեզնովոդսկյան բանակցությունների լեգիտիմացման միջնորդի դերում հանդես գալու համար, բացի Ռուսաստանից, անհրաժեշտ էր նաև մեկ այլ ազդեցիկ հանրապետության մասնակցությունը, որն էլ հանդիսացավ Ղազախստանը: Ռուսաստանյան իշխանությունների և միութենական կենտրոնի միջև առկա հակասությունները, հատկապես վերջիններիս անկարողությունն ու անգործությունը ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում, էլ ավելի էին շեշտում Բ. Ելցինի և Ն. Նազարբաևի առաքելության կարևորությունը՝ մանավանդ նոր և ոչ ավանդական մոտեցումների կիրառման հեռանկարի տեսանկյունից: Բավական է հիշատակել միայն նախագահների՝ այն ժամանակի միութենական ուժային կառույցների ղեկավարների հետ հակամարտության գոտի կատարած այցելությունը: Երկրորդ ոչ ավանդական մոտեցումը վերաբերում էր հակամարտության իրական սուբյեկտների ճշգրտման հարցին: Բանն այն է, որ իր անկախության հռչակման պահից ի վեր ԼՂՀ-ն փորձում էր սեփական շահերն հենց ինքը ներկայացնել, իսկ այդ առումով ժելեզնովոդսկյան բանակցություններն առաջին այդպիսի փորձերն էին: Սակայն ժելեզնովոդսկյան հանդիպումից անմիջապես հետո հաջորդած սահմանային բանակցությունները վեր հանեցին մի շարք լուրջ խնդրոտներ: Նախ և առաջ, ինչպես կարծում է Ս. Զոլյանը, հայտարարագրի շատ դրույթներ կարող էին դառնալ որպես հակամարտության կարգավորման հիմք, եթե հիմնված լինեին ավելի լուրջ փորձագիտական աշխատանքների արդյունքների վրա: Սակայն հետագա բանակցային առաջխաղացմանը լրջորեն խոչընդոտող հիմնական պրոբլեմը, մեր կարծիքով, հանդիսացավ Լեռնային Ղարաբաղին բանակցային գործընթացից դուրս մղումը, որն ուղղակի հետևանք էր Ադրբեջանում ներքաղաքական սրված իրավիճակի: Բանն այն է, որ ժելեզնովոդսկյան հանդիպումից հետո ընթացող բանակցություններում Ադրբեջանի որդեգրած կոշտ դիրքորոշման պատճառներից մեկն ընդդիմության կողմից Ադրբեջանի բարձրագույն ղեկավարությանը ներկայացվող դավաճանության մեղադրանքն էր, որը, ստորագրելով «ժելեզնովոդսկյան հայտարարագիրը», փաստորեն ընդունել էր ԼՂՀ փաստացի գոյությունը: Ընդդիմության ճնշումների տակ գործող նախագահ Ա. Մութալիբովը, զրկվելով կոմունիստական իշխանության աջակցությունից, ստիպված էր տեղի տալ և խորհրդարանական նոր ընտրություններ անցկացնել, չնայած Գերագույն խորհրդի ընտրություններում ձևավորվեց իր իսկ կողմից վերահսկվող խորհրդարանական մեծամասնություն: Նոր խորհրդարանական ընտրություններում ձևավորվեց Ադրբեջանի Միլի մեջլիսը (1991թ. հոկտեմբերի 8), որտեղ արդեն նախագահի կողմնակիցները չունեին այն ճնշող մեծամասնությունը, ինչ նախորդ ընտրություններում էր: Հարկ է նշել, որ հասարակական-քաղաքական համակարգի փոփոխումը, որը տեղի էր ունենում բոլոր ետխորհրդային հանրապետություններում, օբյեկտիվորեն թելադրում էր ժողովրդավարական գործընթացներին համահունչ կառավարման համակարգի համապատասխան փոփոխություններ: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա մեզ մոտ 1991թ. հոկտեմբերի 16-ին կայացած նախագահական ընտրություններից հետո տրամաբանական հաջորդ քայլը, թվում է, կլիներ նաև նոր խորհրդարանի ձևավորումը, որն է՛լ ավելի կօրինականացներ և կամրացներ օրենսդիր իշխանության հիմքերը մեր հանրապետությունում: Սակայն այն տեղի ունեցավ միայն 1995 թ.՝ փոքր-ինչ դանդաղեցնելով ներկայացուցչական այս կարևոր ինստիտուտի կայացման գործընթացը ՀՀ-ում: Ինչևիցե, ժելեզնովոդսկյան բանակցությունները փորձեր էին՝ դեռևս առկա խորհրդային իրողությունների պայմաններում լուծելու օր օրի խորացող ճգնաժամը: Դրանով, թերևս, կարելի է ավարտված համարել ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի՝ խորհրդային աշխարհաքաղաքական տարածության մեջ ընթացող փուլը:

Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակումից, Խորհրդային Միության վերջնական կազմալուծումից հետո ղարաբաղյան հակամարտությունը և նրա կարգավորմանն ուղղված միջնորդական ջանքերը ընթացան մի նոր աշխարհաքաղաքական իրողության շրջանակներում, որը մերօրյա քաղաքական բառապաշարում հայտնի է «ետխորհրդային ժամանակաշրջան (կամ տարածաշրջան)» անվանմամբ: Բնական է, որ Խորհրդային Միության՝ աշխարհի քաղաքական քարտեզից անհետացումը ետխորհրդային տարածաշրջանում ակտիվացնելու էր միջազգային տարբեր (ՄԱԿ, ԵԱՀԽ) կազմակերպությունների գործունեությունը (մանավանդ որ 1992 թ. և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը դարձան ՄԱԿ և ԵԱՀԽ անդամներ)՝ տեղի ունեցող քաղաքական գործընթացները, մասնավորապես՝ նախկին միության տարբեր մասերում բռնկված հակամարտություններն ու պայթունավտանգ օջախները որքան հնարավոր է կառավարելի և վերահսկելի դարձնելու համար: Պատահական չէ, որ 1992 թ. սկսած՝ հարավկովկասյան տարածաշրջանի հակամարտությունների կարգավորման գործընթացներում իր ակտիվ միջնորդական գործունեությամբ առանձնացավ ԵԱՀԽ(ԵԱՀԿ)-ն, որի շրջանակներում էլ մինչ օրս շարունակվում են ղարաբաղյան կարգավորման բանակցությունները: Այսպես, 1992 թ. մարտի 24-ին ԵԱՀԽ -ն որոշում ընդունեց ղարաբաղյան կարգավորման համար հատուկ խումբ ստեղծելու մասին: Ի սկզբանե այդ խմբի մեջ (որը հետագայում ստացավ Մինսկի խումբ  անվանումը) ընդգրկված էին 9 պետություն՝ Ռուսաստանը, Բելառուսը, Թուրքիան, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Գերմանիան, Չեխոսլովակիան, Շվեդիան, Իտալիան, ինչպես նաև հակամարտող կողմերը՝ Հայաստանը, Ադրբեջանը և ԼՂՀ ներկայացուցիչները: Հետագայում Մինսկի խումբը որոշակի փոփոխություններ կրեց. Չեխոսլովակիային փոխարինեց Հունգարիան, ավելացան Ֆինլանդիան և Շվեյցարիան[7]: Հատկանշական է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի խաղաղարար գործունեությունը, հատկապես՝ ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացում, լիովին աջակցություն է գտնում ՄԱԿ-ի կողմից, որը մասնավորապես ընդունել է 4 բանաձև (N-822, N-853, N-874, N-884) Լեռնային Ղարաբաղի հակամարտության առնչությամբ: ՄԱԿ-ի ընդունած որոշումներում հատկապես ընգծվում է, որ, իբրև տա-

րածաշրջանային կազմակերպություն, ղարաբաղյան հակամարտության կարգավորման պատասխանատվությունը կրում է ԵԱՀԽ-ն, քանի որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն անմիջականորեն կարգավորմամբ զբաղվելու պատրաստակամություն չէր հայտնել: 1992թ. հուլիսի 15-ից սկսած՝ բանակցությունները պարբերաբար ընթանում էին Մինսկի խմբի շրջանակներում, որոնք ընդհատվեցին 1993թ. հոկտեմբերի վերջերին՝ ԵԱՀԽ միջնորդական ջանքերի անարդյունավետության պատճառով: Դրանից հետո միջնորդական նախաձեռնությունն անցավ Ռուսաստանին, որը, Մինսկի գործընթացին զուգահեռ, կազմակերպեց նոր բանակցություններ. արդյունքում մշակվեց «Բիշքեքյան արձանագրությունը», որի ստորագրումից հետո հատկապես Ադրբեջանում սրվեց ներքաղաքական իրավիճակը: Եթե 1991թ. «Ժելեզնովոդսկյան հայտարարագրի» ստորագրումից հետո ադրբեջանական ընդդիմությունը՝ Հ. Ալիևի ղեկավարությամբ, մեղադրում էր Ա. Մութալիբովի կառավարությանն ազգային շահերի դավաճանության մեջ[8] (որը դարձավ Ադրբեջանում իշխանափոխության կարևոր պատճառներից մեկը), ապա արդեն «Բիշքեքյան արձանագրության» ստորագրումից հետո նմանատիպ մեղադրանքներով, արդեն Հ. Ալիևի դեմ, նորից հանդես էր գալիս ընդդիմությունը (ցավոք, ադրբեջանական մամուլը ուսումնասիրելու հնարավորություն չունենալով, հիմնականում օգտվել ենք հայկական աղբյուրներում և մամուլում տպագրված նյութերից):

Որպեսզի Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակը, հրադադարի համաձայնագրի ստորագրումից հետո, ավելի պարզ լինի, թերևս անհրաժեշտ է մանրամասն կանգ առնել բիշքեքյան բանակցային գործընթացի վրա:

Զինված հակամարտության դադարեցման և նրա կարգավորման ուղիների որոնման հարցում, բացի ԵԱՀԿ Մինսկի խմբից, շատ ջանքեր են գործադրվել նաև այլ մակարդակներում: Մասնավորապես, դրանցից կարելի է առանձնացնել դեռևս 1992թ. ստեղծված ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովը, որի շրջանակներում ձևավորվել էր ղարաբաղյան հակամարտության կարգավորման աջակցության խումբ, որում ակտիվ դերակատարում ուներ Ղրղզստանի խորհրդարանի ղեկավար Մ. Շերիմկուլովը: 1993թ. դեկտեմբերին Ալանդյան կղզիներում Հայաստանի, Ադրբեջանի խորհրդարանականների և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված բանակցություններից հետո (ի դեպ, բանակցությունների վայրն ամենևին էլ պատահականորեն չէր ընտրված. հանդիպումն Ալանդյան կղզիներում էր կազմակերպվել ֆինների և շվեդների միջև ծագած ազգամիջյան կոնֆլիկտի կարգավորման փորձին ծանոթանալու համար) Մ. Շերիմկուլովի առաջարկով բանակցային հաջորդ փուլի անցկացման վայր ընտրվեց Բիշքեքը: 1994թ. մայիսի 3-5-ը Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեքում սկսվեց ԱՊՀ Միջխորհրդարանական համաժողովը: Դա առավել բարձր ձևաչափով, այն է՝ հակամարտող կողմերի խորհրդարանների ղեկավարների մակարդակով կազմակերպված առաջին փորձն էր: Բանակցություններին հայկական կողմերից մասնակցում էին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բ. Արարքցյանը, ԼՂՀ խորհրդարանի նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը, ադրբեջանական կողմից՝ Միլի մեջլիսի փոխնախագահ Ա. Ջալիլովը, որպես միջնորդ հանդես եկող Ռուսաստանի կողմից՝ ՌԴ Դաշնային խորհրդի նախագահ Վ. Շումեյկոն, ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի քարտուղար Մ. Կրոտովը և ՌԴ նախագահի հատուկ ներկայացուցիչ Վ. Կազիմիրովը[9]: Ինչպես նկատելի է, բանակցությունները բավական ներկայացուցչական կազմ ունեին: Բացառություն էր կազմում միայն ադրբեջանական պատվիրակությունը, որը ներկայացված էր խորհրդարանի փոխնախագահի մակարդակով: Այդ կապակցությամբ Բ. Արարքցյանը նշում է. «Ի սկզբանե բանակցություններում լարվածություն առաջացավ այն պատճառով, որ, չնայած նախնական պայմանավորվածությանը, Ադրբեջանը ներկայացնում էր ոչ թե խորհրդարանի նախագահը, այլ փոխնախագահ Ա. Ջալիլովը»[10]: Ինչպես հետո պարզվեց, այդ հանգամանքն էր, որ թույլ չտվեց Ա. Ջալիլովին այդ պահին ստորագրելու հրադադարի համաձայնագիրը՝ համապատասխան լիազորություններ չունենալու պատճառով: Ադրբեջանի խորհրդարանի ղեկավար Ռ. Ղուլիևը ստորագրեց «Բիշքեքյան արձանագրությունը» մայիսի 9-ին երկու ուղղումներով՝ «դիտորդներ» բառը փոխարինելով «միջազգային դիտորդներ» և «զբաղեցրած տարածքների» փոխարեն՝ «գրավված տարածքներ» ձևակերպումներով: Դրանցից առաջինը վերաբերում էր հրադադարից հետո հակամարտության գոտի խաղաղարար ուժեր տեղաբաշխելուն: Վ Կազիմիրովը նշում է. «Մինչև ԵԱՀԿ բուդապեշտյան վեհաժողովը խոսք անգամ չկար տարածաշրջան միջազգային տարանջատիչ ուժեր տեղաբաշխելու մասին: Ինքնաբերաբար ենթադրվում էր, որ դրանք ռուսական տարանջատիչ ուժերը կլինեն»[11]: Ի դեպ, ադրբեջանական ընդդիմության կարծիքով՝ նրանք իրենց ակտիվությամբ դրդեցին Արևմուտքին աշխուժանալ՝ թույլ չտալով, որ Ռուսաստանը լիովին տիրի նախաձեռնությանը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Ընդդիմության ղեկավարները պնդում էին, որ հենց այդ ժամանակաշրջանում առավել մեծացել են հայ-ադրբեջանական հակամարտության լուծմանն ուղղված ԵԱՀԽ ջանքերը[12]: Ինչ վերաբերում է երկրորդ փոփոխությանը, ապա, ինչպես նշում է հայկական կողմից բանակցությունների մասնակիցներից մեկը. «Սկզբնական տարբերակը ընդգրկում էր «օկուպացված տարածքներ» ձևակերպումը: Եթե նշում ենք օկուպացված, ապա առկա են նաև օկուպանտները: Այս դեպքում առաջարկ է հայտնվում՝ ընդգծել օկուպանտներ կամ հայկական զինված կազմավորումներ: Հայկական բնորոշումը զուտ ազգային հատկանիշ է, և պարզ չէ, թե դրանք ո՞ր պետությանն են վերաբերում: Այս պարագայում հայտնվում է ԼՂ-ի առաջարկությունը. եթե՝ օկուպացված տարածքներ, ապա գրել՝ «Ղարաբաղի զինված կազմավորումների օկուպացրած»: Այսինքն, ձևակերպումն անմիջապես ձեզ է ներկայանում որպես կարգավիճակ»[13] (ընդգծ. մերն են՝ Խ.Գ.): Այս բանակցային դրվագն ինքնին արժանահիշատակ է մի շարք առումներով՝ ձևակերպումների հստակ շարադրմամբ, բանակցային սուբյեկտների կարգավիճակով, ներկա-

յացման աստիճանով, լիազորություններով ու իրավասություններով, կիրառված մարտավարական հնարների հարստությամբ և այլն:

Ինչպես արդեն նշվել է, «Բիշքեքյան արձանագրության» ստորագրումն Ադրբեջանում հանգեցրեց խորհրդարանական ճգնաժամի. ընդդիմությունը պահանջում էր քննարկել այդ փաստաթուղթը խորհրդարանում, իսկ կառավարությունը մեղադրում էր ընդդիմությանը` իշխանությունը գրավելու ձգտումների համար: Միլի մեջլիսի նախագահ Ռ. Ղուլիևի ստորագրությունը ներկայացվում էր որպես լիազորությունների գերազանցում, իսկ ԼՂՀ ներկայացուցչի ստորագրությունը` ԼՂՀ-ի փաստացի ճանաչում և պետության իշխանության սահմանափակում: Այդ կապակցությամբ ադրբեջանական ընդդիմության ղեկավարը նշել էր, թե չի հավատում, որ կառավարությունը կբանակցի ընդդիմության հետ: Ըստ նրա` «Ներկայիս իշխանությունները ազգային համաձայնության կարգախոսը հասկանում են սոսկ որպես համաձայնություն իրենց հետ»[14]:

Изучением "языка тела" ученные начали заниматься сравнительно недавно. Невербальные аспекты коммуникации на серьезном научном уровне начали рассматриваться в 60-х годах XX века. Тогда же "Альберт Мерабян установил, что передача информации происходит за счет вербальных средств (только слов) на 7%, за счет звуковых средств (включая тон голоса, интонацию звука) на 38% и за счет невербальных средств на 55%. Профессор Бердвисл проделал аналогичные исследования относительно невербальных средств общения людей. Он установил, что человек говорит словами в среднем в течении 10-11 минут в день и что каждое предложение в сред-

нем звучит не более 2,5 секунды. Как и Мерабян, он обнаружил, что словесное общение в беседе занимает менее 35%, а более 65% информации передается с помощью невербальных средств общения."[17]. Таким образом мы видим, что владение языком телодвижений играет существенную роль в жизни человека. И от того, насколько хорошо политик будет владеть этим языком, зависит, какое количество людей он сможет привлечь на свою сторону.

Как овладевает человек этим языком? Ученые установили, что существуют несколько путей получения подобного рода информации. Они установили, что существуют жесты, которые являются врожденными и они универсальны для всех народов, т.е. представители разных культур понимают эти жесты одинаково. Также установлено существование жестов, которые культурно обусловлены, т.е. представители разных народов вкладывают в конкретные жесты разный смысл. Знание такого рода жестов необходимо для политика, так как по роду своей деятельности политики совершают межгосударственные визиты, во время которых ненароком сделанное движение может оскорбить граждан данной страны или же оно будет не понято ими.

Существуют жесты, ограничивающие или же подавляющие, которые отрицательно воспринимаются людьми, хотя они могут быть и неосознанными. В таких случаях обычно люди избегают собеседника, и обосновывают тем, что это им подсказала их интуиция. Бывают и другие случаи, при которых мы встречаем людей с подобного рода утверждениями, хотя в основе их утверждений лежит другая причина, а именно несоответствие между вербальными и невербальными языками. Например, когда человек говорит, что очень рад видеть кого-либо, но при этом отстраняется всем копусом от собеседника, тем самым демонстрируя свои истинные чувства. Поэтому одной из основных задач при освоении "body language" – а для политика является научиться блокировать нежелательную кинетику.

Не менее существенным при изучении "body language"-а изучение территориальных притязаний. Так, знание подобного рода движений позволяет политику лучше ориентироваться во время разного рода переговоров или диспутов. Благодаря правильному прочтению тех или иных телодвижений, политик может определить истинные чувства и намерения собеседника.

Немаловажным при формировании кинетического имиджа является учет места выступления. Если это непосредственная встреча политика со своими избирателями, то учет высоты сцены необходим, т.к. некоторые движения, произведенные на определеннной высоте, могут рассматриваться как подавляющие. Так, например, если помост, на котром выступает политик, слишком высок, то для того, чтобы установить контакт с избирателями, ему придется опустить голову и взгляд. у него будет как бы из-под бровей голова агрессора. Есть определенные проблемы и при съемках на телевидении, когда камера, снимающая политика, находится не в выгодном для него положении. Если камера находится выше уровня головы, то для того, чтобы установить контакт со зрителями, политику приходится смотреть вверх, выявив тем самым голову властелина, если же камера зафиксирована ниже уровня головы, тогда появаляется голова агрессора. Таким образом, мы видим, что при формировании кинетического имиджа политика необходимо помимо учета самих телодвижений, учитывать и сопутствующие факторы.

Еше одним этапом при формировании имиджа политического деятеля является формирование его средового имиджа. В средовой имидж входят такие понятия, как кабинет, квартира, машина и секретарь.

Вещи, выбранные человеком, говорят о его характере, о его пристрастиях, о его вкусе и т.д.. Немаловажным для политика является то, какое впечатление будет создано о нем у людей при посещении его кабинета. Казалось бы, почему это столь существенно? Дело в том, что политику доверяют "свою жизнь", "свое будущее", "будущее своих детей", а неорганизованному, неопрятному человеку не доверишь жизнь. Итак, рабочий кабинет политика должен быть продуман до мелочей: он должен иметь столько зон, сколько ему необходимо для работы, а также согласован. Кабинет является как бы второй визитной карточкой человека. Так как во время переговоров собеседник невольно наблюдает за убранством кабинета и создает определенное впечатление, то позитивным для имиджа политика будет, если создаться нужное впечатление. Что мы понимаем под понятием нужное впечатление? Дело в том, что если кабинет политического деятеля будет обставлен слишком помпезно и не будет соответствовать тому положению в обществе, которое он занимает, то о нем создастся ложное, нежелательное впечатление. В основном всем известно, какое количество бюджетных денег идет на расходы политика. И в таком случае у посетителя появляется вопрос, а откуда у него столько средств, чтобы обставить так кабинет? Но недостаточно хорошо обставленный кабинет вызывает вопрос, а куда идут бюджетные деньги? Таким образом, кабинет политика должен быть обставлен так, чтобы не вызывать дополнительных вопросов, и нести определенные черты индивидуальности данного деятеля, благодаря которым он будет выделяться среди других.

Политические лидеры высокого ранга обычно имеют несколько рабочих помещений и в зависимости от ситуации принимают своих посетителей в разных кабинетах. Так, в определенных ситуациях рабочее помещение, в котором политик принимает своих посетителей, дает знать, какое место он отводит и какую значимость при-

дает своему посетителю. В зависимости от смены политической ситуации в стране, одного и того же деятеля могут принимать в разных кабинетах тем самым демонстрируя определенное отношение к ситуации.

Немоловажным является и выбор секретаря. На первый взгляд покажется странным, что речь идет о секретаре. Но прежде, чем посетитель дойдет до политического деятеля ему приходится иметь дело с его секретарем. И то, как он будет принят. и насколько оперативно, с учетом интересов самого политика, секретарь сумеет решить вопросы, поставленные перед ней, зависит и имидж ее руководителя. Умение общаться по телефону лаканично, но при этом ясно отвечать на поставленные вопросы, дружелюбие и доброжелательность – вот тот неполный список, помимо профессиональных, требований, которым должна соответствовать она. И оттого, насколько она будет справляться со своими обязанностями, зависит - будет ли поставлен под вопрос имидж политика или нет.

В зависимости оттого, к какому классу представительских машин относится автомобиль политического деятеля, можно говорить о его ранге. Но здесь так же, как и с кабинетом, нарушение определенных установившихся норм приводит к нежелательным последствиям.

Итак, чтобы сформировать положительный средовой имидж политика, необходимо, чтобы среда его обитания носила как черты его индивидуальности, так и соответствовала тому положению в обществе, которое он занимает.

И последний этап создания имиджа – это создание овеществленного имиджа. Что мы понимаем под овеществленным имиджем? Это та продукция, которую делает сам человек своими руками. Ну, понятно, когда речь идет о рабочем, выпускающем определенную продукцию, а что можно считать овеществленной продукцией политика.

В основном мы имеем дело с бумажной продукцией, т.е. политику по роду своей деятельности приходится отвечать на письма своих избирателей, обращаться с разного вида запросами и т.д..

Казалось, это все можно отнести к вербальному имиджу. Да, если речь идет о самой вербальной части письма, и нет, если речь идет о выборе бумаги, печатного устройства или конверта. Все вышеперечисленное не менее важно, чем само написанное, ведь из этого избиратель может сделать вывод, насколько уважительно относятся к нему и с какой долей ответственности относятся к его проблемам.

К овеществленному имиджу мы можем отнести следующее. Дело в том, что проще довериться человеку, чьи привычки тебе известны. Поэтому многие политики стремятся сниматься в телепередачах, где их показывают дома, в кругу семьи. Благодаря этим телепередачам, где их показывают дома, в кругу семьи. Благодаря этим телепередачам они демонстрируют свои обязанности в семье и свое умение делать что-то по дому. И то немногое, что они делают своими руками, можно считать овеществленной продукцией политика. И именно такая продукция привносит в имидж политика определенную долю тепла.

Итак, мы выяснили, что большую роль в принятии решений избирателя играет его подсознание, и что для большей эффективности политику необходимо использовать тот вид СМИ, который позволяет довести за единицу времени большее количество информации. А также пришли к выводу, что предложенная Панасюком классификация имиджа позволяет с учетом подсознательных реакций человека создать индивидуальный имидж политического деятеля, избегая нежелательных последствий; выделяет его из массы других политиков и делает его более привлекательным для избирателя. А если учесть, что для простого избирателя личностные особенности политика более важны, то мы получаем хороший механизм манипулирования людьми.

---

1 См.: Николо Макиавелли, Государь, М., 1990.

2 А.Ю.Панасюк, Вам нужен имиджмейкер?, 1998, с. 41.

3 См.: Е.Н.Зарецкая, Риторика: Теория и практика речевой коммуникации, М., 2002, с. 444.

4 http://dic.academic.ru , Большой энциклопедический словарь.

5 Браун Л., Имидж – путь к успеху, С-П., 2000, с. 72.

6 Костиков В., Роман с президентом. Записки пресс-секретаря., М., 1997, с. 188.

7 Шепель В.М., Имиджелогия: Секреты личного обаяния., М., 1997, с. 244

8 Автор “теории четырех времен года” швейцарский художник Иоханнес Иттен в книге “Искусство цвета” несколько десятилетий назад предположил, что человека привлекают строго определенные цвета. Вероятно, это связано с определенной, генетически закодированной цветовой программой, с которой мы рождаемся. Она выражается в цвете глаз, волос, оттенке кожи. В “своих” цветах мы чувствуем себя хорошо, нам сопутствует чувство комфорта и защищенности. И, напротив, самое красивое платье “чужого” цвета способно не только предательски подчеркнуть недостатки нашего лица, но и создать несуществующие. Суть его в том, что каждый из нас относится к одному из типов внешности – “холодному” (Зима, Лето) или “теплому” (Осень, Весна).

9 А.Ю.Панасюк, указ. тр., с. 113.

10 Почепцов Г.Г., Имидж и выборы. Имидж политика, партии, президента., Киев, 1997, с. 10.

11 “Органы непосредственно участвующие в образовании звуков речи, называются артикулярными органами. Их разделяют на активные, снабженные мускулатурой и способные к самостоятельным движениям, и пассивные, т.е. неподвижные. Активными органами являются губы, язык (его кончик, передняя, средняя и задняя часть спинки, корень), мягкое небо, маленький язычок, задняя стенка глотки. Пассивные органы - зубы, альвеолы, твердое небо”. Далецкий Чеслав, Риторика: заговори и я скажу, кто ты: Учебное пособие., М., 2003, с. 275.

12 Е.Н. Зарецкая, Риторика: теория и практика речевой коммуникации, М., 2002, с. 463.

[13] "Если некий человек "А" по какой-либо своей характеристике (психофизиологической ли, например, скорость реакции; психологической ли, например, тот же темп речи;(...)), по степени ее выраженности находится в крайней зоне, т.е. если эта характеристика у него очень ("сильная" или "слабая","высокая" или "низкая", "большая" или "маленькая"), то этот человек"А" (в отличие от человека "Б", находящегося в средней зоне) оценивает тех, кто объективно находится в средней зоне (людей типа "Б") или в противоположной крайней зоне (людей типа "В"), как находящихся от него дальше, чем они есть на самом деле (ему кажется, что "Б" находится в точке Б1, а "В" находится в точке В1). Иначе говоря эта иллюзия оценки других людей получила название контрастного эффекта. Но как оказывается, люди типа "А", находящиеся по какой-либо характеристике в крайней зоне, питают еще одну иллюзию: людей, объективно находящихся по данной характеристике относительно близко к ним (допустим, в точке "Г"), они невольно оценивают как находящихся к ним еще ближе (им кажется, что человек "Г" находится в точке Г1).

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| А | $Г_1$ | Г | | Б | | $Б_1$ | В | $В_1$ | |

И эта иллюзия в науке получила название ассимиляционного эффекта. А в целом представленная выше закономерность восприятия других людей теми, кто сам находится в крайней зоне, получила название закона ассимиляционно – контрастной иллюзии. И следует лишь добавить, что этот закон действует только в отношении тех, кто находится в крайней зоне". Панасюк А.Ю., Вам нужен имиджмейкер? М., 1988, с. 142.

[14] Далецкий Чеслав, Риторика: заговори и я скажу, кто ты: Учебное пособие., М., 2003, с. 224.

[15] См.: Шепель В.М., Имиджелогия: Секреты личного обаяния., М., 1997, с. 329.

[16] Панасюк А.Ю., указ. труд., с. 150.

[17] Аллан Пиз, Язык жестов, Мн., 1995, с. 17.

## TECHNOLOGIES OF CREATION OF IMAGE OF POLITICIAN

MARIAM ALIKHANYAN
Research Student of YSU Politology Department

### Summary

In the article, we are considering particularities of the technology of the image creation. In particular, special attention is granted to the matters of the effective influence on elector's making decisions and in the connection with that, on the process of the information perception. We are analyzing the role of consciousness and sub consciousness while making decisions, and due to this, we are considering the canals of the information transmission and the part of their participation at it. We have realized comparative analyzes of the effect of this or that canal of the information transmission.

During the examination, the conception of image is determined as a goal-directed formed conception of a politician, appealed to exercise an emotional-psychological influence on the elector. And from this point of view, we have carried out an attempt to analyze the classification of image offered by Pansy. In the very article, the particularities of this or that point of the above-mentioned classification has been thoroughly considered. We have also made some intermediate conclusions upon the very classification.

It should be also mentioned, that such a classification lets a politician influence on the electors more effectively and achieve wished politic results.

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ԻՄԻՋԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ՄԱՐԻԱՄ ԱԼԻԽԱՆՅԱՆ
ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ

### Ամփոփում

Յոդվածում քննվում են իմիջի ձևավորման տեխնոլոգիաների յուրահատկությունները: Յատկապես մեծ ուշադրություն է դարձվում ընտրողի կողմից որոշումների կայացման արդյունավետ ազդեցության հարցերին և դրա հետ մեկտեղ՝ տեղեկատվության ընկալման գործընթացին: Վերլուծության է ենթարկվում գիտակցության և ենթագիտակցության դերը որոշումներ կայացնելիս, և դրա հիման վրա դիտվում են տեղեկատվության փոխանցման ճանապարհները, դրանց մասնակցության չափը: Կատարվել է տեղեկատվության փոխանցման այս կամ այն ճանապարհի արդյունավետության համեմատական վերլուծություն:

Քննության ընթացքում իմիջ հասկացությունը սահմանվել է որպես քաղաքական գործչի նպատակաուղղված ձևավորված կերպար, որը կոչված է ընտրողի վրա զգացմունքային - հոգեբանական ազդեցություն ցուցաբերել: Յամաձայն այդ տեսակետի՝ փորձ է արվել վերլուծելու Պանասյուկի կողմից առաջարկված իմիջի դասակարգումը: Յոդվածում մանրակրկիտորեն դիտվել են վերը նշված դասակարգման այս կամ այն կետի յուրահատկությունները:

Տվյալ դասակարգման վերաբերյալ կատարվել են միջանկյալ եզրակացություններ:

Յարկ է նաև նշել, որ այդպիսի դասակարգումը քաղաքական գործչին թույլ է տալիս արդյունավետ ներգործել ընտրողի վրա և հասնել ցանկալի քաղաքական արդյունքների:

# ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿԱՄ ԷՍՏՈՊԵԼԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

***ՍԱՀԱԿ ԱՍԼԱՆՅԱՆ***
*Իրավաբան*

**1921**թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի կնքումից անցել է ավելի քան ութսուն տարի, սակայն Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես չի արտահայտել իր վերաբերմունքն այդ պայմանագրերի նկատմամբ: Եթե Հայաստանի երկրորդ հանրապետության գոյության ընթացքում դա հասկանալի էր, ապա անկախություն նվաճելուց հետո Հայաստանի իշխանությունների լռությունն ավելի քան տարօրինակ է, քանզի Հայաստանի համար բախտորոշ այդ պայմանագրերին համապատասխան վերաբերմունք չցուցաբերելը հղի է իրավաբանական ծանր հետևանքներով:

Բանն այն է, որ միջազգային իրավունքի Արևմտյան դոկտրինան մինչև օրս էլ որպես տարածքի ձեռքբերման կամ պահպանման իրավահիմք ընդունում է վաղեմության ժամկետը[1]: Սակայն այնքանով, որքանով այդ խնդիրը վիճահարույց է, կան նաև հակառակ տեսակետ ունեցող իրավաբաններ. մասնավորապես միջազգային իրավունքի խորհրդային դոկտրինան ամբողջությամբ հերքում էր տարածքի հարցում վաղեմության ժամկետի կիրառումը, այդ պատճառով էլ նպատակահարմար է թվում ուսումնասիրել հարցը պատմական զարգացման ընթացքում:

Միջազգային իրավունքի գիտության հիմնադիր Հուգո Գրոցիուսը գրում է, որ անհիշելի ժամանակներում իրականացված բռնազավթումը թույլ է տալիս ենթադրել, որ ժողովուրդների միջև դարերի ընթացքում լուռ «համաձայնություն է կայացել»: «Ժողովուրդների իրավունքով ... մտցված է օրենք..., որի համաձայն՝ անընդմեջ տիրապետումը անհիշելի ժամանակներից, որը խախտված չէ միջնորդ դատարանին դիմելով, ամբողջությամբ փոխանցում է սեփականության իրավունքը»[2]: Գերմանացի ճանաչված միջազգայնագետ Բլյունչլին կարծում է, որ եթե նույնիսկ գոյություն չունի հատուկ իրավաբանական հիմք տարածքին տիրապետելու համար, կամ էլ հնարավոր է ապացուցել, որ սկզբնական տիրապետումն իրագործվել է բռնության և իրավախախտման միջոցով, սակայն եթե տիրապետումը չի ընդմիջվել այնքան երկար ժամանակ, որ բնակչության կողմից ճանաչվում է նրա ամրությունը և անհրաժեշտությունը, ապա հարկավոր է ընդունել, որ սկզբնական բռնությունը ժամանակի մաքրող ուժի շնորհիվ անցել է պատշաճ իրավաբանական հիմքի[3]: Նմանօրինակ տեսակետ ունեին նաև Վաթելը, Վոլֆը, Օպենհեյմը: Ամերիկացի իրավաբան Չ. Հայդը գրում է. «Ժողովուրդների ընտանիքի շահերի տեսանկյունից ընդունելի է համարվել, որ պետությունը, որը երկար ժամանակ տիրապետում է տվյալ տարածքին, հետագայում ևս հնարավորություն ունենա անարգել իրականացնել իր վերահսկողությունը, քան թե գոյություն ունեցող սուվերենը, թեկուզ և անարդարացի զրկված իր տիրույթներից, պահպանի իր սուվերենության իրավունքը, եթե նա մշտական և համապատասխան ջանքեր չի արել իր իրավունքները պահպանելու նպատակով, օրինակ՝ այն պետության գործողությունները բողոքարկելով, որը դրանք խախտել է»[4]:

Վաղեմության ժամկետը որպես տարածքի տիրապետման իրավահիմք են համարել նաև Կաուֆմանը, Քելզենը, Ֆերդրոսը. հակառակ տեսակետ են արտահայտել Գեֆտերը, Ռիվյեն, Լիստը:

Միջազգային իրավունքի խորհրդային դոկտրինայի ներկայացուցիչները ժխտում էին վաղեմության ժամկետի կիրառելիությունը տարածքի նվաճման գործում:

Վ. Դուրդոնևսկին նշում է. «Վաղեմության ժամկետի միջոցով ձեռքբերումը ընդհանրապես վիճելի է, քանի որ միասնական, որոշակի ժամկետ միջազգային պրակտիկայում գոյություն չունի: Տարածքի ձեռքբերման որոշ դեպքերում, վաղեմությանը հղելով, օգտագործել են վաղեմության տարբեր ժամկետներ՝ 30, 100 և նույնիսկ 200 տարի»[5]:

Հայազգի ճանաչված միջազգայնագետ Յուրի Բարսեղովը 1958 թվականնին հրատարակված «Տարածքը միջազգային իրավունքում» մենագրության մեջ գրում է. «Ժամանակակից պայմաններում՝ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի բուռն աճի, գաղութային համակարգի փլուզման և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հաստատման դարաշրջանում, հղումը վաղեմության ինստիտուտին ոչ միայն հակառակ է բարոյականությանը, այլև հակասում է ժամանակակից միջազգային իրավունքի նորմերին»[6]: Բ. Կլիմենկոն, վերլուծելով արտասահմանյան հեղինակների տեսակետները քննարկվող հարցում, նշում է. «Տարածքի ձեռքբերումը վաղեմության տիրապետման ուժով ենթադրում է սկզբնական սեփականատիրոջ համաձայնությունը կամ նրա հրաժարումն իր պահանջներից... Եթե համարենք, որ վաղեմությամբ տարածքի ձեռքբերման հիմքում ընկած է նախորդ սեփականատիրոջ համաձայնությունը (իսկ առանց այդ պայմանի վաղեմություն չի կարող ընդունվել ժամանակակից միջազգային իրավունքում), ապա բողոք հայտնելը հարկավոր է համարել բավարար վաղեմության ընդմիջման համար»[7]:

Միջազգային պայմանագրային իրավունքում վաղեմության ժամկետին համապատասխանում է էստոպելի[8] ինստիտուտը: Միջազգային պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 45-րդ հոդվածի համաձայն՝ պետությունն այլևս իրավունք չունի վկայակոչելու պայմանագրի անվավերության կամ ընդհատման, նրանից դուրս գալու կամ նրա գործողությունը դադարեցնելու հիմքը այն բանից հետո, երբ նրան հայտնի են դարձել հետևյալ փաստերը՝

ա) նա որոշակիորեն համաձայնել է, որ պայմանագիրը, նայած դեպքին, վավերական է, պահպանում է ուժը կամ մնում է գործողության մեջ.

բ) նա պետք է իր վարքագծի բերումով համարվի լռելյայն համաձայնող այն բանին, որ պայմանագիրը, նայած դեպքին, վավերական է, պահպանում է ուժը կամ մնում է գործողության մեջ[9]:

Ինչպես նշում է Ռուսաստանի Ազգային ակադեմիայի պետության և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող Ռ. Ա. Կալամկարյանը, «էստոպելի սկզբունքի իրավական հիմքը բարեխղճության սկզբունքն է»[10]:

Անգլիացի իրավաբան Լաուերպախտը, նշելով, որ Միջազգային դատարանը մի շարք դեպքերում արդարացիորեն կիրառել է էստոպելի սկզբունքը, այն ներկայացնում է որպես իրավունքի ընդհանուր սկզբունք[11]:

Էստոպելի իրավաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել այդ հասկացության չորս հիմնական տարրերը: Դրանցից առաջինը պարզ, աներկիմաստ միջազգային-իրավական դիրքորոշումն է անցյալի կամ ներկայի կոնկրետ հարցերի նկատմամբ, որն արտահայտված է իրավունքի սուբյեկտի ազատ և հավասարակշռված կամարտահայտությամբ:

Երկրորդ պայմանն այն է, որ հայտարարատուն պետք է ապացուցի, որ որպես հետևանք հակառակ կողմի միջազգային-իրավական դիրքորոշման՝ ինքը ձեռնարկել է որոշակի դրական գործողություններ կամ, հակառակը, ձեռնպահ է մնացել դրանցից՝ բարեխղճորեն հենվելով այդ դիրքորոշման վրա:

Երրորդ. հայտարարատուն պետք է ներկայացնի ապացույցներ առ այն, որ իր ձեռնարկած գործողությունների կամ այդ գործողություններից ձեռնպահ մնալու պատճառով վնաս է հասցվել իր սեփական դիրքորոշմանը:

Վերջապես, չորրորդ պայմանն այն է, որ հայտարարատուն պետք է հաստատի այն փաստը, որ հաջորդ միջազգային-իրավական դիրքորոշման սուբյեկտը, որն անհրաժեշտ է դարձրել հայտարարատուի դիմումը էստոպելին, առաջին դիրքորոշման հեղինակն է[12]:

Էստոպելի սկզբունքը վերցված է անգլիական և մի քանի այլ պետությունների ներպետական իրավական համակարգերից, որոնցում հանդիպում են էստոպելի տարբեր տարատեսակներ:

Էստոպելի ինստիտուտը օգտագործվել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի մի շարք որոշումներում, մասնավորապես՝ 1962թ. Կամբոջայի և Թաիլանդի միջև Պրեախ Վիխեար տաճարի վերաբերյալ վեճի կապակցությամբ: Դատարանը վեճը լուծեց Կամբոջայի օգտին՝ հենվելով էստոպելի սկզբունքի վրա, և մերժեց Թաիլանդի հղումն առ այն, որ նա չի ճանաչում այն քարտեզի ճշտությունը, որը որոշում է սահմանը Կամբոջայի հետ: Քանի որ 15 տարիների ընթացքում Թաիլանդը չէր հայտարարել այդ մասին և օգտվում էր դրա օգուտներից, դա Կամբոջային հիմք էր տվել ընդունելու, որ քարտեզը լռելյայն ճանաչվել է Թաիլանդի կողմից՝ որպես իրականությանը համապատասխանող[13]:

Էստոպելի ինստիտուտը մեծ վտանգ է ներկայացնում թույլ և զարգացող պետությունների համար, քանի որ այդ պետությունները իմպերիալիստական խոշոր տերություններից կախման հետևանքով հնարավորություն չեն ունեցել և հիմա էլ չունեն պայմանագրերի վավերականության վիճարկման գործում: Այս դեպքում մեծ սխալ կլիներ լռությունը դիտել որպես պետության կողմից պայմանագրի վավերականության վիճարկումից կամ դադարեցումից հրաժարում[14]: Դեռևս 1921թ. Հայաստանի կառավարությունը բողոք ներկայացրեց Ռուսաստանի կառավարությանը, որ առանց իր մասնակցության լուծվել էր Խորհրդային Հայաստանի տարածքների հարցը: Դա ևս լուրջ փաստ է Մոսկվայի և Կարսի պայմանագրերի առնչությամբ էստոպելի ինստիտուտը չկիրառելու համար: 1921թ. ապրիլի 15-ին ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ա. Բեկզադյանը նամակով դիմում է Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինին, որտեղ մասնավորապես ասված էր. « Ծանոթանալով ՌՍՖՍՀ և քեմալական Թուրքիայի միջև սույն թվականի մարտի 16-ին կնքված պայմանագրի տեքստին և մարտի 10, 12, 14 և 16-ին կայացած Ռուս- թուրքական կոնֆերանսի նիստերի արձանագրություններին, հայկական պատվիրակությունը անհրաժեշտ է համարում անել հետևյալ հայտարարությունը.

Նախ և առաջ աչքի է ընկնում այն թեթևությունը, որով ռուսական պատվիրակությունը մի շարք խոշոր տարածքային զիջումներ կատարեց թուրքերին Խորհրդային Հայաստանի հաշվին: Ոչնչից չի երևում, որ արվել է թեկուզ նվազագույնը, որպեսզի պաշտպանվեն այն տարածքներն ու շրջանները, որոնք կենսական նշանակություն ունեն երիտասարդ և փոքրիկ Խորհրդային Հանրապետության համար...

Հայկական պատվիրակությունը չի կարող ուշադրություն չդարձնել դրա վրա և միաժամանակ բողոքում է նրա դեմ, որ Խորհրդային Հայաստանի պատվիրակները հեռացված էին կոնֆերանսից և նույնիսկ չեն ունկնդրվել այն հարցերի քննարկման ժամանակ, որոնք անմիջականորեն վերաբերում էին Խորհրդային Հայաստանին...

Հայկական պատվիրակության խորին համոզմամբ այս ամենը պայմանավորված չէր անխուսափելի օբյեկտիվ պայմաններով, այլ միայն Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի կողմից որոշակի, մտածված քաղաքականության և հրահանգների բացակայությամբ, ռուսական պատվիրակության բուն կազմով (որոնք ծանոթ չէին Անդրկովկասի դրությանը) և այն հեշտությամբ, որով վերջինս հնարավոր համարեց լուծել Խորհրդային Հայաստանի համար կյանքի և մահվան հարցերը»[15]:

Սակայն, չնայած այս բողոքին, ՀԽՍՀ իշխանությունները ստորագրեցին նույն բովանդակությունն ունեցող Կարսի պայմանագիրը:

Այնուհետև՝ 1989թ., ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը, ելույթ ունենալով ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարում, նշեց. «Երբ արտաքին գործերի մինիստր Մոլոտովն իր ժամանակին (1953թ.՝ Ս. Ա.) հայ ժողովրդի անունից հայտարարեց, որ նա հրաժարվում է Կարսի մարզի և այն տարածքների նկատմամբ պահանջներից, որտեղ տեղի էր ունեցել 1915թ. ցեղասպանությունը, ապա նա ճշմարտությունը չի ասել: Նա անխղճորեն ոտնահարում էր Խորհրդային Միության ժողովուրդներից մեկի զգացմունքներն ու շահերը: Հայ ժողովուրդը խաղաղության կողմնակից է: Ոչ մեկը չի առաջարկում այս հարցում ուժ կիրառել, սակայն մենք հույս ունենք, որ այս հարցը հետագայում կգտնի իր խաղաղ լուծումը»[16]:

Էստոպելի կիրառման անթույլատրելիությունը Մոսկվայի և Կարսի պայմանագրերի առնչությամբ բխում է այն փաստից, որ այդ պայմանագրերը կնքվել են՝

1. ուժի կիրառման հետևանքով ստեղծված աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում.

2. միջազգային իրավունքի նոր ձևավորված

սկզբունքների խախտումով.

3. հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքին հակասելով.

4. պետությունների սուվերեն հավասարության և անկախության սկզբունքներին հակասելով:

Վաղեմության ժամկետը, ինչպես արդեն նշվել է, դադարում է գործելուց, երբ տուժող կողմն ինչ-որ ձևով արտահայտում է իր դժգոհությունը (պետական իշխանության բարձրագույն մարմինների ընդունած հայտարարությունների, նոտաների, ժողովրդական ապստամբությունների և այլն): Հակառակ դեպքում՝ համարվում է, թե տուժող կողմը լռելյայն ընդունել է կատարված տարածքային փոփոխությունները:

Այդ պատճառով անհրաժեշտ է, որ Հայաստանի երրորդ հանրապետությունն արտահայտի իր անհամաձայնություն-դժգոհությունը Մոսկվայի և Կարսի պայմանագրերի առնչությամբ:

Նախ և առաջ, 1996թ., երբ Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիան, ապա վերապահում պետք է արվեր նաև 45-րդ հոդվածին: Դա այն պատճառով, որ հետագայում, եթե ՄԱԿ-ի Միջազգային դատարանը կամ մեկ այլ դատական մարմին քննության առնի 1921թ. Մոսկվայի, Կարսի պայմանագրերի վավերականության հարցը, չկարողանա դրանց առնչությամբ կիրառել էստոպելի ինստիտուտը: Դժբախտաբար, այդ հնարավորությունը ձեռքից բաց թողնվեց:

**Ներկայումս անհրաժեշտ է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին ·ործերի նախարարությունը հանդես · ա Մոսկվայի և Կարսի պայմանա · րերի անընդունելիութան հայտարարությամբ, եթե ՀՀ Ազ · ային ժողովը, ելնելով ստեղծված աշխարհաքաղաքական իրողություններից, հնարավոր չիամարի չեղյալ հայտարարել դրանք:**

[1] Տե՛ս Барсегов Ю. Г., Территория в международном праве, М., 1958, с. 107-109.

[2] Гуго Гроций, О праве войны и мира , М., 1956, с. 230-238.

[3] Блюнчли, Современное международное право цивилизованных государств, изложенное в виде кодекса, М., 1877, с. 192.

[4] Ч.Ч. Хайд, Международное право, его понимание и применение Соединенными Штатами Америки, т. 2, М., с. 104.

[5] Международное право, М., 1964, с. 201.

[6] Барсегов Ю. Г., указ. тр., с. 111.

[7] Клименко Б. М., Государственная территория, М., МО, 1974, с. 121.

[8] Эстоппель բառը թեև “Большой юридический словарь”-ում դիտվում է իբրև անգլերեն բառ, սակայն անգլերեն բառարաններում այն չի հանդիպում: Կարծում ենք՝ բառը լատինական ծագում ունի:

[9] Действующее международное право, т. 1, М., 1996, с. 358.

[10] Каламкарян Р.А., “К вопросу о юридическом основании института эстоппель”, //Государство и право, 2000, но.5 , с. 57.

[11] Տե՛ս Каламкарян Р. А., Концептуальное восприятие института эстоппель в науке современного международного права”, // Государство и право, 1999, н. 12, с. 64.

[12] Каламкарян Р. А., “Юридическая природа института эстоппель, его происхождение и понятийное содержание”, // Государство и право, 1998, н. 11, с. 75.

[13] Талалаев А. Н., Венская конвенция о праве международных договоров. Комментарий, М., 1997, с. 128.

[14] Талалаев А. Н., Право международных договоров: Действие и применение договоров, М., МО, 1985, с. 271.

[15] За счет Советской Армении, // “Голос Армении”, 15 марта 2001г.

[16] Первый съезд народных депутатов СССР, стенографический отчет., т. 2-ой, 25 мая – 9 июня 1989г., с. 332-333.

## NON-ALLOWANCE OF THE APPLICATION OF VALIDITY PERIOD AND ESTOPPEL REGARDING THE MOSCOW AND KARS TREATIES

SAHAK ASLANYAN
Lawyer

**Summary**

Silence of the autherities of Armenian regarding the 1921 Moscow treaty and the Kars treaty adepted on its basis is pregnant with acute juridical conseguences.

The thing is that the western doctrine of the International Law considers the validity period important for conguering and maintaining territories. The principle of estoppel corresponds to this in the field of International treaties. We need to denownce the Moscow and Kars treaties or to accept the statement on non-aceptance of the above-mentioned treaties on the part of the Ministry of Foreign Affairs as the appeal to the UNO International Court seems to be one of the available variants on the way to peaceful settlement of the Armenian Question.

## НЕДОЗВОЛЕННОСТЬ ПРИМЕНЕНИЯ СРОКА ДАВНОСТИ И ЭСТОППЕЛЯ ПО ОТНОШЕНИЮ МОСКОВСКОГО И КАРССКОГО ДОГОВОРОВ

СААК АСЛАНЯН
Юрист

Резюме

Молчание властей Армении по поводу Московского договора от 1921г. и принятого на его основе Карсского договора чревато серьезными юридическими последствиями. Дело в том, что Западная доктрина международного права до сегодняшнего дня первоосновой для приобретения и удержания территорий считает срок давности, которому в праве международных договоров в этом контексте соответствует институт эстоппеля. Так как на пути мирного решения Армянского вопроса одним из возможных вариантов является обращение в Международный суд ООН, то во избежание отказа претензий на территорию Западной Армении необходимо денонсировать Московский и Карсский договора или в крайнем случае на уровне МИД-а принять заявление о неприемлемости вышеуказанных договоров.

***ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ***
*ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի ասպիրանտ*

# ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Ապրել ու գործել միայն այն բանի համար, որի համար արժեր մեռնել, և մեռնել այն բանի համար, որի համար արժեր ապրել:

Գարեգին Նժդեհ

Գարեգին Նժդեհի տեսական ժառանգության մեջ, նրա բարոյափիլիսոփայական ուսմունքի շրջանակներում առանձնահատուկ ուշադրության է արժանացել նաև քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության հիմնահարցը: Թեպետ այս հարցը կարևոր նշանակություն ունի Նժդեհի բարոյափիլիսոփայական հայացքների եթե ոչ համակողմանի, ապա բազմակողմանի վերլուծության իրականացման, նրա աշխարհայացքի բնորոշ գծերի առավել խոր և օբյեկտիվ ընկալման համար, այնուամենայնիվ, պետք է նշել, որ վերոնշյալ հիմնախնդրի համապարփակ վերլուծության չի կարելի հանդիպել Նժդեհի որևէ կոնկրետ աշխատության մեջ: Այսինքն՝ ինչպես մի շարք այլ հիմնախնդիրների դեպքում, այնպես էլ քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության հարցում Նժդեհը ընթերցողին է թողնում իր հեղինակած տարբեր աշխատությունների շրջանակներում խնդրո առարկայի շուրջ արտահայտած վճռակների, բազմաթիվ մտքերի ներքին, տրամաբանական կապի վերհանման և բացահայտման պատասխանատվությունը: Նժդեհի անդրադարձը քաղաքականության և բարոյականության հիմնախնդրին, ինչպես նաև մեր կողմից վերջինիս կարևորումը կարելի է բացատրել հետևյալ հանգամանքներով.

• Հավատարիմ իր հայրենասիրական, ազգասիրական գաղափարներին՝ Նժդեհը, հավանաբար, բացառված չէր համարում, որ հայրենասիրական մղումներով պայմանավորված ազգապահպան ու հայրենանվեր գործունեությունը կարող է հասկացվել «Հանուն հայրենիքի՝ ամեն գնով» կարգախոսի ոգով, ինչը, ըստ էության, կարող էր ընթերցողին թյուրընկալման մեջ գցել Նժդեհի բարոյափիլիսոփայության ըմբռնման առումով: Այսինքն՝ Նժդեհը խնդրո առարկային անդրադառնում է նաև այն բանի կանխման անհրաժեշտության գիտակցմամբ, որ ազգասիրական և ազգանվեր գործունեության իրականացումը կարող էր մեկնաբանվել այնպես, թե, իբր, ազգային շահով առաջնորդվելն արդարացնում է դրա համար կյանքի կոչված քաղաքական գործընթացների և գործողությունների ապաբարոյականացման միտումները թե՛ ներազգային, թե՛ միջազգային մակարդակներում. գաղափար, որը, ըստ էության, հակասում է Նժդեհի բարոյափիլիսոփայական ուսմունքին, դրա առանցքային որոշ գաղափարներին:

• Հիմնախնդրի նժդեհյան լուծումների կամ պարզաբանումների մակարդակում կարելի է հանդիպել մի շարք նոր և ինքնատիպ գաղափարների, որոնք հնարավորություն են տալիս պարզել Նժդեհի վերաբերմունքը քաղաքական կամ քաղաքականի նկատմամբ ոչ «անտարբեր» բազմաթիվ հիմնախնդիրների ու երևույթների (օրինակ՝ ազգային շահ, կուսակցություններ), դրանց որպիսության նկատմամբ:

Միջկուսակցական, ներկուսակցական, միջպետական և ազգամիջյան պայքարի հետ կապված բարոյական հարցերի ու դրանց պատասխանների, քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության, քաղաքականության բարոյականացման և բարոյականության ապաքաղաքականացման վերաբերյալ դատողությունների կամ մտքերի հիմնականում կարելի է հանդիպել Նժդեհի «Էջեր իմ օրագրեն», «Ամերիկահայությունը. ցեղը և իր տականքը», «Բաց նամակներ հայ մտավորականության», «Բանտային գրառումներ», «Որդիների պայքարը հայրերի դեմ» աշխատություններում, «Պատերազմ՝ հեղափոխություն», «Պատմության դատաստանը» հոդվածներում, «Մի խոսակցություն զորավար Գ. Նժդեհի հետ» խորագրով հարցազրույցի շրջանակներում: Իհարկե, խնդրո առարկայի հետ կապված որոշ դատողություններ կարելի է հանդիպել Նժդեհի նաև այլ ստեղծագործություններում, սակայն վերոնշյալների շրջանակներում արտահայտված մտքերն ու կարծիքներն առավել հստակ են ներկայացնում Նժդեհի մոտեցումները:

Քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության հիմնահարցը փիլիսոփայական մտքի զարգացման տարբեր փուլերում և այդ մտքի զարգացման գործում ավանդ ունեցած բազմաթիվ մտածողների (Արիստոտել, Մաքիավելի, Հոբս, Կանտ և այլն) ուսմունքների շրջանակներում առանձնահատուկ ուշադրության է արժանացել: Նժդեհն իր աշխատություններում հանգամանորեն չի անդրադառնում այս կամ այն կոնկրետ մտածողի ուսմունքին՝ սա էլ, իրեն հերթին, ենթարկելով համապատասխան վերլուծության: Սակայն դա չի նշանակում, թե Նժդեհն իր վերաբերմունքը չի արտահայտել դրանցից և ոչ մեկի նկատմամբ, որ դրանց ու Նժդեհի հայացքների միջև չկան ընդհանրություններ ու տարբերություններ: Խնդրո առարկային լուրջ ուշադրություն դարձնելու պարագայում կարելի է նկատել, որ Նժդեհը, երբեմն վկայակոչելով կոնկրետ հեղինակի, պարզապես

վճռակի կամ դատողության ձևով իր որոշակի դիրքորոշումն է արտահայտել վերջինիս հայացքների, այդ հայացքներով պայմանավորված երևույթների մասին: Բացի այս` նույնիսկ առանց կոնկրետ մտածողի անվանանշումի` կարելի է որոշակի ընդհանրություններ տեսնել Նժդեհի և այլ մտածողների հայացքների միջև և, ըստ այդմ էլ, կռահել Նժդեհի եթե ոչ բացահայտորեն, ապա ներունակ կերպով արտահայտած վերաբերմունքն առ այդ մտածողները և նրանց ուսմունքները: Առհասարակ, Նժդեհի տեսական ժառանգության շրջանակներում այս կամ այն մտածողի ուսմունքի քննադատությունը չի իրականանում վերջինում արտահայտված բազմաթիվ դրույթների հետևողական վերլուծության համատեքստում, և Նժդեհը սեփական տեսակետը կառուցում կամ ներկայացնում է ոչ թե դրանց բացարձակ հերքման ոգով, այլ առանցքային թույլ կետերի քննադատության ձևով` հաճախ «չխուսափելով» այնպիսի տպավորություն ստեղծելու հավանականությունից, թե իր կողմից այս կամ այն մտածողի ժառանգության քննադատությունը կարող է ընկալվել որպես այդ ժառանգության բացարձակ մերժման անհրաժեշտ և բավարար հիմք: Ասվածն առավել առարկայական կդառնա, եթե հաշվի առնենք Նժդեհի քննադատական վերաբերմունքը էպիկուրականության նկատմամբ, տարբերությունները ստոիկյան փիլիսոփայությունից և, միևնույն ժամանակ, որոշ կարևոր հարցերի լուծումների մակարդակում էպիկուրի, ստոիկների և Նժդեհի ուսմունքների միջև դրսևորված ընդհանրությունները: «Նժդեհը, - գրում է Ս. Զաքարյանը, - տարբեր, նույնիսկ իրար հակադիր ուսմունքների մեջ կարողանում էր տեսնել մարդկային ոգու, ստեղծագործ ուժի լավագույն դրսևորումները: Նա ունակ էր մեղվի պես մտքի տարբեր աղբյուրներից հավաքել նեկտար և դա ծառայեցնել իր մտածումի թեմային, ստեղծել մտքի բոլորովին նոր հուն, նոր ուղղվածություն: Սոկրատես և Նիցշե, Զրադաշտ և Քրիստոս, Սենեկա և Ֆիխտե, Կանտ և Գանդի - ահա իրար մերժող այն մտածողների ոչ լրիվ ցանկը, որոնց գաղափարներից նա ստեղծագործաբար հյուսում էր իր ազգաշունչ փիլիսոփայությունը» [1]:

Քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության հարցում Նժդեհը հանդես է գալիս հակամաքիավելիզմի դիրքերից: Թեպետ նա մաքիավելիզմի և Մաքիավելիի տեսակետների միջև սահմանազատող (դեմարկացիոն) գիծ չի առանձնացնում, այնուամենայնիվ, ըստ էության, քննադատում է ոչ միայն մաքիավելիզմը, այլև Մաքիավելիի հայացքները[2]:

Հանդես գալով բարոյականության նորմերից ու սկզբունքներից քաղաքականության անջատման գաղափարի ջատագովի դիրքերից` Մաքիավելին գտնում էր, որ քաղաքական գործունեության շրջանակներում որոշակի նպատակի հասնելու համար համապատասխան միջոցների կյանքի կոչման անհրաժեշտություն է առաջանում, որոնք և կարող են հակասության մեջ լինել բարոյական սկզբունքների, բարու և բարիքի մասին գոյություն ունեցող պատկերացումների հետ: Սակայն, անկախ հակասությունների հնարավորությունից, այդ միջոցների կիրառումը չպետք է անթույլատրելի համարել, քանզի «նպատակն արդարացնում է միջոցները»: Իհարկե, Մաքիավելին նպատակին հասնելու գործում հանդես էր գալիս պահանջվող միջոցների «սրբագործման» կամ թույլատրելիության դիրքերից, սակայն կարծում էր, թե ամեն նպատակ չէ, որ կարող է հավակնել միջոցների թեկուզ պարտադրված անխտրության: Լինելով միասնական, կենտրոնացված ազգային պետության ստեղծման ջատագով` նա կողմնակից էր այնպիսի իշխանության, որը, բարոյական տարբերակում չդնելով միջոցների միջև, հետևողականորեն հանդես է գալիս պետության ամրապնդման, զարգացման և անվտանգության ապահովման նպատակի դիրքերից: Այսինքն` «Նպատակն արդարացնում է միջոցները» կարգախոսը արդարացված է, երբ նպատակը խորապես ազգային է, պետական է և միտված է հասարակական բարեկեցությանն ու պետության ամրապնդմանը: Մաքիավելին, չլինելով քաղաքականության ապաբարոյականացման գաղափարի խանդավառ իրականացնողներից կամ ջատագովներից և պարզապես հիմնվելով իր ապրած ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների ու գործընթացների վերլուծության և ընդհանրացման վրա, փորձում է քաղաքական իրատեսության դիրքերից ներկայացնել այն, ինչ կա: Մաքիավելին բնավ էլ քաղաքական կյանքում բարիքի, բարոյականի հետևողական անտեսման դիրքերից հանդես չի գալիս: Ընդհակառակը, նա կարծում է, որ հնարավորության սահմաններում իշխանը (իմա՛ միապետը) չպետք է շեղվի բարիքից, բայց անհրաժեշտության դեպքում չպետք է խուսափի չարիքից, «մտրակի և քաղցրաբլիթի» կիրառման քաղաքականությունից: «Անհրաժեշտ է, - գրում է Մաքիավելին, - մարդկանց աչքին երևալ կարեկից, հավատարիմ խոսքին, անկեղծ, բարեպաշտ և իրականում լինել այդպիսին, սակայն պետք է ներքնապես պատրաստ լինել դրսևորելու նաև հակադիր որակներ, եթե դա կլինի անհրաժեշտ: ...Հնարավորության սահմաններում չշեղվել բարիքից, բայց անհրաժեշտության դեպքում չխորշել նաև չարիքից» [3]: Ինչ վերաբերում է մաքիավելիզմին, ապա սա հիմնականում դրսևորվել է Մաքիավելիի տեսակետի ծայրահեղացման ձևով և հանդես եկել որպես որոշակի խոտորում «մայր ուսմունքից» կամ էլ որպես դրա նենգափոխում: Այսինքն` եթե Մաքիավելին հանդես էր գալիս բարոյականությունից քաղաքականության անջատման դիրքերից և ազգային պետության ամրապնդման ու զարգացման նպատակային գործում թույլատրելի էր համարում «նպատակն արդարացնում է միջոցները» կարգախոսի գործնական կիրառումը, ապա մաքիավելիզմի շրջանակներում, կարելի է ասել, քաղաքականության և բարոյականության տարանջատման սկզբունքը, ինչպես նաև վերոնշյալ կարգախոսն արդարացված են նաև այնպիսի քաղաքական նպատակների և հավակնությունների դեպքում, որոնք չեն բխում պետության զարգացման ու ամրապնդման գերխնդրի հրամայական-

ներից:

Քաղաքագիտական բառարանում մաքիավելիզմը բնորոշվում է. «Քաղաքական վարքագծի կերպ, քաղաքական գործողություններ, որոնք արհամարհում են բարոյականության նորմերը, և որոնց դեպքում նպատակին հասնելու համար ընդունելի են համարվում բոլոր միջոցները, ընդհուպ մինչև ամենից նենգը, դավադրականը և դաժանը»[4]: Պատահական չէ, որ մաքիավելիզմը հիմնականում կրում է իմաստային, մեկնաբանական առավել բացասական ծանրաբեռնվածություն, քանզի եթե Մաքիավելիի ուսմունքի շրջանակներում «Նպատակն արդարացնում է միջոցները» կարգախոսը, այնուամենայնիվ, ենթադրում էր միջոցների կիրառման խտրականություն` կախված նպատակի բնույթից, ապա մաքիավելիզմի և դրա քաղաքական դրսևորումների շրջանակներում քաղաքական իրատեսության դիրքերից թույլատրելի էր համարվում միջոցների անխտրողական կիրառումը` անկախ նպատակի բնույթից: Այսինքն` որևէ քաղաքական գործիչ, կուսակցություն կամ իշխանական կառույց, քաղաքական ուժ կամ քաղաքական հավակնություններ ունեցող կազմակերպություն սեփական նպատակին հասնելու համար ազատ է տարբեր միջոցների կենսագործմամբ ապահովել այդ նպատակի վերաճը հնարավորությունից իրականության: Եվ անպայման չէ, որ այդ նպատակն իր հիմքում ունենա պետական կամ ազգային շահը. այն կարող է դրսևորվել կլանային, կուսակցական, անձնական բնույթի քողարկված կամ բացահայտ շահերի ու նկրտումների տեսքով:

Մաքիավելիի ուսմունքի և մաքիավելիզմի շրջանակներում քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության, ինչպես նաև «Նպատակն արդարացնում է միջոցները» կարգախոսի հետ կապված հարցերին նման երկար անդրադարձը պայմանավորված է դրանց հետ Նժդեհի մոտեցման համեմատական վերլուծությունը հանգամանորեն իրականացնելու նպատակով: Արդեն նշվել է, որ Նժդեհը չի անդրադառնում վերոնշյալ երկու մոտեցումների տարբերակման հիմնախնդրին և հանդես է գալիս դրանց ընդհանրական քննադատությամբ: Սակայն մաքիավելիզմի և Մաքիավելիի հայացքների միջև վերը նշված տարբերությունների մեթոդաբանական հիմքի վրա հարցը քննարկելու դեպքում կարելի է տեսնել, որ Նժդեհի համար եթե ոչ հավասարապես, ապա սկզբունքորեն անընդունելի են թե՛ Մաքիավելիի, թե՛ մաքիավելիզմի մոտեցումները: Սա բնավ էլ չի նշանակում, թե Նժդեհի և Մաքիավելիի հայացքների միջև սկզբունքային տարբերությունների առկայությունը բացառում է դրանց միջև գաղափարական բնույթի ցանկացած երկխոսության հնարավորություն: Այն, որ իշխանը կամ առաջնորդը պիտի աչքի ընկնի հայրենասիրությամբ և պատրաստ լինի սեփական գիտելիքները, փորձն ու կարողությունները ծառայեցնել ազգի, պետության զարգացման և անվտանգության ապահովման գործին, ըստ էության, Նժդեհի և Մաքիավելիի հայացքները ներդաշնակող գաղափար է: Յիրավի, Նժդեհը ևս կարծում է, որ ազգային ինքնապաշտպանության գործի ապահովումը, պետականության հիմքերի ամրապնդումը, ներազգային և միջազգային մակարդակներում հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ են հայրենապաշտ, անձնվեր անհատներ, քաղաքացիներ և առաջնորդներ: Սակայն, ի տարբերություն Մաքիավելիի` Նժդեհն անգամ հանուն ազգային ինքնապաշտպանության և պետական անվտանգության ապահովման անընդունելի է համարում «Նպատակն արդարացնում է միջոցները» կարգախոսը և դրա գործնական կիրառությունը: Նրա համար այս կարգախոսը անընդունելի է ինչպես Մաքիավելիի, այնպես էլ մաքիավելիզմի ըմբռնումների դիրքերից: Այլ կերպ` կարևոր է ոչ միայն «հանուն ինչի գործելը», այլև` «ինչպես գործելը»: Եթե մաքիավելիզմը բարոյականի տեսանկյունից, ընդհանուր առմամբ, «ինչպես գործել» հարցի անտեսումը թույլատրելի է համարում այս կամ քաղաքական շահի իրականացման համատեքստում, Մաքիավելին` ազգային պետության հզորացման նպատակի համատեքստում, ապա Նժդեհն այդ հարցի անտեսումն անթույլատրելի է համարում թե՛ քաղաքական տարաբնույթ հավակնությունների, թե՛ հայրենիքի, պետական շահի իրականացման համատեքստում: «Ես, - գրում է Նժդեհը, - մերժում եմ այն բարոյազուրկ հասկացողությունը, թե հայրենիքի շահը սրբագործում է ամեն միջոց: Ստորությունը չի դադարում ստորություն լինելուց և՛ այն դեպքում, երբ այն կատարվում է անգամ հայրենիքի համար: ...Բարոյական տկարության ծնունդ է ամեն կարգի ստորություն: ...Ստորությամբ չեն պաշտպանում հայրենիքը»[5]:

Պետք է նշել, որ քաղաքական կյանքում, ազգային հիմնախնդիրների լուծման գործում միջոցների անխտրությունն արդարացնող մոտեցումների նժդեհյան քննադատությունը ընթերցողի մոտ կարող է արտաքուստ որոշակի հակասական տպավորություն առաջացնել: Դա կարելի է բացատրել նրանով, որ Նժդեհի ազգասիրական և հայրենասիրական հայացքները հաճախ կարող են մեկնաբանվել այնպես, թե Նժդեհի համար ազգը կամ հայրենիքն այնպիսի բարձրագույն արժեքներ են, որոնց պահպանումն ու զարգացումն անհրաժեշտաբար ենթադրում է գոյության պայքարի օրենքով, դաժան և կեղծիքներով լի իրականությամբ թելադրված հրամայականների և պահանջների անվերապահ իրականացում, քանզի հակառակ դեպքում նշյալ բարձրագույն արժեքները կարող են անցնել չգոյության գիրկը: Այսինքն` եթե գերագույն արժեքների` ազգի կամ հայրենիքի պահպանումն ու զարգացումը օրինաչափորեն կամ անհրաժեշտաբար ձերբազատված չեն միջոցների անխտրությամբ կյանքի կոչվելու կամ իրագործվելու հեռանկարից, ապա միջոցների տարբերակման նժդեհյան պահանջն այս կամ այն կերպ գերագույն արժեքի պահպանման հնարավորությունը կարող է անգամ նվազագույնի հասցնել: Բացի այս` եթե Նժդեհը հայրենասիրությունը համարում է առաքինությունների թագն ու պսակը, մեծապես կարևորում է ազգանվեր գործունեությունը, ապա ինչո՞ւ է միջոցների ան-

խտրության ձևով ներկայացած հնարավոր հայրենասիրական գործողությունը դատափետում և քննադատում: Հետևաբար, ստեղծվում է տարօրինակ և անհասկանալի մի իրավիճակ, որը, իրականում, բացատրելի է: Ասվածն առավել հասկանալի կդառնա այն դեպքում, եթե միջոցների միջև տարբերակում մտցնելու Նժդեհյան պահանջը փորձենք դիտարկել Նժդեհի բարոյափիլիսոփայության որոշ առանցքային գաղափարների և դրանց հետ կապված այլ մտքերի համատեքստում: Իսկապես, առանձնահատուկ կարևորություն տալով մարդկանց բարոյական կատարելագործման հիմնախնդրին՝ Նժդեհը կարծում էր, որ հայրենասիրական առաքելությունը, ազգանվեր գործունեությունը ենթադրում է մարդկանց առաքինությունների, բարոյական բարձր որակների առկայություն, սակայն հայրենիքի կամ ազգի համար դրական նշանակություն ունեցած գործողությունն անհրաժեշտաբար չի վկայում բարոյական կամ առաքինի լինելու մասին: Նժդեհի համար կարևոր էր ոչ միայն ազգի զարգացումը, հայրենիքի հզորացումը, այլև մարդկանց բարոյական նկարագրի պահպանումը: Նժդեհը գտնում էր, որ իրական հայրենասիրությունն ու ազգանվեր ծառայությունը չեն կարող կյանքի կոչվել բարոյական թերիների հիմքի վրա, մարդկանց բարոյական նկարագրի հաշվին: «Միջոցների անխտրականությամբ շահած ամեն մի հաջողություն, - գրում է Նժդեհը, - պղծում է, ապականում մարդկային բարոյական աշխարհը: Մարդկայնության առաջին թշնամին է անխտիրը» [6]: Այսինքն՝ դաժանությամբ, նենգությամբ, ստորություններով, անմարդկային գործողություններով, այլ կերպ՝ անբարոյականության դիրքերից հայրենասիրական, ազգօգուտ նշանակություն ունեցող այս կամ այն արարքը չի կարելի ադարացված և բարոյական համարել, քանզի հնարավոր չի լինել բարոյական անբարոյականության հիմքի վրա, քանզի իրական հայրենասիրությունը ենթադրում է բարոյական նկարագրի պահպանում և բարոյական որակների զարգացում: Այլ կերպ՝ հայրենիքը իրապես կարող է ամրանալ և հզորանալ, եթե ուղեկցվում է մարդկային հարաբերությունների մարդկայնացմամբ, մարդկանց կատարելագործմամբ, նրանց բարոյական որակների զարգացմամբ, այլապես կարելի է իրավիճակային, այլ ոչ համակարգային լուծումներ արձանագրել, կարելի է «Նախ՝ մարդ, հետո՝ հայ» կարգախոսը նենգափոխել «Նախ՝ հայ, հետո՝ մարդ» կարգախոսով՝ արդյունքում չլինելով ոչ մեկը, ոչ էլ մյուսը: «Ստորությունը, - գրում է Նժդեհը, - մնում է ստորություն անգամ այն դեպքում, երբ նա կատարվում է հանուն ամենանվիրական շահերի. դա նախ բարոյազրկում է և տկարացնում իրենից օգտվողին» [7]: Համաձայն Նժդեհի՝ ստորությունները և բարոյական տկարությունները միմյանց հետ սերտաճած են. ստորություններով սնվում են մարդկանց բարոյական տկարությունները, իսկ վերջիններիցս ծնունդ են առնում մարդկային ստորությունները: Եսապաշտը (նյութապաշտը), որի նպատակը բացառապես սեփական բարեկեցության ապահովումն է, որն աշխարհը տեսնում է միայն սեփական ես-ի քարանձավից, իրեն չի գիտակցում որպես պարտականության կրող. նրա համար պարտականությունը պարտադրված դաժան իրականություն է, որը կյանքի է կոչվում բացառապես անձնական շահախնդրության կամ վախի դեպքում, իսկ իրավունքը անձնական վայելքների ու հաճույքների բավարարման հետ է միայն զուգակցվում: Նմանը բարոյապես տկար է և իր «պաշտամունքային օբյեկտներին» հասնելու համար պատրաստ է նաև ստորությունների, քանզի գերին է իր կրքերի ու ցանկությունների. նա ղեկավարվում է դրանցով, այլ ոչ հակառակը, իսկ ստորությունները ավելի են խորացնում այդպիսի մարդու բարոյական տկարությունները, քանզի Նիցշեի հանգույն կարող ենք ասել (թեկուզ այլ մեկնաբանությամբ), որ «երբ երկար անդունդի մեջ ես նայում, ապա անդունդն է քո մեջ նայում»: Ստորության հետ մեկտեղ՝ Նժդեհի համար անթույլատրելի են դաժանությունը և բռնությունը: Ժողովուրդներն իրենց ինքնապաշտպանության գործի կազմակերպման ընթացքում բազմիցս ստիպված են լինում պատերազմելու, իսկ վերջիններս քանիցս ուղեկցվել են և ուղեկցվում են բազմաթիվ գազանություններով ու դաժանություններով: Ինքնապաշտպանությամբ թելադրված պատերազմների ժամանակ էլ Նժդեհը չի ընդունում անմարդկային դաժանությունների արդարացման ջանքերը: «Մի՛, մի՛ սպանիր թշնամուդ անգամ, - գրում է Նժդեհը, - եթէ կարելիութիւն կայ սպանելու նրա մարտունակութիւնը - կռիւը շարունակելու նրա ցանկութիւնը: Այլ կերպ վարւողը մարդասպան է հասարակ, և ոչ մարտիկ:... Խնայի՛ր տկարներին, եթէ թշնամիդ իսկ լինի: Յարգի՛ր քաջութեան օրէնքը – մնա՛ մարդ, մարդ մնա՝ բոլոր դէպքերում: Եվ զա՛րկ միայն նրանց, որոնք կարող են պատասխանել զարկիդ» [8]: Մարդասիրական ոգին չպետք է լքի մարդուն անգամ պատերազմի դաշտում, որտեղ թեպետ անխուսափելի են զոհերն ու վիրավորները, սակայն հնարավոր են նաև մարդկայնորեն վեհի, ասպետականի և մարդասիրականի դրսևորումները: «...Չկա աստվածորեն ավելի վսեմ և գեղեցիկ շարժուձև, - գրում է Նժդեհը, - քան մեր սրից ու գնդակից զարնված հակառակորդի վերքերը կապելը: Ինչպես չկա ավելի բարբարոս արարք, քան վիրավորներին նոր վերքեր հասցնելը» [9]:

Հարկ է նշել, որ նպատակի և դրա իրականացման համար պահանջվող միջոցների հարաբերակցության հարցի Նժդեհյան լուծման վերոնշյալ մեկնաբանությունը կարող է կասկածի տակ առնվել, եթե ուշադրություն դարձնենք «Որդիների պայքարը հայրերի դեմ» աշխատությանը, որտեղ Նժդեհն իր նախորդ մտքերին գոնե արտաքուստ հակասող և զարմանահարույց միտք է արտահայտում: «Իր պետության շա՛հը, - գրում է Նժդեհը, - ահա՛ գերբարոյականը պետական գործիչների համար: Սրանց սիրտը - Նապոլեոնի արտահայտությամբ - գլխումն է լինում: Սրանց համար նպատակը բարոյականացնում է այն բոլոր միջոցները, որոնք իրենց պետության ուժեղացման և բարեկեցության կծառայեն: Ազգային եսականության հզորացումը - սա՛ է տիրող իրապաշտ քա-

ղաքականությունը: Ահա՜ թե ինչու այս կամ այն պետության ճակատագիրը վարողները երբեմն իրենց թույլ են տալիս արարքներ, որոնք թույլ չէին տա որպես սովորական մարդ: Արդ, թե ինչու պիտի հասկանալ, և ոչ թե անիծել աշխարհը» [10]: Այս մտքի հարուցած տարակույսները, կարծում եմ, կարելի է փարատել հարցին հերմենևտիկական մոտեցման դիրքերից անդրադառնալու դեպքում: Այսինքն՝ եթե փորձենք պարզել, թե իրականում ինչ էր նա ուզում դրանով ասել: Այն, որ Նժդեհի այս միտքը իրական հակասության մեջ չէ նպատակի և միջոցների հարաբերակցության հարցի նժդեհյան նախորդ մեկնաբանության հետ, պետք է բացատրել հետևյալ գործոններով:

• Բանն այն է, որ Նժդեհը, ըստ էության, սրանով ցույց էր տալիս աշխարհում ընթացող գործընթացների փաստացի վիճակը և դրանց ուղղակի կամ անուղղակի կապը հայ իրականության հետ: Այսինքն՝ նա ասում էր այն, ինչ կա, այլ ոչ թե այն, թե ինչպես պետք է լինի: Այլ կերպ ասած՝ այստեղ գործ ունենք ոչ թե «պետության ուժեղացման և բարեկեցության նպատակին ծառայող բոլոր միջոցների բարոյականացման» գաղափարի նժդեհյան ջատագովության, այլ այն իրողության հետ, որ Նժդեհը պարզապես արձանագրում է այն մարդկանց տեսակետը, որոնք պաշտպանում և առաջնորդվում են այդ գաղափարի ոգով: Արժեքային մակարդակում՝ որևէ մեկի կողմից արտահայտված միտքը միշտ չէ, որ արտացոլում է հեղինակի համաձայնությունն այդ մտքին: Խոսքն այստեղ այն մասին չէ, թե Նժդեհը կասկածում է այս մտքի ճշմարտացիությանը որպես փաստի արձանագրում, այլ այն մասին, որ այս մտքի շրջանակներում արտահայտված մոտեցումներն անպայման չէ, որ համապատասխանեն որոշակի խնդիրների լուծման նժդեհյան տարբերակին: Այսինքն՝ եթե Նժդեհն ասեր, օրինակ, «Մաքիավելիի կարծիքով պետության շահն արդարացնում է այլատյացությունը, չարիքի կիրառությունը, անբարոյականությունը, դաժանությունները», ապա այստեղից չի կարելի գալ այն եզրակացության, թե Նժդեհը ևս այդպես է կարծում: Այլ կերպ ասած՝ Նժդեհը կարող է համաձայնել մտքին որպես փաստի արձանագրում (այն, որ Մաքիավելին, իրոք, նման կարծիք ունեցել է), սակայն չհամաձայնել այդ բովանդակությամբ արտահայտված մոտեցումներին (այն, որ պետության շահը, իրոք, արդարացնում է այդպիսի երևույթները):

• Բացի այս՝ խիստ կարևոր է ուշադրություն դարձնել արտահայտված մտքի ֆիզիկական համատեքստին: Այս տեսանկյունից հարցին մոտենալու դեպքում՝ կարող ենք ասել, որ սա հայ ժողովրդին ուղղված միտք էր՝ կապված աշխարհում տիրող քաղաքական կյանքի բնորոշ գծերի և քաղաքական գործընթացների առանձնահատկությունների հետ: Այսինքն՝ հայ ժողովուրդը ևս պիտի հասկանա այդ ամենը, այլ ոչ թե անիծի աշխարհը: Նա պետք է հասկանա, որպեսզի կարողանա իր մեջ գտնել սեփական ճակատագիրը վարելու ուժը, այլ ոչ թե իր փրկությունն ակնկալի այլ պետությունների մարդասիրական մղումների և արդար վերաբերմունքի արդյունքում: Նա պետք է հասկանա այդ, բայց դա չի նշանակում, որ ինքը ևս պետք է լինի այդպիսին: Սա պետք է հասկանանք մենք, քանզի «մեր սեփական տրամադրութիւնները դրել էինք եւրոպացու հոգու մէջ և ամենախոր կերպով հաւատացել, թէ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները նոյն զգացումներն ունին մէր հանդէպ, թէ բոլոր պատերազմները մղւում են յանուն մեր փրկութեան» [11]: Համաձայն Նժդեհի՝ աշխարհում գոյություն ունեցող պետությունների ղեկավարներն առաջնորդվում են իրենց ազգային, պետական շահերով և տիրող անարդարությունների դեմ պայքարում են այն դեպքում, երբ պայքարը բխում է պետական շահից, այլ ոչ թե աշխարհը բարեփոխելու անհրաժեշտությունից: Նժդեհը քաղաքագետի խորաթափանցությամբ էր վերլուծում և մեկնաբանում միջազգային քաղաքական անցուդարձը, միջպետական հարաբերությունների բնույթը, դրանց որպիսության հետևում ընկած շարժառիթներն ու նպատակները: Այո՜, պետությունները կնքում են պայմանագրեր, ստորագրում են միջազգային իրավունքով սահմանված բազմաթիվ փաստաթղթեր, սակայն հիմնականում ոչ միայն խաղաղության հաստատման, աշխարհի բարեփոխման, այլև սեփական պետության անվտանգությունն ու կենսական շահերը պահպանելու նպատակադրումով: «Միջպետական պայմանագրերը ապրում են այնքան ժամանակ, - գրում է Նժդեհը, - որքան ապրում են նրանց ծնունդ տվող պայմանները:...Հանուն խաղաղության չեն կնքում պայմանագրերը, այլ հանուն պետության օրվա կենսական շահերի: Պետությունները հաշվի են առնում միջազգային իրավունքը և հարգում իրենց ստորագրած պայմանագրերը, քանի դեռ շահում են գոյություն ունեցող դրությունից. սակայն հենց որ մի ուրիշի թղթե բարեկամությունը իրենց ավելի շահավետ թվաց՝ նրանք թքում են պայմանագրերի վրա, լքում իրենց նախկին զինակիցներին և սպառնում աշխարհի խաղաղության: Այս է իրերի առարկայական դրությունը, այս է իրական աշխարհը և ոչ այն, որի սխալ և խաբուսիկ պատկերացումով օրորվել և օրորվում է մեր զգացմունքային ազգը» [12]: Սա պետք է հասկանանք, գիտակցենք, որպեսզի մեր փրկությունը «չաղերսենք» դրսից, արտաքին ուժերի բարյացակամությունից, որպեսզի «միամտորեն չպահանջենք, որ աշխարհը լինի այն, ինչպես որ մենք ենք ուզում, այլ՝ ազգովին մենք դառնանք այն, ինչպիսին լինել դա՜ է թելադրում» [13]: Իսկ իրերի առարկայական դրությունը պահանջում է հոգեփոխում, տկարի, նվաստի, քաղաքական մուրացկանի ու լալկանի հոգեբանության հաղթահարում և, որպես արդյունք, ուժեղի նկարագրի կերտում, ուժավորում: «Մուրացկանություն և լալկանություն, - գրում է Նժդեհը, - մի ամբողջ ժամանակի հոգեբանություն, քաղաքական մեր միակ զենքը: Լալկանությունը, սակայն, ապացույց է հոգևոր տհասության կամ անարիության: Մուրացկանությունը զզվելի է ընդհանրապես: Մուրացկանին օգնում են ոչ միայն կարեկցանքից դրդված, այլև հաճախ զզվանքից: Ավելի սարսափելի է քաղաքական մուրացկանությունը, քանի որ քաղաքականության մեջ կարեկցանք

չկա, իսկ զգվանք՝ շատ քիչ» [14]:

Ուժեղ լինել, ըստ Նժդեհի, չի նշանակում նվաճողական քաղաքականությամբ առաջնորդվել, ծավալապաշտական նկրտումներին գործնական արտահայտություն տալ, կարողանալ բռնություններ գործադրել և անպատիժ մնալ, «փայլել» դաժանություններով և հպարտանալ ստացված արդյունքից: «Ուժեղը նա չէ՛, - գրում է Նժդեհը «11-րդ Կարմիր բանակի զորահրամանատարին՝ Բագվում» խորագրով նամակում, - որ ուտող բերաններ, երկոտանի մեքենաներ, թալանչիներ, կամ թնդանոթներ ու արճիճ շատ ունի, բայց սիրտ և հոգի չունի և սրբություններ չի ճանաչում: ...Ուժեղը նա չէ՛, որ հանուն իր աննշան հաջողությունների, իր պյուռոսյան [15] հաղթությունների, դաշնակցում է անգա՛մ սատանայի հետ, որը լինելով Նապոլեոնի խեղանկարը, Մաքիավելլին է իսկական: ...Ուժեղը նա չէ՛, որի «հաղթությունները» ո՛չ ռազմական են, ո՛չ էլ բարոյական» [16]:

Նժդեհի կարծիքով՝ ժողովուրդներն ու պետությունները հաճախ են կանգնում պատերազմելու անհրաժեշտության առջև՝ մղելով ինքնապաշտպանական կամ էլ ծավալապաշտական պատերազմներ: Սակայն պատերազմների արդյունքում ձեռք բերված հաղթանակները միշտ չէ, որ կարելի է արդարացիորեն որակել որպես հաղթանակ: «Պատերազմիր այնպե՛ս, - գրում է Նժդեհը, - որ չամաչես տարածդ հաղթանակից: Արդար է հաղթանակդ, երբ այն արդար է համարում պարտված թշնամիդ իսկ» [17]:

Նժդեհի բարոյափիլիսոփայության մեջ առանցքային նշանակություն ունի բարոյական նպատակադրման հիմնախնդիրը: Նժդեհը բարոյականի տեսանկյունից էական նշանակություն էր հատկացնում «ի՞նչ նպատակով կամ ինչի՞ համար» և «ինչպե՞ս» հարցերին և դրանց պատասխաններին [18]: Այս հարցերն իրենց կենսունակությունը չեն կորցնում նաև քաղաքական գործընթացների հետ կապված բարոյական հիմնախնդիրների Նժդեհյան վերլուծության համատեքստում: «Պատերազմող կողմերի հետապնդած նպատակներով է, - գրում է Նժդեհը, - բնորոշվում նրանց հաղթանակի բարոյական մեծությունն ու արժեքը» [19]: Եթե այս դատողությունից կարելի է տեսնել «ի՞նչ նպատակով կամ ինչի՞ համար» հարցադրման ոչ բացահայտ «ներկայությունը», ապա այդ հարցի մաս կազմող «ի՞նչ արեց»-ի Նժդեհյան պատասխանը (քաղաքական պայքարի, պատերազմական իրավիճակի համատեքստում), բնականաբար, կապվում է ստացված արդյունքների հետ: 1941թ-ին գրած «Պատերազմ՝ հեղափոխություն» հոդվածի շրջանակներում Նժդեհը նշում է, որ այս կամ այն պատերազմող կողմի հաղթանակը պետք է համարել ճշմարիտ այն դեպքում, երբ «դա արդար է, երբ ծառայում է երկարատև խաղաղության, երբ զինաթափելով պատերազմող անարդար կողմը՝ նպաստում է դրա մարդկայնացման, երբ նվազեցնում է մարդկային տառապանքի պատճառները, սատարելով միջազգային բռնության, չարության, եսականության բարձումին, և այսպիսով ժողովուրդների համար անկաշկանդ զարգանալու և ստեղծագործելու կարելիություն ստեղծում» [20]: Իհարկե, այստեղից չի կարելի գալ այն եզրակացության, թե պարտադրված ինքնապաշտպանական պատերազմի արդյունքում տարած հաղթանակն անարդար է, եթե այն անպայմանորեն չի ուղեկցվում պարտյալ կողմի մարդկայնացմամբ: «Մարդկային գործերի մեջ, - «Բանտային գրառումներ» աշխատության մեջ գրում է Նժդեհը, - հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը: Հայրենիքի չափ նվիրական է և պատերազմը հայրենական: Հավաքական ավազակություն և սպանություն է այլ կարգի ամեն պատերազմ: Եվ ճշմարիտ հերոսները նրա՛նք են միայն, որոնք մեծագործում են և առաքինանում իրենց վտանգված հայրենիքը պաշտպանելու ժամանակ» [21]: Նժդեհյան վերջին երկու մտքերը որոշակի տարակուսանք են առաջացնում: Այսպես. եթե վերջին դատողության մեջ Նժդեհը նշում է, որ ինքնապաշտպանական պատերազմից զատ ցանկացած այլ պատերազմ հավաքական ավազակություն և սպանություն է իրենից ներկայացնում, իսկ նախորդ դատողության մեջ պատերազմի արդար կամ ճշմարիտ լինելու մասին հարցը չի ներկայացվում բացառապես ինքնապաշտպանական պատերազմի համատեքստում, ապա ստեղծվում է որոշակի հակասական իրավիճակ: Հիրավի, Նժդեհը մի կողմից արդարացված է համարում միայն ինքնապաշտպանական պատերազմը, իսկ մյուս կողմից այն պատերազմն ու դրա արդյունք հանդիսացող հաղթանակը (սրանք, ըստ էության, չի կարելի անհրաժեշտաբար դիտել որպես ինքնապաշտպանական), որոնք ուղեկցվում են խաղաղության հաստատման, պարտյալ կողմի մարդկայնացման, բռնության և չարիքի վերացման, ինչպես նաև ժողովուրդների զարգացման համար պայմանների ստեղծման արդյունքով: Առաջացած հիմնախնդրի լուծումը, կարծում եմ, պետք է փորձել գտնել «ի՞նչ նպատակով կամ ինչի՞ համար» հարցադրման համատեքստում: Նշելով, թե ինքնապաշտպանական պատերազմից զատ ցանկացած այլ պատերազմ հավաքական մարդասպանություն կամ ավազակություն է, Նժդեհն այստեղ, ըստ էության, պատերազմի մեջ ներգրավվելու շարժառիթի կամ նպատակի հարցի դիրքերից է հանդես գալիս: Այսինքն՝ Նժդեհն ի նկատի ունի այն, որ այլատյացության և ծավալապաշտական նկրտումներով, ինչպես նաև այլազգիների ու օտարների նյութական ռեսուրսների հափշտակմամբ ու թալանով պայմանավորված պատերազմն անընդունելի է և դատապարտելի: «Սպանության և կողոպուտի ելած բանակը, - կոնկրետացնելով նախորդ միտքը՝ գրում է Նժդեհը, - կարող է քաջ ավազակներ ու մարդասպաններ տալ, բայց ոչ և հերոսներ» [22]: Եթե «Պատերազմ՝ հեղափոխություն» հոդվածում արտահայտված միտքը ևս փորձենք դիտարկել նպատակի կամ շարժառիթի հիմնախնդրի դիրքերից, ապա պետք է նշել, որ այս դեպքում Նժդեհը փորձում էր արդարացման «դաշտ» փնտրել այնպիսի պատերազմների համար, որոնք պայմանավորված են բռնության, չարիքի, մարդկանց խաղաղ համակեցությանը սպառնացող վտանգների վերացման (միևնույն ժամանակ նպաս-

տելով սպասված արդյունքի ապահովմանը), այլ ոչ այս կամ այն պետության կենսական շահերի բավարարման, տիրապետության ոլորտների ընդլայնման նպատակադրումով: Իհարկե՛, Նժդեհը պատերազմները համարում էր անխուսափելի. դրանք մարդկության պատմության «հավերժ» ուղեկիցներից են, սակայն խնդիրը դրանց անխուսափելիությունը երկկողմ դրական արդյունքների ծառայեցնելն է: Այստեղ հարկ է զգուշանալ այնպիսի մեկնաբանություններից, համաձայն որոնց՝ Նժդեհը, իբր, պատերազմների անխուսափելիության գաղափարի ընդունմամբ հանդես է գալիս կամայական պատերազմի գոյության ջատագովի կարգավիճակով: Նման մոտեցումների հնարավորությունը չի կարելի բացառել, քանզի մարդկության պատմության ընթացքում խաղաղության հաստատման և հակաբռնատիրական առաքելության կարգախոսի ներքո իրականացված պատերազմները բազմիցս ուղեկցվել են մարդկային անդառնալի կորուստներով, նպաստել մարդկանց, պետությունների միջև թշնամության և ատելության խորացմանը, ունեցել են կայսերապաշտական հավակնությունների ու կենսական շահերի բավարարման նպատակ՝ դիմացինին բնաջնջելու, սեփական ազդեցության ոլորտում պահելու և այլ ձևերով: Այս ամենը Նժդեհը շատ լավ գիտակցում էր: Եվ պատահական չէ այն, որ բացի նպատակադրման գործոնից՝ Նժդեհն ինքնապաշտպանական պատերազմներից զատ գոյություն ունեցող պատերազմների միակ արդարացումը գտնում էր համապատասխան դրական արդյունքի ապահովման, հաղթանակած կողմի մարդկայնացման, ազգերի ստեղծագործական ինքնիրացման պայմանների ստեղծման, տառապանքների վերացմանը նպաստ բերելու համատեքստում՝ մերժելով պյուռոսյան հաղթանակներով ուղեկցվող կամ էլ, ըստ էության, ինքնանպատակ պատերազմները: Այլ կերպ ասած՝ Նժդեհն այն կարծիքին էր, որ անմիջական վտանգի և սպառնալիքի բացակայությունը չի կարող սկզբունքորեն արգելել այն պատերազմը, որը նպատակ ունի չարիքի, բռնության օջախի, ինչպես նաև մարդկային տառապանքների վերացումը թե՛ պետության, թե՛ ազգի սահմաններից դուրս, քանզի դա նաև պարտականություն է, որը ենթադրում է վերջինիս գիտակցում և իրականացման ներքին պատասխանատվություն: Այսինքն՝ պետության բարեկեցությունն ու ազգի զարգացումը չի կարող արտաքին չարիքի, հակամարդկային երևույթներին մոտենալ հավերժ անտարբերության դիրքերից՝ հիմք ընդունելով անմիջական ինքնապաշտպանության անհրաժեշտության բացակայությունը, և, միևնույն ժամանակ, չի կարող ոչ ինքնապաշտպանական բնույթի պատերազմների իրականացմանն իրավազոր լինել, եթե համոզված չէ, որ կարող է իր դրական շարժառիթների սպասվելիք արդյունքները կյանքի կոչել կամ դրանք թողնում է չիրականացված: Այլ կերպ ասած՝ պետք է միշտ պատրաստ լինել ինքնապաշտպանության և գոյապահպանման, բայց ոչ թե ուրիշների հաշվին, այլ, հնարավորության դեպքում, նաև ուրիշների համար: Իհարկե, նժդեհյան այս պահանջը կարող է ոչ իրատեսական թվալ, քանզի ժամանակակից իրականության մեջ բազմաթիվ ռազմական գործողություններ ու պատերազմներ իրականացվում են նման՝ խաղաղապահպան, մարդասիրական արժեքների տարածման, հռչակման և արմատավորման կարգախոսների ներքո, սակայն իրականում ոչ թե հանուն դրանց, այլ՝ դրանց շահարկման միջոցով: Վերջինս էլ հանգեցնում է այդ իդեալների վարկաբեկմանն ու հեղինակազրկմանը և դրանով էլ՝ իրականացման հնարավորության նվազեցմանը: Այն կարող է ոչ իրատեսական թվալ նաև այն պատճառով, որ մերօրյա քաղաքական կյանքը, միջպետական հարաբերություններն ու պետությունների շարունակական զարգացումը գրեթե անհնար է պատկերացնել այդ կարգախոսին հետևողականորեն հետամուտ լինելու դեպքում: Սակայն նժդեհյան այս պահանջն իդեալ էր, որին պետք է ձգտել, որքան էլ ճանապարհին անվերջ և դժվարին թվա, իդեալ էր, որի իրականացման հնարավորությունը չպետք է «խեղդամահ» անել, որքան էլ կյանքն այլ բան հուշի: Նժդեհի կարծիքով՝ բարոյականությունը ներքաղաքական պայքարի ժամանակ ևս չի կարելի անտեսել: Անդրադառնալով կուսակցությունների քաղաքական և բարոյական վարքագծի հիմնախնդրին՝ Նժդեհը գրում է. «Մանկորեն միամիտ են այն կուսակցությունները, որոնք ժխտելով բարոյականությունը քաղաքական պայքարի մեջ՝ կարծում են թե կարող կլինեն բարոյական մաքրություն պահել իրենց շարքերում»[23]: Քաղաքական կյանքն ու գործընթացները, ազգային շահերը կյանքի կոչելու պատասխանատու գործը պահանջում են լինել իմաստուն, կարողանալ կռահել աշխարհում ընթացող քաղաքական գործընթացների և դրանց զարգացումների տրամաբանությունը, դիմակայել արտաքին սպառնալիքներին և հետևողականորեն նպաստել սեփական ազգի, պետության հզորացմանը, սակայն ոչ ամեն գնով:

Քաղաքականության և բարոյականության «հաշտեցման» Նժդեհի փորձերը վերաբերում էին ոչ թե ներկային (ինչպես է), այլ «հառնած» էին ապագային (ինչպես պետք է լինի և կարող է լինել). դրանք ոչ թե առկա իրավիճակը բնորոշող տեսական ընդհանրացումներ էին, այլ որևէ բանի հնարավորության հաստատումը, ինչը, ավաղ, դեռևս զուրկ է գործնական դրսևորումներից կամ դրա հնարավորությունից: Այլ կերպ ասած՝ Նժդեհն այս հարցում «համաձայն» է Ի. Կանտի հետ. «Օբյեկտիվորեն (տեսության մեջ) քաղաքականության և բարոյականության միջև վեճ գոյություն չունի: Ընդհակառակը, սուբյեկտիվորեն (մարդկանց եսապաշտական հակումներում...) այդ հակասությունը գոյություն ունի և կարող է միշտ մնալ»[24]:

Նժդեհը քաջ գիտակցում էր այն հանգամանքը, որ ներազգային և ազգամիջյան բացահայտ կամ ոչ բացահայտ հակամարտությունների ու այլատյացության պայմաններում քաղաքականության «բարոյականացման» անհրաժեշտությունը հավաստող իր մտքերը կարող էին մնալ «ձայն բարբառո հանապատի», կարող էին դիտվել քաղաքական անիրատե-

սության վառ արտահայտություն, սակայն նա ոչ միայն չէր հրաժարվում այդ սկզբունքով առաջնորդվելու գաղափարից, այլև` հավատարիմ իր լավատեսական ոգուն, գտնում էր, որ այն աշխարհի բարեփոխման, մարդկային հարաբերությունների մարդկայնացման գործընթացի կարևոր պայմաններից է: Ճիշտ այնպես, ինչպես մեր կյանքում առկա չարի, բացասականի գոյությունը չպետք է մեզ դարձնի այդպիսին, չպետք է հուսահատեցնի և բարիք գործելուց հրաժարվելու պատճառ հանդիսանա, այդպես էլ` քաղաքական կյանքում տիրող անբարոյականության մթնոլորտը չպետք է քաղաքական պայքարի, միջպետական հարաբերությունների «բարոյականացման» իդեալին ձգտելու կամքը մահացնի: «Պետք է կյանքն ընդունել այնպես, - «Երջանկության պրոբլեմը» անավարտ աշխատության մեջ գրում է Նժդեհը, - ինչպես որ է դա և ազնիվ ճիգերով ծառայենք նրան` զայն ավելի և ավելի գեղեցկացնելու և իմաստավորելու համար»[25]:

Եթե փորձենք հանրագումարի բերել քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության նժդեհյան ըմբռնման բնութագրական գծերի վերհանման ուղղությամբ վերն արված դատողությունները, ապա կարելի է ասել, որ Նժդեհը արծարծված խնդրի լուծման իր համար ցանկալի տարբերակը կբանաձևեր Ի. Կանտի հետևյալ արտահայտությամբ. «Քաղաքականությունն ասում է` «եղեք խորամանկամիտ, ինչպես օձերը». բարոյականությունը հավելում է (որպես սահմանափակող պայման)` «և մաքուր, ինչպես աղավնիները»[26]:

---

[1] Ս. Զաքարյան, Գարեգին Նժդեհ (Փիլիսոփայական ճեպանկար), Եր., 2001, էջ 10:

[2] Հարկ է նշել, որ Նժդեհը Մաքիավելիի ուսմունքի և մաքիավելիզմի միջև հնարավոր տարբերությունների գոյության հարցի պարզաբանմամբ չի զբաղվում: Նրան չի հետաքրքրում այդ հարցը, և վերջիններիս քննադատությունն իրականացնում է միևնույն «լույսի» ներքո: Սա կարելի է բացատրել նրանով, որ Նժդեհը երկուսին էլ տիպական է համարում «Նպատակն արդարացնում է միջոցները» անընդունելի կարգախոսը, իսկ մաքիավելականությունը, հավանաբար, դիտարկում էր Մաքիավելիի ուսմունքի գործնական արտահայտություն կամ որպես դրա միանշանակ պրոյեկցիա քաղաքական կյանքում և պրակտիկայում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից քաղաքագիտական, փիլիսոփայական գրականության շրջանակներում արդարացիորեն տարբերակում է մտցվում քաղաքական նպատակների և միջոցների հարաբերակցության հարցի լուծման` Մաքիավելիի ու մաքիավելիզմի տեսակետների միջև, և Նժդեհը, միևնույն ժամանակ, չի խոսում դրանց միջև առկա տարբերությունների մասին, ուստի հետագա շարադրանքում քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության նժդեհյան ըմբռնման տարբերությունները Մաքիավելիի ուսմունքի և մաքիավելիզմի տեսակետներից` կներկայացվեն Նժդեհի կողմից վերջիններիս հարաբերական նույնացման համատեքստում: Սակայն ցույց կտրվի նաև այն, որ իրականում Նժդեհը քննադատել է և՛ Մաքիավելիի ուսմունքը, և՛ մաքիավելիզմը` անկախ իր կողմից դրանց միջև տարբերությունների ընդունման կամ գիտակցման:

[3] Н. Макиавелли, Государь, «Политология» - Хрестоматия, М., 2000, с. 129.

[4] «Политология», Словарь-справочник, М., 2001, с. 144.

[5] Գ. Նժդեհ, Երկեր, հ.1, Եր., 2002, էջ 286:

[6] Գ. Նժդեհ, նշվ. աշխ., էջ 293:

[7] Նույն տեղում, էջ 128:

[8] Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 286-287:

[9] Գ. Նժդեհ, Երկեր, հ.1, էջ 106-107:

[10] Նույն տեղում, էջ 111:

[11] Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 64:

[12] Գ. Նժդեհ, Երկեր, հ.1, էջ 116:

[13] Նույն տեղում, էջ 111:

[14] Գ. Նժդեհ, նշվ. աշխ., 2002, էջ 120:

[15] Պյուռոսը Էպիրյան արքա էր (մ. թ. ա. 319-272 ), հին ժամանակների հայտնի զորահրամանատար, որը, նպատակ ունենալով ստեղծել հզոր տերություն, խառնվում է հռոմեացիների և հույների միջև պատերազմին: 280թ. տանելով իր առաջին հաղթանակը հռոմեական լեգիոնների նկատմամբ Հերակլեայի մոտ` Պյուռոսը մտահղանում է նոր արշավանք իրականացնել և 279թ. Աուսկուլայի մոտ ջախջախում է հռոմեացիներին: Սակայն այս երկրորդ պատերազմում Պյուռոսն այնքան զոհեր և նյութական կորուստ է ունենում, որ բացականչում է. «Եվս մեկ նման հաղթանակ, և ես կործանված եմ»: Իրականում, հաջորդ ճակատամարտի ժամանակ` 278թ., Պյուռոսը գլխովին ջախջախվում է հռոմեացիների կողմից և իր զորքերի մնացորդի հետ փախչում է Էպիր: Այստեղից է առաջացել «պյուռոսյան հաղթանակ» արտահայտությունը, որն օգտագործվում է փոխաբերական իմաստով` նշանակելով պարտության հավասարազոր հաղթանակ, այսինքն` հաղթանակ, որը տրվում է ահռելի չափերի հասնող զոհերի և անդառնալի կորուստների գնով:

[16] Գ. Նժդեհ, Երկեր, հ.2, Եր., 2002, էջ 123-124:

[17] Գ. Նժդեհ, Երկեր, հ.1, էջ 292:

[18] Նժդեհը թեպետ հատուկ քննարկման նյութ չի դարձնում բարոյական շարժառիթի կամ նպատակադրման հիմնախնդիրը, սակայն նրա մի շարք աշխատություններ և հոդվածներ («Որդիների պայքարը հայրերի դեմ», «Բանտային գրառումներ», «Բաց նամակ Մայքլ Արլենին» և այլն) կարդալուց կարելի է գալ այն եզրակացության, որ այդ հիմնախնդիրը Նժդեհի բարոյափիլիսոփայության շրջանակներում առանցքային նշանակություն ունի, իսկ դրա անտեսումը կարող է հանգեցնել վերջինիս միակողմանի ըմբռնման և սխալ մեկնաբանման: Խնդրո առարկայի առումով իրենից մեծ հետաքրքրություն և կարևորություն է ներկայացնում 1930թ. «Նոր Արաքս»-ում տպագրված «Բաց նամակ Մայքլ Արլենին» խորագրով հոդվածը, որն իրենից ներկայացնում էր հրապարակախոսական կաղապարների ներքո «թաքնված» բարոյախոսություն: Պետք է նշել, որ այդ հոդվածում տարբեր թեմաներ են արծարծվում, և Նժդեհը բազմիցս համաձայնում է իր կողմից քննադատության արժանացած Մայքլ Արլենի` հայ իրականության բնութագրական գծերի, հայ ժողովրդի պատմական անցյալի և ներկայի թերիների վերաբերյալ տեսակետների հետ: Սակայն որոշ հարցերում դրսևորած համաձայնության հետ մեկտեղ` Նժդեհը չի դադարում քննադատել վերջինիս: (Այս մասին տե՛ս Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, Եր., 2002, էջ 332-344): Իհարկե, Նժդեհն Արլենին քննադատում է նաև հայոց հոգեբարոյական նկարագրի դրական, համամարդկային գծերն անտեսելու կամ արհամարհելու համար, սակայն Նժդեհի քննադատության «մեխը» դրանով չէր պայմանավորված:

Նժդեհն անբարոյական չէր համարում հայոց թերիների հարցի արծարծումը, անբարոյական չէր համարում դրանց

բնութագրական գծերի, առանձնահատկությունների վերհանման փորձերը: Ազգային թերիների վերհանումն ու քննադատությունը նաև խիստ պատասխանատու պարտականություններ են, քանզի դրանց հաղթահարման համատեքստում հնարավոր կլինի տեսնել «ճակատագրի» հետագա բարյացակամ վերաբերմունքը ազգի, պետության նկատմամբ: Այստեղից առաջանում է արտաքուստ եթե ոչ հակասական, ապա գոնե խիստ անհասկանալի մի իրավիճակ. եթե ազգի թերիների թվարկումը և դրանց բացահայտումը խիստ կարևոր ու ազգօգուտ նշանակության աշխատանք է, ապա ինչո՞վ պետք է բացատրել Արլենի հասցեին ուղղված բարոյական բնույթի մեղադրանքներն ու քննադատությունը նմանատիպ աշխատանք կատարելու դեպքում: Ինչո՞ւ թեկուզ վերհանված թերությունների ձևով մեզ ներկայացված միևնույն արդյունքը, որը կարող է հանրօգուտ նշանակություն կամ գործառույթ ունենալ, մի դեպքում քննադատվում է, իսկ մյուս դեպքում՝ ոչ, մի դեպքում դատափետվում է, մյուսում՝ ոչ: Սա բացատրվում է նրանով, որ Նժդեհի համար այս կամ այն արարքի ազգօգուտ, հանրօգուտ կամ «մարդասիրական» գործառույթը կամ նշանակությունը դրան բարոյական «լիցք» հաղորդելու համար չի կարող անհրաժեշտ և բավարար պայման հանդիսանալ, քանզի նրա համար կարևոր է ոչ միայն և գուցե թե ոչ այնքան այն, թե «ի՞նչ արեցիր», այլ այն, թե «ինչո՞ւ արեցիր»: Այլ կերպ՝ ինչի՞ համար կամ ի՞նչ նպատակադրմամբ ես դու դա իրականացնում:

Նժդեհը քննադատում է որպես հետևանք դրական արդյունք ունեցած այս կամ այն վարքը կամ գործողությունը (դրանց «բարոյական» բնույթը), որոնց շարժառիթը պարտականության գիտակցումը չէ, այլ սեփական նեղ անձնային շահը, որը կարող է թաքնվել չգիտակցված, բայց իրականացված պարտականության ներքո: Այսինքն՝ Նժդեհը փորձում է ցույց տալ, որ բարոյականը նպատակադրության հետ սերտորեն շաղկապված է, որ «ի՞նչ արեց» հարցի պատասխանը «ինչի՞ համար արեց» հարցի անտեսման դեպքում՝ բարուց և չարից անդին է, բարոյականի նկատմամբ գտնվում է չեզոք դաշտում:

[19] Գ. Նժդեհ, Երկեր, հ.1, էջ 459:
[20] Նույն տեղում, էջ 458:
[21] Նույն տեղում, էջ 253:
[22] Նույն տեղում, էջ 253:
[23] Նույն տեղում, հ.1, էջ 128:
[24] Кант И. Собрание сочинений в 8-ми т., т. 7, М.: “ЧОРО”, 1994, с. 48.
[25] Գ. Նժդեհ, Նորահայտ մասունքներ, Եր., 2002, էջ 18:
[26] Кант И. указ. тр., с. 37-38.

## GAREGIN NZHDEH ABOUT THE CORRELATION OF POLITICS AND MORAL

**ARMEN SARGSYAN**
Research Student of YSU History of Philosophy Department

**Summary**

The problem of correlation of politics and moral occupies an important place in Garegin Nzhdeh’s creative legacy. In researches devoted to the studying of G. Nzhdeh’s works, this problem has been poorly examined to our time.

In the article the author examines the solution of this problem by G. Nzhdeh in comparison with the decision of the same problem in the frameworks of Maqiavelly’s doctrine and maqiavellism. In this article is settled the point of view according to which G. Nzhdeh solves the problem of correlation of politics and moral in the spirit of their “reconciliation” and, in essence, he considers unacceptable the points of view of Maqiavelly and maqiavellism concerning the same question.

## ГАРЕГИН НЖДЕ О СООТНОШЕНИИ ПОЛИТИКИ И МОРАЛИ

АРМЕН САРГСЯН
Аспирант кафедры истории философии ЕГУ

Резюме

Проблема соотношения политики и морали занимает важное место в творческом наследии Гарегина Нжде. В исследовниях, посвященных изучению трудов Г. Нжде эта проблема до сегодняшнего дня мало рассматривалась.

Автор статьи рассматривает решение этой проблемы в сравнении с решениями той же проблемы в рамках учения Макиавелли и макиавелизма. В статье отстаивается точка зрения, согласно которой проблему соотношения политики и морали Нжде решает в духе их “примирения” и, по существу, считает неприемлемыми точки зрения Макиавелли и макиавеллизма по тому же вопросу.

# ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

**ՀԵՆՁԵԼ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**
*Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց ազգային գաղափարախոսությունը որպես համակարգված դոկտրինա, որպես որոշակի «իզմ» և որպես աշխարհայացք, որի շրջանակներում տիրապետողն ազգային արժեքների բացարձակ գիտակցումն է, տակավին իր վերջնական ու ամբողջական սահմանումը չունի: Այդ ուղղությամբ լուրջ փորձեր են արվել, առաջադրվել են հայոց ազգային գաղափարախոսության տարբեր ելակետային հիմնադրույթներ, որոնք հայտնի են Հայկական հարց, Հայ դատ, Պահանջատիրություն[1], Ցեղակրոնություն[2] անուններով: Բնականաբար, այս գաղափարները չեն կարող լիովին արտացոլել հայոց ազգային գաղափարախոսության բոլոր կողմերն ու դրսևորումներն այն պարզ պատճառով, որ նրանցից յուրաքանչյուրը ներկայանում է ոչ թե որպես ձևավորված գաղափարախոսական համակարգ, այլ առանձին գաղափար: Անշուշտ, դա ամենևին չի նշանակում, թե հայ հասարակությունն անգաղափար ու առանց ազգային որոշակի արժեքների ապրող հանրություն է՝ զուրկ համազգային իդեալներից:

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհի բնիկները դեռևս տոհմատիրական հասարակարգում ունեին իրենց տոհմական գաղափարախոսության տարրերը՝ տոտեմիզմի տեսքով: Իրական կյանքի դժվարություններից ծնվել էր այն պարզունակ գաղափարը, թե տոհմը սերել է որևէ կենդանուց կամ բույսից, որն էլ դարձել է տվյալ տոհմի տոտեմը: Վերջինս սրբացվել է, իսկ տոհմը կոչվել է պաշտվող տոտեմի անունով: Տոտեմիզմը տոհմի աշխարհընկալումն էր, տոհմի յուրաքանչյուր անդամի և հանուրի ինքնության խորհրդանիշը, որին պաշտում ու այլազան վտանգներից պահպանում էին բոլոր տոհմակիցները:

Տոտեմիզմը՝ որպես քարեդարյան երևույթ, վերարտադրող տնտեսակարգում ձևավորվող ցեղային հանրույթի միջավայրում կորցնում է իր հասարակական ուժը: Երկրագործության ու անասնապահության զարգացմանը զուգընթաց սկսում են ձևավորվել աշխարհընկալման նոր կերպ ու եղանակներ: Տարերքի խուլ ուժերի դեմ անօգնական տագնապող մարդն անխուսափելի փորձանքները բացատրելու համար բնությունը լցնում է սեփական երևակայությամբ ստեղծված գերբնական ոգիներով: Այդ հավատալիքներն արդեն պարզունակ մտածողության արտահայտություններ էին, նախատրամաբանական մտքեր, որոնցով հնադարյան մարդը ձգտում էր ըմբռնել ու բացատրել իրեն շրջապատող բնական ու հասարակական երևույթները, որոնք անմիջականորեն կապված էին բովանդակ կյանքի հետ[3]: Երկրագործության զարգացմանը զուգընթաց՝ այս նոր հավատալիքները դառնում են ցեղի ինքնության գաղափարախոսությունը:

Անցումը նախնադարյան պարզ կապերից դասակարգային հարաբերությունների, դեպի ժողովրդի կազմավորումը, ուղեկցվում է տոտեմական ու դիցաբանական մտածողությունից փիլիսոփայական ու կրոնական մտածողության ձևավորմամբ: Մարդիկ գերբնական ուժերը սկսում են ծառայեցնել համաժողովրդական նպատակների իրականացմանը: Նոյ Նահապետի, Հայկի և Բելի, Տիգրանի և Աժդահակի, Արտաշեսի և Արտավազդի մասին առասպելները կազմավորվող ժողովրդի ինքնության արտահայտություններն են:

Որքան անմիջական է եղել հեթանոսության կապը դիցաբանության հետ, այնքան տվյալ ժողովրդի դիցաբանությունն ավելի ուժեղ է ազդել հեթանոսական գաղափարախոսության վրա: Հայ իրականության մեջ այդ կապն անմիջական է եղել: Կազմավորվող հայ ժողովրդի ձևավորվող գաղափարախոսության հիմքում ընկած էին երեք ելակետային գաղափարներ՝ 1. զտարյուն, արարչի կողմից արարված լինելու գաղափարը, 2. բնիկ լինելու, աստծո կողմից դրախտի վերածված հայրենիքի, հայրենի հողի ու ջրի օրինական տերը լինելու գաղափարը, 3. ազգային պետականության, պետական մտածողության ու ազգային բարձր արժանապատվության գիտակցությունը[4]:

Առասպելական հատկանիշներով հանդերձ՝ այս հիմնադրույթները ծնվել են պատմական կոնկրետ միջավայրում, կոնկրետ նպատակներով ու շահագրգռություններով և ենթարկվել են գաղափարական ընդհանրացման: Նախկին լուսավոր աստվածներն ու դյուցազունները դարձել են հայոց նախնիներ ու թագավորներ, կամ հայոց թագավորները փոխարինել են հին աստվածներին: «Առասպելաբանական նյութը եղել է առասպելաստեղծ ժողովուրդների և՛ ինքնարտահայտման ձևը, և՛ մտածողության ձևը, և՛ կյանքի ձևը»[5]:

Այս գաղափարները առաջադրել ու քարոզել են միջնադարյան բոլոր հայ լուսամիտ ու հեռատես մտածողները՝ Մաշտոցից ու Խորենացուց սկսած մինչև Միքայել Չամչյան: Ակնհայտ է, որ հայ ժողովուրդը դեռ շատ վաղ ժամանակներում ստեղծել է ոչ միայն գաղափարախոսական կուռ համակարգ, որն իր ակունքներում մեսիական բնույթ ուներ, այլև այդ համակարգն արտացոլող տերմինաբանություն:

Հայ ժողովրդի ինքնագիտակցման, համախմբման ու ինքնապահպանության գործում շատ մեծ դեր է խաղացել նաև քրիստոնեական գաղափարախոսությունը:

Աշխարհում առաջինը Հայաստանում քրիստոնե-

ությունը պետական կրոն հռչակելու գլխավոր պատճառներն էին` նախ` տնտեսական ու քաղաքական մասնատվածության պայմաններում քրիստոնեական եկեղեցին իր միաձույլ կառուցվածքով կենտրոնացված ուժեղ պետություն ստեղծելու գաղափարախոսության լավագույն հիմնավորումն էր. երկրորդ` պարսից հեթանոսական կրոնը` զրադաշտականությունը, քիչ էր տարբերվում հայկական հեթանոսական կրոնից, և հայոց ընտրանին` մտավորական ու քաղաքական վերնախավը, զգալով, որ հայոց հեթանոսական գաղափարախոսությունն անզոր է պատնեշ դառնալ զրադաշտականության կլանիչ նկրտումների դեմ, քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն: Սակայն երբ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց նաև հունա-հռոմեական աշխարհում, և հիմա էլ սրանք էին քաղաքականապես արդեն նվաճված Հայաստանում ձուլողական քաղաքականություն վարում, քրիստոնեությունը հայ ժողովրդի համար կարծես սկսում է կորցնել հայոց ինքնության պահպանման գործառույթը: Այս նոր պայմաններում անհրաժեշտություն զգացվեց ստեղծել Արևմուտքի ոտնձգությունները կասեցնող գաղափարախոսական համակարգ: Եվ հայ ժողովուրդն այդ բարդ խնդիրը ևս լուծեց համարձակ ու հեռահար քայլով. լուծման հիմքում դրվեց համաշխարհային քրիստոնեական գաղափարախոսության ազգայնացման և արևմտյանից նրա տարանջատման գաղափարը: Այս հանդուգն նպատակն իրագործվեց 6-րդ դարի սկզբին` օգտագործելով 451թ. Քաղկեդոնի 4-րդ Տիեզերական ժողովի կողմից ընդունված Քրիստոսի երկու բնության մասին բանաձևը: Արևմտյան եկեղեցին` Հռոմի գլխավորությամբ, ապացուցել փորձում և ընդունում էր, թե Քրիստոսը իրարից անկախ երկու բնություն ունի` աստվածային և մարդկային, և Արևելքում իր քաղաքական ու գաղափարական տիրապետությունը հաստատելու համար հետամուտ էր այդ գաղափարի անվերապահ պարտադրմանը: Հայերը 506 թ. Դվնո ժողովում, երբ սաստկացել էր Արևմուտքի ճնշումը, մերժում են վերոնշյալ բանաձևը և ընդունում, որ Քրիստոսը միայն աստվածային բնություն ունի: Երկաբնակության մերժումով հայ ժողովուրդը, փաստորեն, ազգայնացրեց քրիստոնեության համաշխարհային գաղափարախոսությունը և վերականգնեց նրա` իբրև էթնոպաշտպան կրոնական համակարգի գործառույթը: Հայ ժողովրդի համար դավանաբանական այս տարըմբռնումն ազգային-ազատագրական պայքարի նշանակություն ստացավ և շարունակվեց ամբողջ միջնադարում: Տեսական-դավանաբանական պայքարին զուգընթաց` մշակվեց նաև գործնական նշանակություն ունեցող ծիսական արարողությունների ինքնատիպ համակարգ, որը, անմիջականորեն ներգործելով ժողովրդի վրա, գաղափարը դարձրեց առօրյա կենսաձև: Այս ճանապարհով հայոց քրիստոնեական գաղափարներն ու եկեղեցին հաջողությամբ ապահովեցին աշխարհասփյուռ հայ ժողովրդի ինքնությունը, միասնությունն ու ազգապահպանությունն ամբողջ միջնադարում:

Հայ իրականության մեջ նույնպես ագրարային հարաբերություններից արդյունաբերականին անցման շրջանում սկսում է ձևավորվել հայ ազգը և նրա գաղափարախոսությունը: Վերջինս իր բնույթով ազգայնականություն էր, նացիոնալիզմ, իսկ «ազգայնականությունը,-գրում է Անտոնի Դ. Սմիթը,- գաղափարական շարժում է` նպատակամղված ազգի ինքնիշխանության, միասնության և ինքնության պահպանմանը»[6]: Անցումն էթնիկական-ժողովրդական ինքնըմբռնումից ազգայինի տեղի է ունենում հասարակական-տնտեսական, քաղաքական ու մշակութային արմատական տեղաշարժերի պայմաններում: Հայկական սփյուռքում բարձրացող երրորդ դասին` ազգային բուրժուազիային էր վիճակվել հաղթահարել տնտեսական կյանքի ավանդույթները: Այն ժողովուրդների մոտ, որտեղ երրորդ դասը ձեռք բերեց հատուկ կշիռ, ազգային գաղափարախոսությունը դրսևորեց քաղաքական ու տնտեսական ուղղվածություն, իսկ հայ իրականության մեջ, որտեղ երրորդ դասը մնաց սաղմնային վիճակում, ազգայնականությունը դրսևորվեց մշակութային ոլորտում: Մշակութային ազգայնականությունը ձգտում էր պահպանել ու վերականգնել ազգային արժեքները և հող նախապատրաստել քաղաքական ազգայնականության համար, որը հետամուտ էր համազգային ինքնաճանաչման, համախմբման, ինքնազարգացման և քաղաքական գիտակցության ակտիվացման: Ուսումնասիրությունները բերում են այն հետևության, որ հայոց ազգային գաղափարախոսության հիմքում ընկած էին հենց այս երեք` ազգային ինքնության, համախմբման և ազատագրման հիմնադրույթները: Բարրի Բյուզանի բնորոշմամբ` ինքնությունն «այն է, որի հիման վրա մարդկանց խումբն իրեն վկայակոչում է որպես ամբողջություն, այսինքն` որպես «մենք»: Դա նաև հասարակության ցանկությունն է և կարողությունը` պահպանելու լեզվի, մշակույթի միասնականության, կրոնի և ազգային ինքնության ու սովորույթների ավանդական ազգային նմուշները»[7]:

Ազգային ինքնությունը ենթադրում է ազգային մտածողության ինքնատիպություն, ինքնաճանաչում: Ազգային ինքնագիտակցության բովանդակությունը հանդես է գալիս որպես ազգային կեցության, ազգային անցյալի, անհատի ազգային կերպարի տարբեր ըմբռնումների ամբողջություն:

Թեև ազգային ինքնության մասին խոսում են բոլորը, սակայն քչերն են հիմնովին ըմբռնում այն: Օրինակ, բազմադարյան պատմություն և հարուստ մշակույթ ունեցող հայ ազգն արդյոք ճանաչո՞ւմ է ինքն իրեն, գիտի՞, թե ով է ինքը, որտեղի՞ց է գալիս և ո՞ւր է գնում: «Արդյո՞ք հայությունը ինքնաճանաչ է,- հարցնում է Գ. Նժդեհը և պատասխանում,- միշտ չէ, որ ինքնաճանաչ է եղել հայ ժողովուրդը»[8]: Պատմական փորձը ցույց է տալիս, որ ազգային ինքնագիտակցության զարթոնքի ակնթարթներում է միայն վերելք ապրել ազգային կյանքը, հոգևոր ներուժի նկատմամբ հավատն ու վստահությունն է կյանք տվել ազգին:

Անցյալի իմաստավորումը զուտ ճանաչողական ակտ չէ: Պատմական հիշողությունն ընդունում և պահպանում է իր մեջ այն, ինչի համար ազգային ինքնագիտակցությունն իր վրա պատասխանատվություն է վերցնում: Ազգային ինքնությունը տվյալ ազգի՝ հազարամյակների ընթացքում կերտված ազգային ոգու գիտակցումն է:

Այն հարցերի պատասխանները, թե ովքե՞ր ենք մենք՝ հայերս, ինչպե՞ս են մեզ բնութագրում ուրիշները, ինչպե՞ս ենք մենք բնութագրում ինքներս մեզ, բազմաթիվ են: Ամեն ինչ համեմատության մեջ է ճանաչվում, նույնն է նաև ազգային ինքնագիտակցության պարագայում: «Մենքի»-ի համեմատությունը «նրանց»-ի հետ ի հայտ է բերում բազում տարբերություններ: Ազգային «ես»-ն այժմ ինչպե՞ս է գիտակցում փոքր հայրենիք, մեծաթիվ ու մեծ գաղթօջախներ և աշխարհասփյուռ պանդուխտներ ունեցող հայ ժողովուրդը: Ակնհայտ է, որ նա իրեն ճանաչում է որպես մշակութաստեղծ ժողովուրդ, որին բախտ է վիճակվել ապրել մշակույթ ոչնչացնող ժողովրդի հարևանությամբ, խաղաղասեր ժողովուրդ՝ ռազմատենչի հարևանությամբ, հին ժողովուրդ՝ էթնոնորագոյացությունների հարևանությամբ, պետականաստեղծ ժողովուրդ՝ պետականություն ոչնչացնողների հարևանությամբ, օրինաստեղծ ժողովուրդ՝ անօրենների հարևանությամբ:

Արդ, ի՞նչ պետք է ինքնագիտակցի հայ ազգը, ո՞րն է նրա առջև ծառացած առաջնահերթ խնդիրը՝ գոյապահպանության երաշխիքը: Միմիայն ինքնահամախմբումը: Ինքնահամախմբման բնատուր հատկությունից է կախված յուրաքանչյուր ազգի կենսունակությունն ու հարատևությունը: Ինքնահամախմբման բնազդով է կենդանական աշխարհից տարանջատված մարդն ապրել իր տեսակի հետ:

Միլիոնավոր տարիների ջանքեր պահանջվեցին, մինչև մարդը կենսաբանական զարգացման առավել բարձր աստիճանում ձեռք բերեց ինքնահամախմբման գիտակցություն, որի արդյունքում ձևավորվեց մարդկային առաջին հանրությունը՝ տոհմական համայնքը: Ընդհանուր կենսատարածքի, ընդհանուր տնտեսության, ընդհանուր ծագման գիտակցության վրա ինքնահամախմբվեց տոհմական համայնքը: Նույն գործընթացի առավել արդյունավետ զարգացման վրա՝ որպես ինքնահամախմբման նոր մակարդակներ, առաջացան ցեղը և, հատկապես, ժողովուրդը կամ ազգույթը:

Բնամթերային տնտեսությունը, այնուամենայնիվ, էթնիկական նոր հանրույթին՝ ժողովրդին, պահում էր տնտեսական ու քաղաքական մասնատվածության պայմաններում:

Արդյունաբերական կամ բուրժուական հասարակարգում ձևավորվող ազգի տարբեր հատվածների միավորումը ուղեկցվում է համազգային շատ կառույցների՝ համազգային շուկայի, միասնական գրական լեզվի ու մշակույթի ստեղծմամբ: Մարդիկ ինքնահամախմբվում են ընդհանուր ծագման, ընդհանուր հայրենիքի, ընդհանուր լեզվի և հոգեկան կերտվածքի ընդհանրության գաղափարի շուրջ: Անտոնի Դ. Սմիթն այս կապակցությամբ գրում է. «Բայց կա ազգային միասնության իդեալի մեկ նշանակություն ևս: Ազգայնական լեզվում «միասնություն» նշանակում է սոցիալական համակեցություն, ազգի բոլոր անդամների եղբայրությունը մեկ ազգի մեջ»[9]: Այսուհանդերձ, ազգի ներքին տրոհվածությունն առանձին դասակարգերի, սոցիալական խմբերի, կուսակցությունների՝ անհնար են դարձնում ազգի լիակատար ինքնահամախմբումը: Եթե սրան ավելացնենք հայ ազգի աննախադեպ տրոհվածությունը տարբեր տերությունների, քաղաքակրթությունների ու գաղթավայրերի միջև, կհամոզվենք, թե ինքնահամախմբումը որքան դժվար և, միաժամանակ, որքան անհրաժեշտ է աշխարհասփյուռ հայ ժողովրդի գենոֆոնդը պահպանելու համար: «Միասնության հասկացությունը,- շարունակում է Դ. Սմիթը, - ունի նաև պարզ և ավելի քողարկված ազգայնական նշանակություն: Պարզագույն մակարդակում այն նշանակում է ազգային տարածքի կամ հայրենիքի (եթե այն բաժանված է) միացում և բոլոր ազգակիցների հավաքում նույն տարածքում: Նույնիսկ այստեղ ազգայնականները ներկայացնում են ավելի փիլիսոփայական գաղափար. հայրենիքից դուրս ապրող ազգակիցները համարվում են «կորած», և այն տարածքները, որտեղ նրանք են բնակվում, հատկապես հայրենիքին սահմանակիցները համարվում են «չվերադարձված» (չմիավորված), և պետք է դրանք վերադարձնել և «փրկել»: Սա ծնում է ազգայնական այնպիսի շարժում, ինչպիսին է իռեդենտիզմը»[10], այն է՝ ազգային շարժում, որի նպատակն է ազգի տարանջատված հատվածների միավորում և նախկինում կորցրած տարածքների վերամիավորում:

Պարզ է, որ հայ ժողովուրդը թվապես, տեխնիկապես, նյութապես ուժեղ չէ իր հակառակորդ հարևաններից: Սակայն ուժը միայն նյութական գործոնները չեն: Այստեղ կարևորվում է ինքնահամախմբման գաղափարի իրագործումը: Ինքնահամախմբումն ու բարոյական ուժն է գոտեպնդում փոքրաթիվ ժողովուրդներին ինքնազատագրման մեծ պայքարում:

Ինքնազատագրումը ենթադրում է սեփական ուժերով պատմական հայրենիքի ազատագրում և անկախ ու ինքնիշխան պետականության հաստատում:

Յանրահայտ փաստ է, որ ոչ մի ազգ իր զավակի մի կաթիլ արյունն անգամ հենց այնպես չի զոհաբերի ուրիշ ազգի ազատագրության գործին: Ամեն մի զոհաբերում հետապնդում է որոշակի շահեր ու նպատակներ. «Երբ փրկեն սրով ըստ օրինի թագավորաց, հարկաւորին ծառայ առնել իւրեանց»[11]: Ուրեմն՝ յուրաքանչյուր ազգ, եթե ուզում է ազատագրվել և ազատ, անկախ հայրենիք ու պետություն ունենալ, նախ և առաջ պետք է հույսն ինքն իր վրա դնի: Դիպուկ է ասել Գարեգին Նժդեհը. «...Իր ուժերից զատ ամեն ինչի ապավինող ժողովուրդը չի կարող ունենալ անկախ հայրենիք ու ազատ ապրելու հնարավորություն: Դժբախտ է այն ժողովուրդը, որը իր դժբախտություններն վերագրել է արտաքին պատճառներին, փրկու-

թյան հույսը դրել արտաքին ուժերի վրա: Մոռանում ենք, որ թշվառներին անկելանոց ու ապաստան են տալիս և ոչ թե անկախ հայրենիք»[12]:

Ինքնությունից ու համախմբման ընդունակությունից զուրկ ժողովուրդը չի կարող անկախ պետություն ստեղծել: Իսկ պետությունը ենթադրում է ինքնության քաղաքական գիտակցություն, պայքարելու ինքնավստահություն, կռվելու և հաղթելու հաստատակամություն: Պետք է ընդգծել, որ հայ ժողովուրդը օժտված է այդպիսի ընդունակություններով: Այդ են վկայում մեր ժողովրդի կերտած 10 պետությունները. պետություններ, որոնք ստեղծվել են ազգային-ազատագրական պայքարով այնպիսի աշխարհակալ պետությունների դեմ, ինչպիսիք էին Ասորեստանը, Պարսկաստանը, հունահռոմեական աշխարհակալությունները, Արաբական խալիֆայությունը, սելջուկյան Թուրքիան և այլն:

Ազգային պետության համար անհրաժեշտ է որոշակի կենսատարածք, պատմական հայրենիք:

Հայոց ազգային-ազատագրական պայքարը միշտ էլ նպատակամղված է եղել ամբողջ Հայաստանի ազատագրմանն ու անկախ պետականության վերականգնմանը:

Ազգային պետության սահմանները պետք է բնական լինեն՝ եզերված բնական սահմաններով՝ ծովերով, լեռներով, գետերով և այլն: Հայոց այդ բնական սահմանները Ն. Ադոնցը հետևյալ կերպ է ներկայացրել. «Հայկական բարձրավանդակը որոշակի մեծություն է, որը ոչ մի տարածայնություն թույլ չի տալիս: Ըստ Լինչի պատկերավոր արտահայտության, դա լեռնային տարածք է, որը հյուսիսում թեքվում է դեպի Սև ծովի ափերը, հարավում՝ Տիգրիսի երկու վտակների հովիտները, իսկ արևմուտքում հատվում է Եփրատի ջրերով:

Այդ սահմաններում Հայկական լեռնաշխարհը ներկայացնում է մի ինչ-որ ամբողջություն՝ աշխարհագրական, մշակութապատմական, հավասարապես և տնտեսական ու ընդհանուր առմամբ՝ ազգագրական առումով: Այստեղ կազմավորվող պետությունը չի կարող համարվել կայուն, եթե այն չի գրավում այդ լեռնային տարածքը ամբողջությամբ՝ իր բնական թեքվածքներով»[13]:

«Իսկ այսօրվա հայոց հայրենիքի ռազմական բոլոր կետերը խլված են,- ցավով գրում է Նժդեհը,- նա պաշարված է մեր դարևոր թշնամու կողմից: Այդ պաշարումը դրված է այնպիսի հաշիվներու վրա, որոնք մի ակնհայտնի իմաստ ունեն՝ հարմար պահին նվազագույն զոհաբերություններով բնաջնջել հայությանը»[14]: Դա բառի բովանդակ ու նախնական իմաստով հայրենիք չէ, այլ՝ հայրենի երկրի մի անկյուն, հազիվ գոյատևելու տարածք, որն անկախ ու ինքնիշխան ազգային պետության համար բավարար համարել չի կարելի:

Ինքնության, ինքնահամախմբման և ինքնազատագրման հիմնադրույթները համակարգվեցին հայ ազգային երեք կարևոր պատմափուլերում՝ 18-րդ դարում, 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարում:

18-րդ դարում, երբ ազգայնանում էր Եվրոպան, ազգայնանում էր նաև հայ ժողովուրդը: էթնիկական-ժողովրդական մտածողությունից անցում էր կատարվում դեպի ազգայինը: Առաջադրվում ու մշակվում էին հայոց ինքնության հիմնադրույթները:

Համաեվրոպական ազգային-ազատագրական շարժումները, ձևավորվող ազգայնական գաղափարախոսություններն ու բուրժուական հեղափոխություններն իրենց շրջապտույտի մեջ են առնում հետամնաց, ռազմաֆեոդալական հասարակարգում ապրող Թուրքիայի ու Պարսկաստանի լծի տակ հեծող հայ ժողովրդի առաջադեմ գործիչներին: Հաղորդակցության միջոցների զարգացումն ու հեռավոր երկրների հետ հայ վաճառականների ու մտավորականների հաստատած կապերի ընդլայնումը նպաստում էին նաև գաղափարների փոխանակմանը:

Հայկական մշակույթի՝ եվրոպականի հետ համընթաց-համահունչ զարգանալու ցայտուն օրինակ է Մադրասի հայ համայնքի մշակութային գործունեությունը: Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի և հատկապես Մովսես Բաղրամյանի ջանքերով դրվում են հայոց ազգայնական գաղափարախոսության հիմքերը: Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» քաղաքական-հրապարակախոսական երկը աներկբայելիորեն դառնում է հայոց ազգայնական գաղափարախոսության հրովարտակը[15]:

Հայ ժողովուրդը 18-րդ դարում արդյո՞ք ինքնաճանաչ էր հարցին Մ. Բաղրամյանը բացասական պատասխան է տալիս՝ գտնելով, որ ինքն իրեն ճանաչելու համար ազգը պետք է որոշակի գիտելիք ունենա իր մասին, առանց որի՝

«Այսպես հավետ ու հարատև վտանգվելով՝ հալածանքի ու փորձության մեջ կմնանք,

Մինչև որ մեր թշվառությունը, ավերվելն ու տառապանքը գիտակցել կարողանանք»[16]:

Այդ վիճակից դուրս գալու համար Մ. Բաղրամյանը հորդորում է հայ ծնողներին՝ կրթել ու մարզել իրենց որդիներին, հետամուտ լինել գիտության և իմացության. «Եվ մանավանդ թող արվեստին ազատական տիրապետել միշտ ցանկանան»[17]:

Ազատական արվեստ ասելով՝ Բաղրամյանը ի նկատի ունի ռազմահայրենասիրական համակարգված դաստիարակությունը: Հայրենիքի ճակատագրի պես բարդ է հայ երիտասարդի խառնվածքը, նշում է Բաղրամյանը և հայ հոգևորականներից պահանջում՝ հպատակություն ու հնազանդություն քարոզելու փոխարեն՝ ոգեկոչել ու գոտեպնդել նրան:

Մ. Բաղրամյանի հորդորների հասցեատերը դեռափթիթ հայ մանուկը, պատանին է, որի մեջ հավատ և արժանապատվություն սերմանելու նպատակով նա դիմում է հայոց պատմության փառահեղ դրվագների օգնությանը: Մեծ է պատմության ուսուցողական նշանակությունը, այնքան մեծ, որ բոլոր հին ժողովուրդների մտավորականներն անդրադարձել են դրան, իսկ պատմություն չունեցող ժողովուրդների մտավորականները հետին թվով սարքել են այն:

Մ. Բաղրամյանը քաջ գիտակցում էր, որ պարսկա-

թուրքական լծից Հայաստանի ազատագրումը և անկախ պետություն ստեղծելու կարևորագույն պայմանը նախ՝ հայրենիքի գոյության գիտակցումն է, ապա՝ նրա իրական տերերի մարդկային, նյութական ու ոգեղեն ներուժի բացահայտումն ու համախմբումը: Հենց այս գիտակցումով ավարտելով հայոց պետականության պատմության շարադրանքը՝ նա ներկայացնում է հայոց դրախտային հայրենիքը: Բաղրամյանի հայտնագործած հայրենիքը համայն հայության հայրենիքն է, հայության, որի մեծ մասը, կտրվելով հայրենի հողից, կորցրել է ոչ միայն հայրենիքը, այլև նրա գաղափարը, զրկվել պատմական հիշողությունից, դարձել անդեմ ու անուժ ամբոխ: Հենց նրանց՝ աշխարհասփյուռ հայությանն է Մովսես Բաղրամյանը ներկայացնում իր փառապանծ, բայց մոռացված հայրենիքը:

Պատմական Հայաստանում ապրող հայ բնակչության թիվը Բաղրամյանը հասցնում է մոտ 14 միլիոնի, իսկ նրանցից գանձվող հարկերը՝ շուրջ 4 միլիոն 180 հազար պարսկական թումանի: Կարևորելով ազգի մարդկային ու նյութական այս ներուժի համախմբման խնդիրը՝ Բաղրամյանը գրում է. «Ինչպես որ միատեղ հավաքված հարյուր կամ հիսուն տղամարդու մեջ ավելի զորություն և ուժ է լինում, քան հազարների մեջ, որոնք միմյանցից հեռու են ու անջատ, նույնպես և սովորաբար միշտ էլ ավելի հզոր է որևէ փոքրիկ ազգ կամ ցեղ, որ միաբան է, քան թե անսեր ու անմիաբան մեծ ազգը»[18]:

Չկան ուժեղ ու թույլ ազգեր: Կան ինքնաճանաչ ու ինքնահամախմբված ազգեր՝ անկախ ու ինքնիշխան, և կան անգիտակից ու անմիաբան ազգեր՝ կորած, անանուն ու անհիշատակ:

Որպես ինքնաճանաչ ու ինքնահամախմբված ազգի՝ Բաղրամյանը բերում է ռուսների օրինակը.

«Ահավասիկ, ազգը ռուսաց, որն այնքան նվաստագույն էր, ներկայումս բոլորից հզորացավ:

Եվ ինքն իրեն ազատելով դրացիների հալածանքից՝ կարողացավ դառնալ նույնիսկ աշխարհակալ»[19]:

Ինքնազատագրումն է միակ ելքը, ընդգծում է Բաղրամյանը, դրսի հույսերը ապարդյուն են: «Ու ահա մոտ չորս հարյուր տարի է, որի ընթացքում թեպետ մեր նախնիներն ու առաջնորդները մերթ ընդ մերթ դիմեցին քրիստոնյա հզոր դրացիներից շատերին՝ մեր տառապանքներին հարեհաս լինելու համար, սակայն մինչև օրս ոչ ոք մեզ սատար չեղավ ու ձեռք չմեկնեց, օգնության չհասավ...»[20]:

Մեծ արհավիրքների ենթարկված ժողովրդից առավելագույն ջանքեր են պահանջվում վերականգնելու համար հոգու կորովը: Նա սխալ ըմբռնում ունի պատերազմի և խաղաղության մասին:

«Գուցե իրենց հայրենիքի համար մեռնելն համարում են տարապարտուց,

Եվ կարծում են, թե բոլորը զոհվելու են, ով պատերազմ գնա և մարտ տա թշնամուն,

Չեն հասկանում, որ թիվ չկա, ոչ էլ հաշիվ նրանց, որոնց առանց կռվի անագորույն մեր ոսոխները դարձրին սրի ճարակ,

Մինչ կոտորված մարդկանց մի մասն էլ բավական էր ոչ միայն իրենց, այլև երկիրը մեր ազատելու:

Արդ, ավելի լավ կլիներ, եթե, ուրեմն, ազգի մի մասը կյանքը հանուն իր ազգի տար,

Որով և ազգը ամենայն, փարթամացած ու ճոխացած, կարողանար ըստ փափագի ազատ-արձակ պայծառանալ»[21]:

Այսպիսով՝ ինքնաազատագրման գաղափարը Բաղրամյանը հանգեցնում է ինքնազոհության գաղափարին:

Որպես ինքնազատագրված հայ ազգի հայրենիք ու ինքնիշխան պետության կենսատարածք՝ Բաղրամյանը ներկայացնում է Հայկական լեռնաշխարհն իր 15 նահանգներով ու հարակից հայաբնակ շրջաններով: Այդ հայրենիքը տարածվում է Կասպից ծովից մինչև Կորդվաց լեռները և Վիրքից մինչև Ասորեստան: Այս բնատարածքում կերտվելիք ինքնիշխան պետության համար էլ Մ. Բաղրամյանի մերձավոր բարեկամ Շ. Շահամիրյանը կազմեց սահմանադրության նախագիծ[22]:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ հայոց ազգային գաղափարախոսության՝ ազգայնականության հիմնադիրը Մովսես Բաղրամյանն է: Այդ գաղափարախոսությունը ենթադրում է՝ պարսկա-թուրքական լծի տակ հեծող հայ ժողովրդի և աշխարհասփյուռ հայության ազգային ինքնագիտակցության բարձրացում, ինքնահամախմբում և ինքնազատագրում: Պատմական Հայաստանի ամբողջ տարածքում ազգային պետության կերտման գաղափարական հիմնավորումն է Մ. Բաղրամյանի ազգայնականությունը:

Սակայն նրա այս վեհ գաղափարները լիովին չընկալվեցին ժողովրդի կողմից: Պատճառն այն էր, որ հայ իրականության մեջ ազգային զգացումները դեռևս թույլ էին: Դրա համար չկային անհրաժեշտ սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային հիմքեր: Այդ հիմքերը ստեղծվեցին ագրարային հարաբերություններից արդյունաբերականի անցման շրջանում, որը Հայաստանում և հարակից շրջաններում տեղի ունեցավ 19-րդ դ. կեսերին: Այս շրջանում սկսվում է նաև ազգային զարթոնքը: Որոշակի էթնիկական կենսաձևից (ժողովուրդ) աստիճանաբար անցում է կատարվում դեպի ազգայինը: Ազգային կյանքի աննախադեպ աշխուժացումը պայմանավորված էր 1861 թ. Օսմանյան կայսրությունում իրականացված բարեփոխումներով և թանզիմաթով, որոնց շնորհիվ պայմաններ են ստեղծվում նոր հարաբերությունների ձևավորման և հասարակական նոր ուժերի առաջացման համար: Միաժամանակ, նոր իրավիճակում մեծանում է արևմտահայության բնաջնջման վտանգը: Ինչպես նշում է Էռնեստ Գելները, միջնադարի համեմատաբար հանդուրժող թուրքին հակառակ՝ դրանց յաթաղանավոր հաջորդներն արդեն միայն հարկերով ու հնազանդությամբ չբավարարվեցին. սրանց արդեն հպատակների մշակութային ու լեզվական արժեքներն էին պետք[23]:

Այս իրավիճակում տարերայնորեն բարձրանում է վտանգված ազգի քաղաքական ակտիվությունը:

Ազգային ինքնության հիմնախնդիրը նորովի է ընկալվում համազգային աղետի սպառնալիքի առկայության պայմաններում: Ինքնության հարցը նորից ու նորովի վերարծարծում է հայոց պատմության համապարփակ թեման, ինքնահամախմբումը առաջադրում է արևելահայ և արևմտահայ հատվածների ազգային միասնության գաղափարը, իսկ ինքնազատագրումը ծնում է հայկական հարցը:

Ասպարեզ է գալիս հրապարակախոսների, պատմաբանների ու գրողների մի տաղանդավոր սերունդ, որը լծվում է առաջադրված ազգային խնդիրների լուծման գործին: Գործունեության լայն ասպարեզ են ստանում նաև քաղաքական կուսակցությունները, որոնք իրենց տրամադրության տակ ունեին քաղաքական ազդեցության ավելի շատ լծակներ՝ քարոզչության, քաղաքական դաստիարակության ու ազգային ինքնահամախմբման միջոցներ:

Ինքն իրեն ճանաչելու և իր գլխին կախված վտանգի ահագնությունը գիտակցելու անհրաժեշտությունը դառնում է ազգի կենսագոյի գլխավոր պայմանը: Ղևոնդ Ալիշանը, Մաղաքիա Օրմանյանը, Հակոբոս Տաշյանը, Գարագաշյանը, Աբովյանը, Րաֆֆին, Ծերենցն ու Մուրացանը նախընտրեցին քաղաքակիրթ աշխարհին ու հենց իրեն՝ հայ ժողովրդին ներկայացնել հազարամյակներով չափվող հայոց փառահեղ անցյալի գոտեպնդող դրվագները:

Հայ պատմավեպերում պատկերվում են հայրենանվեր ու արժանապատիվ շինական հայը՝ Խութեցի Հովնանի ու Աղասու կերպարով, հայրենիքի ազատության ու ինքնիշխանության համար մաքառող թագավորը՝ Արշակի ու Աշոտ Երկաթի կերպարով, քաջարի զորականը՝ Վարդանի ու Դավիթ Բեկի կերպարով: Հայ գրողի տաղանդավոր ուղեկցությամբ նրանք մտնում են յուրաքանչյուր հայի խրճիթ, հայրենասիրությամբ ու ազգային հպարտությամբ ոգևորում ու ոգեկոչում յուրաքանչյուր հայի:

Նույն առաքելությունն են կատարում պատմաբաններն ու հրապարակախոսները: Ղևոնդ Ալիշանն իր ընթերցողի հետ «շրջում է» պատմական Հայաստանի Այրարատ, Շիրակ, Սյունիք ու Սիսական աշխարհներում, ներկայացնում հայրենիքի այդ բաղձալի հատվածների բնաշխարհը, պատմությունն ու պատմական հուշարձանները: Նրանք իբրև կենդանի դասագիրք ներկայացնում են ազգային հերոս նախնիների հայրենանվեր գործերի ու առաքինությունների ընթացքը, որից ստեղծագործ կյանքի ու հերոսության դասեր էին առնում սերունդները:

Հերոսական էջեր շատ կան հայոց պատմության մեջ: Բայց չկար դրանց անջնջելի դրոշմը հայի հավաքական գիտակցության մեջ: Ահա այդ ինքնագիտակցումն էր, որ կերտեցին հայոց մեծերը 19-րդ դարի 2-րդ կեսին: Պատմության իմաստը նրանք ներկայացրին պատմական ընթացքի ներսուզում-բացահայտումներում, այդ իսկ պատճառով նրանց պատմափիլիսոփայությունը ներկայանում է որպես ապագայի մոդել, որով պատմությունն ապագայի հետ ներկայի աղերսն ու կապն է դառնում: Ազգի ինքնաճանաչումը ենթադրում է ազգի ինքնահամախմբման և ինքնազատագրման ուղիների հայտնագործում:

«Ինքնապաշտպանության գաղափարը գործնականացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն հայի ձեռքին զենք դնել, այլև կրթել նրա ստրկացած բնավորությունը, զարգացնել անոր մեջ մարդկային արժանապատվության գաղափարը»[24]:

Պատերազմներում ու դիվանագիտության մեջ տանուլ տված ազգին դժվար էր համախմբել: Անհատը, կորցնելով համազգային ապահովության հույսը, ձգտում է ավելի փոքր համախմբումներով պահել իր գոյությունը: Այդ պայմաններում թուլանում է համազգային կապը, և ուժեղանում բարեկամականն ու ընտանեկանը: Տարանջատված ու աշխարհով մեկ սփռված անապահով հայության մեջ հետզհետե գերակշռում է եսակենտրոն հոգևոր նկարագիրը:

Տարբեր սոցիալական խավերի ու շերտերի բախումները, տարբեր պետությունների վրա հույս դնելը և ազգի առջև ծառացած խնդիրների գրեթե անլուծելի լինելը հնարավորություն չեն տալիս համախմբել ազգի ցաքուցրիվ ներուժը և պատմության բախտորոշ պահերին հանդես գալ միասնականորեն ու հավաքական կերպով: Ահա այս իրավիճակն է թելադրում, որ 19-րդ դարի հայ հանրային միտքը կերտողները կարևորում են ազգային միասնության և ինքնահամախմբման գաղափարը, ձգտում ազգային զգացումով և սթափ գիտակցությամբ զինել հայությանը, սովորեցնել հային՝ ընդհանուրի երջանկության մեջ փնտրել իր անձնական երջանկությունը: Ընդհանրացնելով անցյալի փորձը՝ Րաֆֆին ազգային ազատագրական շարժման դասերից այն հետևությունն է անում, թե ազգային դժբախտության պատճառը անմիաբանությունն է, որը հայի վրա դրոշմել է դավաճանի խարանը: Հայրենիքը մեկ է, հայրենասիրությունը՝ բացառիկ նվիրում այդ մեկին, որին պետք է զոհաբերել ամեն ինչ: Հայրենիքի ազատագրության համար ասված խոսքերից անձնազոհության գիտակցումով ամենատպավորիչը, թերևս, Մ. Նալբանդյանի հետևյալ քառատողն է՝

Ամենայն տեղ մահը մի է.
Մարդ մի անգամ պիտ մեռնե,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի[25]:

Ստ. Նազարյանը, Մ. Մամուրյանը ջանք չէին խնայում ոչնչացնել ռուսահայերի ու թուրքահայերի միջև գոյություն ունեցող անջրպետը: «Հեգ և ստրուկ ժողովրդին առաջին և միակ ազատությունն ինքն է,- գրում է Մ. Մամուրյանը,- իր ներքին ուժն է, իր միասնությունն ու հաստատ կամքն է»[26]:

Հայաստանի ինքնազատագրման հարցը քննարկվող ժամանակահատվածում ներկայանում է որպես արևմտահայության ազատագրության հարց, որը պատմության մեջ մտավ «Հայկական հարց» անունով:

«Հայկական հարց» ասելով՝ ժամանակակից հայ քաղաքագիտությունը ենթադրում է հայ ժողովրդի

քաղաքական պատմության հիմնախնդիրների այն ամբողջությունը, որոնք կապված են պետականության վերականգնման և պատմական բնօրրանում ազգի աշխարհասփյուռ հատվածների համախմբման հետ: Սակայն «Հայկական հարցը» այս փուլում սահմանվում է որպես արևմտահայերի վիճակի և ճակատագրի հարց: Սան-Ստեֆանոյի որոշումները միջազգային դիվանագիտության խաղացանկ են մտնում «Արևմտյան Հայաստանի բարենորոգումներ», «Ինքնավարության խնդիրներ», «Հայկական հարց» անուններով, իսկ Բեռլինի վեհաժողովը սահմանում է. «Բարձր Դուռը հանձն է առնում հայաբնակ վայրերում անհապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»[27]:

Ինքնազատագրման համար ծավալված պայքարի այս դժվարին պահին փաստորեն առաջադրվեց «չարյաց փոքրագույնի» հիմնադրույթը, որի համաձայն՝ հայոց անկախությունը պետք է ձեռք բերվեր Արևմտահայաստանում, սեփական ուժերով և Ռուսաստանի աջակցությամբ: Բնականաբար, արևելահայերի հարցն ինչ-որ չափով լուծված էր համարվում, որովհետև եթե ռուսական տիրապետությունը հայերին բերում էր գաղութացում, ապա թուրքերինը տանում էր ոչնչացման: Թուրքերը հայ ժողովրդին այլընտրանք չէին թողել: Հայոց պատմական հայրենիքում կամ թուրքերը պետք է կառուցեին իրենց ազգային պետությունը, կամ էլ հայերը վերականգնեին իրենց կորցրածը[28]:

Պատմության դժնդակ պահին հայ ժողովուրդը չկարողացավ համախմբվել, որի հետևանքով չլուծվեց ինքնազատագրման խնդիրը գոնե «Հայկական հարցի» շրջանակներում: Դեռ ավելին՝ տեղի ունեցավ մարդկության պատմության ամենաասահմռկեցուցիչ ոճրագործությունը՝ հայոց ցեղասպանությունը: Բնաջնջվեց ու տարագրվեց արևմտահայությունը:

Այսուհանդերձ, 18-րդ դարից նոր որակ ու թափ առած ազգային-ազատագրական շարժումն ու նրա գաղափարախոսության քարոզչությունը տվեցին իրենց շոշափելի արդյունքը: 1918 թ. Արևելյան Հայաստանում վերակերտվեց հայոց պետությունը, իսկ ցեղասպանության ենթարկված արևմտահայության փրկված զանգվածները, սփռվելով աշխարհով մեկ, իրենց մեջ ուժ գտան գոյատևելու, հիմնադրելու ու աշխուժացնելու հայոց գաղթօջախները: Նոր իրավիճակում նոր խնդիրներ առաջացան: Առաջին պլան մղվեց տարագրված հայության գենոֆոնդի պահպանման՝ ազգային ինքնության և համախմբման խնդիրը. խնդիր, առանց որի լուծման՝ անհնար ու անիմաստ է միացյալ, ազատ ու անկախ Հայաստանի կերտումը:

Ինքնությունն այս փուլում ենթադրում է սփյուռքում ծնված հայրենազուրկ երիտասարդությանն ինքնաճանաչ պահելու խնդիրը, ինքնահամախմբումը ենթադրում է աշխարհով մեկ սփռված հայությանը համահավաք պահելու խնդիրը, իսկ ինքնաազատագրումը սահմանափակվում է Հայ դատի ու Պահանջատիրության հիմնախնդիրներով: Հայ դատը նշանակում է ցեղասպանություն իրականացրած ազգի դատապարտում համաշխարհային հանրության կողմից, Պահանջատիրությունը նշանակում է ցեղասպանություն իրականացրած ժողովրդից հատուցման պատասխանատվություն:

Հատկանշական է, որ Հայաստանում ընդամենը յոթ տասնամյակ գործած խորհրդային վարչակարգի պայմաններում կայացավ հայ ազգը՝ 20-րդ դարի իր ողջ ձեռքբերումներով: Անշեղորեն ծաղկեց նրա մշակույթը, առավել ընդգծվեց ազգային ինքնատիպությունը, խորացավ արժանապատվության զարգացումը: Սակայն չունենալով ինքնիշխան կարգավիճակ՝ կենտրոնի հարկադրանքով հայրենական իշխանությունները ոչ միայն չնպաստեցին ազգային գաղափարախոսության զարգացմանը, այլ խիստ թշնամական դիրք բռնեցին ցանկացած ազգայնականության նկատմամբ:

Այս պայմաններում ազգային գաղափարախոսության հիմնադրույթների մշակողն ու կրողը դառնում է սփյուռքը: Սակայն այն ևս միատարր ու միակամ չէր: Այն ներկայանում է և՛ որպես կազմակերպված գաղթօջախ, և՛ որպես պանդխտության հանգրվան:

Գաղթօջախն այն է, որտեղ հայ զանգվածները օտար միջավայրում պահում են ազգային նկարագիրը և իրենց ազգային հատկանիշներով և համապարփակ կյանքով առանձնանում հյուրընկալող ժողովրդից: Գաղութի՝ որպես ազգային հավաքական կեցության ձևի հիմքում ընկած է կրոնի, ավանդույթների, լեզվի ու կրթության պահպանության գործը: Հայկական գաղթօջախների գոյությունն ամբողջությամբ ազգային ինքնության պահպանման համար ծավալված լուռ ու տևական մաքառման արդյունք է:

Այլ է պանդուխտի կարգավիճակը: Պանդխտությունը, երկրի տնտեսական ու քաղաքական ծանր կյանքով թելադրված, ապրուստ վաստակելու նպատակով արտագնա աշխատանքի մեկնած զանգվածն է: Հայոց մեջ այն արմատավորվել է օտար նվաճողների տիրապետության ժամանակ և լայն տարածում գտել 19-20-րդ դարերում: Հատկանշական է, որ 90-ական թվականներից զանգվածաբար արտերկիր մեկնողների մեծ մասը հենց աշխատանք փնտրողներն են:

Հայության այս հատվածի համախմբման գործն առավել դժվար, եթե չասենք՝ անհնար է: Միակ ելքը հայրենիքի տնտեսական բարգավաճումն է, որով էլ պայմանավորվելու է նրանց վերադարձը: Եթե նախկինում թույլ էին կապի ու հաղորդակցության միջոցները, և նույնիսկ շատ հզոր գաղթօջախներ ի վերջո ձուլվում էին հյուրընկալող ժողովրդին, այժմ պատկերն այլ է: Կապի և հաղորդակցության միջոցների աննախադեպ զարգացումը և խորհրդային վարչակարգի արգելքների վերացումը, Հայաստանի Երրորդ հանրապետության վարած ներկա քաղաքականությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում հայության համախմբման համար: Տնտեսական կապերի սերտացումը համախմբում է հայ գործարարներին,

գիտամշակութային կապերի աշխուժացումը համախմբում է մտավորականներին, համահայկական խաղերի կազմակերպումը` հայ պատանիներին ու աղջիկներին:

Բազմաթիվ սերունդների փափագ-երազի իրականացումը` պատմական Յայաստանի տարածքում միացյալ ու ինքնիշխան պետության ստեղծումը, կախված է հայոց գենոֆոնդի պահպանումից, նրա ինքնության, ինքնահամախմբման ու ինքնազատագրման ներունակությունից:

Այս է հայոց ազգային գաղափարախոսության, հայոց ազգայնականության մեր ըմբռնումը: Այն ունի իր հստակ նպատակը, և ցանկալի է, որ ունենա նաև իր անունը. անուն, որն ընկալելի ու նվիրական լինի յուրաքանչյուր հայի համար: Այդ անունը պետք է խորհրդանշի հայի ոգին, իսկ նրա ոգու մեջ վեր է խոյանալու Յայոց Սրբազան Լեռը: «Անհամար թելերով է կապված իր գետին, իր Վոլգային ռուսական ոգին,- գրում է Գ. Նժդեհը: - Ծովի, ծովեզրերի ծնունդ է յոյնը: Անապատն է կաղապարել արաբի էությունը: Իսկ հայ էությունը մշակելու գործում առյուծի բաժինը ընկնում է Յայոց լեռներին: Մասիսն է դայակը հայ ոգու»[29]:

Արարատի բիբլիական պաշտամունքը, աշխարհասփյուռ հայությանը Արարատ լեռան շուրջը համախմբելու գերագույն նպատակը թելադրում է հայոց ազգային գաղափարախոսության անունը կապել Արարատի հետ` անվանելով այն **ԱՐԱՐԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:**

---

[1] Տե՛ս Լ. Խուրշուդյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., 1999, էջ 12:
[2] Տե՛ս Գ. Նժդեհ, «Հոգևոր նորոգության խնդիրներ», «Խռովք» ամսագիր, Սոֆիա, 1932, թիվ 1:
[3] Տե՛ս Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Եր., 1931, էջ 275:
[4] Տե՛ս Հ. Մանուչարյան, Հայության գոյապահպանության գաղափարախոսությունը, Եր., 1994, էջ 34:
[5] Տե՛ս К. Г. Юнг. Душа и миф. Шесть архетипов, Киев – Москва, 1997, стр. 15.
[6] Անտոնի Դ. Սմիթ, Ազգային ինքնություն, Նեւադա, 1991, էջ 74:
[7] Տե՛ս Միջազգային հարաբերությունների արդի տեսությունը, Եր., 2001, էջ 245:
[8] Տե՛ս Գարեգին Նժդեհ, Ընտիր երկեր, Եր., 2001, էջ 245:
[9] Անտոնի Դ. Սմիթ, Ազգային ինքնություն, Նեւադա, 1991, էջ 76:
[10] Նշվ. աշխ., էջ 76:
[11] Տե՛ս Մատենադարան, ձեռ. թիվ 2699, էջ 102 ա:
[12] Տե՛ս Գ. Նժդեհ, նշվ. աշխ., էջ 64:
[13] Տե՛ս Ն. Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Եր., 1989, էջ 124:
[14] Գ. Նժդեհ, նշվ. աշխ., էջ 59:
[15] Տե՛ս Մ.Բաղրամյան, նշվ. աշխ., Եր., 1991:
[16] Նշվ. աշխ., էջ 16:
[17] Նույն տեղը, էջ 45:
[18] Տե՛ս Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 104:
[19] Նույն տեղը, էջ 164:
[20] Նույն տեղը:
[21] Նույն տեղը, էջ 36:
[22] Տե՛ս Շ. Շահամիրյան, Որոգայթ փառաց, Եր., 2002:
[23] Տե՛ս Էռնեստ Գելներ, Ազգերը և ազգայնականությունը, Եր., 2003, էջ 61:
[24] Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947, էջ 173:
[25] Մ.Նալբանդյան, ԵԼԺ:
[26] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1876, էջ 5:
[27] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում /1828-1923/, Եր., 1972, էջ 30:
[28] Տե՛ս Լ.Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 116:
[29] Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 245:

---

## ON ARMENIAN NATIONAL IDEOLOGY ISSUE

HENZEL MANOUCHARYAN
Doctor of Philosophy, Professor

**Summary**

Like people who had passed long historical periods, Armenians also have had its element of ideology, in each epoch. However, national ideology, nationalism, had begun in the 18th century and had two stages of development in the second part of 19th century and in the 20th century. There are underlined three included directions in Armenian nationalism-national originality, self consolidation and self development. It is suggested to call this Armenian systemization ideology **ARARATAKANUTYUN.**

## ОБ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕОЛОГИИ

ЭНЗЕЛ МАНУЧАРЯН
Доктор философских наук, профессор

Реюме

Армяне, как те нации, которые прошли долгий исторический путь, в каждой эпохе имели элементы своей идеологии. Однако, национальная идеология - националистичность образовалась в 18-ом веке и имела два периода развития - во второй половине 19-ого века и в 20-ом веке. В основе националистичности армян лежат три всеобщие фундаментальные положения - идеология национальной сущности, самоконсолидация и саморазвитие. Предлагается назвать эту системную идеологию армян АРАРАТАКАНУТЮН.

# «ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ» ՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

***ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ***
*Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**10-14**-րդ դարերի հայոց մշակույթում տեղի ունեցած փոփոխությունների մեկնաբանման ու գնահատման հարցում հայագիտական գրականության մեջ գոյություն ունի երկու իրարամերժ մոտեցում: Հետազոտողների մի մասն այդ դարերի մշակույթը բնորոշում է որպես Վերածննդի շրջանի, իսկ մյուս մասը՝ որպես միջնադարի մշակույթ: Մշակութաբանական և փիլիսոփայական առումներով այդ տարաձայնությունն սկզբունքային բնույթ ունի, որովհետև, մի կողմից, վերաբերում է տվյալ դարերի մշակութային երևույթների, բազմաթիվ մտածողների ու գործիչների հայացքների գնահատության, մյուս կողմից՝ առհասարակ հայ մշակույթի զարգացման ներքին տրամաբանության և ինքնատիպության խնդիրներին: Իսկապես, մի՞թե անկարևոր է այն հարցը, թե Գրիգոր Նարեկացին, Հովհաննես Իմաստասերը, Ներսես Լամբրոնացին, Հովհաննես Երզնկացին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ միջնադարի՞, թե՞ Վերածննդի դարաշրջանի մտածողներ են, կամ՝ ունեցե՞լ է արդյոք հայոց մշակույթը զարգացման ուրույն տրամաբանություն, թե՞ դա ընթացել է եվրոպական (արևմտյան) կամ արևելյան մշակույթների զարգացման ուղիով: Այս հարցերը, որոնք առաջին հայացքից թվում են հեշտ լուծելի, վիճահարույց են և կարոտ պարզաբանման ու հիմնավորման:

20-րդ դարի 40-60-ական թվականներին հայագիտական գրականության մեջ սկսեց շրջանառվել «Հայկական Վերածնության» տեսությունը, որը մի փորձ էր «Արևելյան Վերածնություն» հետազոտական հարացույցի շրջանակներում վերլուծել և գնահատել 10-14-րդ դարերում հայոց մշակույթում տեղի ունեցած փոփոխությունները: Ժամանակի հասարակական-քաղաքական համատեքստի շրջանակներում այդպիսի տեսության առաջադրումն արդարացված էր, և, բացի այդ, ընդհանուր առմամբ դա հետաքրքիր վարկած էր հայոց մշակույթի զարգացման տրամաբանությունը և ընթացքը հասկանալու առումով:

Սակայն այդ տեսությունը, որի գլխավոր խնդիրը Հայկական Վերածնության գոյության հիմնավորումն էր, իր առջև դրված խնդիրը լուծելու համար նախևառաջ պետք է մշակեր համապատասխան մեթոդաբանություն: Մինչդեռ մեթոդաբանության տեսանկյունից Հայկական Վերածնության տեսությունը սկսեց հիմնականում օգտագործել «Արևելյան Վերածնություն» տեսության շրջանակներում մշակված մեթոդաբանական սկզբունքներն ու մոտեցումները:

«Արևելյան Վերածնություն» տեսության մեթոդաբանության մշակողներից ամենահեղինակավորը Ն. Կոնրադն էր, որի կարծիքով՝ Իտալիայի պատմության մեջ «Վերածնության դարաշրջան» կոչվող փուլը հանդիսանում է ոչ միայն Իտալիայի, այլև այն բոլոր ժողովուրդների պատմության պատկանելությունը, որոնք ունեն երկարատև, անընդհատ զարգացող, մշակութային բովանդակությամբ հարուստ պատմական կյանք: Ըստ այդմ՝ այն ժողովուրդները, ովքեր ունեցել են իրենց անտիկ և միջնադարյան շրջանները, անհրաժեշտաբար պետք է ունենան նաև իրենց Վերածնության շրջանը: Կոնրադի և նրա հետևորդների կարծիքով՝ արևմտաեվրոպական ժողովուրդների պատմության հիման վրա մշակված հասկացությունները կիրառելի են նաև արևելյան ժողովուրդների պատմության նկատմամբ, որովհետև այն հետազոտողները, ովքեր ուսումնասիրում էին Արևելքի պատմությունը, «հաճախ հանդիպում էին շատ ցայտուն, նշանակալից, իրար հետ կապակցված մի շարք երևույթների և, դրանք քննելով ընդհանուր պատմական ֆոնի վրա, բացահայտում էին Արևմուտքի ժողովուրդների պատմությունից ծանոթ գծեր և այդ նմանության հիման վրա սկսում Արևելքում եղած այդ երևույթներն անվանել այնպես, ինչպես դրանք անվանել են Արևմուտքում» (3, 224):

Եթե այդ տեսությունը Վերածնունդը դիտում է որպես համաշխարհային երևույթ կամ բնապատմական օրինաչափություն, ապա գլխավոր խնդիրը դառնում է այն, որպեսզի ցույց տրվի «Վերածնության բազմազան կոնկրետ ձևերի արտահայտությունը զանազան երկրներում, դրանց հար և նման կուլտուր-պատմական էությունը, որպես ընդհանուր պատմական օրինաչափ երևույթի, որը հատուկ է որոշ երկրների, ոչ միայն Արևմուտքում, այլև Արևելքում, այդ թվում և Հայաստանին» (6, 8):

Դժվար է այսօր միանշանակորեն ասել, թե որո՞նք էին խորհրդային գրականագիտության մեջ այդ վարկածի կամ տեսության առաջացման պատճառները. արդյո՞ք դա Արևելք-Արևմուտք մշակութային հակադրության մեղմացման մի փորձ էր, թե՞ «գիտական հակահարված» եվրոպակենտրոն տեսության հավակնություններին (այս առումով բնութագրական է ռուս գրող Ա. Տոլստոյի՝ վրաց գիտնական Շ. Նուցուբիձեի տեսության կապակցությամբ արտահայտած այն միտքը, թե «խորհրդային գիտության պատվի գործն է դեն նետել բուրժուական գիտության հնացած տեսությունները և զբաղվել Արևելյան Վերածնության հետազոտությամբ» (տե՛ս 12, 302), արդյո՞ք դա համաշխարհային պատմության և մշակույթի զարգացման օրինաչափությունների մասին մարքսիստական տեսության «հարստացման» յուրատեսակ մի փորձ էր, թե՞ պարզապես արևելյան ժողովուրդների ազգային ինքնագիտակցության զարթոնքի, ազգային մշակույթի հարուստ արժեքների ներկայացման ոչ

ավանդական եղանակ: Ամեն դեպքում, սկսվեց մի անմոռանալի, գայթակղիչ ու հետաքրքրաշարժ հետազոտական շարժում, և խորհրդային արևելագետ փիլիսոփաները, պատմաբանները, մշակութաբանները, ինչպես արևելյան հեքիաթի հերոսներ, «ուղևորվեցին» արևելյան մշակույթի աշխարհը՝ գտնելու «հազարան բլբուլը»՝ ազգային մշակույթում Վերածննդի երևույթը: Իսկապես, ժամանակի ընթացքում, մեկը մյուսից հետո լույս տեսան բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ՝ նվիրված վրացական, հայկական, ադրբեջանական, ուզբեկական, տաջիկական, իրանական, թուրքական, չինական, հնդկական, կորեական, ճապոնական, ռուսական և այլ ժողովուրդների Վերածնունդներին: Շրջանառության մեջ դրվեց «օվկիանոսից օվկիանոս» Վերածնության գաղափարը, այսինքն՝ մարդկության պատմության մեջ «հայտնագործվեց» մի ընդհանրական (համաշխարհային) գործընթաց, որը, հասկանալի է, այդպիսին լինել չէր կարող գոնե մինչև 19-20-րդ դար, երբ միայն իրական հիմքեր ստեղծվեցին պատմության համաշխարհայնացման համար: Համենայն դեպս, Արևելյան Վերածնության հիմնահարցի քննարկման ընթացքում բարձրացվեցին մշակութաբանական և պատմափիլիսոփայական բնույթի կարևորագույն հարցեր. արդյո՞ք եվրոպական երկրներում տեղի ունեցած Վերածնունդը զուտ եվրոպական երևույթ էր, թե՞ ուներ համաշխարհային ընդգրկում, ի՞նչ է իրենից ներկայացնում Վերածնունդը, որո՞նք են դրա տիպաբանական գծերը, ի՞նչ հարաբերակցության մեջ են գտնվում Միջնադարի և Վերածննդի, Արևմուտքի և Արևելքի մշակույթները: Ինչո՞ւ Արևելքում նույնպես պետք է լիներ Վերածնունդ, ընդ որում՝ նման եվրոպականին: Թե՞ Արևելյան Վերածնունդը էապես տարբերվում է Արևմտյանից: Այդ դեպքում ինչո՞ւ տարբեր բաներ կոչել միևնույն անունով և խառնաշփոթություն ստեղծել գրականության մեջ:

Թվում է, թե հայ հետազոտողներն ավելի մեծ հիմքեր ունեին Հայաստանում բացահայտելու Վերածնության երևույթը, քան մյուսները, հատկապես մուսուլմանական մշակույթ ունեցող երկրների տեսաբանները: Այդ հիմքերից գլխավորն այն է, որ հայոց մշակույթը տիպաբանորեն առավելապես պատկանում է եվրոպական, քան արևելյան մշակույթին: Հայաստանը գտնվել է երկու գերիշխող մշակույթների՝ Արևելքի և Արևմուտքի միջակայքում. ճիշտ է, նա Արևելքի համար միշտ եղել է Արևմուտք, իսկ Արևմուտքի համար՝ Արևելք, այնուհանդերձ, անկասկած է, որ հայ մշակույթը իր հիմքերով և տիպաբանական հատկություններով ներառվում է ոչ թե արևելյան, այլ եվրոպական մշակույթ:

Ի դեպ, Վ.Չալոյանի «Հայկական Ռենեսանս» աշխատության անոտացիայում գրված է, թե դա «առաջին խոշոր մենագրությունն է ոչ-եվրոպական ժողովուրդների Ռենեսանսի՝ Վերածնության վերաբերյալ» (այդպիսի միտք արտահայտել է նաև Ն. Կոնրադը), ինչը տարակուսանք է հարուցում այն իմաստով, որ հայ մշակույթը նախապես դասվում է «ոչ-եվրոպական» մշակույթի մեջ: Մինչդեռ այդպիսի տեսակետն աննպաստ ու վտանգավոր է նախ և առաջ Հայկական Վերածննդի հիմնավորման առումով, երկրորդ՝ նախքան Հայկական Վերածննդի տեսության առաջադրելը, հարկավոր է պարզել, թե տիպաբանորեն հայոց մշակույթը մտնում է եվրոպակա՞ն, թե՞ «ոչ-եվրոպական»՝ ասիական կամ արևելյան մշակույթի մեջ: Եթե պատկանում է եվրոպական մշակութային տիպին, ապա կարծես թե ավելի լուրջ իրական հիմքեր են ստեղծվում Հայկական Վերածննդի տեսության առաջադրման համար, իսկ եթե հայոց մշակույթը դասվում է «ոչ-եվրոպական» ժողովուրդների մշակույթի մեջ, ապա անխուսափելիորեն պիտի դեմ առնենք մեթոդաբանական բնույթի ավելի դժվար խնդիրների: Ըստ երևույթին՝ կամ այս հանգամանքն անտեսված է Հայկական Վերածնության տեսության կողմնակիցների կողմից, կամ էլ նրանց համար դա էական նշանակություն չունի: Ավելի ստույգ, Վ.Չալոյանը կարծում է, որ «Հայաստանը Արևելքի երկիր է, Վերածնությունը Հայաստանում Վերածնություն է Արևելքում (6, 218): Այսինքն՝ փաստորեն ընդունվում է այն միտքը, որ հայոց մշակույթը տիպաբանորեն պատկանում է Արևելքի մշակույթին, թեև այնքան էլ պարզ չէ, թե ինչ է հասկացվում «Արևելքի մշակույթ» հասկացության տակ: Օրինակ, Շ. Նուցուբիձեն վերոհիշյալ աշխատության մեջ նշում է, որ իր խնդիրն է ուսումնասիրել «սովետական Արևելքի» երկրների մշակույթի պատմության մեջ տեղի ունեցած Վերածնությունը, և «սովետական Արևելքի» մեջ մտցնում է Ադրբեջանը, Վրաստանը, Հայաստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը: Բայց մի՞թե Հայաստանն այնպիսի արևելյան երկիր է, ինչպիսին, ասենք, Ուզբեկստանն է կամ Տաջիկստանը: Կամ՝ կարո՞ղ ենք, արդյոք, հայկական ու վրացական մշակույթի և չինական ու հնդկական մշակույթի միջև գտնել էական տիպաբանական ընդհանրություններ: Հազիվ թե: Այս առումով իրավացի է Դ. Լիխաչովը, երբ գրում է. «Թե՛ Հայաստանը և թե՛ Վրաստանը պատկանում են եվրոպական տիպի մշակույթին: Հարց է ծագում. ինչո՞ւ: Պատասխանն այն է, ինչ ես ասացի սկզբում. նրանք պատկանում են մշակույթի միասնական տիպին: Եվ դա շնորհիվ իրենց քրիստոնեության:... Անհատի ազատությունը, հանդուրժողականությունը, բոլոր փորձություններն անցնելով Միջնադարում, դարձան մշակույթի մեջ եվրոպականության հիմնական առանձնահատկությունները» (11, 3):

Սակայն կարևորագույն նշանակություն ունեցող այս հարցին չանդրադառնալը կամ ըստ էության չպարզաբանելն արդեն իսկ խոսում է Հայկական Վերածննդի տեսության անբավարար մշակված մեթոդաբանության մասին: Հայկական Վերածննդի կողմնակիցները շրջանցում են իրենց տեսության համար կարևորագույն հարցերից մեկը՝ հայոց մշակույթի ինքնատիպության հիմնավորման հարցը: Ճիշտ է, որոշ հետազոտողներ (օրինակ, Ա. Լոսևը) Արևելյան Վերածնության հարցի լուսաբանման դեպքում օրինակելի են համարում Վ. Չալոյանի մշակած մեթոդաբանությունը, սակայն, հարկ է նշել, որ այդ մեթոդաբանությունն ընդհանուր և վերացական բնույթ է կրում, ավելին՝ ներառում է նաև մարքսիստական մեթոդաբանության այնպիսի սկզբունքներ, որոնք վաղուց արդեն չեն դիմանում քննադատության:

Առհասարակ Հայկական Վերածնության տեսու-

թյան քննությունը ցույց է տալիս, որ դա «կավե ոտքերով» մի տեսություն է՝ լի հակասություններով, անորոշություններով և պատմամշակութային փաստերի վիճահարույց մեկնաբանություններով: Այդ տեսությունը չի դիմանում քննադատության ո՛չ պատմամշակութային, ո՛չ ժամանակագրական, ո՛չ տեսական, ո՛չ էլ, առավել ևս, մեթոդաբանական առումներով:

Այժմ անդրադառնանք Հայկական Վերածնություն տեսության մեթոդաբանական բնույթի որոշ հիմնադրույթների վերլուծությանը:

Ասում են մեթոդաբանությունն սկսվում և ավարտվում է ժամանակաշրջանների պարբերացումով: Որքան էլ համամիտ լինենք այն տեսակետին, թե ամեն մի պարբերացում, այդ թվում՝ մշակութային դարաշրջանների, պայմանական ու հարաբերական է, որ անչափ դժվար է որոշակի սահմանագիծ անցկացնել մշակութային դարաշրջանների միջև, այնուհանդերձ, կատարված ցանկացած պարբերացում արդեն իսկ որոշակի պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես պետք է լուծվեն մյուս հարցերը: Այս իմաստով Հայկական Վերածնության տեսության հիմնավորման համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ հարցերը.

ա) ե՞րբ է Վերածնությունը տեղի ունեցել Հայաստանում, ինչպիսի՞ ժամանակահատված է ընդգրկել, որո՞նք են դրա զարգացման հիմնական փուլերը,

բ) հայոց մշակույթի պատմության մեջ Վերածնունդը պետք է դիտել որպես առանձի՞ն մշակութային դարաշրջան, թե՞ ոչ: Եթե ընդունվում է Հայկական Վերածնության գոյությունը, արդյոք դա նշանակո՞ւմ է, որ հայոց պատմության և մշակույթի զարգացման մեջ Վերածնունդը պետք է դիտել որպես առանձին պատմամշակութային դարաշրջան՝ իրեն բնորոշ աշխարհայացքային, փիլիսոփայական, գիտական, գեղագիտական, բարոյագիտական սկզբունքներով և մտածողության եղանակներով ու չափանիշներով: Այսինքն՝ մի պատմամշակութային դարաշրջան, որն իր դիմագծով էապես տարբերվում է Անտիկ, Միջնադարի և Լուսավորականության դարաշրջաններից:

գ) անհրաժեշտ է ցույց տալ նաև Հայկական Վերածնության տարբեր փուլերի որակական տարբերությունները, այսինքն՝ թե ինչո՞վ և ինչպե՞ս են իրարից տարբերվում, ասենք, 10-11-րդ դդ. և 12-14-րդ դդ. մշակույթները.

դ) ենթադրվում է, որ Հայկական Վերածնության կողմնակիցները նախ պիտի ներկայացնեն միջնադարյան հայ մշակույթի տիպաբանական գծերը, այնուհետև՝ Վերածնությանը: Պետք է հստակ պատասխան տրվի այն հարցին, թե ե՞րբ է Հայաստանում սկսվել և ավարտվել միջնադարյան մշակույթը, առհասարակ, միջնադարյան հայ մշակույթը զարգացման ի՞նչ փուլեր է անցել, և որո՞նք էին դրա առանձնահատկությունները: Այսինքն՝ հարկավոր է ներկայացնել հայոց Միջնադարի և Վերածննդի մշակութային դիմապատկերները:

Հայկական Վերածննդի տեսության կողմնակիցների մեծ մասը գրեթե միակարծիք է այն հարցում, որ Վերածնությունը Հայաստանում տեղի է ունեցել 10-14-րդ դարերի սահմանագծում: Նրանց հայացքներում տարբերություններ են նկատվում հատկապես Վերածնության փուլերի առանձնացման ու անվանման հարցում:

Ժամանակի տեսակետից, նշում է Վ. Չալոյանը, Հայկական Վերածնության պատմության առաջին փուլը համընկնում է Անիի ժամանակաշրջանի Հայաստանի 10-11-րդ դարերին՝ մինչև սելջուկների արշավանքները Հայաստանի վրա: Այս փուլում դրսևորվում է «Վերածնության այնպիսի մի բաղադրատարր, ինչպիսին էր թոնդրակեցիների հզոր հեղափոխական շարժումը՝ Հայկական Ռեֆորմացիան»: Հայկական Վերածնության երկրորդ փուլը համընկնում է Անիի ժամանակաշրջանի 12-13-րդ դարերին, երբ Հայաստանը սելջուկների լուծը թոթափելուց հետո բռնում է սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի բուռն վերելքի ուղին: Այս փուլն իր առանձին դրսևորումներով, հասարակական գիտակցության առանձին ձևերով շարունակվում է նաև հայկական պետության կործանումից հետո, ընդհուպ մինչև 14-րդ դար: Վ. Չալոյանի կարծիքով՝ այս փուլը նման էր իտալական իրադրությանը, որտեղ 16-րդ դարում, քաղաքական ու սոցիալ-տնտեսական ճգնաժամի և երկրի դեգրադացիայի պայմաններում Վերածնությունը դեռևս շարունակում էր իր գոյությունը (տե՛ս 6, 72-73): Թեև Վ.Չալոյանը Հայկական Վերածնության սահմանավերջ է ընդունում 14-րդ դարը, սակայն դա չի խանգարում նրան նկատելու, որ «Հայաստանում Վերածնության գրականությունը և Վերածնության սկզբունքները գեղարվեստական ստեղծագործության մեջ իներցիայով շարունակում էին գոյություն ունենալ դեռ երկար ժամանակ, ճիշտ այնպես, ինչպես այդ տեղի ունեցավ Արևմուտքում» (նույն տեղում, 193): Եթե Վերածնական հայ գրականության վերջին փուլի ներկայացուցիչներից են համարվում Հովհաննես Թլկուրանցին (14-15-րդ դդ.) և Գրիգորիս Աղթամարցին (15-16-րդ դդ.), ապա դա նշանակում է, որ Հայաստանում Վերածնությունը որոշ ոլորտներում գոյատևել է ընդհուպ մինչև 16-րդ դարը: Բայց ամենազարմանալին այն է, որ «Հայկական Ռենեսանս» գրքի հեղինակի կարծիքով Հայաստանում հիմնականում եղել է վաղ Վերածնություն և միայն որոշ ոլորտներում՝ Վերածնություն: Ահա թե ինչ է այդ մասին գրում Վ.Չալոյանն իր գրքի վերջնամասում. «Վերածնությունը, որպես այդպիսին, ունեցել է իր զարգացման աստիճանները, ինչպես որ նրա սոցիալ-տնտեսական հիմքը կազմող նախասկզբնական կուտակումն ուներ իր զարգացման ցածր և բարձր աստիճանները: Նախասկզբնական կուտակումը Անիի ժամանակաշրջանի Հայաստանում իր զարգացման նախնական ստադիայից հեռու չգնաց, դրան համապատասխան հայկական Վերածնությունը ևս հասավ իր զարգացման առաջին ստադիային՝ վաղ Վերածնության մակարդակին: Եթե դա ճիշտ է հայկական Վերածնության նկատմամբ՝ ամբողջությամբ վերցրած, ապա դա ճիշտ չէ նրա առանձին կողմերի նկատմամբ, որտեղ, ինչպես գրքում ցույց է տրված, Վերածնությունը հասավ իր զարգացման բարձր աստիճանին» (նույն տեղում, էջ 217): Այսպիսով, ըստ Վ. Չալոյանի՝ ամբողջությամբ վերցրած Հայաստանում եղել է վաղ Վերածնություն, իսկ մասամբ՝ Վերածնություն (ի դեպ,

գրքում ցույց է տրված, որ Վերածնության երևույթը դրսևորվել է տվյալ ժամանակաշրջանի գրականության, արվեստների, գիտության և փիլիսոփայության ոլորտներում, այսինքն՝ մշակութային կյանքի գրեթե բոլոր կամ գլխավոր ոլորտներում):

Հայկական Վերածնության ժամանակային պարբերացման հարցին անդրադարձել է նաև գրականագետ Հ. Թամրազյանը «Հայ քննադատություն» (6-15-րդ դդ.) ուշագրավ աշխատության մեջ: Նրա կարծիքով՝ անսովոր արագ զարգացման պատճառով «գրեթե աննկատ է անցնում նախավերածնությունը, իսկ արդեն 10-րդ դարում մեզանում ձևավորվում է վաղ Վերածնությունը, որն ուրույն էտապներով շարունակվում է մինչև 12-րդ դարը, ապա մի շարք բնագավառներում նոր թռիչք ապրում 13-14-րդ դարերում: Թերևս նախավերածնության շրջանն արագ ու աննկատ է անցնում այն պատճառով, որ մասամբ այդ երևույթն արդեն երևան էր եկել 7-րդ դարում: Այս դարում էին ստեղծվել Զվարթնոցը և Հռիփսիմեն, Շիրակացու աշխարհիկ գիտությունը, Սյունեցու քերականությունը, հոգևոր երգեր և Դավթակի «Ողբի» նման երկեր: Այս բոլորը չէին կարող անհետ անցնել և, ինչպես նշել ենք, կամուրջ էին նետում անցյալի և գալիքի միջև: Այսպես թե այնպես, 10-12-րդ դարերում, շուրջ հարյուր հիսուն տարվա խաղաղ աշխատանքի, անկախության և տնտեսական վերելքի մթնոլորտում, ծաղկում է հայկական վերածնությունը՝ դառնալով յուրօրինակ նախերգանք նաև եվրոպական վերածնության համար» (2, 36):

Հայկական Վերածնության ժամանակային ընդգրկման վերաբերյալ իր կարծիքն է արտահայտել նաև գրականագետ Վ. Նալբանդյանը: Նշելով, որ Հայկական Վերածնության հիմնահարցի գիտական մշակումը տակավին սկսվել է միայն, նա գրում է. «Բոլոր դեպքերում, սակայն, այժմ իսկ մի բան պարզ է, որ մի քանի դարով կանխելով եվրոպացիներին, վերածնական հումանիզմի գաղափարներով ներթափանցված իր բազմանշանակ ու մեծարժեք ստեղծագործությամբ Գրիգոր Նարեկացին դարձավ ազգային գրականության, կարելի է ասել նույնիսկ ավելի լայն առումով, հայոց ողջ հոգևոր մշակույթի՝ որակապես նոր դարաշրջանի՝ Վերածննդի ռահվիրան: Խոսքն այստեղ, հարկավ, չի վերաբերում լոկ սահմանափակ մի ժամանակահատվածի, այլ՝ շուրջ ութ հարյուր տարի հարատևող մի մեծ դարաշրջանի, որ տվել է գեղարվեստական խոսքի, գեղագիտական ու իմաստասիրական մտքի, արվեստի ու գիտության ... կարկառուն դեմքեր...» (4, 9): Այս ակնարկից հետևում է, որ Հայաստանում Վերածնությունը տևել է շուրջ ութ դար՝ Նարեկացուց մինչև Սայաթ-Նովա:

Հայկական Վերածնության ժամանակագրությանը վերաբերող հարցը շոշափել է նաև վրաց գիտնական Շ. Նուցուբիձեն «Ռուսթավելին և Արևելյան Վերածնությունը» գրքում: Նրա կարծիքով՝ նախավերածնունդը Հայաստանում սկսվել է 10-րդ դարում, սակայն սելջուկների արշավանքների հետևանքով ընդհատվել է, և Հայաստանը «դուրս է մնացել Արևելյան Վերածննդի ընդհանուր շղթայից»: Մեկ դար անց Հայաստանում սկսվում է Վերածննդի շրջանը: Սակայն այդ նույն գրքում նա 13-րդ դարը բնորոշում է որպես ընդամենը «հայկական գրականության Վերածնության արշալույս» (12, 255):

Հայկական Վերածնության փաստացի ընդունումը և դրա պատմական զարգացման պարբերացման փորձերն ըստ էության վկայում են այն մասին, որ այդ տեսության կողմնակիցները հակված են այն տեսակետին, թե Վերածնունդը մի առանձին, ուրույն ժամանակաշրջան է հայոց պատմության և մշակույթի զարգացման մեջ: Գրականագետ Վ. Նալբանդյանը հստակորեն առանձնացնում է «մեր ազգային գրականության երկու կարևոր շրջափուլերը՝ Միջնադարն ու Վերածնությունը», նշելով, որ «ինչպես այլուր, այնպես էլ Հայաստանում Վերածնությունը ոչ թե պատրաստի վիճակով հաջորդել է Միջնադարին, այլ սաղմնավորվել, սկզբնավորվել է սկսել հենց Միջնադարի ընդերքում: Սա միանգամայն օրինաչափ երևույթ է և վերաբերում է ոչ միայն Վերածնությանը, այլև առհասարակ մշակույթի ու գրականության որակապես ամեն մի նոր շրջափուլի» (4, 7-8): Եթե իսկապես ընդունվում է, որ Վերածնությունը հայ մշակույթի պատմության մեջ առանձին շրջափուլ է, ապա Հայկական Վերածնության տեսության կողմնակիցները հետևողական լինելու դեպքում պետք է նորովի պարբերացնեն հայոց մշակույթի պատմությունը, ընդսմին՝ այդ պարբերացման մեջ առանձին տեղ հատկացնելով Վերածնության ժամանակաշրջանին: Հակառակ դեպքում պետք է ընդունել, որ հայոց Միջնադարում (որպես առանձին մշակութային դարաշրջան) գոյություն է ունեցել Վերածնություն (որպես առանձին մշակութային դարաշրջան): Ստացվում է, որ միևնույն ժամանակ և միևնույն պայմաններում գոյություն է ունեցել մշակութային երկու դարաշրջան՝ միջնադարյան և վերածնական, հետևաբար, 10-14-րդ դդ. հայ մշակույթը հավասարապես կարող ենք բնութագրել որպես միջնադարյան և վերածնական:

Եթե «միջին դարեր» հասկացությունը գործածում ենք նշանակելու համար որոշակի պատմական ժամանակաշրջան, իսկ «Վերածնություն» հասկացությունը՝ մշակութային դարաշրջան, ապա այդ բաժանման կամ դասակարգման մեջ թույլ ենք տալիս տրամաբանական սխալ՝ խախտում ենք դասակարգման հիմքը: Պարբերացումը կատարելիս պետք է նկատի ունենանք կամ պատմական, կամ էլ մշակութային ժամանակաշրջանները:

Այս հարցում Հայկական Վերածնության կողմնակիցների տեսակետներում չկա հստակություն: Այսպես, եթե Վ. Չալոյանը «Հայկական Ռենեսանս» աշխատության մեջ, ըստ էության, Վերածնությունը դիտում է որպես առանձին դարաշրջան (այդ մենագրության երկրորդ գլուխը վերնագրված է «Հայկական Վերածնության սոցիալ-տնտեսական հիմունքները», իսկ հիմնական՝ երրորդ գլուխը՝ «Վերածնության կուլտուրան Հայաստանում»), ապա ավելի ուշ հրատարակած «Հայոց փիլիսոփայության պատմություն» (Հին և միջին դարեր)» աշխատությունում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը ներկայացված է «Ֆեոդալական հասարակության ծաղկման շրջանի փիլիսոփայությունը (10-15-րդ դդ.)» վերնագրով (ի դեպ, այդ բաժնի ենթագլուխներից ոչ մեկում հիշատակված չէ վերածնություն հասկացությունը), թեև բո-

վանդակային առումով դրանց միջև գրեթե չկան տարբերություններ:

Թվում է, թե ստեղծված փակուղային իրավիճակից դուրս գալու ելքերից լավագույնն այն կլինի, եթե ընդունենք, որ 10-14-րդ դդ. հայոց մշակույթն ուներ անցումային բնույթ, այսինքն՝ դա մշակութային այնպիսի դարաշրջան էր, որին բնորոշ էին թե՛ միջնադարյան, թե՛ վերածնական երևույթներ:

Եթե 10-14-րդ դդ. հայոց մշակույթը բնորոշենք որպես անցումային, ապա պետք է հստակեցնենք, թե ի՞նչ ենք հասկանում այդ հասկացության տակ: Լայն իմաստով՝ ամեն մի պատմամշակութային շրջան կարող ենք անվանել «անցումային»՝ նկատի ունենալով դրանում տեղի ունեցող փոփոխությունները և փոխակերպությունները: Նեղ իմաստով՝ անցումային կարող ենք անվանել այն ժամանակաշրջանը, որում տեղի են ունենում արմատական փոփոխություններ, հին արժեքների կողքին ձևավորվում են նորերը, որոնք աստիճանաբար սկսում են գերիշխող դառնալ և որոնք հետագայում հիմք են հանդիսանում աշխարհայացքային նոր սկզբունքների հաստատման համար: Այդպիսի անցումային շրջանում հեղաշրջում է կատարվում մարդկանց պատկերացումներում, փոփոխվում են նրանց մտածողության սկզբունքները և գործելակերպը: Հնի և նորի մրցակցությունը դրսևորվում է ամենուր՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտամշակութային և կրոնական կյանքում:

Արդյո՞ք 10-14-րդ դդ. հայոց մշակույթը եղել է նեղ իմաստով անցումային ժամանակաշրջան. եթե՝ այո, ապա պետք է ցույց տրվեն հասարակական ու մշակութային կյանքում կատարված այն փոփոխությունները, որոնք արմատական և սկզբունքային բնույթ ունեն: Սովորաբար այդպիսի դեպքերում թվարկում են փաստեր, ներկայացնում են քանակական ցուցանիշներ, որոնք քիչ բան են հաղորդում որակական փոփոխության վերաբերյալ կամ եթե հաղորդում են, ապա պարզ չէ, թե ո՞ր մշակութային դարաշրջանի ոգուն են դրանք համահունչ: Օրինակ, Վ. Չալոյանը Հայկական Վերածնության շրջանի փիլիսոփայության «ամենանշանավոր ներկայացուցիչներից» է համարում Հովհան Որոտնեցուն (1315-1386), սակայն վերջինիս հայացքների՝ նրա կողմից կատարված վերլուծության մեջ դժվար է վերածնական փիլիսոփայության հետք անգամ տեսնել:

Թերևս կարելի է ենթադրել, որ Արևելյան (և Հայկական) Վերածնության տեսության առաջացման պատճառներից մեկը «Վերածնություն» հասկացության չափազանց լայն, հետևաբար՝ անորոշ և հեղհեղուկ ըմբռնումն է: Արևելյան Վերածննդի տեսության կողմնակիցները, որոնք հակված էին Վերածնունդը դիտել որպես համաշխարհային պատմամշակութային երևույթ, սկսեցին յուրովի մեկնաբանել «Վերածնունդ» հասկացության բովանդակությունը: Այսպես, ըստ Ն. Կոնրադի՝ «զանազան երկրների «Վերածնության էպոխաների» համեմատությունը մեզ ցույց կտա, որ այդ էպոխաների համար հիմնականը հանդիսանում է ոչ թե «Վերածնությունը», այսինքն՝ ոչ թե իր երկրի անցյալին, իր «անտիկ շրջանին» դիմելը, այլ հումանիզմը, այսինքն՝ մարդուն, երկրային մարդուն, ռեալ հողի վրա, ռեալ հասարակության մեջ ապրող ու գործող, երկրային ուրախությամբ և տխրությամբ ապրող, բանականությամբ օժտված մարդուն դիմելը, այսինքն՝ այն սկզբունքի կրողին դիմելը, որը Իտալիայում լատիներեն անվանում էին «humanitas» - «մարդկային սկզբունք», «մարդկայնություն»: Մարդկային սկզբունքի՝ որպես ամբողջ հասարակական կյանքի հիմքի հաստատման որոնումներում օգնության համար անցյալին դիմելը չի հանդիսանում այդ էպոխայում ո՛չ ամենաէականը, ո՛չ էլ, առավել ևս, պարտադիրը:... Ուստի այդպիսի էպոխայի վերաբերմամբ իրոք այնպիսի ընդհանուր անվանումը, որը պիտանի լինի ամեն մի երկրի համար, որտեղ եղել է այդպիսի էպոխա, հանդիսանում է, հավանաբար, ոչ թե «Ռենեսանսը», այլ «հումանիզմը» (3, 228): «Վերածնունդ» հասկացության բովանդակության այսօրինակ մեկնաբանությունը մեթոդաբանական առումով չէր կարող լինել վիճահարույց:

Այն հարցը, թե ի՞նչ է Վերածնությունը՝ որպես պատմամշակութային դարաշրջան, որպես մշակութային ամբողջական տիպ, անհնար է պատկերացնել, եթե նկատի չունենանք 14-16-րդ դարերում եվրոպական մի շարք երկրներում տեղի ունեցածը: Ինչպես հայտնի է, «Վերածնունդ» հասկացությամբ նշանակում են եվրոպական երկրների պատմական և մշակութային կյանքի զարգացման այն փուլը, երբ անցում է կատարվում միջնադարյան մշակույթից դեպի նոր ժամանակի մշակույթը, երբ հին արժեքների կողքին ձևավորվում և հաստատվում են սկզբունքորեն նոր արժեքներ, երբ մարդկային կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում արմատական փոփոխություններ, որոնց հետևանքով կատարվում են երեք մեծ հեղափոխություններ՝ գիտական, կրոնական և փիլիսոփայական: Այլ խոսքով՝ եվրոպական երկրների մշակույթում տեղի է ունենում հեղաշրջում, որը հետագայում ունենում է իր տրամաբանական զարգացումը: Այդ հեղաշրջումը պայմանավորված էր եվրոպական երկրների նախընթաց պատմական կյանքով՝ տնտեսական, քաղաքական, կրոնական, գիտական, փիլիսոփայական և այլ բնույթի գործոններով: Այդ պատմությունն ինքնին անկրկնելի, անհատական դիմագիծ ունեցող պատմություն է՝ իր զարգացման բոլոր փուլերով հանդերձ: Իր անհատական դիմագիծը և զարգացման ներքին տրամաբանությունն ուներ նաև Արևելքի երկրների պատմությունն ու մշակույթը: Արևմուտքի և Արևելքի պատմություններն ընթացել են տարբեր տրամաբանությամբ, ունեցել են զարգացման իրենց փուլերը, որոնցից յուրաքանչյուրը չի կարելի հասկանալ, եթե չդիտարկենք անցյալ-ներկա- ապագա ամբողջական կառուցվածքում: Այսինքն, որպեսզի Արևելքում լինի եվրոպականի նման Վերածնության դարաշրջան, ապա պետք է լինեն նաև եվրոպականի նման անտիկ և միջնադարյան շրջաններ, իսկ հետո նաև՝ Լուսավորականության շրջան և այլն: Հնարավոր չէ, որ որևէ ժողովրդի մշակույթ չունենա եվրոպականի նման անտիկ և միջնադարյան շրջաններ, բայց ունենա եվրոպականի նման Վերածնության շրջան:

Տվյալ դեպքում «վերածնություն» հասկացությունը ներկայացվում է այնքան վերացական ու անորոշ

բովանդակությամբ, որ կորցնում է իր տիպաբանական նշանակությունը: Յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ հնարավոր են մշակույթի վերելքներ, զարթոնքներ, ծաղկումներ, որոնք կարող են նման լինել միևնույն պատմամշակութային տարածքում ապրող ժողովուրդների մշակութային վերելքներին, սակայն տարբեր պատմամշակութային հիմքեր, բոլորովին այլ մշակութային զարգացում ունեցող ժողովուրդների կյանքում չի կարող մշակութային վերելքը ըստ բովանդակության լինել նույնը: Արևմտյան Եվրոպան, Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան, Միջին Արևելքը միջնադարում ունեցել են իրենց ուրույն պատմությունը և մշակույթը, ունեցել են իրենց զարգացման ներքին տրամաբանությունը, հետևաբար, դրանցում չէր կարող գործել բնապատմական միևնույն օրինաչափությունը: Այդ օրինաչափության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, եթե դրանց պատմությունը և մշակույթը ծավալվեր քիչ թե շատ միասնական պատմամշակութային դաշտում: Արևելյան Վերածնության տեսության քննադատներն իրավացիորեն նշում են, որ Արևելքը և Արևմուտքը անցել են զարգացման տարբեր ուղիներ: «Արևելքի զարգացման առանձնահատկությունը պայմանավորված է երևույթների բարդ փոխկապակցվածությամբ, որոնք շատ դեպքերում չեն համապատասխանում ձևավորված եվրոպական չափանիշներին: Երբ մենք ասում ենք, օրինակ, «ստրկատիրություն» կամ «ֆեոդալիզմ», «անտիկ» կամ «միջին դարեր», մեր միտքը ելնում է եվրոպական հաստատված այն չափանիշներից, ըստ որի մտակառուցվել են այդ հասկացությունները, և դրանց կիրառումը, օրինակ, Չինաստանի կամ Հնդկաստանի հանդեպ, հանգեցնում է արևելյան քաղաքակրթությունների ինքնատիպության և առանձնահատկության մեխանիկական գնահատմանը» ( 7, 207):

Ն. Կոնրադի կողմնակիցներն ավելի հեռու գնացին՝ խիստ վերացականորեն ներկայացնելով «Վերածնունդ» հասկացության բովանդակությունը, դա հանգեցնելով մի շարք հատկությունների մեխանիկական գումարին: Այսպես, Ի. Բրագինսկին Վերածնության էությունը բացահայտող «կոնստիտուտիվ» (սահմանադիր) հատկություններ է համարում հետևյալները՝

ա) սոցիալ-տնտեսական գործոնների զուգակցում, քաղաքային մշակույթի ծաղկում, ժողովրդական շարժումների հետ կապված սոցիալական ցնցումներ, նոր գաղափարներ կրող «հումանիստական» մտավորականության ձևավորում.

բ) հումանիստական մտավորականության ազատախոհություն, որը դրսևորվում է ռացիոնալիզմի և միստիցիզմի ձևով, անցում «divina studia» -ից «humana studia»-ին.

գ) մշակույթի մեջ երկու հակադիր միտումների՝ արիստոկրատական և ժողովրդական մշակույթների միջև պայքարի սրում.

դ) գեղարվեստի ծաղկում (արվեստի և գրականության մեջ), ռեալիստական սկզբունքի հաստատում.

ե) անտիկ գաղափարների վերածնություն, դրանց վերաիմաստավորում պատմական նոր պայմանների ու գաղափարների լույսի ներքո.

զ) հակամարտող ուժերի պայքարի հետևանքով մշակույթի ծաղկման անավարտություն, ընդհատություն և զարգացման արգելակում (տե՛ս 9, 413):

Ունենալով «Վերածնության» էությունը բացահայտող «կոնստիտուտիվ» հատկությունների սույն համալիրը՝ մի՞թե դժվար է դրա նմանը գտնել այն ժողովուրդների պատմության մեջ, որոնց մշակույթն ապրել է որոշակի վերելք: Իհարկե ոչ, քանի որ, ինչպես ասում են, փնտրողը միշտ էլ գտնում է: Օրինակ, «Հայկական ռենեսանսի ճարտարապետությունը» աշխատության հեղինակ Հ. Իսաբեկյանը գրում է. «Համեմատելով բոլոր առաջադրված հատկանիշները հայկական Ռենեսանսում տեղ գտածների հետ, դժվար չէ համոզվել նրանց համապատասխանության մեջ: 1. Քաղաքային կուլտուրայի զարգացումը Անիի թագավորության բազմաթիվ քաղաքներում և հատկապես Անիում. ժողովրդի (թոնդրակյանների) զինված պայքարը եկեղեցու և ֆեոդալիզմի դեմ. մտավորականության առաջադեմ խավի առկայությունը...: 2. Աշխարհիկ մտածողության առկայությունը և միստիկան Նարեկացու լիրիկայում, ժողովրդական նովելներում, առակներում: Ռացիոնալիզմը Հովհաննես Իմաստասերի և ուրիշների փիլիսոփայության մեջ, «մարդկային» գիտությունների ուսումնասիրությունը դպրոցներում, պատմիչ Թովմա Արծրունու բնության հայտնագործումը, աշխարհիկ թեմաները Աղթամարի քանդակներում: 3. Ժողովրդի իդեոլոգիան (թոնդրակյանների, արտահայտված ժողովրդական նովելներում, առակներում, գուսանների երգերում, Ֆրիկի պոեզիայում, Սասունցի Դավիթ էպոսում) և տիրող դասակարգի իդեոլոգիայի (Վարդան Այգեկցու՝ ժողովրդի (խռովարարների) դեմ, Մխիթար Գոշի, գիտնական հելլենիստ արիստոկրատ Գրիգոր Մագիստրոսի): 4. Աղթամարի քանդակների, Սասունցի Դավիթ էպոսի և Թորոս Ռոսլինի մանրանկարչության ռեալիզմը, դիմանկարի ժանրի առաջացումը, ճարտարապետության և պոեզիայի գեղարվեստական կերպարայնությունը: 5. Անտիկ հեղինակների աշխատությունների նոր թարգմանություններ (մեկնաբանությունները հին հունականից և հայկականից): 6. Անգամ կուլտուրայի ծաղկման «անավարտության» երևույթը առկա է հայկականում, սակայն այն տարբերությամբ, որ Արևմուտքում դա տեղի ունեցավ ներքին ուժերի հակադրության պատճառով, իսկ Հայաստանում՝ արտաքին բռնի ուժի» (տե՛ս 1, 186-187): Այսպիսի զարմանալիորեն «ճշգրիտ» համապատասխանությունից այն տպավորությունն է ստեղծվում, թե եվրոպական Վերածնության էությունը բացահայտող «կոնստիտուտիվ» հատկությունների ավելացման դեպքում դրանց համարժեքը առանց դժվարության կարող ենք հայտնաբերել «Հայկական Վերածնության» մեջ:

Մեթոդաբանական տեսակետից սխալ է, երբ մշակութային տիպը ներկայացվում է որպես առանձին հատկությունների մեխանիկական միագումար: Յուրաքանչյուր մշակութային տիպ ունի իր հատկությունները, որոնք կազմում են օրգանական համակարգ և իրար հետ լծորդված, շաղկապված, ներթափանցված են այնպես, որ փոխպայմանավորում են իրար: Այդ հատկությունների զուգորդությունը ստեղծում է նոր

որակ, որն անկրկնելի է, եզակի: Երբ անտեսենք այս ամբողջությունը և դա բաժանենք առանձին մասերի կամ հատկությունների, ապա համեմատության դեպքում անխուսափելի կդառնան թյուր պատկերացումները: Մշակութային տիպը որպես ամբողջություն անկրկնելի է, և այդ անկրկնելիությունը պայմանավորված է այդ ամբողջության մեջ մտնող տարրերի և մասերի յուրօրինակ հարաբերակցությամբ:

Ինչպես նկատել են Արևելյան Վերածնության հակառակորդները, «Վերածնության» էությունը բացահայտող հատկություններն այնքան վերացական են, որ դրանք ցանկության դեպքում կարելի է գտնել տարբեր ժողովուրդների մշակույթների մեջ, նույնիսկ դրանց զարգացման տարբեր փուլերում: Խնդիրը ոչ թե այն է, որ չպետք է ներկայացնել Վերածնությունը բնորոշող հատկություններ, այլ՝ չպետք է դրանք ներկայացնել ձևականորեն: Հազիվ թե մեկը համաձայն չլինի այն մտքի հետ, որ հումանիստական բովանդակություն են ունեցել թե՛ անտիկ, թե՛ միջնադարյան և թե՛ այլ դարերի արևելյան և արևմտյան մշակույթները: Բայց այդ՝ հումանիզմներն իրարից տարբեր են այնպես, ինչպես քրիստոնեությունն ու բուդդայականությունը, իսլամը և կոնֆուցիոսականությունը: Ընդհանուր, վերացական նմանություն ունենալով հանդերձ՝ չինական մշակույթում հումանիզմը բովանդակապես պետք է տարբերվի եվրոպական հումանիզմից, որովհետև դրանք դրսևորվել են բոլորովին տարբեր արժեքներ ու ավանդույթներ ունեցող մշակութային համակարգերում: Չինական և իտալական հումանիզմը չեն կարող իրարից չտարբերվել, որովհետև դրանցում տարբեր են եղել մարդու, նրա էության ու կոչումի, կյանքի իմաստի և նպատակի մասին եղած պատկերացումները: Երբ խոսում են «համաշխարհային Վերածնության» մասին, իրավացիորեն գրում է Լ. Բատկինը, ստացվում է այնպես, իբր թե Խաղաղ օվկիանոսի ափերին կարելի է բացահայտել, թեկուզև անկախ և խիստ ձևափոխված տեսքով, այդ նույն «հումանիզմը», «մտքի աշխարհականացումը», «ռացիոնալիզմը», «անհատի ինքնուրույնությունը» և այլն, ինչ որ վերածնական Իտալիայում էր: Պատրաստի իտալական և արևմտաեվրոպական հասկացությունների և տերմինների փոխադրումը Չինաստանի կամ լենկթեմուրյան պետության վրա սոսկ մթագնում է Վերածննդի վերաբերյալ «համաշխարհային» հայացքի արժանիքը: Առհասարակ համանմանությունների հետևից ընկնելը ոչնչով համոզիչ չէ Արևմտյան Եվրոպա և Արևելք ավանդական հակադրություններից: Որոշ հեղինակներ հայտարարում են, որ Հայաստանում կամ Վրաստանում «նույնպես եղել է Վերածնունդ», ընդսմին՝ ավելի վաղ, քան Իտալիայում: Մյուսները, ըստ իս, առավել մեծ հիմքով, դա ժխտում են՝ Վերածնունդ հասկացության մեջ ներառելով ամբողջական կոնկրետ-պատմական իմաստ: Սակայն ժամանակն է կատարել հետևյալ քայլը: Ուշադրության կենտրոնում պետք է որ լինեին ոչ թե նմանության որոնումները և նույնիսկ ոչ թե տվյալ դեպքում կարևոր տարբերությունների հաստատումը, այլ այդ երկու կողմերը ներառող տիպաբանական հարաբերությունները: Հարկավոր է Վերածնունդ հասկացությունը չտարածել Անգլիայից մինչև Ճապոնիա, բայց չմերժել այդպիսի համադրումների հնարավորությունն ու արդյունավետությունը, այլ հետևողականորեն համեմատել Ռենեսանսը ոչ Ռենեսանսների հետ, Արևմուտքը Արևելքի հետ, ռեգիոնալ և ոչ ռեգիոնալ մշակութային տիպերը: Այն ընդհանուրը, որը, հնարավոր է, կհաջողվի բացահայտել, կլինի ոչ թե «ռենեսանսային», այլ ինչ-որ ավելի լայն, և այդ սոցիոլոգիական ու փիլիսոփայապատմական գերօրինաչափությունների համար հարկ կլիներ ներմուծել նոր կատեգորիաներ և հասկացություններ, որոնք չեն պատկանում իտալական, ուզբեկական կամ ճապոնական պատմություններին և ոչ մի դեպքում չեն բացահայտում դրանց ինքնատիպությունը, բայց ուժ են ստանում միայն համաշխարհային Պատմության մակարդակում: Պարադոքսն այն է, որ արևմտաեվրոպական Վերածնությունը համաշխարհային նշանակություն ունեցավ ոչ թե այն բանի համար, որ եղած ռենեսանսներից ամենատիպականն ու ամենահաջողվածն էր, այլ որովհետև ուրիշ ռենեսանսներ չեն եղել: Այդ մեկը միակն էր (տե՛ս 8, 107-108):

Հայկական Վերածնության տեսությունը մշակութային դարաշրջանները չի ըմբռնում որպես անկրկնելի, հարաբերականորեն ինքնաբավ ամբողջություններ, որի պատճառով չի կարողանում հստակորեն տարբերակել միջնադարյան և վերածնական մշակույթները: Վերածնունդը դիտելով որպես որոշակի հատկությունների մեխանիկական միագումար՝ այդ տեսությունը «ծառերի հետևում չի տեսնում անտառը», իսկ եթե անգամ տեսնում է, ապա չի կարողանում բացատրել տարբեր «անտառների» միջև եղած նմանությունների և տարբերությունների յուրահատկությունները: Չի կարողանում այն պարզ պատճառով, որովհետև նրա մեթոդաբանական զինանոցի գլխավոր զենքը պատմության զարգացման գծային տեսությունն է, այն էլ՝ դրա մարքսիստական տարբերակը: Եթե մշակույթը չենք դիտում որպես պատմական ամբողջություն, որի յուրաքանչյուր ժամանակահատված, ամեն մի դրսևորում արտահայտում է ամբողջի էությունը և բովանդակությունը, ապա, ընկնելով մեթոդաբանական անարխիզմի ճահիճը, ամենուր կարող ենք ամեն ինչ տեսնել:

Ի դեպ, հայկական Վերածնության տեսությունը օգտագործում է համեմատության այնպիսի մոդել, որը չի բավարարում կոմպարատիվիստական (համեմատագիտական) հետազոտությունների ելակետային պահանջները: Հայկական Վերածնության տեսությունը հաշվի չի առնում հայ մշակույթի զարգացման առանձնահատկությունները և Եվրոպական Վերածնության չափանիշներով փորձում է վերլուծել և գնահատել հայ մշակույթի մեջ կատարված իրողությունները: Թե ինչո՞ւ հայոց մշակույթը պետք է զարգանար եվրոպական մշակույթի զարգացման նույն սխեմայով և չափանիշներով, Հայկական Վերածնության տեսության մեջ չի տրվում բավարար պատասխան: Այդ տեսությունը հենվում է Արևելյան Վերածնության վրա, որը ըստ էության համահարթեցնում է մարդկային պատմությունը և առ ոչինչ դարձնում գոյություն ունեցած պատմամշակութային բազմաձևությունը: Դա ամրագրում է տարբեր մշակույթների միջև

գոյություն ունեցող համամարդկային գծերը, միևնույն ժամանակ՝ անկարևոր, երկրորդական համարում այն տարբերությունները, որոնք պայմանավորում են տվյալ մշակույթի ինքնատիպությունը:

Արդյունքում՝ արվում են ակնհայտ սխալ կամ չարդարացված համեմատություններ՝ 10-14-րդ դարերի հայ մշակույթը, փոխանակ համեմատելու նույն ժամանակահատվածի բյուզանդական, արաբական և եվրոպական մշակույթների հետ, անհասկանալի կերպով համեմատվում է 14-16-րդ դարերի եվրոպական (առավելապես՝ իտալական) մշակույթի հետ, այսինքն՝ համեմատվում են գրեթե անհամեմատելիները: Համեմատության խնդիրը պետք է լինի ոչ թե մեր մեջ «ուրիշին» փնտրելը կամ մեզ «ուրիշի» չափանիշներով քննելն ու գնահատելը, այլ սեփական մշակույթի զարգացման տրամաբանության բացահայտումը: Այս կապակցությամբ տեղին է հիշել նշանավոր հայ դերասանուհի Սիրանույշի «վիրավորվածության» դեպքը: Ընդդիմանալով այն հայ արվեստագետ-քննադատների բնորոշումներին, ովքեր իր խաղը փորձում են գնահատել օտարազգի դերասանուհիների խաղից ելնելով, Սիրանույշը ցավով գրում է. «Ինչո՞ւ իմ փոքրիկ հայ ժողովուրդը իմ փոքրիկ անձնավորության մեջ ինձ գնահատելու համար մի ուրիշ անձնավորության պատկերն է ուզում մարմնացնել իմ մեջ: Ավելի լավ չէր ըլլալ, որ ես իմ ժողովուրդի միայն «Սիրանույշը» լինեի, ոչ թե խեղճ Սառա Պեռնարն էլ հոգնեցնեին և ինձ հետ միացնեին, որպեսզի կարենայի ես ինձանից մի ամբողջություն կազմել: Տեր աստված, քանի դժբախտ եմ ես: Որքան էլ փոքր լինեմ, այնուամենայնիվ, ես կցանկանամ, որ իմ անունով հիշվեմ, ոչ թե մի ուրիշի անունով հեղինակություն մը ներկայացնեմ...» (5, 40):

Բացի այդ՝ Հայկական Վերածնության տեսությունը համապատասխան ձևով չի ներկայացնում 10-14-րդ դարերի հայ մշակույթում կատարված տեղաշարժերն ու փոփոխությունները, ինչի հետևանքով տեսության փրկության համար պատմամշակութային բազմաթիվ փաստերը փորձում է տեղավորել տխրահռչակ «պրոկրուստյան մահճի» մեջ: Այդ տեսության մեջ անլուծելի է մնում Միջնադարի և Վերածնության՝ որպես առանձին պատմամշակութային դարաշրջանների տարբերակման հարցը: Այս առումով, կարելի է ենթադրել, որ Հայկական Վերածնության տեսության առաջացման պատճառներից մեկը միջնադարյան մշակույթի վերաբերյալ քիչ (եթե չասենք՝ վատ) տեղեկացվածությունն է: Հայկական Վերածնության տեսության կողմնակիցները պարզե՞լ են հայոց միջնադարյան մշակույթի էությունը, առանձնացրե՞լ են դրա զարգացման փուլերը և տիպաբանական առանձնահատկությունները, բացահայտե՞լ են միջնադարյան հայ մշակույթի զարգացման ներքին տրամաբանությունը, այսինքն՝ այն տրամաբանությունը, որն անհրաժեշտաբար պիտի հանգեցներ մշակութային հեղաշրջման:

Բնական է, որ գտնվելով եվրոպական մշակութային տարածքում՝ հայոց մշակույթի զարգացման պատմությունը և տրամաբանությունը այս կամ այն ձևով, այս կամ այն չափով պետք է զուգահեռներ ունենար Արևմտյան մշակույթի զարգացման տրամաբանության հետ: Սակայն այդ զուգահեռների բացահայտումը չպետք է կատարել մեխանիկորեն: Արևմտյան քաղաքակրթության մեջ մտնում են տարբեր ենթաքաղաքակրթություններ, որոնց զարգացման ընթացքը ոչ միշտ է համապատասխանել «ընդհանուրի» հետ, որոնք ունեցել են իրենց ներքին տրամաբանությունը, ինչն էլ պայմանավորել է դրանց զարգացման առանձնահատկությունները:

Համեմատության համար պետք է ընտրել այն դարաշրջանները կամ այն հասկացությունները, որոնց բովանդակություններն առավելագույնս համապատասխանում են: Օրինակ, թե՛ եվրոպական երկրները, թե՛ Հայաստանն ունեցել են մշակույթի միջնադարյան փուլեր՝ իրենց առանձնահատկություններով հանդերձ: Մինչև 10-14-րդ դարերի հայ մշակույթի հանդեպ «Վերածնություն» հասկացության կիրառումը, հարկավոր է պարզել, թե ինչո՞ւ չպետք է կիրառել «միջնադարյան» հասկացությունը, կամ ինչո՞ւ պետք է 10-14-րդ դարերի հայ մշակույթը բաղդատել հենց 14-16-րդ դարերի եվրոպական մշակույթի հետ: Համեմատե՞լ են արդյոք Հայկական Վերածնության տեսության կողմնակիցները 10-14-րդ դարերի հայ և եվրոպական մշակույթները, ցույց տվե՞լ են դրանց միջև գոյություն ունեցող ընդհանրությունները և տարբերությունները, տեսե՞լ են արդյոք այդ շրջանի եվրոպական մշակույթի մեջ այնպիսի երևույթներ, որոնց նմանները հայ մշակույթի մեջ նրանք բնորոշում են որպես վերածնության երևույթներ: Կամ՝ մինչ թոնդրակեցիների շարժումը Ռեֆորմացիայի հետ համեմատելը, հարկավոր է պարզել, թե ինչո՞ւ դա չի կարելի համեմատել 11-14-րդ դարերում եվրոպական երկրներում տարածված համանման աղանդավորական շարժումների (բոգոմիլների, կատարների, ալբիգոյցիների) հետ, մանավանդ, որ վերջիններս ծագումնաբանորեն և գաղափարապես կապված են պավլիկյան և թոնդրակյան շարժումների հետ: Չէ՞ որ դրանք նույնպես տարբեր ձևերով, այդ թվում՝ զինված, պայքարում էին եկեղեցու դեմ, պաշտպանում թոնդրակեցիներին հոգեհարազատ գաղափարներ, խարխլում ֆեոդալական հասարակության հիմքերը և այլն: Եվրոպայում Ռեֆորմացիան ոչ միայն ուղղված էր կաթոլիկ եկեղեցու դեմ, այլ նաև իտալական հումանիզմի, վերածնական հումանիստական աշխարհայեցողության, առհասարակ ռացիոնալիստական, այդ թվում՝ անտիկ և միջնադարյան սխոլաստիկական մտածողության դեմ: «Հումանիզմը և Ռեֆորմացիայի գաղափարախոսությունը նոր աշխարհայացքի երկու ձևերն էին, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն խզել է կապը միջնադարյան պատկերացումներից և վերականգնել է մարդուն ու աշխարհը: Ընդսմին, երկրորդ ձևի կազմավորումը, պատմականորեն ավելի ուշ, ավելի նեղ ու գործնական կողմնորոշվածությամբ, տեղի էր ունենում ոչ միայն և ոչ այնքան առաջինի հիմնական գծերի ժառանգման, յուրացման և զարգացման, որքան դրանց բացասման ճանապարհով: Այդ պատճառով բողոքական Ռեֆորմացիան ամեն ինչից զատ եղել է կրոնական ռեակցիա Վերածնության նկատմամբ, հումանիզմի՝ իր հիմնական ուղղվածությամբ աշխարհիկ աշխարհայացքի ժխտումը» (10, 123): Հայկական Վերածնության տե-

սության պաշտպանները պետք է պարզեն, թե ինչպիսի՞ կապեր են եղել (կամ եղե՞լ են արդյոք) «հայկական հումանիստական շարժման» և «հայկական ռեֆորմացիայի» միջև: Ինչո՞ւ վերածնական հումանիզմի ներկայացուցիչներ Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը, մեկը՝ գրչով, մյուսը՝ սրով, պայքարել են «հայկական ռեֆորմացիայի» դեմ:

Այսպիսով՝ մշակույթների միջև համեմատություն անցկացնելիս հարկավոր է նախ ճիշտ ընտրել համեմատվող ժամանակահատվածները: Յայկական Վերածնության կողմնակիցները թռիչք են կատարում մշակութային տարածքների և մշակութային ժամանակների վրայով և, փոխանակ հայ մշակույթը համեմատելու ավելի մոտ գտնվող, օրինակ, բյուզանդական մշակույթի հետ, այն համեմատում են ավելի հեռու գտնվող եվրոպական, հիմնականում՝ իտալական մշակույթի հետ: Ինչո՞ւ 10-14-րդ դարերի հայ մշակույթը հասկանալու և գնահատելու համար համեմատություն անցկացնել պատմականորեն միջնադարում իրար հետ անհամեմատ թույլ մշակութային կապեր ունեցած իտալական մշակույթի և ոչ թե պատմականորեն ավելի սերտ կապերի, փոխազդեցությունների և փոխհարաբերությունների մեջ գտնվող բյուզանդական մշակույթի հետ:

Բնականաբար, այս ամենը վկայում է առ այն, որ Յայկական Վերածնության տեսությունը չի կարողանում հիմնավոր ու համոզիչ կերպով բացատրել այն, ինչ ցանկանում է բացատրված տեսնել:

Վերը կատարված վերլուծությունը (մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ անդրադառնալ «Յայկական Վերածնության» տեսության մեթոդաբանության առնչվող բոլոր հարցերին) բավարար հիմք է տալիս եզրակացնելու, որ 10-14-րդ դարերի հայ մշակույթը թե՛ իր ձևով ու բովանդակությամբ, թե՛ զարգացման միտումներով զուտ միջնադարյան մշակույթ է՝ դրան բնորոշ աշխարհայացքային հարացույցների համակարգով: Այն փոփոխությունները, որոնք Յայկական Վերածնության տեսության մեջ կոչվում են «վերածնական», ըստ էության թե՛ բովանդակությամբ, թե՛ դրսևորման ձևերով համահունչ և հոգեհարազատ են միջնադարյան մշակույթին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իսաբեկյան Հ., Հայկական Ռենեսանսի ճարտարապետությունը, Երևան, 1990:
2. Թամրազյան Հ. Ս., Հայ քննադատություն, Գիրք Բ (6-15-րդ դդ.), Երևան, 1985:
3. Կոնրադ Ն. Ի., Վերջաբան, «Վ. Չալոյանի «Հայկական Ռենեսանս» գրքում, Երևան, 1964:
4. Նալբանդյան Վ.Ս., Գրիգոր Նարեկացի, Երևան, 1990:
5. Սիրանույշ, Մեր հայ քննադատները, «Գարուն», 1993, թիվ 5:
6. Չալոյան Վ. Կ., Հայկական Ռենեսանս, Երևան, 1964:
7. Арутюнян А. Западная Европа: от раннего христианства до Ренессанса. Ереван, 2000.
8. Баткин Л. М. Тип культуры как историческая целестность. “Вопросы философии”, 1969, ном. 9, с. 107-108.
9. Брагинский И. С. Возможен ли Ренессанс на Востоке? “Теоретические проблемы восточных литератур”. М., 1969.
10. Кудрявцев О. Ф. Проблемы гуманизма и Реформации в Италии в современной зарубежной историографии. В кн: “Культура эпохи Возрождения и Реформация”. Л., 1981.
11. Лихачев Д. О национальном характере русских, “Вопросы философии”, 1990, 4.
12. Нуцубидзе Ш. И. Собрание сочинений. Т. 4. Тбилиси. 1987.

## ANALYSIS OF SOME METHODOLOGICAL DIRECTIONS CONCEPTS OF “ THE ARMENIAN RENAISSANCE “

SEYRAN ZAQARYAN
Doctor of Philosophy, Professor

**Summary**

It has been analysing in the article some methodical principles of conceptions of “Armenian Renaissance”, especially questions of periods of epoch of Armenian Renaissance, interpretation of understanding “Renaissance” and the employment of comparative models, the author comes to the conclusion, that the reasons and the arguments given by supporters of Armenian Renaissance are not enough for persuading the basic existence of Armenian Renaissance.

## АНАЛИЗ НЕКОТОРЫХ МЕТОДОЛОГИЧЕСКИХ ОСНОВОПОЛОЖЕНИЙ КОНЦЕПЦИИ “АРМЯНСКОГО РЕНЕССАНСА”

СЕЙРАН ЗАКАРЯН
Доктор философских наук, профессор

Резюме

В статье анализируя некоторые методологические основоположения концепции “Армянского Ренессанса”, а именно: вопросы периодизации эпохи Армянского Ренессанса, интерпретации понятия “Возрождение” и использования компаративистической модели, автор приходит к выводу, что приводимые сторонниками Армянского Ренессанса доводы и аргументы не являются достоточно убедительными для обоснования существовании Армянского Ренессанса.

**ԷԴՈՒԱՐԴ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**
*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ*

# ԴԱՏՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գիտելիքների ստացումն ու հաղորդումը մարդկային գործունեության յուրահատուկ ձևերից են, որոնց կառուցվածքային տարրերն ու գործադրման միջոցները լեզվի և տրամաբանության գործող կատեգորիաներն են: Վերջիններս հնարավորություն են տալիս հաղորդելու, վավերացնելու և վերլուծելու նյութի բովանդակությունը՝ ղեկավարվելով գիտականորեն մշակված մեթոդներով ու անհատական մոտեցումներով: Այդ բնույթի ցանկացած գործընթաց պահանջում է իմանալ ոչ միայն այն, թե ի՞նչ է հաղորդվում, այլև՝ ինչպե՞ս է հաղորդվում: Ասել է թե՝ գործ ունենք ճանաչողահաղորդակցական գործունեության հետ, որի սուբյեկտի (դասախոս, լրագրող, դատաիրավական մարմինների աշխատողներ) գործողության և գործունեության ազատությունն ու ստեղծագործական բնույթն ամենից առաջ պայմանավորված են գիտակցության կառավարման, կարգավորման մակարդակով: Վերջինիս պարագայում (իսկ լրատվական դաշտում՝ կապված սոցիալ-քաղաքական գործընթացների բնույթից և ուղղվածությունից) պետք է բացառվի հարկադրման ու կամայականության գործոնը, պիտի հաշվառվի ազատության և օբյեկտիվության գերակա սկզբունքը: Ընդ որում՝ ազատության՝ որպես գիտակցված անհրաժեշտության, լուծվելիք հիմնահարցի մեկնաբանման ժամանակ պետք է ելնել ոչ միայն հավաստի ու հիմնավորված գիտելիքներից, աղբյուրներից, այլև առաջնորդվել գիտական պարզ ու հստակ մեթոդներով, քանզի ցանկացած գործունեության արդյունավետությունը, ինչպես նշվեց, պայմանավորված է ի՞նչ և ինչպե՞ս հարցերի պատասխաններով: Այնպես որ, գործել՝ չի նշանակում սոսկ փաստերի արձանագրում և հաղորդում, այլ ենթադրում է լեզվատրամաբանական հստակ միջոցի առկայության և կիրառման անհրաժեշտություն: Եվ սա ոչ միայն այն պատճառով, որ ճանաչողական գործընթացը զգայականի (փաստացի նյութ, զգայա-առարկայական փորձ) ու տրամաբանականի (մտածողության) միջոցների գործադրում է՝ իրենց միասնության մեջ վերցրած, այլև որպես ոչ պակաս կարևոր մեթոդներով ու եղանակներով լեզվայնացած ինֆորմացիայի՝ գիտական գիտելիքի հաղորդում, որը վճռական դեր է խաղում սոցիալական կյանքի, արդի դարաշրջանում նրանում իրականացող արմատական տեղաշարժերի, պետական և ազգային հիմնախնդիրների, հոգևոր արժեքների վերաիմաստավորմանն ու վերագնահատման գործընթացում: Լրատվաճանաչողական գիտելիքի հաղորդման գործընթացը, այսպիսով, յուրահատուկ բնույթ է կրում: Տվյալ ոլորտում հավասարապես աշխատում են տրամաբանության, լեզվի, ինչպես նաև լեզվատրամաբանության գոյակցության, լեզվամտածողության օրենքներ: Դրանց պահանջները, նախ և առաջ, մտքերի, բառերի ու դարձվածքների ընդունելի շաղկապումն է, ճշմարիտ նախադրյալներից, լեզվայնացած մտքերից ճշմարիտ գիտելիք, իրականությանը հարիր ինֆորմացիայի ստացումն ու հաղորդումը: Այս ընթացքում այլ գործոնների հետ առաջին պլան են մղվում մտքի ու լեզվի քերականության պահանջները: Ընդ որում, եթե լեզվական միավորների ճիշտ օգտագործման միջոցը քերականությունն է, ապա մտքի քերականությունը տրամաբանությունն է, այսինքն՝ տրամաբանության նշանակությունը մտածողության համար նույնն է, ինչ քերականությունը լեզվի համար: Հետևաբար, լեզվամտային գործունեության արդյունքում ճշմարիտ գիտելիքի, օգտակար ինֆորմացիայի ստացման, ամրագրման ու հաղորդման անհրաժեշտ և բավարար գործոններից մեկն էլ մտքի քերականության (տրամաբանության) և լեզվի քերականության պահանջների հստակ, անսխալ կիրառումն է: Ահա թե ինչու, ասենք, լրագրողի, դասախոսի լեզվական կուլտուրան պայմանավորված է նրա իսկ կողմից լեզվի քերականությանը, իսկ մտքի կուլտուրան՝ մտածողության քերականությանը (տրամաբանությանը) տիրապետելու մակարդակով: Հետևաբար, հաղորդակցային գործունեության արդյունքը, հաղորդվող գիտելիքը, լեզվայնացած միտքը պետք է լինի լեզվատրամաբանական գոյակցության իմաստաքերականական պահանջներին համապատասխան: Այսուհանդերձ, հաղորդվող մտքի ճշմարտության ու լրիվության, ամրագրման գործընթացն ամենևին էլ մտքի ու լեզվի քերականական տարրերի տեսամեթոդական, գիտաստեղծագործական դերի (առանձին վերցրած) անտեսում և թերագնահատում չի նշանակում: Դրանք, որպես հարաբերական ինքնուրույն միավորներ, անհրաժեշտ են, իսկ նրանց համատեղ ու միասնական գործադրումը՝ բավարար՝ ցանկացած մտահղացում իրականացնելու, առարկայացնելու, արժևորելու, գնահատելու, մի խոսքով, սեփականություն դարձնելու համար: Այլ կերպ ասած՝ առանց լեզվատրամաբանական կատեգորիաների՝ նախադասություն-դատողությունների, բառ-հասկացությունների, ինչպես նաև հասկացություն և դատողություն չարտահայտող բառերի ու նախադասությունների, քերականական իմաստի ու տրամաբանական շեշտի հստակ կիրառման՝ մտքերի լիարժեք փոխա-

նակում լինել չի կարող: Կենտրոնանալով միայն լեզվի քերականության կամ մտքի քերականության (տրամաբանության տարբեր թեմաների դասավանդման) վրա՝ գործող սուբյեկտը բավարար արդյունքի հասնել չի կարող. մատուցվող նյութը կմնա անըմբռնելի: Այսպես, ի հակադրություն մանկավարժական, գիտական գործունեության՝ լրատվությունը որոշ վերապահումով այնպիսի յուրահատուկ գործընթաց է, որն աշխատում է (կամ հիմնականում աշխատում է) իշխանությունների և ազգաբնակչության միջև՝ ապահովելով հետադարձ կապի սկզբունքը: Հակառակ դեպքում չի բացառվում ընդգծված կողմնակալության առկայությունը: Հիշյալ գործունեության ընթացքում շատ կարևոր է ոչ միայն լեզվի ու մտածողության, լեզվաբանության և տրամաբանության միասնական պահանջների բավարարումը, այլև օբյեկտիվության պահանջը: Նշենք, որ մեկնաբանվող նյութը, հաղորդվող ինֆորմացիան տեսական և մեթոդական առումով պետք է համապատասխանեն իրականությանը: Նշված պարագայում անհամեմատ դժվար է սուբյեկտիվ կարծիքը համոզմունք դարձնելու խնդիրը: Դասավանդման ժամանակ այն առանձին բարդությունների հետ կապված չէ, և մեթոդական իմաստով էլ սխալ չէ ասել՝ «դա իմ կարծիքն է»: Ընդ որում՝ վերջինս կատեգորիկ բնույթ չպետք է կրի: Ուստի դասախոսն էլ ազատորեն կարող է գործածել եղանակավորող բառեր (հնարավոր է, գուցե, ինձ թվում է): Վերջին հաշվով՝ դասախոսը, լրագրողը, մանկավարժը նաև սուբյեկտիվ կարծիք հայտնելու լիարժեք իրավունք ունեցող քաղաքացի-անձինք են: Բայց լրատվական գործունեության ժամանակ հատկապես լրագրողն ամեն կերպ պետք է խուսափի անձնական կարծիքն ընդգծելու, փաստերը զգացմունքային ձևով արտահայտելու հակվածությունից: Հակառակ դեպքում փաստերը ոչ միայն կխեղաթյուրվեն, այլև կիրամցվեն աղավաղված կերպով: Մի խոսքով, թեմայի, նյութի դասավանդումը, հաղորդումը յուրահատուկ երկխոսություն է, հաղորդակցական ակտիվ գործընթաց, որի օգտակար գործողության գործակիցը շատ բանով պայմանավորված է արտահայտվող դատողություն-նախադասությունների, բառ-հասկացությունների և դրանց համապատասխան օբյեկտների, առարկաների և պրոցեսների, իրական փաստերի վերաբերյալ լսողական պատկերների առաջացմամբ: Հասկանալի է, որ և՛ հաղորդողը, և՛ ընկալողը մարդիկ են, բանական էակներ. նրանք իրենց գիտակցության մեջ կրում են բառն ու բանը, միտքն ու խոսքը, կարող են մտածել (արտացոլել, ճանաչել) և հաղորդել, հաղորդակցվել, մտքեր փոխանակել և այլն: Վերջինիս իրականացման ռեալ միջոցը լեզուն է՝ ընդհանրապես, և նրա առավել կարևոր տարրերը (բառ, նախադասություն)՝ մասնավորապես:

Ներկայացվող հոդվածում մեր խնդիրն է՝ բացահայտել տրամաբանության «Դատողություն և նախադասություն» թեմայի դասավանդման և դրա հետ կապված լրատվական գործունեության ընթացքում դատողության և նախադասության փոխադարձ կապի, միասնության, նրանց առանձնահատկությունների վերլուծության տեսամեթոդական որոշ սկզբունքներ:

Հայտնի է, որ դատողության ու նախադասության կապը բխում է մտածողության և լեզվի միասնությունից: Դատողությունը լեզվայնացած միտք է, իսկ նախադասությունը, որոշ վերապահումով, միտք արտահայտող լեզվական միավոր: Եզրակացությունը պարզ է. բոլոր դատողությունները նախադասություններ են, մինչդեռ բոլոր նախադասությունները դատողություններ չեն: Նշված հակադիմությունը պարզելու համար անհրաժեշտ է ելակետ ունենալ դրանց դասագրքային սահմանումները, որոնք բազմաթիվ են: Այսպես. դատողությունը միտք է, մտքի ձև, որտեղ արտացոլված են առարկաների ու երևույթների կապերն ու հարաբերությունները ժխտման կամ հաստատման ձևով: Ընդ որում՝ այն իրողություն է դառնում նախադասությունների, բառերի ու դարձվածքների միջոցով: Այլ կերպ, քան նշանակություն և իմաստ ունեցող լեզվական միավորների միջոցով դատողությունը, հասկացությունը և մտքի մյուս ձևերը արտահայտվել չեն կարող: Այնպես որ, դատողությունը միտք է, մտքի յուրահատուկ դրսևորում, իսկ նախադասությունը՝ այդ միտքն արտահայտելու եղանակ, ձև: Լեզվամտային գործունեության ցանկացած դաշտում (իրականության արտացոլում, իդեալական պատկերների ստացում, ամրագրում, գիտելիքի ձևավորում և հաղորդում) գործ ունենք նյութա-իդեալական գոյակցությունների, ապառարկայացված և նոր ձևով վերանյութականացված միավորների հետ, որոնք էլ հանդիսանում են հաղորդման և ընկալման գործընթացի անհրաժեշտ և բավարար միջոցները: Հիշյալ բնույթի շրջանակներից դուրս նյութա-իդեալական գոյակցության նյութական կողմի ուսումնասիրությունը լեզվաբանության խնդիրն է, իսկ իդեալականի ուսումնասիրությունը՝ տրամաբանության: Այստեղ այլընտրանք լինել չի կարող և չկա: Գիտությունների տարբերակման չափանիշներից մեկն էլ նրանց ուսումնասիրության ոլորտն է: Լեզվի մասին գիտությունը՝ լեզվաբանությունը, ուսումնասիրում է լեզուն ընդհանրապես՝ որպես նյութական միավորների ամբողջություն, իսկ նրա ծագման, զարգացման և գործառության առանձնահատկությունները՝ մասնավորապես: Ինչ վերաբերում է տրամաբանությանը, նրա ուսումնասիրության բնագավառը մտածողությունն ու նրա ձևերն են, օբյեկտիվ իրականության իդեալական պատկերները: Խնդիրը տվյալ դեպքում դատողության՝ որպես տրամաբանական կատեգորիայի, և նախադասության՝ որպես քերականական կամ լեզվաբանական կատեգորիայի կիրառման գործընթացում նրանց միասնական դերի, տեսամեթոդական պահանջների նպատակամետ կիրառումն է: Այսինքն՝ լեզվատրամաբանական գործունեության ընթացքում (դասախոսական, լրատվական, ինչու չէ, նաև քարոզչական) հաղորդողն ու ընկալողն արդեն իսկ ենթագիտակցորեն, ներըմբռնողաբար առնչվում են երկու տարաբնույթ բնագավառների (տրամաբանական և լեզվական) ձուլման, լեզվամտային հակադրամիասնական դաշտի ստեղծման հետ: Հետևաբար, այդպիսի գոյակցության և նրա առանձին տարրերի, առանձնահատկությունների ընդգծումը և՛ տեսական, և՛ մեթոդական նկատառումներով դառնում է անխուսափելի:

Նախադասությունը ներըմբռնողաբար գիտական

գրականության մեջ, բուհական և դպրոցական դասագրքերում սահմանվում է որպես միտք արտահայտող բառ կամ բառերի ամբողջություն[1]: Դրա հետ միասին, ինչպես նշվեց, կան նախադասություններ, որոնք դատողություններ չեն: Բնականաբար նոր հարց է ծագում. եթե նախադասությունը միտք (դատողություն) արտահայտելու ձև է, իսկ կան նախադասություններ, որոնք այդպիսի հատկությամբ օժտված չեն, այսինքն՝ դատողություն չեն, ապա նախադասության վերոբերյալ սահմանումը սխալ է կամ անկանոն: Այս պարագայում կարևոր է ընդգծել, որ դատողության գոյության եղանակը (դատողությունը գիտելիք է և լեզվի շրջանակներից դուրս այդպիսին լինել չի կարող) նախադասությունն է, իսկ նախադասության էական հատկությունը՝ նաև միտք և իմաստ արտահայտելը:

Հետևաբար, առաջադրված հարցի էության պարզաբանման համար անհրաժեշտ է համառոտակիորեն անդրադառնալ մտքին և իմաստին[2], նրանց գործառութային առանձնահատկություններին: Լեզուն՝ ընդհանրապես, քերականական միավորներն էլ՝ մասնավորապես, նշանակման, հաղորդակցական կատեգորիաներ են, կարող են կիրառվել որոշակի համատեքստում, որի շրջանակներից դուրս կդառնան անիմաստ կամ կիմաստափոխվեն: Այս առումով՝ սխալ չի լինի իմաստը համարել համատեքստային կատեգորիա: Ինչ վերաբերում է դատողությանը, ապա այն՝ որպես մտքի յուրահատուկ ձև, իմացաբանական, արտացոլական կատեգորիա է և ծագումնաբանորեն ու գործառութային առանձնահատկություններով քիչ է առնչվում կամ ամենևին չի առնչվում իմաստին (ավանդական տրամաբանության մեջ հարցը քննարկվում է նշանակություն և իմաստ հարաբերության կտրվածքով):

Դատողությունը, թեկուզև կառուցվածքային իմաստով, բառ-հասկացությունների ամբողջություն է, իսկ նախադասությունը՝ ինչպես բառ-հասկացությունների, այնպես էլ հասկացություն չարտահայտող բառերի և նրանց հարաբերությունների ամբողջություն: Օրինակ՝ Երկիր մոլորակի բոլոր բնակիչները մահկանացուներ են  դատողություն-նախադասության բոլոր միավորները բառ-հասկացություններ են, իմաստ են արտահայտում: Ուսուցման, լրատվական և այլ բնույթի հաղորդակցական գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել և՛ տրամաբանության, և՛ լեզվաբանության պահանջները, կանոններն ու օրենքները: Դրա հետ միասին, վերոհիշյալ բնույթի գործունեության ժամանակ չի բացառվում այնպիսի նախադասությունների, բառերի գործածությունը, որոնք դատողություն, հասկացություններ չեն, բառերի և ոչ թե բառ-հասկացությունների ամբողջություն են, միանշանակորեն բավարարում են քերականության օրենքների և կանոնների պահանջները: Դրանք կիրառման տվյալ համատեքստում իմաստ ունեն և օժանդակ դեր են խաղում նյութի հաղորդման, ընկալման և հստակեցման համար:

Դատողության և նախադասության (ինչպես նաև բառի ու հասկացության) ընդհանրությունների, տարբերությունների լուսաբանման, դրանց կիրառման դեպքում խիստ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ նրանց առավել հատկանշական յուրահատկությունները, որոնցից, մեր համոզմամբ, առավել կարևոր են՝ դատողության հիմնական հատկությունը ժխտումը կամ հաստատումն է. այն կարող է լինել կամ ճշմարիտ, կամ կեղծ. ոչ մի դատողություն միաժամանակ ճշմարիտ և կեղծ կամ մի երրորդ գոյակցություն լինել չի կարող:

Փաստորեն դատողությանն ամրագրված է երկարժեքության (ճշմարիտ կամ սխալ) սկզբունքը, իսկ դատողության տրամաբանությունը, բնական է, երկարժեք ուսմունք է: Այսպես՝ Արիստոտելը եղել է Ա. Մակեդոնացու ուսուցիչը  (1), Որոշիչն ու պարագան նախադասության գլխավոր անդամներ չեն  (2), Բոլոր բանաստեղծները գրող են   (3), Ոչ մի ասուն չորքոտանի չէ  (4) դատողություններից 1-ը և 3-ը հաստատական, իսկ 2-ը և 4-ը ժխտական բնույթի են: Դրանք պարզ հատկության դատողություններ են և կարող են ունենալ ճշմարիտ կամ կեղծ արժեքներ միայն, կարող են համապատասխանել կամ չհամապատասխանել իրականությանը: Հետևաբար, դատողության՝ որպես օբյեկտիվ իրականության արտացոլման յուրահատուկ ձևի արժեքավորման գործընթացի հիմքում ընկած է «երրորդի բացառման» երկաթյա օրենքը: Երկրորդենք ասվածը. դատողությունը ոչ միայն չի կարող միաժամանակ լինել և՛ ճշմարիտ, և՛ կեղծ, այլև միաժամանակ չի կարող լինել կամ ոչ ճշմարիտ, կամ ոչ կեղծ[3]:

Նախադասությունը, ի հակադրություն դատողության, որպես քերականական միավոր հաստատման ու ժխտման, ճշմարիտ ու սխալ արժեքներով չի բնութագրվում: Այդպիսի քերականական միավորների կիրառման ու մեկնության ժամանակ առաջին պլան են մղվում բառերի, բառակապակցությունների լեզվաքերականական օրինաչափություններն ու հատկությունները: Հաճախ օգտագործվում են ժխտում և հաստատում պարունակող՝ X-ը գերազանցիկ է, X-ը պատմաբան չէ  տիպի նախադասություններ, որոնց ստորոգյալները՝ գերազանցիկ է, պատմաբան չէ, հաստատում և ժխտում են X ենթակայի այդպիսին լինելն ու չլինելը, սակայն նշված հատկանիշները հիշյալ նախադասությունները դատողություն դիտարկելու գրավական չեն, որովհետև քերականական այդ միավորները չեն կարող բնութագրվել որպես ճշմարիտ կամ կեղծ արժեքներ: Միևնույն հատկությամբ օժտված նախադասությունը մի դեպքում դատողություն դիտարկելը, մեկ այլ դեպքում՝ չդիտարկելը անխուսափելիորեն ենթադրում է նոր և միանգամայն օրինաչափ հարցադրում: Մի՞թե անվանափոխությունը անվանվողի որակական փոփոխություն է ենթադրում: Չէ՞ որ անունն անվանվողի կամ անվանվող օբյեկտի հետ բովանդակային ընդհանրություն չունի: Հարցադրումը օրինաչափ է և տեղին: Միևնույն օբյեկտը կարող է ստանալ տարբեր անվանումներ, որոնք արտահայտության միջոցներով ու ձևերով տարբեր են, բայց իմաստով ու բովանդակությամբ՝ նույնը: Բնական է, որ լեզու ուսումնասիրող անձանց մոտ տվյալ հարցի առաջադրումը, ամենայն հավանականությամբ, կապվում կամ զուգորդվում է հոմանիշների օգտագործման գործընթացի հետ: Անշուշտ, հարցը պետք է պատասխանվի, ընդգծվի, որ

լեզվաբանության մեջ հոմանիշները քննարկվում են բառագիտության բաժնում, որ գոյություն ունեն ոչ թե հոմանիշ նախադասություններ, այլ հոմանիշ բառեր (պատ-որմ-միջնորմ, հարևան-դրացի-դրկից-պատկից-շրջաբնակ և այլն): Ինչ վերաբերում է դատողություն-նախադասություն, նախադասություն-դատողություն միավորները որպես հոմանիշներ ընդունելուն, ապա պետք է ասել՝ դրանք, ինչպես արդեն հպանցիկորեն հիշատակել ենք, վերաբերում են տարբեր ոլորտների, տարբեր գիտությունների կատեգորիաներ են (դատողությունը՝ տրամաբանության, նախադասությունը՝ լեզվաբանության): Այսինքն՝ գիտությունները որպես ճանաչողական գործունեություն իրենց առջև դրված խնդիրները իրականացնում են տարբեր ձևերով ու միջոցներով, զբաղվում են տարբեր ոլորտներով: Նախադասությունը քերականական միավոր է, լեզվի մասին համապատասխան գիտելիքի օբյեկտ և, բնականաբար, նոր գիտելիքի ձեռք բերման միջոց: Դատողությունը տրամաբանական կատեգորիա է, նոր գիտելիքների ստացման, բխեցման նախադրյալ, ինչպես նաև նույն տրամաբանության հետազոտության, իմացության նոր օբյեկտ[4]: Ահա թե ինչու վերոհիշյալ բնույթի հարցադրումն օրինաչափ համարել չի կարելի, ինչի հաստատումն է նաև այն փաստը, որ «... դատողության ձևական-տրամաբանական ուսմունքը չի նույնանում նախադասության քերականական ուսմունքի հետ»[5], և «... ինչպես լեզվի և մտածողության միասնությունը չի նշանակում նույնություն, այնպես էլ նախադասության և դատողության միասնությունը ենթադրում է նաև տարբերություններ»[6]: Այլ կերպ ասած՝ դրանք տարբեր անուններ, բայց միևնույն բովանդակությունն ունեցող միավորներ, առավել ևս՝ հոմանիշներ չեն, այլ՝ հակադրամիասնություններ, նյութա-իդեալական գոյակցություններ են, մտքի ձևի ու քերականական միավորի միասնություններ: Շարունակելով հարցի վերլուծությունը՝ ավելացնենք միայն՝

բ. Դատողությունը կարող է լինել նաև անիմաստ, իսկ այդ տիպի նախադասության մասին խոսք լինել չի կարող: Իմաստ արտահայտելը, թերևս, նախադասության ամենակարևոր առանձնահատկությունն է: Այսպես, օրինակ, առօրյա խոսակցության ժամանակ և ընդհանրապես կարող են օգտագործվել Արամը սուր է, Սիգարոնը չեմպիոն չէ, Ստորոգյալը բայի հոմանիշն է արտահայտությունները, որոնք որպես դատողություններ, ամենայն հավանականությամբ, անիմաստ են, որպես նախադասություններ՝ իմաստակիր:

գ. Դատողության և նախադասության՝ որպես հակադրամիասնության առանձնահատկություններից մեկն էլ պայմանավորված է նրանց կազմով: Այն առավել քան ակնհայտ է պարզ ընդարձակ նախադասություն-դատողությունների մեջ: Այսպես՝ Աշխարհահռչակ շախմատիստ, զտարյուն քրիստոնյա Գարի Կասպարովը ծնվել է 1963 թ. Բաքու քաղաքում նախադասություն-դատողությունը, որպես քերականական միավոր, պարզ ընդարձակ նախադասություն է, բաղկացած ենթակայից (Կասպարով), ստորոգյալից (ծնվել է) և գոյականական ու բայական անդամների լրացումներից: Որպես դատողություն՝ այն բաղկացած է միայն սուբյեկտից (s) (աշխարհահռչակ շախմատիստ և զտարյուն քրիստոնյա) և ծնվել է 1963 թ. Բաքու քաղաքում պրեդիկատից (p): Ահա թե ինչու բոլոր դատողություններն էլ ձևական տրամաբանության մեջ սիմվոլիկ ձևով արտահայտվում են s–ը p է, կամ s-ը p չէ տեսքով: Փաստորեն՝ վերը բերված օրինակը՝ որպես քերականական միավոր, նախադասություն դիտարկելու դեպքում ենթակայի և ստորոգյալի կապը առավել պարզ մեկնաբանելու համար օգտագործվում են նախադասության երկրորդական անդամներ, իսկ որպես տրամաբանական միավոր դիտարկելու դեպքում դատողության կապն իրականացվում կամ բացատրվում է s (տրամաբանական ենթակա)-p (տրամաբանական ստորոգյալ) հարաբերությամբ միայն, որովհետև կապը դատողության ինքնուրույն միավոր չէ, այդ ֆունկցիան իր վրա է վերցնում դատողության պրեդիկատը՝ տրամաբանական ստորոգյալը: Այսպես՝ ՀՀ շախմատի հավաքականը մեկնել է Մոսկվա դատողություն-նախադասության տրամաբանական ենթական (s) ՀՀ շախմատի հավաքականը հասկացությունն է, իսկ տրամաբանական ստորոգյալը (p)՝ մեկնել է Մոսկվա հասկացությունը: Ինչպես տեսնում ենք, դատողության s-ի և p-ի կապը որևէ առանձին միավորով չի արտահայտված և չի էլ կարող արտահայտվել, որովհետև է-ն (որոշ տրամաբանների կարծիքով՝ այն s-ի և p-ի կապն իրականացնող միջոց է) դատողության ինքնուրույն միավոր չէ: Այդ կապն ու հարաբերությունն իրականացվում է մեկնել է Մոսկվա տրամաբանական ստորոգյալի (p) միջոցով: Հետևաբար, միանգամայն ընդունելի է այն տեսակետը, ըստ որի՝ «Ավելի ճիշտ կլինի դատողության կապն ուղղակի համարել պրեդիկատի մասը»[7]: Բացառություն կարող են լինել նաև քերականական դաշտում օգտագործվող, դիցուք, Համերգը մարզադաշտում էր, Ուշքը դրսում է բնույթի արտահայտությունները, որոնց ստորոգյալները (էր, է) հանդես են գալիս որպես առանձին քերականական միավորներ: Այս հարցը կարելի է մեկնաբանել պարզ և բաղադրյալ ստորոգյալների տեսանկյունից, ինչը դուրս է մեր նպատակներից ու խնդիրներից[8]: Այսպիսով՝ լեզվատրամաբանական գործունեությունը՝ որպես իմացաբանական-հաղորդակցական յուրահատուկ գործընթաց, ենթադրում է մի կողմից՝ դատողության և նախադասության առանձին վերցրած յուրահատկությունների, մյուս կողմից՝ դատողություն-նախադասություն հակադրամիասնության գործառութային առանձնահատկությունների դրսևորման, հետևաբար՝ մեկնաբանման անհրաժեշտություն:

---

1 Լեզվաբանության մեջ գոյացել է նախադասության վերաբերյալ հարյուրից ավելի սահմանում: Բոլոր դեպքերում ընդգծվում են երկու հիմնական հատկանիշներ՝ ստորոգում և հնչերանգային ավարտվածություն: Խոսողական գործընթացի իմացաբանական կողմը կազմում է մտածողությունը, իսկ արտահայտչական կողմը՝ խոսքը կամ նախադասությունը:

2 Տե՛ս Кондаков Н.И. Логический словарь, с. 162, 482.

3 Մանրամասն տե՛ս Էդ. Հարությունյան, Դեդուկտիվ տրա-

մաբանության տեսության հարցեր, Երևան, 1972, էջ 189։

[4] Նույն տեղում, էջ 188։

[5] Նմանատիպ հարցադրում հնարավոր է նաև «Հասկացություն և բառ» թեմայի լուսաբանման ընթացքում, որի պատասխանը նույնպես կապված է որոշ դժվարությունների հետ։ Տե՛ս Гетаманова А. Д., Логика, М. 1986, Наседкин А. Д., Язык как формированиие мысли, в сб. “Язык и мышление”, М.,1967, с. 65-74։

[6] Գ. Ա. Բրուտյան, Տրամաբանության դասընթաց, Երևան, 1976, էջ 105։

[7] Նույն տեղում, էջ 103։

[8] Այս մասին տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974. Մ.Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987. Ս. Վ. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988։

## Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն


1. Ս.Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1969։
2. Գ. Կ. Խաչատրյան, Հայոց լեզվի ոլորաններում, Վանաձոր, 1994։
3. Кондаков Н.И., Логический словарь.
4. Էդ. Հարությունյան, Դեդուկտիվ տրամաբանության տեսության հարցեր, Եր.,1972։
5. Гетманова А.Д., Логика, М., 1986, Наседкин А.Д., Язык как средство формирование мысли, в сб. ``Язык и мышление'', М.1967.
6. Գ. Ա. Բրուտյան, Տրամաբանության դասընթաց, Եր., 1976։
7. Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974։
8. Մ.Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987։
9. Ս. Վ. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988։


## CORRELATION OF PROPOSITION AND SUGGESTION IN THE STRUCTURE OF COGNITIVE-COMMUNICATION ACTIVITIES


**EDUARD ALAVERDYAN**

Candidate of Philosophy, Docent



**Summary**

In the functional-anthological aspect the cognitive-communication activities of a man is a unity of contrast of speech-apprehension means directed to the acquisition, assimilation and transmission of knowledge.

The first condition and consequence of the given process is the rise of thinking models, ideal conception of objects of cognition (potential knowledge) which are followed by their linguistic symbols (real knowledge). Just in the result of it a particular event, fact, information is affirmed, perceived and applied either for the informer or for the respondent.

This process can indisputably be carried out only through joint action of linguistic and logical categories. In the result many problems of man-nature, nature-man relations can be solved.

Consequently, the analysis of this process as a unity of linguistic (word, word-concept, suggestion-proposition) and logical (concept-word, proposition-suggestion) means, assumes not only as an analysis of their differences, similarities, functional peculiarities, but also as an elucidation of the requirements and tasks of the new structure “speech-concept” (in this case proposition-suggestion).

The represented article is precisely dedicated to the problem under consideration.


## СООТНОШЕНИЕ СУЖДЕНИЯ И ПРЕДЛОЖЕНИЯ В СТРУКТУРЕ ПОЗНАВАТЕЛЬНО-КОММУНИКАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ


ЭДУАРД АЛАВЕРДЯН

Кандидат философских наук, доцент



Резюме

Познавательно-коммуникативная деятельность человека в функционально-антологическом аспекте представляет собой своеобразное единство противоположностей речемыслительных средств, которое направлено на обретение, фиксацию и передачу знаний.

Первым условием и следствием данного процесса является возникновение мыслительных моделей, идеальных образов объектов познания (потенциального знания), после чего следует их обозначение языковыми знаками (реальное знание). Именно в результате этого данное событие, факт, информация утверждается, воспринимается и становится применимым и для сообщающего, и для воспринимающего.

Неоспоримо, что этот процесс может быть осуществлен лишь через совместное действие языковых и логических категорий. В результате могут быть решены многие проблемы взаимоотношений человек-природа, человек-человек.

Следовательно, анализ этого процесса как единства язиковых (слово, слово-понятие, предложение, предложение-суждение) и логических (понятие-слово, суждение-предложение) средств предпологает как анализ их отличий, сходства, функциональных особенностей, как и выяснение требований и задач новой структуры “речь-мысль” (в данном аспекте суждение-предложение). Именно данной проблеме и посвящена представленная статья.

# ՍԵՐԳՈ ԵՐԻՑՅԱՆ. «ԿՐԹԱԿԱՐԳԸ ԴՊՐՈՑԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ Է»



Հանրապետության կրթական համակարգը հերթական բարեփոխումների փուլ է թևակոխել: Արդյունքներն անկանխատեսելի են և առանձնապես ոգևորություն չեն ներշնչում, քանզի արդեն ճաշակել ենք բարեփոխում կոչված փորձերի դառը պտուղները, և ցանկացած նորարարություն ի սկզբանե անվստահության կնիքն է կրում: Անշուշտ, կրթական համակարգում մեծ դերակատարություն ունի դպրոցը: Աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով նախորդ տարիներին բարեփոխվեց հանրակրթության կառավարման համակարգը, դպրոցներն անցում կատարեցին ֆինանսավորման նոր ձևի, մշակվեցին, ավելի թարմացվեցին կրթական ծրագրերն, ու դրանց համապատասխան հրատարակվեցին նոր դասագրքեր: Սակայն ակներև է դարձել, որ այսօր անհրաժեշտ է կրթական համակարգը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին` չանտեսելով կրթության հանդեպ հայեցի, ավանդական մոտեցումները: Համենայն դեպս` այսպես են հավատացնում նոր բարեփոխիչները: Շրջանառության մեջ է դրվել ՀՀ ԿԳ նախարարության հանրակրթության պետական կրթակարգի նախագիծը. այն դպրոցի ապագան պայմանավորող հիմնական փաստաթուղթն է լինելու: Թե ինչպիսի զարգացումներ են սպասվում հանրակրթության ոլորտում առաջիկայում, ստորև ներկայացված է «Վասն արդարութեան» հանդեսի խմբագիր ԻՐԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ` ՀՀ ԿԳ նախարար ՍԵՐԳՈ ԵՐԻՑՅԱՆԻ հետ հարցազրույցի շրջանակներում:

– Պարոն Երիցյան, պետական կրթակարգի ներդրումը թերևս հերթական քայլը կլինի համաեվրոպական միասնական կրթական համակարգի ձևավորման առումով: Մեր ընթերցողին, անշուշտ, հետաքրքրում է արդեն շրջանառության մեջ դրված կրթակարգի նախագծով սահմանված կրթական քաղաքականության և հանրակրթության չափորոշիչների վերաբերյալ Ձեր գնահատականը և ԿԳ նախարարության ձեռնարկած միջոցառումները վերոնշյալ նորմատիվ փաստաթղթին հանրությանն իրազեկելու, ակտիվ քննարկում ծավալելու և այն առավել ճկուն ու կենսունակ դարձնելու ուղղությամբ:

– Նոր կրթակարգը դպրոցի սահմանադրությունն է, այսինքն` այն հիմնական սկզբունքների սահմանումը, որը հնարավորություն կտա կրթակարգի պահանջներն իրականացնել: Ես կարծում եմ, որ կրթակարգի բավական լավ նախագիծ է ստեղծվել, որտեղ հաշվի են առնվել մեր ավանդական դպրոցի ձեռքբերումները` սկսած խորհրդային դպրոցից մինչև վերջին 10-15 տարիների փորձը: Մինչ այս կրթակարգի ստեղծումը բարեփոխման միտված քայլերին, որ կատարվել են նոր ծրագրերի, դասագրքերի ստեղծման գործում, պարզապես հավելվել են նաև այն կրթական ավանդույթները, պահանջները, որոնք գոյություն ունեն եվրոպական երկրներում: Փորձում ենք ավանդականը հարստացնել միջազգային չափանիշներով, ինչը մեզ թույլ կտա ունենալ առավել շարժուն, ճկուն, համադրելի կրթական համակարգ: Ձգտում ենք ունենալ այնպիսի կրթական համակարգ, որն իր որակով կարող է քննություն բռնել ոչ միայն Հայաստանում, այլև Եվրոպայում: Բարեփոխվում են և´ գիտելիքների մատուցման, և´ դասահարցման մեթոդները: Մասնավորապես, մեծ նշանակություն են ստանում ինտերակտիվ, թեստավորման մեթոդները, հատուկ ուշադրություն է դարձվում գիտելիքների մատուցման կոմբինացված ձևին. այսինքն` ո´չ միայն ֆիզիկա, ո´չ միայն քիմիա, ո´չ միայն մաթեմատիկա, նաև` կյանքի հմտություններ (որի փորձերն արդեն կան), արվեստ, շրջակա միջավայր, այսինքն` այն բոլորը, ինչ անհրաժեշտ է, որ ձևավորվի անհատ ոչ միայն գիտելիքներ, այլև ինքնատիպ մտածողություն, տրամաբանելու կարողություն և հատկանիշներ ունենալու առումով: Մեր գերխնդիրը աշակերտին սոսկ գիտելիքներ տալը չէ. նա պետք է կարողանա այդ գիտելիքները ստեղծագործաբար մշակել, ձևավորել սեփական դատողություն, մտածողություն, կարողանա ինքնուրույն հասնել գիտելիքի ամրապնդման ավելի բարձր աստիճանի և այդ ամենը օգտագործել կրթական հատվածի մյուս մակարդակներում: Այս է այն հիմնականը և արժեքավորը, որ պետք է ունենա կրթակարգը, որի քննարկումներն արդեն իսկ սկսված են: Սա այն դեպքերից մեկն է, որ շատ ակտիվ, բազմակողմանի քննարկումներ են ակնկալվում ամբողջ հանրապետությունում:

Նախագիծը վերջնական տեսքով է և առաջիկայում կտարածվի: Կազմել ենք քննարկումների ժամանակացույց. մարտի կեսերին կամբողջացնենք այդ քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկությունները, իսկ մարտի վերջին կրթակարգը կներկայացվի Կառավարություն, կհաստատվի, որպեսզի մենք կարողանանք սկսել ծրագրի ներդրումը Հայաստանում:

– Կրթակարգը ենթադրում է մեծ ծավալի փոփոխություններ ամբողջ կրթական համակարգում: Բնականաբար, փոփոխվելու-բարեփոխվելու են նաև ծրագրերը, դասագրքերը: Կկամենայի իմանալ` կրթակարգում ներկայացված հասարակագիտական առարկաներ բնագավառը արդյո՞ք ներառում է «Իրավունք» առարկայաշարը:

– Այո, «Իրավունք»-ը կամ այն, ինչ առնչվում է իրավունքի խնդիրներին, քաղաքացիական հասա-

րակության լիարժեք անդամի ձևավորմանը, ներկայացված է կրթակարգում: Սկզբունքորեն կարելի է ասել, որ մեր իրականության հետ կապված և ոչ մի հատված այս նոր կրթակարգում չի անտեսված. ընդհակառակը, մենք աշակերտին պատկերացնում ենք ոչ միայն որպես սոսկ տեսական գիտելիք ստացող. նրան նախապատրաստում ենք որպես մարդ, որն ապրում է այս իրականության մեջ, այս իրավիճակում: Այսինքն՝ նա, ավարտելով դպրոցը, կունենա գիտելիքներ, որոնք կնպաստեն բուհում կամ միջին մասնագիտական կրթական համակարգում ուսումը շարունակելու, կնախապատրաստեն նրան կյանքին: Սա ամենակարևոր, հիմնական, հիմնարար ուղղվածություններից մեկն է, որ ունի կրթակարգը: Վերջին տարիների ընթացքում մեր դպրոցներում փորձարկվել են այս կրթակարգի ամենատարբեր տարրերը: Պատահական չէ, որ մենք այս փաստաթուղթը համարում ենք նոր. «Կյանքի հմտություններ», «Առողջ ապրելակերպ» և նմանատիպ այլ առարկաները տեղ կգտնեն կրթակարգում՝ նոր տեսքով, սխալները, բացթողումները ճշգրտված, հաշվի առնված: Փաստորեն, կրթակարգի կիրառման արդյունքում մենք կունենանք շրջանավարտ, որը կյանքը լավ է պատկերացնում և ունի բավարար գիտելիքներ:

– Այսօր կրթական համակարգը նոր, ասել է թե՝ հերթական բարեփոխումների շեմին է: Չենք կարծում, որ ներկայումս այդ բարեփոխումները հնարավոր են առանց միջազգային կառույցների, ինչու չէ, նաև հասարակակական կազմակերպությունների հետ համագործակցության և աջակցության: Զորօրինակ՝ մեր կազմակերպությունը, որը տարիների փորձառություն ունի կրթական ծրագրերի իրականացման, մասնավորապես «Իրավունք» առարկայաշարը դասավանդող ուսուցիչների (ոչ միայն) վերապատրաստման ոլորտում և լավ հարաբերություններ է պահպանում ձեր նախարարության կառույցներից մեկի՝ Կրթության ազգային ինստիտուտի հետ, համատեղ ուժերով փորձ է անում դպրոց «տանել» ուսուցման նոր եղանակ՝ համագործակցային ուսուցումը: Հարցս հետևյալն է՝ արդյո՞ք առաջիկա բարեփոխումների իրականացման ընթացքում նախարարությունն ակնկալում է հասարակական և միջազգային կառույցների աջակցությունը:

– Իհարկե: Սակայն ոչ մի միջազգային կազմակերպություն ոչ մի գործունեություն այլևս չի ծավալելու մեր դպրոցներում՝ առանց մեր նախարարության: Առաջիկայում այստեղ տեղի կունենա հանդիպում միջազգային այն հիմնական կազմակերպությունների հետ, որոնք համակարգում են հասարակական և այլ կազմակերպությունների գործունեությունը: Հանդիպման ժամանակ մենք կներկայացնենք մեր մոտեցումները. մասնավորապես, կարծում եմ, չպետք է կրկնել ծրագրերը: Գաղտնիք չէ, որ երբեմն կրկնվող ծրագրեր են իրականացվում: Այս ծրագրերում, օրինակ, կա ուսուցիչների վերապատրաստման եռամյա ամբողջական մի ցիկլ, որը պետք է իրականացվի հենց այս կրթակարգին անցնելու նպատակով: Բոլոր հասարակական կազմակերպություններն իրենց ծրագրերը պետք է համակարգեն մեզ հետ: Մենք ոչ մի կազմակերպության միտված չենք խանգարելու կամ խոչընդոտելու նրանց գործունեությունը, պարզապես պետք է իմանանք՝ որտեղ ի՛նչ է իրականացվում, որքանո՛վ են դրանք առնչվում կրթակարգին, զարգացման ծրագրերին, որպեսզի իմանանք՝ որո՛նք են շփման եզրերը: Սա՝ առաջինը, և երկրորդը՝ անկասկած, կրթակարգի նախագծի քննարկմանը, այնուհետև, ինչու չէ, նաև իրականացմանը մենք շատ լայն կերպով մասնակից ենք դարձնելու հասարակական կազմակերպություններին, քաղաքական ուժերին (նրանք ևս, կարծում եմ, հետաքրքրված են այս կրթակարգի քննարկմամբ) և, իհարկե, բոլոր նրանց, ովքեր շահագրգռված են այս կրթակարգի հաջողությամբ՝ ուսուցիչներին, աշակերտներին, ծնողներին: Վերջերս Հանրային ռադիոյի «Ռեզոնանս» հաղորդման ժամանակ, որին մասնակցում էին նաև 10-րդ դասարանցիներ, ինձ հարցրին. «Պարոն Երիցյան, ինչո՞ւ մենք էլ (10-րդ դասարանցիներ՝ Ի. Հ.) չմասնակցենք»: Որևէ խնդիր չեմ տեսնում. ես հրահանգել եմ, որ նախատեսված կոնֆերանսներին հնարավորինս մասնակցեն նաև աշակերտները, բարձր դասարանցիները, իհարկե: Այսինքն՝ այս կրթակարգի քննարկմանը պետք է ամբողջ հասարակությունը մասնակցի: Մենք կարող էինք այլ ճանապարհ ընտրել՝ միայն գերատեսչական, կրթական համակարգում քննարկումների ճանապարհը, ինչը ես ճիշտ չեմ համարում: Պետք է քննարկի ամբողջ հանրությունը, մամուլում կլինեն առաջարկություններ: Փետրվար-մարտ ամիսները կլինեն քննարկումների շրջան, որի ընթացքում էլ կփորձենք ամբողջացնել բոլոր այն մոտեցումները, որոնք կան այս ծրագրի նկատմամբ: Այնպես որ, մենք պատրաստ ենք՝ ցանկացած ոք, ով կառուցողական կարծիք կհայտնի այս ամենի մասին, լսել նրան: Իհարկե, մենք դեմ կլինենք այն մարդկանց կարծիքներին, ովքեր, չկարդալով կրթակարգը (մեր իրականությունում այդպես էլ է լինում), կփորձեն կարծիք հայտնել վերջինիս վերաբերյալ: Այդ դեպքում ես չեմ կարծում, որ կառուցողականությունը կարող է լինել գերակշռող: Նախարարությունում ևս կլինեն բազմաթիվ քննարկումներ: Առաջիկա ամսվա ընթացքում Երևանում սեմինար ենք անցկացնելու լրատվամիջոցների ներկայացուցիչների համար. նրանք ավելի մանրամասնությամբ կծանոթանան ծրագրին: Չնայած առաջինը հենց լրագրողներն են, որոնց առիթ ենք ունեցել ներկայացնելու այս կրթակարգը, և համարենք, որ այսօր ամենաշատ նրանք են ծանոթ:

– Պարոն նախարար, մեր ամսագիրն անվճար բաշխվում է ՀՀ, ինչպես նաև ԼՂՀ բոլոր հանրակրթական դպրոցներ, և չանդրադառնալ այսօր համակարգում արդեն իսկ ցավոտ «արդյունքներ» արձանագրած և, այնուամենայնիվ, շարունակվող օպտիմալացման գործընթացին, թերևս անբնական կլինի, քանզի ընթերցողն ակնկալում է սպառիչ, ինչու չէ, նաև հուսադրող պատասխաններ լսել Ձեզնից: Կցանկանայի տեղեկանալ՝ մշակվո՞ւմ են արդյոք նոր չափորոշիչներ, որոնք հնարավորություն կտան փաստորեն հարկադիր անգործության մատնված ուսուցիչների ընտրության ժամանակ սխալվելու հավա-

նականությունը հասցնել նվազագույնի և խուսափել դպրոցի տնօրենների կամայականություններից:

– Այդ չափորոշիչներն արդեն մշակված են, դրանք գործում են. դա այն կարգն է, որը սահմանել է նախարարությունը, բնականաբար, առաջնորդվում ենք նաև աշխատանքային օրենսգրքով: Չենք կարող չհիմնվել աշխատանքային օրենսգրքի վրա, եթե խոսքը վերաբերում է ուսուցչի, ցանկացած քաղաքացու աշխատանքին: Շատ դեպքերում ուսուցիչը մատնանշում է՝ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ երկու անչափահաս երեխա ունեցող մարդուն չպետք է կրճատել, բայց այս պարագայում հաշվի չի առնվում աշխատանքային փորձը. մյուս դեպքում՝ այլ մարտավարություն է ստանձնում առավել քան քսան տարվա աշխատանքային փորձ ունեցող ուսուցիչը: Բայց, գիտեք, ցանկացած աշխատանք երկու կողմ ունի՝ պրոֆեսիոնալիզմ (ցանկացած երկրում դա ընդունված է) և սոցիալական գործոն: Եթե մարդ աշխատում է, եթե նրան ազատում կամ ընդունում են աշխատանքի, հաշվի են առնում այս երկու գործոնները: Պրոֆեսիոնալի՞զմ, թե՞ աշխատանքային փորձ ընտրության մեջ, իհարկե, կան որոշակի հակասություններ, ինչն էլ խնդիրներ է հարուցում:

Սակայն գործընթացը մոտենում է ավարտին: Փորձենք այսպես ասել՝ այս տարի վերջացնում ենք զարգացման ծրագրի մի հատվածը, և դժվար կլինի փոխել խաղի կանոնները կես ճանապարհին: Պատկերացրեք՝ մի հատվածում առաջնորդվել ենք այս ընթացակարգով, հիմա փորձենք փոխել ընթացակարգը: Հավատացնում եմ՝ բավական բարդ կլինի: Մենք կփորձենք ուղղակի ավելի ուշադիր լինել մարդկանց բողոքների նկատմամբ: Այսօրվա դրությամբ նախարարությունում ունենք մոտ 700 բողոք, սակայն փորձը ցույց է տալիս, որ բողոքների մոտ 10 տոկոսի, ավելի ստույգ՝ 7 տոկոսի դեպքում է, որ մարդիկ իրավացի են, այսինքն՝ այդ դեպքերում որոշակի սխալներ են թույլ տրվել տնօրենների, մարզպետարանների կողմից, որոնք ավելի շատ պայմանավորված են չիմացության հետևանքով օրենքը շրջանցելու իրողությամբ: Այդպիսի դեպքերում հնարավորությունների սահմաններում կասեցվում են այդ որոշումները (արդեն 40 մարդու վերականգնել ենք իրենց աշխատատեղերում): Սրանք խնդիրներ են, որոնք անխուսափելի են: Գուցե այս օրենսդրական դաշտն ավելի էր պետք հստակեցնել, գուցե նոր չափանիշներ պետք է կիրառվեին, որ սխալներն ավելի քիչ լինեին: Թերևս: Բայց ես գիտեմ, որ այն մարզերից, որտեղ հստակ են կիրառել նախարարության սահմանած կարգը, համարյա բողոքներ չունենք, կամ դրանք շատ քիչ են. Շիրակի, Արարատի, Սյունիքի մարզերից բողոքներ գրեթե չունենք: Եվ կան մարզեր, որտեղ բողոքները շատ են, զորօրինակ՝ Լոռու մարզը: Մենք մեծ ուշադրություն ենք դարձնում հիմնախնդրին. Լոռու մարզի պարագայում աշխատակից ենք գործուղել Վանաձոր, մեկ առ մեկ քննարկվում են բոլոր բողոքները, որոնք առնչվում են ուսուցչին: Հիմա կազմում ենք յուրաքանչյուր՝ ինչպես աշխատող, այնպես էլ դպրոցից դուրս մնացած (կրճատված բառը չեմ սիրում գործածել) ուսուցիչների անձնաթերթիկները, որը մեզ հնարավորություն կտա անընդհատ տեսադաշտում ունենալ նրանց: Լեռնային բնակավայրերում ուսուցիչների պակասը և կրթության համակարգում 12 հազար ոչ բարձրագույն կամ մասնագիտական այլ միջնակարգ կրթությամբ ուսուցիչների առկայությունը մեզ շատ բան է հուշում: Անշուշտ, կան հնարավորություններ աշխատանքով ապահովելու բարձրագույն կրթությամբ մանկավարժներին: Նշեմ նաև, որ այսօրվա դրությամբ 56 ուսուցիչ, որոնցից շատերը կրճատված են եղել, աշխատելու են լեռնային բնակավայրերում: Այն առավելությունները, որ տրվում են նրանց այս պարագայում, կարծես թե փոխհատուցում են այն դժվարությունները, որ նրանք այսօր ունեն: Ամենակարևորը և հիմնականը՝ պետք է փորձել մեր կրթական համակարգն ապահովել մասնագետներով: Շատ լավ գիտեք, որ դպրոցից դուրս մնացած ուսուցիչների մի մասը մասնագիտական և այլ առումներով դժվարություններ ունի. շուրջ 27 տոկոսը մանկավարժներ չեն՝ անասնաբույժներ են, գյուղատնտեսներ և այլն, մի մասն էլ ունեցել է մանկավարժական կրթություն, բայց տարիներ շարունակ չի աշխատել մասնագիտությամբ: Կրճատված ուսուցիչների շուրջ 50 տոկոսը մասնագիտական առումով լուրջ դժվարություններ է ունեցել: Այս առումով չէինք կարող այլ կերպ վարվել, քան գնալ Ձեր ասած «ցավոտ» ճանապարհով: Ի դեպ, աշխատանքից ազատված ուսուցիչներն էլ են հասկանում ժամանակի հրամայականը. շատերն արդեն ընդունվել են հեռակա մանկավարժական համալսարաններ, ինստիտուտներ, ուզում են իրենց կրթական բացը լրացնել: Այսինքն՝ այս գործընթացն անընդհատ է, և դպրոցի նվիրյալները վաղ թե ուշ կվերադառնան դպրոց, ես ավելի քան վստահ եմ, որովհետև մի կողմից՝ մենք ունենք մանկավարժական կադրերի պակաս (12 հազար թիվը ես պատահականորեն չեմ նշում, միջնակարգ կրթությամբ կադրերով չենք կարող հեռու գնալ), և, մյուս պարագայում՝ այսօրվա դրությամբ ունենք ուսուցչական կադրերի 5000-ի չափ ավելցուկ: Այս հակասությունը որոշակի հանգուցալուծում կստանա առաջիկայում, ավելի բնականոն գործընթացով: Այս տարի (առնվազն սեպտեմբերին) մենք կավարտենք այս գործընթացը և կառաջանանք զարգացման ուղիով: Կարծում եմ՝ մի քիչ ցավոտ էր այս գործընթացը, բայց արվում է հանուն վաղվա այն դպրոցի, որտեղ որակը լինելու է հիմնական գործոն:

– Ի՞նչ առավելություններ են սահմանվել լեռնային բնակավայրեր գործուղվող ուսուցիչների համար:

– Ամենատարբեր հոդվածներով նրանց համար սահմանված են տարեկան կտրվածքով միջին հաշվով ամսական 20 հազար դրամի չափ հավելավճարներ: Նրանք երկրորդ տարվա սկզբին Համաշխարհային բանկի կողմից կստանան նվիրատվություն (500 ԱՄՆ դոլար): Այն ուսուցիչների համար, ովքեր լեռնային բնակավայրում երկու տարի աշխատելուց հետո կուզենան առնվազն ևս 5 տարի բնակվել այդտեղ, կգնվի կամ կկառուցվի բնակարան: Սա, կարծում եմ, մեծ առավելություն է: Աշխատավարձի դրույքաչափն այսօր շուրջ 30 հազար դրամ է, այսինքն՝ գյուղական բնակավայր գործուղված ուսուցիչը միջին

հաշվով կստանա շուրջ 100 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Եթե հաշվի առնենք նաև, որ 2005 թվականից ուսուցչի աշխատավարձը միջին հաշվով դառնալու է 90 դոլարին համարժեք դրամ, և այս գումարին ավելացնենք շուրջ 40 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (որ հավելյալ ստանում է գործուղված ուսուցիչը), կստանանք 130 դոլարին համարժեք գումար: Բացի այդ, եթե երկու տարիների ամիսների միջև բաժանենք 500 ԱՄՆ դոլարը, ապա գործուղված ուսուցչի աշխատավարձը բավական ծանրակշիռ է ստացվում: Ավելացնեմ նաև, որ գյուղնախարարությունը վերջերս հայտարարել է, որ այն ուսուցիչները, ովքեր կգնան գյուղական բնակավայրերում աշխատելու և կզբաղվեն հողագործությամբ, կապահովվեն անվճար սերմացուով: Կարծում եմ՝ այս խնդիրը լուծելու համար այլ առավելություններ ևս կլինեն: Զբաղվածության խնդիրը լուծելու համար այս տարի նաև կիրականացնենք ուսուցչական կադրերի նպատակային ուսուցում՝ Երևանի, Գյումրիի, Վանաձորի մանկավարժական բուհերում, ինչպես նաև Բրյուսովի անվան օտար լեզուների համալսարանում, ինչը թույլ կտա լրացնել նաև կադրային բացը: Չեմ պատկերացնում, որ որևէ դպրոց, որը չունի այս կամ այն առարկայի մասնագետ, կարող է խոսել կրթության որակի մասին: Բարեփոխումների իրագործման ժամանակահատվածում գերխնդիրը պետք է լինի՝ ոչ մի դպրոց Հայաստանի Հանրապետությունում չպետք է ունենա ոչ մի մասնագետի պակաս, և, որպես կանոն, մասնագետը պետք է ունենա բարձրագույն կրթություն:

– Քանի որ մեր ամսագիրն իրավական գիտամեթոդական է, և հիմնական հասցեատերն «Իրավունք» առարկայաշարի ուսուցիչն է, կկամենայի հարցնել՝ Ձեր գնահատմամբ՝ որքանո՞վ է արդյունավետ «Իրավունք» առարկայաշարի ուսուցումը հանրակրթական դպրոցում, և ձեր նախարարությունը կատարո՞ւմ է քայլեր՝ առարկայաշարի դասավանդման համար և՛ բարեփոխված դասագրքեր, և՛ մեթոդական ձեռնարկներ ստեղծելու ուղղությամբ:

– Որքան ես եմ տեղյակ, առարկայաշարի հետ կապված խնդիրներ ունենք: Այդ առարկայաշարի դասավանդումն ամենաարդյունավետը և առավել ամբողջականը պետք է լինի: Ինչպես մեր զրույցի սկզբում նշեցի, այն, ինչ առնչվում է կյանքին, իրականությանը, պետք է դիտարկենք ընդհանուր համատեքստում, այդ պարագայում միայն կունենանք ավելի արդյունավետ լուծումներ: Նոր կրթակարգի քննարկումները, ինչպես նաև վերջնական տարբերակը ցույց կտան՝ ինչպիսին կլինի այդ առարկայաշարի դերը, տեղը մեր կրթական համակարգում:

Կան կարծիքներ, որ առարկայաշարի դասագրքերը աշակերտների յուրացման համար ոչ այնքան դյուրին են, այլ խնդիրներ ևս կան:

– Պարոն Երիցյան, Ձեր խոսքը հայ մանկավարժին:

– Հայ մանկավարժին մաղթում եմ համբերություն: Այսպես թե այնպես, այսօր նա որոշակի անհարմարություններ ունի, բայց շուտով կհամոզվի, որ այդ անհարմարությունները հանուն երեխայի են, հանուն նոր սերնդի: Մենք այլևս չենք կարող պարփակվել Հայաստանի տարածքում: Այսօր հնարավորություն է տրված մեր կրթական տարածքը բավական մեծացնելու մինչև Եվրոպա, մինչև Ամերիկայի սահմանները: Մենք կհայտնվենք շատ ծանր վիճակում, եթե չփորձենք այս բարեփոխումները կատարել: ԱՊՀ երկրները, որքան էլ զարմանալի է, այս փոփոխությունների առումով առաջ են անցել: Մեզ մոտ այս ամենը նախատեսվում էր կատարել 2001-2002 թթ., և, փաստորեն, առնվազն երկու տարի ուշացել ենք: Բելառուսը, Ուկրաինան այս տարի ավարտել են, Ռուսաստանը, թվում էր, հապաղում է, սակայն շատ կտրուկ անցում կատարեց: Մենք այլևս պետք է խոսենք եվրոպական կրթական տարածքի մասին, որը, անկասկած, իր շփման եզրերն ունի ինչպես ամերիկյան, այնպես էլ աշխարհի այլ կրթական հատվածների հետ, բայց եվրոպական կրթական տարածքը մեզ համար չափանիշ և ուղենիշ է լինելու (ոչ միայն հանրակրթությունը, այլև միջին մասնագիտական, արհեստագործական, բուհական, հետբուհական կրթությունը): Մենք ինչպե՞ս կարող ենք չանցնել երկաստիճան կրթական համակարգին, չունենալ դրա առավելությունները: Այստեղ պետք է նաև լուրջ տարաձայնություններ հարթել, և, ի պատիվ մեր կրթական համակարգի գործիչների, ես պետք է ասեմ՝ նրանք հասկացել են, որ կրթական բարեփոխումները կամ առաջընթացը, եվրոպական չափանիշներին ձգտելն այլընտրանք չունի: Անհրաժեշտ է սեփականել այն առավելությունները, որ ունի եվրոպական ցանկացած երկիր, հակառակ դեպքում կունենանք տեղում դոփող, երբեք չզարգացող, երբեք բարձր մակարդակ չունեցող կրթություն: Այս դժվարին և ծանր հատվածը վստահված է ինձ, և ես ոչ միայն պարտավոր եմ պարզապես գնալ կրթական համակարգի համաշխարհային զարգացումներին համընթաց, այլև պարտավոր եմ այդ զարգացումներն ուղղորդել, կազմակերպել:

Մեր կրթական համակարգն այսօր մի շատ մեծ առավելություն ունի. մենք տարեվերջին կունենանք բոլոր բնագավառների ռազմավարություն՝ նախադպրոցական կրթությունից մինչև հետբուհական, որը մինչ հիմա պարզապես չի մշակվել: Մենք կունենանք օրենքներ կամ առնվազն օրենսդրական նախաձեռնություններ կրթական համակարգի բոլոր հատվածների համար: Այսօր ամենակարևոր և հիմնական գործոնն եմ համարում այն, որ կրթական համակարգում բարեփոխումներ իրականացնելու համար ունենք անհրաժեշտ ֆինանսավորում, վարկային ծրագրեր, այլ միջոցներ:

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

***ԱՐՄԵՆ ԺՈՒԺՈՒՐՅԱՆ***
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Հանրապետությունում ներկայումս ընթացող կրթական բարեփոխումների առանցքային խնդիրներից է չափորոշիչների մշակումը հանրակրթությունից բուհ ընկած ուսումնական շղթայում: Մասնագիտական կրթության չափորոշիչները հետապնդում են լիցենզավորված և հավատարմագրված տարբեր բուհերի ներդաշնակ, կրթական ծառայության ոլորտում որակյալ գործունեություն ապահովելու նպատակ: Չափորոշիչները կազմվում են ըստ առանձին մասնագիտությունների, ընդհանրական են բոլոր բուհերի համար և ընդգրկում են ուսանողին կրթական ծառայության մատուցման ամբողջ գործընթացին վերաբերող պահանջները:

Կրթական չափորոշիչների ներդրումը ուսումնական համակարգում նորույթ չէ. կիրառման հարուստ փորձ է առկա արտասահմանում: Գաղտնիք չէ, որ կրթությունը չի կարող զարգանալ ապրիորի, հատկապես ներկայիս գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացի և տնտեսական կտրուկ վերելքի պայմաններում: Ավելին՝ կրթության զարգացման տեմպերը որոշ դեպքերում արդեն ետ են մնում հասարակության զարգացման տեմպերից, և ուսուցման համակարգում ստեղծվում է «ուշացած կամ կիրառապես ժամկետանց» գիտելիքների մատուցման վտանգ: Այդ է պատճառը, որ եվրոպական շատ երկրներում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում՝ մասնագիտական ուսուցման բնագավառում վաղուց գործում են չափորոշիչներ, որոնք հստակ արտացոլում են կրթական ծառայության մատուցման նկատմամբ հասարակության օրախնդիր-արդիական պահանջները՝ շաղկապելով մասնագիտական ուսուցումը սոցիալ-տնտեսական առաջընթացի հետ:

Կրթական չափորոշիչների կիրառման հաջորդ նախապայմանը աշխատանքի միջազգային շուկայի ընդլայնման և գլոբալացման պահանջով կրթական միասնական տարածքի ստեղծումն է: Գլոբալացման և ինտեգրացման պայմաններում բարձրագույն մասնագիտությամբ շրջանավարտն աշխատանքի միջազգային շուկայում առավել շարժունակ է դառնում, նրա մասնագիտական հմտությունները ընդհանրականացվում են, որն էլ առաջացնում է միևնույն չափանիշներով և պահանջվող որակի աստիճանով մասնագետների թողարկում: Դրան զուգահեռ՝ հետզհետե աշխուժանում է շարժունակությունը կրթական գործընթացում, երբ սովորողին հնարավորություն է ընձեռվում ոչ միայն մեկ բուհում ստացած գիտելիքների պաշարով շարունակել ուսումը և կատարելագործվել մեկ այլ արտասահմանյան բուհում, այլև նույնիսկ ընդհատել ուսումնառությունը և, կուտակած գիտելիքների արժևորումից հետո, տեղափոխվել մեկ այլ բուհ՝ առանց ընդունելության քննությունների:

Բնականաբար, այդպիսի շարժունակությունը պետք է գործի կրթական միասնական չափանիշների և համակարգված բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչների առկայության պայմաններում:

Կրթության ստանդարտացումը փաստորեն բարձրացնում է ուսումնական գործընթացի ռազմավարության արդյունավետությունը և բարելավում ծրագրային կուլտուրան ուսումնառության ոլորտում: Պատահական չէ, որ կրթության ստանդարտացումը վերջին տարիներին միշտ էլ գտնվել է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Այսպես, 1993 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթության վիճակը աշխարհում» զեկույցում առանձին ներկայացվեց «Չափորոշիչների մշակում» բաժինը: Դրան հաջորդեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից «Կրթության միջազգային չափորոշիչների դասակարգումը» (ISCED), որով ներկայացվեցին տարբեր երկրներին առնչվող կրթության վիճակագրական տվյալների հավաքագրման, խմբավորման, ամփոփման և ստանդարտացման մոտեցումները: Ընդ որում՝ մասնագիտական կրթության չափորոշիչների մշակման ժամանակ առաջարկվեց հաշվի առնել նաև տարածաշրջանային, ազգային, սոցիալ-մշակութային առանձնահատկությունները[1]:

Չափորոշիչների կիրառման պահանջը մեր երկրում արդեն իսկ դրված է 1999 թվականին ընդունված «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով, ուր նշվում է. «Պետական կրթական չափորոշիչները շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմքն են»[2]: Իսկ այն խնդիրները, որոնք պետք է լուծվեն բուհերում կրթական չափորոշիչների կիրառմամբ, փաստորեն ամրագրված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 7-ում, ըստ որի՝ չափորոշիչները ապահովում են կրթության որակը, եվրոպական կրթական տարածքին ներգրավման հնարավորությունները, օտար պետությունների կողմից կրթական ծառայությունների գործընթացի արդյունավետության գնահատումը, կրթության որակավորման համարժեքության ճանաչումը[3]:

Բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչների օրինակելի կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ բաժիններով՝

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Շրջանավարտի որակավորման բնութագիրը:

Մասնագիտական գործունեության բնագավառը և օբյեկտները:

Մասնագիտական գործունեության տեսակները:

Մասնագիտական գործունեության ընդհանրական խնդիրները:

Շրջանավարտի՝ կրթությունը շարունակելու հնարավորությունը:

**ԴԻՄՈՐԴԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՄԱԿԱՐԴԱԿԸ**

Դիմորդի կրթության մեկնարկային մակարդակը:

Դիմորդի «մուտքի» բնութագրիչները:

**ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ**

**ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական:

Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական:

Ընդհանուր մասնագիտական:

Մասնագիտացման:

Ֆակուլտատիվ:

**ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

- տեսական ուսուցումը՝ ____ շաբաթ,
- քննաշրջանները՝ ____ շաբաթ,
- պրակտիկաները՝ ____ շաբաթից ոչ պակաս,
- եզրափակիչ պետական որակավորումը, ներառյալ ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը՝ ____ շաբաթից ոչ պակաս,
- արձակուրդները (ներառյալ հետբուհական 8-շաբաթյա արձակուրդը)՝ ____ շաբաթ

**ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Ուսումնական գործընթացի ծրագրային ապահովման պահանջները:

Ուսումնառության ընթացքում գիտելիքների գնահատման պահանջները:

Գիտելիքների արժևորման հաշվենիշերը (կրեդիտները):

Գիտելիքների գնահատման հաշվենիշերի պարտադիր նվազագույնի պահանջները:

Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները:

Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները:

Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական բազայի ապահովման պահանջները:

Պրակտիկաների կազմակերպման պահանջները:

**ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Շրջանավարտը պետք է ունենա տեսական և կիրառական գիտելիքներ՝

ա/ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում,

բ/ բնագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի բնագավառում,

գ/ մասնագիտական գործունեության բնագավառում:

**ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքին ներկայացվող պահանջները:

Պետական քննությանը ներկայացվող պահանջները:

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ**

Ուսուցման շաբաթական լսարանային ժամեր:

Ինքնուրույն աշխատանքին տրամադրվող ժամեր:

Անհատական աշխատանքին տրամադրվող ժամեր:

Առանձնացված ներկայացնենք կրթական չափորոշիչների գործառույթները բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում առկա վերոնշյալ խնդիրները լուծելիս:

### Կրթության ներդաշնակեցում

Նույնիսկ միևնույն մասնագետների թողարկման գծով տարբեր բուհերում ներկայումս կիրառվում են ոչ միասնական ուսումնական պլաններ: Տարբերվում են ինչպես դասավանդվող առարկաների կազմը և կառուցվածքը, այնպես էլ դրանց հաջորդականությունը, գնահատման կարգը, ուսանողին ներկայացվող պահանջները: Հետևաբար, հրատապ է համարվում յուրաքանչյուր մասնագիտության կրթական չափորոշչի մշակումն ու հրատարակումը, որը հնարավորություն կստեղծի իր մեջ արտացոլված դասավանդվող առարկաների ցանկով, ժամաքանակով, ուսումնական պլանով ստիպելու բուհերին՝ կիրառելու միասնական մոտեցում կոնկրետ մասնագետի պատրաստման գործում և, դրանով իսկ, կատարելու ներդաշնակեցում տարբեր ուսումնական հաստատություններում: Ի վերջո, բոլոր հավատարմագրված բուհերը, անկախ սեփականության ձևից և ղեկավարման բնույթից, շրջանավարտին տալիս են պետության կողմից կրթության որակը երաշխավորող միևնույն ավարտական փաստաթուղթը, ուրեմն պարտավոր են կրթական գործընթացն իրականացնել հենց պետության կողմից հաստատված մասնագիտական կրթության չափորոշիչներով և ապահովել անհրաժեշտ որակ ու ներդաշնակ ուսումնական ծառայությունների մատուցում:

### Կրթության մակարդակ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 11-ում նշվում է, որ կրթության բովանդակությունն ամփոփվում է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման մեջ, երբ սովորողների շրջանում ձևավորվում է ժամանակակից աշխարհաճանաչում, ազգային և համամարդկային մշակութային արժեքների ընկալում: Կրթության բովանդակությանն առաջադրվող պահանջներն էլ ավելի են հստակեցվում ՀՀ Կառավարության 16 հունվարի 2001 թ. N 24 «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին» որոշմամբ, որի կետ 6-ով նշվում են հիմնական կրթական ծրագրի պարտադիր դասընթացների խմբերը[4].

ա) ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական,

բ) մաթեմաթիկական և ընդհանուր բնագիտական (այդ թվում՝ էկոլոգիական),

գ) ընդհանուր մասնագիտական,

դ) հատուկ մասնագիտական:

Այսպիսով՝ կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնն ապահովում է համաշխարհային չափանիշներին համարժեք ընդհանուր և մասնագիտական գիտելիքներով օժտված անձի ձևավորումը: Այս առումով չափազանց կարևորվում է ուսանողի գիտելիքների պաշարի «կառուցվածքային ստանդարտացումը» բուհական համակարգում: Ցանկացած բուհում վիճահարույց կարող է համարվել ուսումնական պլաններում վերոնշյալ կետերով կրթաբլոկների տեսակարար կշիռների հարաբերակցությունը: Անշուշտ, մասնագիտական կրթաբլոկն իր տեսակարար կշռով պետք է առավելագույնս հանդես գա, սակայն ոչ մասնագիտական իմտություններից

բացի պակաս կարևոր չէ բարձրագույն ուսումնական հաստատության շրջանավարտի աշխարհաճանաչումը կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան:

Ուրեմն` որտե՛ղ են այն սահմանագծերը, որոնցով որոշվում է մասնագիտական և ոչ մասնագիտական առարկաների տեսակարար կշիռը դասավանդման ուսումնական պլանում: Բնական է, որ այդ սահմանագծերը նույն մասնագիտությունը թողարկող բազմաբնույթ բուհերի համար տարբեր նշակետերով կտարվեն: Այսպես, եթե տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը մաթեմատիկական կրթաբլոկի նկատմամբ հետաքրքրություն կառաջացնի կոնկրետ բուհում, ապա գլոբալացման գործընթացը մեկ այլ ոչ մասնագիտական բուհում առավել հետաքրքրություն կպարտադրի լեզուների և մշակույթի դասավանդման հանդեպ: Դեռ ավելին` նույնիսկ մասնագիտական առարկաների դասավանդման կրթաբլոկում բուհերը տարբեր մոտեցումներ կցուցաբերեն տեսական, կիրառական, նեղ մասնագիտական ուսուցման, ուսումնական և արտադրական պրակտիկաների ժամաքանակային փոխհարաբերության հարցերին, որը, ցավոք, առկա է մեր իրականության մեջ: Հենց այստեղ է, որ անհրաժեշտություն է ծագում չափորոշչի միջոցով միասնական մոտեցում ցուցաբերել բարձրագույն մասնագիտական կրթական ծառայություններին:

Բացի այդ` կրթության ստանդարտացման հիմնախնդիրը դուրս է գալիս բուհական շրջանակներից: Միմյանցից հստակ տարբերակման կարիք են զգում նույն մասնագիտության գծով միջին կրթության և բարձրագույն կրթության համակարգերը: Այսպես` ի՞նչ հատկանիշներով տարբերակել քոլեջի ֆինանսիստ շրջանավարտին բուհի բակալավրիատն ավարտած ֆինանսիստ մասնագիտությամբ շրջանավարտից: Մոտեցումներն այստեղ կարող են տարբեր լինել, ինչպես, օրինակ, ակադեմիակա՞ն, թե՞ կիրառական ուսուցում, մասնագիտական խորացվա՞ծ, թե՞ ընդհանուր կրթություն, համամարդկային մշակութային արժեքների զուգորդված ուսուցո՞ւմ, թե՞ միայն մասնագիտական ուսուցում և այլն:

Հետևաբար, նույն մասնագիտության գծով մասնագետների կրթությանը վերաբերող այդպիսի տարածայնությունները պետք է վերանան միայն բարձրագույն մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշչի կիրառմամբ, որը պարտադիր կիրառման է ենթակա բոլոր բուհերում:

Բնավ չպետք է ենթադրել, որ կրթական չափորոշչի ընդունումն ու կիրառումը դոգմատիկ բնույթ ունի և ենթակա չէ փոփոխման: Անշուշտ, գիտության և տնտեսության զարգացմամբ բուհին ներկայացվող կրթական ծառայության հասարակական պատվերի փոփոխությունը պարբերաբար անհրաժեշտություն կստեղծի վերանայելու ցանկացած բարձրագույն մասնագիտության պատրաստման չափորոշիչը:

## Գիտելիքների ստացման պարտադիր նվազագույնի համահարթեցում

Կրթական չափորոշիչը հնարավորություն է ստեղծում տարբեր բուհերում նույն մասնագիտությանը ցուցաբերել միասնական մոտեցում: Այդ արվում է կրթական ծրագրերի պարտադիր նվազագույնի, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալի միջոցով: Այսպես, եթե տնտեսագիտական բուհում դասավանդվում է օտար լեզու, ապա չափորոշիչը հստակ պետք է սահմանի տվյալ լեզվի իմացության` ուսանողի գիտելիքների նվազագույն պաշարի սահմանները, այնպես որ դրանք մի կողմից` չուռճացվեն, չհարմարեցվեն լեզուներ դասավանդող բուհերի ժամային ծանրաբեռնվածության պահանջներին, սակայն մյուս կողմից` բավարարեն տնտեսագետին անհրաժեշտ օտար լեզվի իմացության մակարդակը:

Դեռ ավելին` չափորոշիչը պահանջում է նաև դասավանդվող առարկայի կրթական ծրագրի պարտադիր նվազագույնին ներկայացվող պահանջների բացահայտում` կոնկրետ մեկնաբանելով, թե ուսանողը նյութի ընկալումից հետո ի՛նչ ունակություններ և գիտելիքների պաշար ձեռք կբերի: Չէ՞ որ միայն դասավանդման ժամային ծանրաբեռնվածությունը հնարավորություն չի ընձեռում լիարժեք գաղափար կազմել նյութի դասավանդման և դրան հաջորդող` ուսանողի կողմից գիտելիքների կուտակման և մասնագիտական հմտությունների բնույթի մասին: Չեն բացառվում այն իրավիճակները, երբ առավել ժամաքանակով դասավանդվող միևնույն առարկան նյութի մատուցման առումով էապես անարդյունավետ է նույն մասնագիտության գծով մեկ այլ բուհում առավել պակաս ժամաքանակով, սակայն օպտիմալ ծրագրով ուսուցումից:

Թվում է, թե կրթական չափորոշչով` գիտելիքների ստացման նվազագույն պաշարի պարտադրումը բուհերին կուղղորդի էքստենսիվ դասավանդման, մասնավորապես, ուսանողների լսարանային ծանրաբեռնվածության լարվածության: Սակայն դա այդպես չէ, քանի որ կրթական չափորոշիչը, մասնագիտական և ընդհանուր զարգացման պարտադիր ուսուցման նվազագույնի առկայության պահանջի հետ մեկտեղ, հակակշիռներ է ստեղծում գիտելիքների ձեռք բերման անհրաժեշտ պաշարի և ուսանողների ուսումնական ծանրաբեռնվածության միջև:

Այսպես, ՀՀ Կառավարության վերոնշյալ «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին» որոշման երրորդ բաժնով սահմանափակումներ են դրվում ուսանողի ծանրաբեռնվածության ոլորտում[4]: Մասնավորապես, ուսումնական տարվա տևողությունը չպետք է գերազանցի 34 շաբաթը, իսկ սովորողի ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 54 ժամը, ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքների բոլոր տեսակները (լսարանայինը` մինչև 36 ժամ): Ուսումնական տարվա ընթացքում սովորողների արձակուրդները պետք է կազմեն առնվազն 7-10 շաբաթ, այդ թվում ձմռանը` 2 շաբաթից ոչ պակաս:

Այսպիսով` բարձրագույն մասնագիտական կրթական չափորոշիչը, ուսումնառության նկատմամբ իր խստագույն պահանջկոտությանը զուգահեռ, բեռնաթափում է ուսանողի անհարկի ծանրաբեռնվածությունը և դրանով իսկ` բոլոր բուհերում սովորողների համար ստեղծում նորմալ պայմաններ ուսումնառության գերլարված գործընթացից խուսափելու համար:

## Կրթության միասնականացում, անընդհատության ապահովում

Անկախացումից հետո հանրապետությունում կրթօջախների ցանցի արագ ընդլայնումը (վարժա-

րաններ, քոլեջներ, մասնավոր բուհեր) կարծես յուրօրինակ «քաոս» առաջացրին՝ ինչ-որ չափով խախտելով խորհրդային ժամանակներից ժառանգած կրթության համակարգի գործունեության ներդաշնակ ընթացակարգը: Այդ իսկ պատճառով, համաձայն «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի՝ ուսումնառության մատչելիությանը զուգահեռ կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից է հանդիսանում նաև շարունակականությունը և հաջորդականությունը: Բացի այդ՝ օրենքի 8-րդ հոդվածն ամրագրեց, որ կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի փոխկապակցված ամբողջությունն է[2]: Հետևաբար, կրթության շարունակականության ապահովմանն էապես կարող է նպաստել տարբեր մակարդակների մասնագիտական կրթական չափորոշիչների փոխկապակցումը:

Այդ մասին հավաստում է նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 7-ի 7-րդ ենթակետը, որով թույլատրվում է մասնագիտական ուսումնական պլաններով և առարկայական դասընթացներով համապատասխան կրթական աստիճաններով սովորողների մուտքը կրթական ծրագիր և ելքը ծրագրից՝ ապահովելով կրթական մակարդակների շղթայական փոխանցելիությունը: Հետևաբար, կրթական չափորոշիչները կարգավորում են ուսումնառության անընդհատությունը՝ սահմանելով սովորողի «մուտքի» բնութագրիչները:

Սակայն հանրապետությունում բուհ ընդունվելու ներկայիս հիմնական նախապայմանը ոչ թե միջին մասնագիտական կրթօջախից շրջանավարտի բնականոն տեղափոխումն է բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտ, այլ պարզապես հանրակրթությունից հետո դպրոցի շրջանավարտի ընդունելության քննությունների հաջող հանձնումը: Ընդսմին՝ միևնույն մասնագիտության գծով բուհերում ընդունելության պայմանները տարբերվում են ինչպես առարկայական ցանկով, այնպես էլ ներկայացվող պահանջներով: Ոչ միշտ է հիմնավորված ընդունելության քննության առարկաների ցանկը, որը, ի դեպ, միևնույն մասնագիտության գծով մասնավոր բուհերում ներկայումս կարող է տարբերակիչ շեղումներ ունենալ: Միևնույն մասնագիտությամբ ընդունվելու համար հանրապետության տարբեր բուհերում դիմորդի ընդունելությանը ներկայացվում են տարբեր պահանջներ: Այսպես. ՀՀ պետական բուհերում դիմորդը պետք է հանձնի կենտրոնացված, մասնավոր բուհերում՝ տեղայնացված քննություններ, հանրապետությունում գործող արտասահմանյան բուհերում՝ հարցազրույց կամ միայն լեզվի իմացության թեստեր: Ստացվում է, որ ուսանողը, դիմելով որևէ բուհ, միևնույն մասնագիտության գծով հայտնվում է բուհական ուսումնառության մեկնարկային տարբեր հարթություններում: Այս պարագայում կոնկրետ մասնագիտության գծով տարբեր բուհերում կրթական ծառայությունների մատուցումը, ելնելով դիմորդի «մուտքի»՝ միմյանցից խիստ տարբերվող բնութագրիչներից, կարող է ստանալ տարբեր որակներ: Հետևաբար, ներկայումս ՀՀ-ում հրատապ է համարվում յուրաքանչյուր բարձրագույն մասնագիտական կրթության մեկնարկային հստակ և միասնական պայմանների սահմանումը, որն իրականացվելու է կրթական չափորոշչի միջոցով: Իսկ կոնկրետ մասնագիտության գծով դիմորդի գիտելիքների մեկնարկային անհրաժեշտ պաշարը, ինչպես նաև ընդունելության պայմանների միասնականությունն ապահովվում է կրթական չափորոշիչներով, որոնցով հստակ սահմանվում են «մուտքի» բնութագրիչները:

Ի դեպ, հանրապետությունում դեռևս չի ակտիվացել առանց ընդունելության քննությունների միջին մասնագիտական կրթությունից շրջանավարտի՝ միևնույն մասնագիտությամբ բուհի բարձր կուրսեր անարգել տեղափոխվելու գործընթացը: Այս առումով՝ չափորոշիչները պետք է կազմվեն միջին և բարձրագույն մասնագիտական կրթական գործընթացների շաղկապման պահանջով: Հետևաբար, նույն մասնագետներ պատրաստող քոլեջների և բուհերի կրթական չափորոշիչները պետք է ապահովեն նաև կրթության անընդհատությունն այնպես, որ միջին մասնագիտության ուսումնառության «ելքի» բնութագրիչները հանդես գան որպես բարձրագույն մասնագիտական կրթության «մուտքի» բնութագրիչներ: Դրանով իսկ կվերանա «խզումը» միջին և բարձրագույն մասնագիտական կրթության միջև, և քոլեջի շրջանավարտն իր կուտակած գիտելիքների պահանջվող պաշարով կշրջանցի ընդունելության քննությունները և անարգել մուտք կգործի բուհ:

Կրթական չափորոշիչները կարգավորում են նաև կրթության շարունակականությունը ոչ միայն «քոլեջ-բուհ», այլև «բուհ-հետբուհական կրթություն» շղթայում՝ նկատի ունենալով բակալավրի որակավորումը (երկրորդ մասնագիտությամբ) կամ մագիստրատուրան:

Բակալավրիատը համարվում է լիարժեք բարձրագույն մասնագիտական կրթության առաջին աստիճան և նպատակ է հետապնդում համալիր ուսուցմամբ պատրաստել պրոֆեսիոնալ մասնագետներ: Բակալավրիատի ուսումնական պլանը ներառում է բարձրագույն կրթությամբ մասնագետի պատրաստման անհրաժեշտ բոլոր ատրիբուտները, այն է՝ հումանիտար, բնագիտական, մաթեմատիկական, սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մասնագիտական, նեղ մասնագիտական առարկաների կրթաբլոկները: Բակալավրիատը պահանջում է ուսումնական և արտադրական պրակտիկաների իրականացում, ինչպես նաև՝ պետական քննությունների հանձնում և ավարտական թեզի պաշտպանություն:

Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանն է: Այն չի կարող կրկնել բակալավրիատի ուսումնական պլանը, քանի որ, ի տարբերություն վերջինի, բոլորովին այլ նպատակ է հետապնդում: Եթե բակալավրիատի շրջանավարտը գիտի, թե իր մասնագիտության գծով ինչպես պետք է աշխատել, ապա մագիստրանտը պատրաստ պետք է լինի այն բանին, թե իր մասնագիտության գծով ինչպես պետք է մտածել:

Բակալավրը ձեռք է բերում պրոֆեսիոնալ հմտություններ որևէ մասնագիտության (լինի այն նեղ, թե ընդհանուր) գծով՝ գործնական առօրյա աշխատանքային խնդիրներ լուծելու համար: Ի լրացումն դրա՝ մագիստրոսը, ստանալով հավելյալ կրթություն, գործնականում պրոֆեսիոնալ մասնագետի «ավանդական» պարտականություններից ավելին է կատարում, մասնավորապես՝ լրացուցիչ լուծելով իր մասնագիտությանն առնչվող կառավարչական, գիտահետազո-

տական և, ինչու չէ, նաև կրթական խնդիրներ: Մագիստրոսի աշխատանքային պարտականությունների մեջ, բակալավրի գործնական հմտություններից բացի, ներառվում են կառավարչական ֆունկցիաներ, ինչպես նաև գիտամանկավարժական գործունեություն: Մագիստրոսներին իրավունք է վերապահվում դասավանդելու կադրերի վերապատրաստման ծրագրերում, մասնագիտացված քոլեջներում, նաև՝ բուհերում: Գործնականում մագիստրոսներից սպասելիքներ կան նորարարական առաջարկների, նորամուծությունների կատարման, գիտական բնույթի հետազոտական արդյունքների առումներով, որոնցով չեն պարտադրվում պրակտիկ բակալավրներն իրենց գործունեության ընթացքում:

Այդ է պատճառը, որ մագիստրական կրթության ուսումնական պլանները խիստ տարբերվում են բակալավրիատից: Այստեղ, ի տարբերություն բակալավրիատի, կրթությունը չի նպատակամղվում բարձրագույն մասնագիտության հմտությունների ձեռք բերմանը: Մագիստրատուրայում նախատեսվում են նեղ մասնագիտական հիմնախնդիրների քննարկումներ, մասնագիտական որոշումների կայացմանը նպաստող հատուկ կուրսերի ուսուցանում, գիտահետազոտական պրակտիկա, ինչպես նաև՝ մանկավարժական պրակտիկա: Հետևաբար, բուհերի կրթական չափորոշիչները պետք է ապահովեն նաև կրթության անընդհատությունն այնպես, որ բակալավր մասնագետի ուսումնառության «ելքի» բնութագրիչները հանդես գան որպես մագիստրական կրթության «մուտքի» բնութագրիչներ: Ի դեպ, ի տարբերություն բակալավրիատի, մագիստրական կրթության չափորոշիչներում «մուտքի» բնութագրիչները որպես կանոն ավելի համընդհանուր են և խիստ մեկնարկային կոնկրետ մասնագիտական պայմաններ չեն առաջադրում, առավել ազատականացված մոտեցում են ցուցաբերում տարբեր մասնագիտություններով բակալավրիատի «ելքի» բնութագրիչներին:

### Գիտելիքների գնահատման միասնականացում

Հանրապետությունում գործող բազմաբնույթ բուհերում ուսանողների գիտելիքները արժևորվում են ոչ միայն բալային տարբեր համակարգերով, այլև գնահատման տարբեր տեխնոլոգիաներով, որի պատճառով անհնար է դառնում ուսուցման արդյունքների հաշվարկման և համեմատության միասնական դաշտի ստեղծումը: Ոչ միասնական համակարգով նույնիսկ միևնույն ժամաքանակով և ուսումնական ծրագրով առարկայի գնահատումն անհնար է դարձնում ուսանողի գիտելիքների պաշարի հիմնավոր արժևորումը և համեմատումը նույն մասնագիտությամբ մեկ այլ բուհի սովորողի գիտելիքների պաշարի հետ: Հետևաբար, խնդիր է ծագում կրթական չափորոշիչներով ապահովելու գիտելիքների գնահատման միասնականությունը:

Գիտելիքների գնահատման հաշվենիշային համակարգը նորույթ չէ արևմտյան երկրների բուհերում և կիրառման տասնյակ տարիների փորձ ունի: ՀՀ-ում կրթական բարեփոխումների ընթացքը ենթադրում է նաև գնահատման հաշվենիշային համակարգի կիրառում, մանավանդ երբ մեր հանրապետությունը որդեգրել է Բոլոնիայի պայմանագրով եվրոպական միասնական կրթական դաշտի ձևավորման ուղին:

Գիտելիքների գնահատման հաշվենիշային համակարգը երկու հիմնական նպատակ է հետապնդում՝

առաջին՝ ուսուցման արդյունքների հաշվարկում և ուսումնառության արդյունավետության գնահատում.

երկրորդ՝ միասնական կրթական համակարգում ուսուցման արդյունքների համեմատության դաշտի ստեղծում:

Ուսուցման արդյունքների հաշվարկման հաշվենիշային համակարգի առավելություններից է, որ այն գնահատման դաշտ է ներբերում ուսանողների արտալսարանային աշխատանքը: Հետևաբար, գնահատման նույն հարթությունում են գտնվում ինչպես ուսանողների լսարանային հաճախումների ընթացքում կատարած թեստային գրավորները, սեմինարներում հնչած բանավոր պատասխանները, գործնական պարապմունքներում ձևավորած ուսումնական նյութերը, այնպես էլ արտալսարանային աշխատանքի արդյունքները:

Ժամային հաշվենիշերով գիտելիքների գնահատումը ենթադրում է ուսանողի կրթության արդյունավետության բազմագործոն գնահատում: Միայն քննության ընթացքում վաստակած գնահատականներով հնարավոր չէ համալիր կերպով գնահատել ուսումնառության արդյունքը: Անշուշտ, անհատի ուսումնառության գործընթացի արդյունքը գնահատելիս պետք է տվյալ առարկայի գծով վաստակած գնահատականի հետ մեկտեղ հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են ուսանողի ծանրաբեռնվածությունը (լսարանային և արտալսարանային), հաճախումները, սեմինար և գործնական պարապմունքներին մասնակցության ակտիվության աստիճանը, արտալսարանային առաջադրանքների կատարման մակարդակը և այլն: Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում թվարկված գործոններն ընդգրկելու կոնկրետ առարկայի գծով ընդհանուր գնահատականի արժևորման հաշվարկներ[5]:

### Կրթության որակի վերահսկողություն

Պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի հիմնավորումը նախատեսվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 21-ում: Կրթության որակի վերահսկողության առաջին նախապայմանը չափորոշիչներով նախատեսված միասնական պետական քաղաքականության և ուսումնական գործընթացի փաստացի համեմատումն է: Հետևաբար, չափորոշիչների բացակայության փաստը խիստ կդժվարացներ կրթության որակի վերլուծությունը և ուսումնական գործընթացի բացասական շեղումների հայտնաբերումը:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացների ուսումնառությունն ըստ կրթական չափորոշիչների պարտադիր է, իսկ նրանց ցանկը երաշխավորական բնույթ է կրում, որը կարող է փոփոխել կամ լրացնել բուհը: Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների խորհրդատվություն և այլն) և ծավալները դասընթացին հատկացված դասաժամերի շրջանակում սահմանում է բուհը: Ուսուցման ամբողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդհանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր լինի 25%-ից:

Համածայն կրթական չափորոշչի՝ դասընթացից

ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է հիմնավորվի միայն վերջին քննության (ստուգարքի) արդյունքով. այն պետք է հաշվի առնի ուսանողի ակտիվությունը դասընթացում և ընթացիկ առաջադիմությունը կիսամյակների ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականի 40%-ը ձևավորվում է ընթացիկ առաջադիմությամբ և միջանկյալ ստուգումներով, իսկ 60%-ը՝ եզրափակիչ քննության (ստուգարքի) արդյունքով:

Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավորը կամ գրավոր-բանավորն է: Բացառության կարգով բուհը կարող է սահմանել բանավոր քննություններ, բայց դրանք չպետք է գերազանցեն քննական առարկաների ընդհանուր 25-%-ը: Բուհին է վերապահվում ուսումնական դասընթացների եզրափակիչ ստուգման եղանակի (ստուգարք կամ քննություն) ընտրությունը և ձևի սահմանումը:

Նախասիրական դասընթացների կրթաբլոկի ցանկը նույնպես երաշխավորական բնույթ է կրում և ուսանողի համար պարտադիր չէ, իսկ դրանց հաճախելու դեպքում կրթաբլոկին հատկացրած ժամաքանակների 30%-ին վերաբերող դասընթացներից պարտադիր է ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը: Մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու դեպքում բուհն իրավասու է 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբլոկներին հատկացրած ժամաքանակները, իսկ առանձին դասընթացներինը՝ մինչև 10%-ի սահմաններում:

Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները նույնպես արտացոլվում են կրթական չափորոշիչներում: Հատուկ մասնագիտական դասընթացներ վարող դասախոսները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում) և համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փորձ: Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները պետք է կազմեն պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ից ոչ պակասը: Հիմնական հաստիքային դասախոսները և 0.25 հաստիքից բարձր ձևակերպված համատեղողները նույնպես պետք է կազմեն ընդհանուրի 50%-ից ոչ պակասը:

Կրթական գործընթացի ուսումնամեթոդական ապահովումն ըստ չափորոշիչների պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների կատարում և, որպես պարտադիր բաղադրիչ, համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ գործնական առաջադրանքների իրականացում: Պարտադիր պահանջ է նաև անհրաժեշտ տեղեկատվական շտեմարանի ստեղծումը, որն ապահովում է բարձրորակ մասնագետի պատրաստումը և ուսանողի մուտքը տարբեր տեղեկատվական աղբյուրներ, ներառյալ Internet-ը:

Բուհի գրադարանը պետք է հագեցված լինի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվ-իրավական ակտերով, տեղեկատու գրականությամբ:

Մասնագիտական կրթության չափորոշչի պահանջով՝ բուհը պետք է ունենա նյութատեխնիկական բազա, որը համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահոված լինի օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր, սեմինար, գործնական պարապմունքների ու միջդասընթացային պատրաստման բոլոր ձևերի և ուսանողների հետազոտական աշխատանքների ակտիվներով:

Ուսուցման ընթացքում առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտացման գծով գործնական ունակություններ, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպվում են ուսանողների ուսումնական և արտադրական (նախադիպլոմային) պրակտիկաներ: Ուսանողի նախադիպլոմային պրակտիկան մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչն է, որի կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախադիպլոմային պրակտիկան կրթական չափորոշիչը կանոնակարգում է այն հաշվով, որ շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ձեռք բերած փորձառությունն օգտագործել իր դիպլոմային աշխատանքը կատարելիս:

Բարձրագույն մասնագիտության կրթության չափորոշիչներով հաստատված ուսումնական գործընթացի որակին առնչվող վերոնշյալ պահանջները կազմում են բուհերի մասնագիտությունների պետական հավատարմագրման անկյունաքարը: Այդ իսկ պատճառով՝ մասնագիտության կրթական պետական չափորոշիչները նպաստում են շրջանավարտների կրթության մակարդակի որոշմանը և բարձրացմանը, ուսումնառության որակի անընդմեջ վերահսկողությանը:

### Կրթության ծառայությունների միջազգայնացում

Բարձրագույն մասնագիտության կրթական չափորոշիչը էական դեր է խաղում նաև ՀՀ կրթական համակարգի ինտեգրացման ռազմավարության ոլորտում: Դեռևս 1998 թ. մայիսին Սորբոնի համալսարանի հիմնադրման 800-ամյակի տոնակատարությանը մասնակցող Ֆրանսիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի կրթության նախարարները կնքեցին համաձայնագիր Եվրոպական բարձրագույն կրթական տարածք ստեղծելու մասին: Այնուհետև՝ 1999 թ. հունիսի 19-ին, Բոլոնիայում եվրոպական 29 երկրների կրթության նախարարներ պարտավորություն ստանձնեցին վերակառուցել և մերձեցնել իրենց բարձրագույն կրթության համակարգերը՝ ձգտելով կրթական ընդհանուր տարածքի ձևավորման:

Հայաստանը, լինելով Եվրախորհրդի անդամ, չի կարող անմասն մնալ եվրոպական միասնական կրթական համակարգի ճարտարապետությունից, ուստի բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչները պետք է հնարավորինս նպաստեն եվրոպական չափայնության ներմուծմանը հայրենական բուհերի կողմից մատուցվող ուսումնական ծառայությունների ոլորտ:

Այս առումով խիստ կարևորվում է կրթական չափորոշիչներում ուսումնական պլանների, կրթության ծրագրերի պարտադիր նվազագույնի, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալի հնարավորինս մերձեցումը միջազգային չափանիշներին: Դեռ ավելին՝ կրթական չափորոշիչներ կազմելիս պետք է նկատի առնվեն նաև դասավանդվող առարկաների ծրագրային համահյուսման հնարավորությունները միջազգային բուհերի հետ: Այսօր Բոլոնիայի գործընթացի շրջանակներում տարբեր երկրների բուհեր արդեն իսկ իրականացնում են ա-

ռանձին ծրագրային մոդուլներ, դասընթացներ՝ արդյունքում շնորհելով միացյալ (երկու բուհի կողմից շնորհված) կրթական աստիճաններ:

Կրթական չափորոշիչները պետք է նպաստեն նաև գիտելիքների գնահատման հաշվենիշերի կուտակման և փոխանցման համակարգին: Հաշվենիշերի փոխանցման եվրոպական համակարգը (ECTS) ընդունվել է որպես գիտելիքների պաշարի արժևորման հիմք: Պրագայի 2003 թ. նախարարական կոմյունիկեում ձեռք է բերվել համաձայնություն, որ երկաստիճան կրթական համակարգի առաջին աստիճանում լրացվեն 180-240 ECTS հաշվենիշային համակարգեր: Ուստի կրթական չափորոշիչները պետք է հստակեցնեն դասավանդվող առարկաների ոչ միայն ծրագրերի պարտադիր նվազագույն պահանջները, այլև դրանց ամրագրված հաշվենիշերը:

Հայաստանի բուհերը դեռևս չունեն կրթական համատեղ ծրագրերի իրականացման փորձ ինչպես ներհանրապետական, այնպես էլ միջազգային ոլորտում: Հետևաբար, չափորոշիչների օգնությամբ տարբեր բուհերում պատրաստվող միևնույն մասնագիտական կրթության ներդաշնակեցումը կհանգեցնի դիպլոմների փոխճանաչելիությանը, կդյուրացնի ուսանողների շարժունակությունն ուսման ընթացքում, և, վերջապես, տվյալ մասնագետի որակական չափանիշներն ընդունելի կդառնան աշխատանքի ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային շուկայում:

---

1 Новая концепция стандартизации и интернационализации высшего профессионального образования. Ереванский государственный лингвистический университет, 2002, с. 7.

2 «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 9:

3 «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 7:

4 ՀՀ Կառավարության 16 հունվարի 2001 թ. N 24 «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին» որոշում:

5 «Կրթություն», # 17-18, 2003 թ., էջ 5:

---

## ABOUT STANDARDS OF HIGHER PROFESSIONAL EDUCATION

ARMEN JUGHURYAN
Doctor of Economy, Professor

**Summary**

Currently the quality control in higher educational system, which is organizing in basis of educational standards for each specialization, is one of the issues in Armenia. It's worth mentioning, that practical implementation of educational standards is progressing very slowly because of several reasons. Firstly, the accreditation of local universities is a new process in Armenia and there is no experience and practical necessity for using educational standards.

Secondly, the former educational system was strictly managed by the Government without any academic freedom for universities. At present, educational activities in universities are becoming more democratic and thus it is critical to harmonize educational plans and programs, which raises the demand for standardization of the same specializations.

Thirdly, recently Armenia has become one of the members of European Parliament and should participate in the creation of the common European Educational system, which was impossible in the former Soviet Union. Therefore, for activating the mobility of students and employers within European community it is necessary to organize the educational process according to western standards.

The article reviews the structure and sections of higher educational standards, as well as minimum requirements of educational plans, schedules, internships, semesters and graduating exams, which make conditions for sufficient quality in universities.

## О СТАНДАРТАХ ВЫСШЕГО СПЕЦИАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ

АРМЕН ДЖУГУРЯН
Доктор экономических наук, профессор

Резюме

В настояшее время контроль за качеством учебного процесса одно из важных проблем реформирования высшего образования, в основу которого лежит образовательный стандарт. Однако следует констатировать, что процесс создания образовательных стандартов и их практическое применение в республике идет медленно из за некоторых причин. Во первых, акредитация вузов новое явление в действительности республики и до сих пор не было опыта, а также необходимости в использовании образовательных стандартов.

Во вторых, не давно в Армении образовательный процесс исключительно управлялся со стороны государства, без либо каких академических свобод. Ныне, на фоне разнообразии вузов возинкла необходимости в гармонизации более демократического учебного процесса с помощью образовательных стандартов, что не требовалась в годы Советской власти.

В третьих, недавно Армения поступило в членство в состав Евросовета, что обязывала респыблику в участие в процессе строительства в единого Европейского образовательного пространства. Поэтому, в целях активизации мобильности в Еврообщине студентов и специалостов с высшем образованием, становится актуальным применение западных образовательных стандартов.

В статье представлены отделы образовательного стандарта, минимальные требования к учебным программам и планам по отдельным специальностям, а также необходимые нормативы обеспечения качества выпускников вузов.

***ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ***
*Երևանի պետական լեզվահասարակագիտական ինստիտուտի հայցորդ*

# ՎՃԱՐՈՎԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կրթությունը, հանդիսանալով պետական և հասարակական կյանքի կարևորագույն ոլորտ, մշտապես գտնվում է պետության ուշադրության կենտրոնում: «Կրթության մասին» ՀՀ օրենքով հանրապետությունում երաշխավորվում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն[1]: ՀՀ Սահմանադրությունը հռչակում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք[2]: Հատկանշական է նաև, որ ըստ Սահմանադրության՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

Սակայն բարձրագույն կրթությունը, որը, ի դեպ, ազգային անվտանգության ապահովման կարևորագույն երաշխիքներից է, դեռևս հասու չէ բնակչության լայն զանգվածներին: Հասարակության մեջ մինչ այժմ գերիշխում է կարոտախտը խորհրդային ուսուցման անվճար համակարգի նկատմամբ, երբ մի կողմից՝ սոցիալապես համահարթեցված հասարակարգը, մյուս կողմից՝ պետության միջոցներով հասարակությանն առաջարկվող անվճար ուսուցումն ընդունելի և, չերկնչենք ստուգախոս լինելուց, համեմատաբար նպաստավոր պայմաններ էին ստեղծում կրթություն ստանալու համար: Սակայն բարձրագույն կրթությունն այդ տարիներին նույնպես հասու չէր հասարակության բոլոր անդամներին, և դա կապված էր ոչ թե բնակչության անվճարունակության, այլ՝ պետպատվերով պայմանավորված սահմանափակ տեղերի և մրցութային լարվածության հետ:

Այս առումով ակնկալվում էր, որ անկախության առաջին իսկ տարիներին հանրապետությունում արագորեն ձևավորվել սկսող վճարովի ուսուցման համակարգը և բուհերի թվի կտրուկ աճը վերջապես կթուլացնեն բուհական ընդունելության քննությունների մրցութային լարվածությունը, և բարձրագույն կրթությունը հասու կդառնա լայն զանգվածներին: Սակայն վճարովի կրթությունը, լուծելով բուհում սովորելու հիմնախնդիրները, չարդարացրեց իրեն այնպիսի կարևորագույն առումով, որպիսին է կրթության որակի բարելավումը:

### Արդարացվա՞ծ է, արդյոք, վճարովի կրթությունը

Սոցիալապես անապահով հասարակությունում վճարովի կրթության իրականացումը կարծես անարդար է, մանավանդ երբ ոչ վաղ անցյալում բուհական կրթությունը հանրապետությունում համարվում էր անվճար: Ներկայումս էլ արտասահմանյան շատ երկրներում շարունակում է իրականացվել անվճար բարձրագույն կրթություն: Հետևաբար, ոտնահարվո՞ւմ է սոցիալական արդարությունը, երբ նորանկախ մեր հանրապետությունում բարձրագույն մասնագիտական կրթության հնարավորություն են ունենում հիմնականում վճարունակ խավերը, որոնք ի վիճակի են վարձահատույց լինել կրկնուսույցներին դիմորդի նախապատրաստման ընթացքում կատարած աշխատանքի դիմաց, իսկ հետագայում՝ վճարել ուսանողի բուհական ուսուցման վարձերը: Ընդսմին՝ անվճարունակ խավի երեխաները հիմնականում չեն հաղթահարում ընդունելության քննությունների բարդ առաջադրանքներն առավելապես այն պատճառով, որ դպրոցը դիմորդին չի նախապատրաստում ընդունելության քննության, և առաջնությունը փոխանցված է խոշոր վարձավճարներ պահանջող և մայրաքաղաքում գործող կրկնուսույցների ինստիտուտին: Ի հետևանս թվարկյալի՝ բուհերում հետզհետե կրճատվում է համեմատաբար մեծ մտավոր ներուժ ունեցող ուսանողների տեսակարար կշիռը: Հատկանշական է, որ տարեցտարի ավելի ակնհայտ է դառնում գյուղական շրջանների ուսանողների թվի նվազումը, ինչը պայմանավորված է ոչ թե քաղաքաբնակ շրջանավարտի առավել լիարժեք կրթվածությամբ, այլ՝ գյուղաբնակ շրջանավարտի համեմատությամբ ինչ-ինչ առավելություններով (բարձրորակ կրկնուսույցների, զանազան կրթական նախապատրաստական գործունեություն իրականացնող կենտրոնների առկայություն և այլն):

Բացի այդ՝ ֆինանսական լարվածությունն էլ ավելի է ուժեղանում ուսանողի բուհ ընդունվելուց հետո: Ներկայումս մեկ ուսանողի օրական ծախսը (ներառյալ կրթավճարները, ճանապարհածախսը, սնունդը, զանազան ուսումնական նյութերի ու պարագաների ձեռք բերումը) հանրապետությունում միջին հաշվով կազմում է 4 000 դրամ: Ֆինանսական իրավիճակն էլ ավելի է լարվում, երբ ընտանիքում մեկից ավելի ուսանող կա: Այդ իսկ պատճառով՝ ներկայումս փոքր չէ սոցիալապես անապահով այն ուսանողների թիվը, ովքեր կիսատ են թողնում բարձրագույն ուսումը՝ ի վիճակի չլինելով վճարելու ուսման վարձը: Ուրեմն, հնարավոր չէ՞, արդյոք, կազմակերպել անվճար ուսուցում և բուհական կրթությունը ֆինանսապես հասու դարձնել հասարակության բոլոր անդամներին:

Պետք է խոստովանել, որ կրթական ծառայությունների մատուցումը թանկ հաճույք է. այն անհրաժեշտ է հիմնավորապես ֆինանսավորել, և այդ իսկ պատճառով կրթության դիմաց միշտ էլ վճարվել է՝ լինի պետության, թե անհատի կողմից: Ուստի վճարովի կրթությունն արդարացված է, մանավանդ տնտեսապես զարգացող երկներում, որտեղ պետությունը

նույնիսկ չի կարողանում լիարժեքորեն լուծել քաղաքացիների՝ կրթությունից առաջնային համարվող սոցիալական մյուս պահանջմունքները: Կարծում ենք, որ այստեղ վիճահարույց պետք է համարվի ոչ թե վճարովի կրթության փաստը, այլ մատուցվող կրթական ծառայությունների որակի և դրանց դիմաց կատարվող կրթավճարների հիմնավորվածությունը:

## Որակյա՞լ է, արդյոք, բարձրագույն կրթությունը

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ որքան բարձր են կրթավճարները, այնքան որակով են մատուցվող կրթական ծառայությունները: Սակայն մեր երկրում պետությունն իր միջոցներով դեռևս չի կարողանում ապահովել նույնիսկ պետական բուհերի բնականոն գործունեությունը, և կրթական գործընթացի անընդհատությունը հիմնականում պայմանավորված է կրթավճարներով, որոնք նախ՝ սոցիալական լարված պայմաններում դժվարությամբ են հայթայթվում, այնուհետև՝ դեռևս բավարար չեն որակյալ կրթական ծառայություն մատուցելու համար:

Տարիներ շարունակ խոսում ենք խորհրդային շրջանից ժառանգած և բարի համբավ վայելող բարձրագույն կրթության համակարգի մասին: Սակայն հարկ չկա տառապել կարոտախտով, ընդհակառակը, հարկ է սթափվել և գիտակցել այն իրավիճակը, որտեղ գործում են աշխատուժի շուկայի օրենքները, ոչ թե շրջանավարտին պարտադիր աշխատանքի տեղավորման պլանային տնտեսության սկզբունքները:

Արդի բուհական համակարգում դեռևս լուծված չեն կրթության որակի վերահսկողության և գնահատման հիմնախնդիրները: Բացի այդ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նույնպես դժվարությունների է հանդիպում բուհական գործունեության որակի իրական վերահսկման կազմակերպման գործում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բուհերում, քանի որ դեռևս մշակված չէ կրթության որակի ստուգման և վերահսկողության համապարփակ հայեցակարգ:

Բարձրագույն և հետբուհական կրթության օրենքի՝ ներկայումս շրջանառության մեջ դրված նախագծի 22-րդ հոդվածով նախատեսվում է, որ կրթօջախները տարին մեկ անգամ պարբերական մամուլում հրապարակեն կրթության որակի գնահատման ընթացիկ արդյունքները[3]: Նույն օրենքի նախագծի 11-րդ հոդվածը նախատեսում է որակի իրականացման աուդիտ՝ ինքնավերլուծության և արտաքին վերահսկողության միջոցով: Հետևաբար, այս հիմնախնդիրների լուծման առումով առաջնահերթ է դառնում բարձրագույն կրթական ծառայությունների մատուցման որակի գնահատման մեթոդաբանության մշակումը:

Չնայած մեծ պահանջարկին՝ հանրապետությունում դեռևս մշակված չեն յուրաքանչյուր մասնագիտության որակի գնահատման ցուցանիշները, որը և՛ խանգարում է բարձրագույն կրթության ծառայության հավաստի արժևորմանը, և՛ դրան համապատասխան՝ ուսման վճարների սահմանմանը: Բացի այդ՝ բուհերում անարդյունավետորեն է գործում կրթության որակի ներքին վերահսկողությունը՝ կապված կրթական չափորոշիչների ոչ լիարժեք կիրառման հետ:

Պետք է խոստովանել, որ ներկայիս բուհական կրթությունում իներցիայի ուժով դեռևս ավելի շատ հաշվի են առնվում խորհրդային կրթական համակարգի ավանդույթները, քան աշխատուժի շուկայի կողմից շրջանավարտին առաջադրվող արդիական պահանջները: Այսօր ուսանողին մատուցվող բուհական կրթական ծառայության որակը չպետք է միայն գնահատել դասախոսությունը «սերտած» ուսանողի բարձր գնահատականներով, այլ նաև այն մասնագիտական գիտելիքներով, որոնք անվերապահորեն պահանջվում են աշխատուժի շուկայի կողմից: Ուրեմն, կրթության որակի բարելավման առաջնահերթ ուղին ուսումնական գործընթացի ծանրության կենտրոնի տեղափոխումն է խիստ ակադեմիականացված ոլորտից դեպի գործնական ուղղվածության ոլորտ, ինչը, դժբախտաբար, դեռևս նկատելի չէ մեր բուհերում: Մտահոգիչ այս հանգամանքը պետք է հաշվի առնվի բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչները մշակելիս, որի գործընթացը հանրապետությունում սկսել է աշխուժանալ:

Կրթության որակի բարելավման նպատակով ուսանողներին հնարավորինս պետք է «ազատել» դասախոսություններից և լսարանային հոսքային պարապմունքներից: Մայրենի լեզվով ժամանակակից և ժամանակահունչ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների պակասը ստիպում է դասախոսությունը վերածել թելադրությունների, որոնք խիստ անարդյունավետ են դարձնում ուսուցման գործընթացը: Ավելին՝ ներկայումս ուսանողը հիմնականում զրկված է այլընտրանքային ուսումնական նյութերի ձեռք բերումից, քանի որ շատ բուհերում բացակայում են ինտերնետային լսարանները, գրադարանները համալրվում են շատ դանդաղ, որոշ դեպքերում՝ հնացած գրականությամբ: Այո, դասավանդման գույքային և տեխնիկական բազան հայրենական բուհերում դեռևս բարելավման կարիք ունի: Լսարաններում բացակայում են տարրական գույքային միավորները (հագուստի կախիչներ, հարմարավետ ուսանողական նստարաններ, լայնարձակ և սպիտակ գրատախտակներ), էլ չենք խոսում տեսաուսուցողական նյութերի ցուցադրման տեխնիկական հնարավորությունների կամ բազմացնող սարքերի բացակայության կամ սակավության մասին: Ի հետևանս այս ամենի՝ նվազում է դասավանդման արդյունավետությունը՝ պայմանավորված նաև յուրաքանչյուր դասի գծով ուսանողներին աշխատաթերթերի, դասախոսության սեղմագրերի բաժանման անկատարության հետ:

Կրթության պատշաճ որակ չի ապահովվում նաև ուսանողների պրակտիկայի անցկացման ընթացքում: Ուսանողին մատուցվող կրթական ծառայությունների ժամանակահատվածի մոտ 15%-ը բաժին է ընկնում ուսումնաարտադրական պրակտիկային: Խորհրդային տարիներին, երբ պրակտիկայի անցկացման վայրերի սակավության խնդիր չկար, կա-

րևորվում էր միայն ուսանողին պատշաճ պրակտիկ ունակությունների փոխանցման որակը: Ներկայումս դրան այլ հիմնախնդիրներ գումարվեցին՝ կապված պրակտիկայի անցկացման օբյեկտների սղության հետ: Վերջիններիս կողմից ուսանողներին պրակտիկ ծառայությունների մատուցման համար վարձավճարներն աճել են շատ ավելի, քան բուհի և ուսանողի հնարավորություններն են. ավելին՝ նկատելի է անտարբերություն պրակտիկանտների և, ընդհանրապես, պրակտիկա երևույթի նկատմամբ:

Ներկայումս բուհերը փորձ են անում ուսումնաարտադրական պրակտիկան գործատուների հետ անցկացնել վճարովի հիմունքներով: Սակայն այդ վճարները դեռևս այնքան խորհրդանշական-չնչին են, որ պրակտիկայի անցկացման վայրերում մեծամասամբ ուսանողների գործնական հմտությունների ուսուցմանը պատշաճ ուշադրություն չի դարձվում:

## Հիմնավորվա՞ծ են, արդյոք, ներկայիս կրթավճարները

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթական ծառայություններ են մատուցում հայրենական 16 պետական, 71 մասնավոր, ինչպես նաև արտասահմանյան շուրջ 15 բուհեր, որոնք հիմնականում կազմակերպում են վճարովի ուսուցում: Կրթավճարների սահմանման համակարգը հանրապետությունում դեռևս կարգավորված չէ: Ներկայումս ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ կրթավճարներն առավելապես ուղղվում են բուհերի գոյատևման ապահովմանը, քան կրթական լուրջ ծրագրերի իրականացմանը: Հետևապես, ուսման վարձերն առավելապես ծառայում են բուհի, ոչ թե ուսանողների շահերին:

Մասնագետների պատրաստման կրթավճարները տարբեր բուհերում կտրուկ տատանվում են (երբեմն 1,5 - 2 անգամ)՝ հիմնականում պայմանավորված ոչ թե մատուցվող կրթական ծառայության որակով և աշխատանքի շուկայում բուհական շրջանավարտների պահանջարկով, այլ բնակչութան շրջանում մասնագիտության նկատմամբ ձևավորված անցյալի «իներցիոն վարկանիշերով»:

Ավելին՝ պետպատվերով ընդունված ուսանողի տարեկան ուսման ծախսերը (առանց կրթաթոշակների) վճարովի համակարգի նկատմամբ սահմանված է մոտ յոթ անգամ պակաս: Ուրեմն՝ պե՞տք է, արդյոք, նվազեն ուսման վարձերը 40% աղքատ բնակչություն ունեցող երկրում: Կարծում ենք՝ ոչ: Ընդհակառակը՝ բուհերում ներկայիս սահմանված կրթավճարները հիմնավորված չեն և պետք է միտվեն բարձրանալու: Որակյալ կրթական ծառայության մատուցումը պահանջում է նաև բարձր կրթավճար՝ այնպիսին, որը չուղղվի միայն բուհերի գոյատևմանը, այլ ծառայի ուսանողի շահերին և էապես խթանի բարձրագույն կրթության որակի բարձրացումը:

Դժվարությամբ հայթայթվող կրթավճարների գործող պրակտիկան ուսանողի համար խիստ ռիսկային է, քանի որ ներկայումս հանրապետությունում հնարավոր չէ գնահատել ուսման վարձի հիմնավորվածությունն ըստ մատուցվող կրթության ծառայության որակի:

Հետևաբար, ներկայումս կրթական ոլորտում հրատապ է համարվում՝

- աշխատուժի շուկայի պահանջներին համապատասխան բարձրագույն կրթությամբ մասնագետների որակի իրատեսական գնահատումը.
- կրթական ծառայությունների մատուցման արժեքի հիմնավորման մեթոդաբանության մշակումը:

Բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման իրատեսական արժևորումը մի կողմից հնարավորություն կտա հիմնավորված կերպով սահմանելու ուսման վարձերը, մյուս կողմից՝ շրջանավարտներին կկողմնորոշի «կրթավճար - կրթության որակ - աշխատատեղ» շղթայում ճիշտ դիրքորոշվելու և կրթության ոլորտ (բուհ) ընտրելու հարցում:

Փորձենք ներկայացնել մեկ ուսանողի ուսման վարձի համեմատական հաշվարկը գործող պետպատվերի, վճարովի համակարգի և կրթական ընդունելի որակի ապահովման ռազմավարության պայմաններում (աղյուսակը տե՛ս հաջորդ էջում): Ըստ աղյուսակի՝ բարձրագույն մասնագիտական կրթության լավ որակ կապահովվի, եթե տարեկան ուսման վճարը նվազագույնը սահմանվի մոտ 3 500 ԱՄՆ դոլար: Եթե համեմատենք աղյուսակի սյուները, ապա պարզ կդառնա, որ ներկայումս ուսման որակն ապահովող մի շարք ծախսային հոդվածներ կամ չեն իրականացվում, կամ էլ կատարվում են բավական ցածր մասնաչափերով:

Ստացվում է այնպես, որ կրթության որակի բարձրացման նպատակով գործող կրթավճարների բազմապատիկ բարձրացումներն այսօրվա ֆինանսական ծանր իրավիճակում ընդհանրապես բարձրագույն մասնագիտական կրթությունը կդարձնեն անհասանելի բնակչության համար, և կարծես պետք է անվերապահորեն մերժել այդ գաղափարը: Ամենապարզ հաշվարկներն էլ հավաստում են, որ նույնիսկ այդպիսի բարձր կրթավճար հայթայթելու պարագայում էլ ուսանողը չի ձգտի ստանալ բարձրագույն կրթություն, որովհետև առանց այն էլ գերհագեցած ներկայիս որակավորված աշխատուժի շուկան, պահանջարկ չունենալուց բացի, լավագույն դեպքում բուհի շրջանավարտին կարող է առաջարկել տարեկան 1 500 ԱՄՆ համարժեք վարձատրություն: Ուրեմն՝ միայն բարձրագույն կրթության ծախսերի փոխհատուցման համար ներկայիս բուհի շրջանավարտն առնվազն պետք է անընդմեջ աշխատի 10 տարի, որը կասկածի տակ կդնի բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ձգտումը:

Այս առումով՝ ներկայիս սոցիալական լարվածության մեջ գտնվող և որակավորված աշխատուժն ըստ էության չգնահատող երկրում իրոք որ որակի բարձրացման նպատակով կրթավճարների աճն անիմաստ կհամարվի: Բայց եկեք քննարկվող հարցին անդրադառնանք այլ տեսանկյուններից: Մինչև ե՞րբ պետք է հանդուրժվի Եվրախորհրդին անդամակցող երկրում կրթության այն որակը, որը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին: Կամ՝ մինչև ե՞րբ պետք

Ուսման տարեկան վարձի միջինացված հաշվարկը բուհում մեկ ուսանողի հաշվով
(ԱՄՆ դոլարով)

| ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ | ՓԱՍՏԱՑԻ | ՊԵՏՊԱՏՎԵՐ |
|---|---|---|---|
| | | | |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ | | | |
| ՓՈՓՈԽՈՒՆ ԾԱԽՍԵՐ | | | |
| Դասախոսական աշխատավարձ (վրաեկով) | 2321 | 280 | 60 |
| Դասագրքեր (ձեռնարկներ), ուսումն. նյութեր | 89 | 5 | 2 |
| Աշխատաթերթեր | 60 | 0 | 0 |
| Համակարգչային սպասարկում | 119 | 8 | 0 |
| Փորձալաբորատոր ծառայություններ | 30 | 2 | 1 |
| Վնաս կենցաղային գեղչից | 149 | 0 | 0 |
| Ուսումնաարտադրական պրակտիկա | 208 | 7 | 0 |
| | 2975 | 302 | 63 |
| ՀԱՍՏԱՏՈՒՆ ԾԱԽՍԵՐ | | | |
| Համակարգչային ծրագրեր | 14 | 0 | 0 |
| Ինտերնետ ծառայություն | 35 | 4 | 1 |
| Դեկանատի աշխատակազմ | 7 | 3 | 2 |
| Ամբիոնի վարչակազմ | 25 | 1 | 3 |
| Ուսումնաօժանդակ անձնակազմ | 32 | 2 | 2 |
| Գիտական մասի ծախսեր | 35 | 1 | 1 |
| Գրասենյակային պիտույքներ | 28 | 4 | 1 |
| Ուսումնական գույքի ամորտիզացիա | 88 | 3 | 2 |
| Գրադարանային ծախսեր | 42 | 8 | 3 |
| Ֆիզիկական դաստիարակության ծախսեր | 46 | 5 | 2 |
| | 350 | 31 | 17 |
| ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ | | | |
| Աշխատավարձ | 9 | 7 | 3 |
| Ֆինանսատնտեսական ծախսեր | 26 | 2 | 3 |
| Ավտոտնտեսության ծախսեր | 9 | 1 | 1 |
| Էներգակիրների ծախսեր | 70 | 28 | 2 |
| Շինությունների, շարժակազմի ամորտիզացիա | 18 | 6 | 6 |
| Շենքերի շահագործման ծախսեր | 35 | 16 | 4 |
| Պահակային ծառայության ծախսեր | 9 | 7 | 1 |
| | 175 | 67 | 20 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 3500 | 400 | 100 |

է ընդունելի համարենք այն իրավիճակը, երբ բարձրագույն կրթությամբ շրջանավարտն ավանդաբար իր մասնագիտական հմտություններն առավելապես ձեռք է բերում պրակտիկ աշխատանքի ընթացքում, ոչ թե բուհում:

Յանրապետությունում վերջին տարիներին արձանագրվող տնտեսական աճի բարձր տեմպերն առաջիկայում կընդլայնեն որակավորված աշխատուժի շուկան և արդիական ու խստագույն պահանջներ առաջադրելով բարձրագույն կրթությամբ մասնագետին՝ կբարձրացնեն վերջինիս վարձատրության չափերը: Ուրեմն՝ արդեն ժամանակն է լրջորեն մտածելու կրթական ծառայությունների որակի բարձրացման և այդ նպատակով միջոցներ հայթայթելու մասին:

### Վճարովի կրթության ապագան ՀՀ-ում

Որակյալ կրթության դիմաց հիմնավոր կրթավճարների փաստը հանրապետությունում կարձանագրվի ուսանողական վարկերի ձևավորման մե-

խանիզմի ակտիվացման պարագայում, երբ կրթավճարի բեռն ուսման տարիներին հիմնականում կընկնի առևտրային բանկերի վրա, իսկ հետագայում՝ կփոխհատուցվի շրջանավարտի կողմից: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, պետությունը բանկերին արտոնյալ պայմաններ է առաջարկում այնպես, որ ուսանողական վարկերը լինեն բոլորին հասանելի՝ ցածր տոկոսադրույքներով և իրագործելի գրավադրմամբ:

Կրթական վարկերը, որպես կանոն, ազատվում են հարկերից և մասամբ ապահովագրվում են պետության կողմից, որը բանկերում էապես իջեցնում է վարկերի տրամադրման ռիսկայնությունը: Չէ՞ որ պետության համար որակյալ կրթությունն արդյունավետ գործիք է մարդկային կապիտալի ձևավորման և ազգային անվտանգության ապահովման գործում:

Վարկային ռեսուրսների հաշվին կրթավճարների փոխհատուցումը, կարծում ենք, կլուծի մի շարք խնդիրներ՝

առաջին՝ բուհն ավարտելուց հետո շրջանավարտը չի մտածի երկիրը լքելու մասին և մտահոգ կլինի աշխատանք գտնելու և ուսման վարկային պարտավորությունները կատարելու խնդրով.

երկրորդ՝ կրթությունը կդառնա հասանելի նաև անապահով խավերին, որոնք, ֆինանսական ռեսուրսներ չունենալու պատճառով, զրկված են բուհում սովորելու հնարավորությունից.

երրորդ՝ մուծվող կրթավճարները կսկսեն «աշխատել» ի նպաստ ուսումնառության արդյունավետության բարձրացման, որով էապես կբարձրանա բուհերում մատուցվող կրթության որակը:

---

1 «Կրթության մասին» ՀՀ օրենքը, 4-րդ հոդված, 1999թ.:
2 ՀՀ Սահմանադրություն, 35-րդ հոդված, 1995թ.:
3 «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (նախագիծ), 2003 թ.:
4 «Կրթություն», թիվ 15-16, 2003 թ.:

---

## ABOUT THE PAYING EDUCATION

NARINE DAVTYAN
Dissertator of Yerevan State Institute of Economy

**Summary**

Educational payments make higher education not available for each member in developing counters. Therefore in Armenia currently one of the issues in higher educational system is a calculation of well-founded tuitions in private as well as in public universities. Another issue is the quality of educational service. Because of lower tuitions fees in Armenian universities native language textbooks, manuals, internet access, projectors are currently no sufficient for effective training environment.

Well-founded internship also needs development. Nowadays because of changing requirement of labor market education mainly focuses to the practice skills training in universities. Gradually higher education system shifts from academic to the practice field in Armenia. Thus, internship process that was free of charge earlier today should function on payable principles.

One of the ways of producing qualified education is the financial sources which could be managed by foundation of students' credit lines system, which is currently missing in Armenia. The motivating factors for students' credit lines effective activity are tax exceptions for banking loans, loans on governmental guaranty basis, as well as economic growth and stability in country. In this case large scope of vacancies will be available for higher educated persons on well paid positions and opportunities for covering student credits after graduating university in future practice period.

## О ПЛАТНОМ ОБУЧЕНИИ

НАРИНЕ ДАВТЯН
Соискатель Ереванского государственного института экономики

**Резюме**

Платное обучение превращает не доступым высшее образование для каждого члена общества развивающихся стран. Поэтому в настоящее время обоснованная калькуляция плат за обучения проблема не только частных, но и государственных вузов. Другая проблема в системе вузов Армении связана с высоким уровнем качества образования. Из за низкой платы за учебу университеты не в состоянии обеспечить обоснованную учебную базу. Хроническая нехватка учебников на армянском языке, проекторов и слайдоскопов, отсуствие доступа к интернету делают учебный процесс неэфективным, нуждается в совершенствовании организация производственной практики. В настояшее время в вузах большое внимание начинают уделять к обучению практическим навыком студентов, связанными с изменениями требованиями рынка труда. Поэтому ранее бесплатная производственная практика в настоящее время постепенно переходит на платную основу.

Основным путем для качественного обучения является представление студентческих кредитов, которые представляют высокие рисковые операции для банков. С целью уменьшения степени риска предлагается предоставить коммерческим банком со стороны государства льготные условия в виде уменьшения налогов, государственные гарантии за студентческие ссуды. Болле того, намеченный экономический рост в последние годы в республике обещает новые места для высокооплачиваемых специалистов, что даст выпускникам вузов возможность для оплаты студентческих ссуд.

# ДЕЛОВЫЕ И ЛИЧНЫЕ КОНФЛИКТЫ УЧИТЕЛЯ СО ШКОЛЬНИКАМИ И ОСОБЕННОСТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ

РИТА МУСИНЯН
Соискатель кафедры общей педагогики
Ереванского армянского государственного
педагогического университета им. Х. Абовяна

Межличностные конфликты различаются по содержанию, значимости, форме, силе, длительности, управляемости и другими параметрами. Они бывают глубокими и мелкими, открытыми и скрытыми, стремительно и медленно развивающимися, кратковременными и длительными, неожиданными и программируемыми, управляемыми и неуправляемыми.

По характеру нарушаемых связей между учителем и школьником выделяются две основные группы конфликтов: деловые и личные. Деловые конфликты обусловлены рассогласованиями, возникающими в совместной предметной деятельности, личные – разрывом контактов на основе нравственно-психологической несовместимости.

Предлагаемая типология условна, ибо дезинтеграция взаимоотношений выявляет узел противоречий. Так, деловые конфликты нередко осложняются невысокой нравственно-этической культурой, нетерпимостью учителя. В свою очередь его предметная и методическая эрудиция способна в значительной мере компенсировать изъяны характера (вспыльчивость, подозрительность и др.) и снизить уровень противостояния учащихся.

Деловые конфликты чаще связаны с недостатками в подготовке учителя как знатока своего предмета, личные – с невысоким уровнем его нравственно-психологической культуры. Несмотря на органическую взаимосвязь деловых и личных конфликтов, можно говорить об определенной разнице между ними – о специфических причинах возникновения, своеобразии проявления и технологических особенностях преодоления.

Для того чтобы выявить истоки нарушения контактов и факторы, усиливающие этот процесс, мы сосредоточим внимание на ситуациях, в которых запечатлены моменты зарождения коммуникативных разногласий в учебно-воспитательном взаимодействии.

Несомненно, каждый конфликт уникален. Неповторима конфликтная ситуация общения как комплекс обстоятельств, включающих объект, субъект, предмет конфликта, инцидент, конфликтные действия и отношения. Педагогические реакции многообразны. Они могут быть удачными и неудачными. Однако в любом случае их анализ, обогащая профессиональную память, может оказаться полезным учителю, тем более что количество оптимальных решений не столь беспредельно.

Начнем с деловых конфликтов. Принято считать, что совместная деятельность сплачивает учителя и учащихся. Это не всегда так. Будет точнее сказать,что она создает объективные предпосылки для их сближения.

Для того чтобы учебно-воспитательное взаимодействие стало плодотворным сотрудничеством, необходимо взаимопонимание, достижение психологической общности. В целях предотвращения противостояния школьников нецелесообразно экономить время на разъяснении цели предстоящей работы и логики предъявляемых требований.

Ареной столкновения взглядов, мнений, интересов может оказаться любой этап предметного взаимодействия – от целеполагания до диагностики его результатов.

Готовность учителя раскрыть внутренний смысл своих действий и поступков, считаться с настроениями, потребностями учащихся упреждает межличностные столкновения. И наоборот, непонимание, сомнение школьников в целесообразности предметных действий, в качественном уровне, как правило, чревато коммуникативными осложнениями.

Иллюстрацией могут быть следующие ситуации.

“Мини-контрольная”. В пятницу в течение двух часов девятиклассники писали сочинение по литературе. На 3-й урок пришла учительница истории и неожиданно объявила: “Я сегодня решила выяснить, как вы знаете хронологию. Достаньте тетради. Проведем “мини-контрольную”. Изрядно уставшие ребята стали дружно просить отложить проверку. Но все было напрасно. “Я запланировала эту работу и отменять не собираюсь. Если уступать вашим капризам, а я вижу, что главные заводилы – отнюдь не отличники, то ничего толкового из учебы не выйдет”. Почти половина ребят отказались сдавать тетради. Уязвленная учительница, не попрощавшись, с небольшой стопкой работ вышла из класса, угрожая: “Все, кто не сдал тетради, получат двойки”.

Как видим, первопричина разгоревшегося конфликта инициирована самой учительницей, ее нежеланием считаться с девятиклассниками, принимать во внимание их психологическое состояние. В данных обстоятельствах, вероятно, подходящим был бы компромисс. Однако, по всей видимости, педагог оказался не готов к иному

варианту проведения урока.

Неуступчивость, жесткая требовательность могут свидетельствовать о многом: авторитарности, неумении динамично перестраивать учебное взаимодействие, приводить его в соответствие с новыми реалиями.

Вот пример иного свойства: "Порванные тетради". Накануне в 8-м классе была контрольная работа по иностранному языку, первая в новом учебном году у новой учительницы. Переводы были сделаны в основном неплохо, но учащиеся допустили много грамматических ошибок. Прежний педагог за них почти не снижала отметки, обращая внимание лишь на передачу смысла. Новая учительница оказалась более требовательной. Неудовлетворенные полученными отметками ребята стали возмущаться, а некоторые в запальчивости разорвали тетради. Поняв смысл происходящего, учительница решила немедленно исправить свой промах: "Ребята, извините, я не знала, по каким критериям в 7-м классе оценивались ваши переводы. Будем считать, что это была лишь репетиция контрольной. Я не буду выставлять отметки в журнал. Однако в следующий раз нужно более серьезно подготовиться, обратить внимание на грамотность. Ведь вы уже восьмиклассники, и требования к вам, естественно, повышаются". Такой поворот событий настроил восьмиклассников на более оптимистичный лад.

Выявлена прямая зависимость стрессоустойчивости личности от уровня ее самореализации. Вынужденное снижение творческой активности способствует невротизации поведенческих реакций[1]. Эта закономерность распространяется и на учебную деятельность. Переживание успеха, эмоциональное удовлетворение предметным взаимодействием, личностная самореализация страхует школьников от противостояния учителю более надежно, чем прямое дисциплинирование. Атмосфера скуки, дидактического однообразия, доминирование репродуктивной методики, сковывая творческие силы учащихся, создает благоприятный фон для возникновения сначала скрытой, а затем и явной конфронтации.

Залог бесконфликтного учебно-воспитательного взаимодействия – высокая эрудиция учителя как предметника, владение современными технологиями преподавания, умение вести со школьниками равнопартнерский диалог, забота о личностном самоутверждении каждого из них.

Изучение динамики развития взаимоотношений учителя со школьниками свидетельствует, что самым конфликтогенным оказывается заключительный этап – оценка полученных знаний, умений и навыков. Самые острые эмоциональные переживания ребят связаны с выставлением отметок. Так, в своих сочинениях "Школьная обида" студенты ванадзорского филиала армяно-русского международного университета "Мхитар Гош" рассказывают о травмах, порой более чем десятилетней давности. Настолько сильным оказалось потрясение педагогической несправедливостью. 57% второкурсников университета (из 112 опрошенных) прямо или косвенно связывают свои школьные обиды с необъективной оценкой их знаний.

Характерно описание следующего случая. "Это было в 7-м классе. Учительница математики раздала нам контрольные работы. Я относилась к разряду стабильных "хорошистов". Каково же было мое удивление, когда я обнаружила жирную тройку. Заглянув в тетрадь соседки, я увидела "4", хотя ошибок было больше, чем у меня. Я подняла руку и попросила педагога объяснить причину несправедливости. Ее реакция ошеломила: на меня обрушился град обвинений в зазнайстве, зависти к чужому успеху и т.п. Я стала пропускать уроки математики и постепенно стала настоящей "троечницей"

Конфликтность в процессе оценивания учебной деятельности школьников в значительной мере обусловлена несовершенством используемых диагностических технологий. Традиционное предпочтение устного опроса не обеспечивает объективную и многостороннюю экспертизу знаний. Беседуя с учителем в присутствии класса, не каждый ребенок способен представить свои познания в выгодном свете. Этому могут препятствовать природная интравертированность, эмоциональная тревожность, вербальная скованность и т.д.

Один из авторитетных дидактов В.П. Беспалько не без основании делит методы контроля уровня знаний учащихся на субъективные и объективные. Он подчеркивает ненадежность диагностики успеваемости с помощью опроса, приносящего в процесс оценивания неизбежный субъективизм – настроение учителя, его личные пристрастия и др. Определить реальный уровень знаний позволяет объективный метод контроля - тесты, результаты которых поддаются однозначной, справедливой интерпретации[2].

Далеко не все педагоги считают необходимым убедительно и тактично комментировать отметку, заботиться о том, чтобы не вызвать у ребенка сомнений в ее необъективности, чтобы она не утратила своей положительной мотивационной силы. Как правило, катализатором протеста школьников выступают авторитарность и репрессивность оценочной тактики, в которой эмоциональное начало берет верх над рациональным. Именно в таких случаях полученный балл, в особенности низкий, воспринимается как проявление учительского произвола.

Характерной в этом плане является ситуация "Двойка авансом". Отвечая на вопрос, девятиклассник допустил ряд неточностей, хотя тему осветил удовлетворительно. Вероятно, учительница ожидала гораздо большего, поэтому, не говоря ни слова, поставила двойку. Школьник

вспылил: “Никогда не знаешь, за что Вы ставите свои отметки! Если Вам мало одной двойки, можете авансом приплюсовать еще одну”. “Ну, что ж, - холодно парирует педагог, - пусть будет потвоему”. В журнале появляются рядом две двойки. Возмущенный юноша садится на место и демонстративно не участвует в дальнейшей работе.

В поведении учительницы заметны грубые просчеты из-за авторитарности, традиционной уверенности в воспитательном всесилии двойки. Вместо того чтобы объяснить школьнику причину неудовлетворенности ответом, она усугубляет разрыв отношений бестактностью, граничащей со вседозволенностью.

Не менее типична и ситуация “Одна за всех”. На уроке математики проверяется домашнее задание. Учительница удовлетворена опросом. Однако в беседе с ученицей, снискавшей репутацию отличницы, неожиданно обнаружила пробелы в знании давно пройденного материала. Вопрос, адресованный классу, также остался без ответа. “Такого я от тебя не ожидала и простить не могу! - взрывался педагог. – Все могли забыть эту формулу, но только не ты. Получай двойку!” В классе воцарилась гнетущая тишина. Школьница в слезах садится на свое место.

Отметка для школьников – главное средство личностного самоутверждения. Именно поэтому она воспринимается столь остро. В редких случаях оценка не вызывает чувство удовлетворения и душевного подъема, если совпадает с уровнем притязаний, и порождает тягостные переживания, если противоречит ему. Формирование положительной мотивации учения осложняется, если учитель не заботится о том, чтобы каждый ребенок испытывал чувство успеха. Отметка может выступать серьезным стимулом преодоления познавательных трудностей и быть источником психологических травм, детских обид.

Бездушный, формальный подход к оценке продуктивности предметной деятельности школьника оборачивается разрывом духовных контактов с ним, провоцируя вспышки агрессивности.

Показательна ситуация, описанная студентом университета “Мхитар Гош”. Не знаю почему, но в 8-м классе меня невзлюбила учительница русского языка. Все ей во мне не нравилось – неразборчивый почерк (“Пишешь, как курица лапой”), плохое произношение (Разве русские так говорят?!) и т.д. Придирки следовали одна за другой. И как бы я ни отвечал, из “троек” не вылезал, хотя по остальным предметам у меня были хорошие и отличные отметки. Я так возненавидел учительницу, что решил отомстить. Однажды подставил ей сломанный стул. Стыдно вспомнить, был бесконечно счастлив, когда грузная, немолодая женщина шлепнулась на пол”.

Действенной мерой, предупреждающей деловые конфликты, является вовлечение школьников в процесс совместного решения возникающих учебных проблем. Объективность отметок не вызывает сомнения у учащихся, если они принимают непосредственное участие в анализе и оценивании предметной деятельности. Следует использовать и взаимооценивание, стимулирующее развитие у каждого ученика способности к самоанализу и самооцениванию. А катализатором противостояния учащихся, как правило, выступает утрата духа сотрудничества, авторитарная позиция учителя.

Остановимся на специфике личных конфликтов. Педагогическое общение – нормативный процесс, в котором реализуются различные модели поведения и учителя, и учащихся. Их взаимодействие предполагает обоюдное соблюдение общепринятых нравственных принципов, норм и правил этикета. К личному поведению наставника дети предъявляют заведомо высокие нравственно-этические требования. В процессе педагогического взаимодействия “учащиеся неосознанно придают индивидуальным качествам учителя статус социальных ожиданий взрослого руководителя”[3].

Конфликтогенными являются ситуации, в которых такие ожидания не находят подтверждения в реальном поведении учителя. Источник противостояния – противоречие между декларациями и поступками педагога, двойная модель. Например, он много говорит о доброте, а на деле мстителен, преследует ослушавшихся, жестоко наказывает за каждую провинность.

Насколько существен этот источник конфликтности, говорят социологические данные. Из трех тысяч опрошенных школьников и учащихся ПТУ две трети отметили значительные расхождения между тем, чему учат взрослые, и их повседневными поступками[4].

С возрастной бескомпромиссностью и непримиримостью подростки обычно протестуют против жалоб педагогов администрации или родителям, воспринимая эти акции как предательство, профессиональную несостоятельность. В этом плане показательна ситуация “Прости, если сможешь”.

Шестиклассникам долго не везло с учителями математики: часто менялись, злоупотребляли двойками. Матеметику любили немногие школьники. Новый педагог неожиданно сразу расположил ребят к себе и своему предмету. О сложном говорил просто и ясно, а главное – добр. Сергей, для которого решать задачи было мукой, стал меньше прогуливать и даже начал получать тройки. И вдруг однажды, войдя в класс, учитель был уязвлен: подросток демонстративно не поздоровался, не вынул из портфеля ни тетради, ни учебника. Это случилось буквально на другой день после родительского собрания, на котором педагог познакомился с отцом Сергея и отметил его серьезный интерес к учебе сына. Правда, математик по своей душевной простоте откро-

венно отозвался о мальчике, рассказал о пропусках и недоработках. Стремясь понять причину резкой перемены в поведении шестиклассника, педагог решил посоветоваться с учительницей, которая давно работала с классом. Оказалось, что Сергей жил с отчимом, скорым на расправу и не брезгующим рукоприкладством. На ближайшей перемене математик нашел мальчика. "Если можешь, прости меня", - были единственные слова, которые он счел уместным произнести в свое оправдание. Вернуть доверие ребенка оказалось не просто.

Школьники не прощают учительского равнодушия, бесчувственности. Представляет интерес исповедь подростка "Боль". "На уроке рисования в четвертом классе я, как всегда, быстро справился с заданием и мне было интересно заглянуть в тетради девочек, которые сидели за моей спиной. Видно, это им не понравилось, и, когда я повернулся в очередной раз, одна из них мазнула меня кистью с клеем по лицу и попала в глаз. От неожиданности и боли я вскрикнул. Не выяснив сути случившегося, учительница выставила меня из класса. Жжение усиливалось. Я поехал домой, где мне промыли глаз. Однако еще несколько дней оставалась краснота. Этот случай, а главное, жестокость учительницы так меня поразили, что я перестал ходить на ее уроки".

Многие личные конфликты по своей сути являются псевдоконфликтами, ибо возникают при нейтральных взаимоотношениях с учащимися. Поводом к их обострению выступают недопустимая импульсивность, несдержанность, мелочная раздражительность. Изъяны характера учителя могут провоцировать серьезные межличностные столкновения, в которых его личность раскрывается не лучшим образом.

Типична ситуация "Линейка". На уроке истории семиклассники внимательно слушают эмоциональный рассказ учителя. У одного из них в руках случайно оказывается линейка. "Оставь в покое линейку", - раздраженно требует педагог и продолжает объяснение. Однако через некоторое время подросток продолжает машинально манипулировать злосчастной линейкой. Окончательно разгневавшись, учитель вырывает ее, разламывает на мелкие кусочки и приказывает: "Дневник!" Мальчик с вызовом кладет его на стол, прибавляя: "А мне наплевать на то, что Вы запишите". Класс одобрительно зашумел.

В описанном случае реакции учителя не продиктованы педагогической целесообразностью. Они обнажили непрофессионализм его личности, репрессивность мышления.

Характерен и другой случай "Учитель гневается". К строгости учителя физики семиклассники привыкли. На уроке стоит тишина, ребята усердно переписывают в тетради только что выведенную на доске формулу, и вдруг раздается громкий возглас возмущения: "Это чем же ты занимаешься, Арам?!" Незаметно подкравшись к школьнику со спины, наставник обнаружил, что тот переписывает домашнее задание по иностранному языку. На глазах у ошеломленных подростков разрывается ученическая тетрадь и в журнале выставляется жирная двойка. На следующем уроке физики место проштрафившегося ученика пусто. Как видим, вместо того, чтобы спокойно включить школьника в общую работу, педагог учинил скандал, срывая собственный урок.

В силу своей нравственной и психологической незрелости дети могут нагрубить, проявить обидную бесцеремонность, слукавить, обмануть, украсть, а нередко и оскорбить своего наставника. Сталкиваясь с такими проявлениями учащихся, невозможно оставаться равнодушным и внутренне спокойным.

Опрос 50 учителей 18-ой школы показал, что их ранят многие ученические проступки. Результаты ранжирования последних в порядке убывания выглядят следующим образом:

1) ложь,
2) грубость,
3) неблагодарность,
4) лень,
5) равнодушие к учебе,
6) недисциплинированность,
7) непослушание,
8) агрессивность,
9) нечестность,
10) предательство.

Однако, как бы ни был уязвлен и обижен педагог, профессиональный долг обязывает принимать взвешенные решения, овладевать любой ситуацией, преодолевая вспышки гнева, состояния тревожности и отчаяния. Ю.М. Орлов справедливо подчеркивает, что эмоциональные взрывы и беспомощная трата энергии души не проходят бесследно для здоровья учителя, отравляя его организм "стрессовыми токсинами"[5].

Любая профессия связана с определенными самоограничениями. Имеются они и у педагога. У него нет права на грубость, даже ответную, унижительные реплики, адресованные детям, на обман, аморальные проявления и т.д. Такого рода самоограничения, будучи повседневными, обретают силу профессиональных привычек. Самодисциплина позволяет предотвращать межличностные столкновения, страхуя и учителя, и школьников от нервотрепок и дистрессов.

Пробным камнем профессионализма личности учителя служит его реакция на шалости. Их мотивация неоднозначна: потребность ребенка в игре, преодоление эмоциональной скованности, желание проявить самообладание перед лицом разгневанного воспитателя, испытать его профессиональную выдержку, повысить или упрочить свой статус в среде сверстников, скрытый протест и т.д. Характерна с этой точки зрения ситуация "Шутка".

Рослый семиклассник – большой любитель повеселить класс. Вот и сегодня он решил подшутить над учительницей географии. На перемене положил указку поверх доски, рассчитывая, что миниатюрной женщине будет затруднительно взять ее. Заметив напряженную улыбку подростка, учительница поняла замысел. На цыпочках ей удалось дотянуться до указки. А затем с красным от гнева лицом, подбежав к парте, за которой сидел шутник, она с такой силой ударила по ней указкой, что та сломалась. "Хулиган, вон отсюда!" – воскликнула она. Школьник уходит, сопровождаемый сочувственными взглядами ребят.

В данном случае было бы естественным посмеяться над проделкой подростка. Учительница же неоправданно драматизирует ситуацию, вызывая антипатию у детей. Как не вспомнить совет В.А. Сухомлинского: "Если у Вас вызывает досаду и сердцебиение каждая детская шалость..., семь раз взвесьте, быть ли Вам педагогом"[6].

Педагогическая деятельность требует высокой интеллектуальной и эмоциональной отдачи. 86.2% опрошенных учителей считают, что наибольшее напряжение у них возникает в ситуациях общения с учащимися[7]. И это понятно. "Наша работа, - пишет В.А. Сухомлинский, - ...работа сердца и нервов, это буквально ежедневное и ежечасное расходование огромных душевных сил[8].

Нередко учителю приходится действовать в экстремальных условиях, требующих предельной мобилизации всех сил – психических и физических. Стрессогенными факторами являются дефицит времени для принятия оптимальных педагогических решений, острое переживание ответственности и риска. Непредвиденные ученические реакции побуждают к постоянному самоконтролю и корректировке поведения. К сожалению, не каждый педагог по своим психофизиологическим данным бывает готов к профессиональной деятельности в условиях высокого эмоционального и интеллектуального напряжения. Так, серьезным препятствием выступает невротизм личности. Причинами многих личных конфликтов с учащимися является слабая стрессоустойчивость педагога, неумение владеть собой, вспыльчивость. Именно тогда межличностные столкновения инициируются им самим. Такова природа неадекватных реакций на мелкие проступки, опоздания, болтовню, рассеянность, отказ отвечать и т.д.

Поскольку воспитатель с невротическим складом характера – потенциальный источник конфликтогенности, резонно ставить вопрос о том, чтобы в систему профотбора в педагогические учебные заведения включить такой параметр, как уровень невротизации абитуриента[9]. К сожалению, такая практика отсутствует. Почти половина первокусников педагогического вуза обнаруживает определенную невротическую патологию. Еще более выраженной оказывается невротизация у учителей. С возрастом она усиливается[10]. В структуре заболеваемости студентов педагогических вузов Белоруссии первое место занимают болезни нервной системы и органов чувств (70.7%)[11].

Заслуживает внимания многосторонний подход зарубежных ученых к моделированию личности учителя. В перечень профессионально значимых качеств, помимо традиционных – высокий самоконтроль, эмоциональная устойчивость, общительность, ответственность, готовность к сотрудничеству, уверенность в себе и т.п., - включаются такие, как "низкие показатели депрессии, лжи, психопатии, ипохондрии"[12].

Причинами неадекватного поведения учителя могут быть болезни общения. Вследствие систематического эмоционального перенапряжения, перерасхода душевных сил утрачивается острота чувств, притупляется эмпатия, провоцируются вспышки гнева и агрессивности. Все эти проявления объединяются понятием "профессиональное выгорание".

Профилактика конфликтогенности учителя обеспечивается заботой школьной администрации о щадящем режиме его труда, о полноценном отдыхе, о благоприятном нравственно-психологическом климате в педагогическом коллективе. Современные исследователи не без основания связывают психическое здоровье учителя с уровнем социальной защиты, гарантированным удовлетворением его жизненных и духовных потребностей[13]. Усиливающиеся процессы демократизации общества неумолимо поднимают планку требовательности к нравственно-этической культуре учителя, его умению общаться на гуманной основе. В этом смысле, вероятно, не лишены резона советы американских психологов Роберта и Джин Байярдов о необходимости постоянного самоконтроля, чтобы соблюсти "отношения равенства" с ребенком[14].

Итак, решающим фактором в предупреждении конфликтов с ребенком выступает профессионализм личности педагога, оптимизм, способность преодолеть психологическую несовместимость, ориентация на положительные начала, сотрудничество, альтруистическая доминанта поведенческих реакций.

Конфликты на личностном уровне зачастую провоцируют учителя с гипертрофированным "Я". Они склонны компенсировать профессиональные неудачи психологическим насилием над воспитанниками.

Конфликтогенность нередко обусловлена и устаревшими педагогическими взглядами, тяготением к императиву и репрессивности, принятию шаблонных решений, невысокой этической культурой.

Учителю, занимающемуся педагогической деятельностью по призванию, присуща постоянная забота о совершенствовании своей нравственно-

этической, психологической, методической и педагогической культуры. Высокая профессиональная коммуникабельность обеспечивает успешное преодоление и деловых, и личных конфликтов.

---

[1] Ясюкова Л. Я. Стрессоустойчивость и профессиональный потенциал личности // Первые международные научные московские чтения: Тезисы докладов. М., 1991, с. 268.
[2] Беспалько В. П. Педагогика и прогрессивные технологии обучения. М., 1995, с. 73-74.
[3] Психология развивающейся личности / Под ред. А. В. Петровского. М., 1987, с. 156.
[4] Плаксин С. И. Отклонения от норм социалистического образа жизни в молодежной среде: Сущность и пути преодоления. М., 1986, стр. 96.
[5] Орлов Ю. М. Проблемы прдагогики ненасилия // Педагогика. 1993. ! 4, с. 26.
[6] Сухомлинский В. А. Сто советов учителю. Ижевск, 1981, с. 9.
[7] Макаревич Р. А. Некоторые пути совершенствования психологической подготовки студентов к педагогической деятельности // Психология подготовки к педагогической деятельности: Респ. межв. науч. сб. Психология. Вып. 11. Мн., 1990. с. 47.
[8] Сухомлинский В. А. указ.тр., с. 13.
[9] Кирдяшкина Т. А. Уровень невротизации как фактор профотбора на профессию учителя // Психологические проблемы профориентации учащихся. Челябинск. 1990, с. 67.
[10] Там же, с. 64-66.
[11] Тальчук А. А. Заболеваемость абитурентов педагогического института // Заболеваемость, работоспособность и пути оздоровления студентов: Материалы симпозиума. Мн., 1991, с. 45.
[12] Dieterich, Elbing, Peagitsch, Ritseher. Psychologie der Zehrerpersonlichkeit. Munhen, Basel, 1983. p. 51.
[13] Мухаметдинова Г. В., Рожков М. И., Юдин В.П. Социальная защита. Казань, 1993.
[14] Байярд Р., Байярд Д. Ваш беспокойный подросток. М., 1991, с. 103.

---

## THE TEACHER AND THE PUPILS- BUSINESS AND INDIVIDUAL CONFLICTS: PECULIARITIES OF CONFLICT RESOLUTION

RITA MOUSINYAN
Dissertator of Yerevan Armenian State Pedagogical University
General Pedagogical Department Named After Kh. Abovyan

### Summary

The breach of relations between the teacher and the pupil causes two main types of conflicts– business and individual.

The disposition of the teacher to conflicts is conditioned with out-of-date pedagogical sights, making of commonplace decisions and low ethical culture as well.

Being entitled to the pedagogical activity, the teacher should permanently take care of raising his/her moral-ethical, psychological, methodological and pedagogical culture.

The high professional level provides an opportunity to efficiently resolve any business and individual conflicts.

## ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌԻՏԱ ՄՈՒՍԻՆՅԱՆ
Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ

### Ամփոփում

Ուսուցչի և աշակերտի միջև կապի խախտման բնույթից ելնելով՝ հեղինակն առանձնացնում է բախումների երկու հիմնական խումբ՝ գործարար և անձնական:

Ուսուցչի բախումային հակվածությունը հաճախ պայմանավորված է հնացած մանկավարժական հայացքներով, շաբլոնային որոշումների կայացմամբ, էթիկական ցածր կուլտուրայով:

Ուսուցիչը, որի կոչումն է զբաղվել մանկավարժական գործունեությամբ, պետք է մշտապես հոգ տանի իր բարոյաէթիկական, հոգեբանական, մեթոդական և մանկավարժական հմտությունների ու կուլտուրայի բարձրացման մասին և կարողանա արդյունավետ կերպով հաղթահարել գործարար և անձնական բախումները:

# ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

***ԼԱՈՒՐԱ ԱՍԱՏՐՅԱՆ***
*Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը միտված մեր փորձարարական հետազոտություններն իրականացվել են «մարդ-բնական միջավայր» համակարգում, ուր գործունեության տարբեր տեսակների, ձևերի և մեթոդների օգտագործումը հնարավորություն է ընձեռել երևան բերել բնական երևույթների պատճառահետևանքային կապերը, ինչպես նաև՝ ցույց տալ փոխառնչակցությունը բնության նկատմամբ մարդու իրավունքների և պարտականությունների միջև, միաժամանակ հնարավորություններ են ստեղծվել աշակերտներին ներբերել սոցիալական էկոլոգիայի աշխարհ, ավելի լայն օգտագործել երկրագիտական նյութերը, մատնանշել էկոլոգիական, իրավական գիտելիքները գործնականում օգտագործելու հնարավորությունները:

Բնականաբար, փորձարարական աշխատանքներն ուղղված են եղել նաև ժամանակակից ուսումնադաստիարակչական գործընթացում ստեղծված հակասությունների հաղթահարմանը: Իսկ հակասություններն առկա են՝

- բնության հանդեպ տարակերպ հարաբերություններ ձևավորելու անհրաժեշտության և առանձին ուսումնական առարկաների հնարավորությունների անբավարար լինելու միջև.
- դպրոցականի գործունեության բոլոր տեսակները ներդաշնակ զարգացնելու ձգտման և ուսումնական գործընթացի փաստացի անկատարության միջև.
- բնության հետ դպրոցականի շարունակաբար շփվելու անհրաժեշտության և բնության հետ նրա հազվադեպ առնչությունների միջև (որոնք, որպես կանոն, տեղի են ունենում առանց մանկավարժական ղեկավարման):

Փորձերի անցկացման մեթոդիկան մշակելիս հաշվի ենք առել էկոլոգիական կուլտուրա հասկացության հատուկ նշանակությունը, ինչպես նաև՝ դպրոցական ծրագրերը, հայրենական և արտասահմանյան մանկավարժագիտության ձեռք բերած փորձի արդյունքները: Մանկավարժական նախընթաց փորձին անդրադառնալով՝ մշակել ենք ներքոբերյալ դրույթները, որոնցով ղեկավարվել ենք հետազոտություններն անցկացնելիս՝

1. Էկոլոգիական կուլտուրայի զարգացումը դիտել ենք որպես անձի ընդհանուր կուլտուրայի ձևավորման նախապայման: Այդ պատճառով փորձերն անցկացնելիս մեր առջև խնդիր ենք դրել խթանել անձի ճանաչողական, գեղագիտական, բարոյական և իրավական ունակությունների արժեքային կողմերի զարգացումը՝ որպես սովորողների էկոլոգիական և ընդհանուր կուլտուրայի կայուն բաղադրիչներ:

2. Գործունեական տեսանկյունը մնացյալ բաղադրատարրերի մեջ դիտել ենք իբրև նշանակալից դեր ունեցողներից մեկը:

3. Սովորողների կողմից բնության գեղագիտական ընկալումը դիտարկել ենք որպես սովորողների էկոլոգիական կուլտուրայի զարգացման պարտադիր պայման:

4. Բնության մեջ սովորողների վարքի դրսևորման, բնօգտագործման օրենքների իմացությունը դիտել ենք որպես իրավական նորմերի պահպանման, անձի սոցիալականացման կարևոր գործոն:

5. Սովորողների գործունեությունն արժևորել ենք ճանաչողական նշանակության տեսանկյունից:

Ղեկավարվելով այս հիմնարար դրույթներով՝ սովորողների էկոլոգիական կուլտուրայի ձևավորման աշխատանքների բովանդակության մեջ առանձնացրել ենք հետևյալ գործոնները՝

ա) ճանաչողական. պարունակում է պնդումներ առ այն, որ էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը պետք է իրականացվի՝ հիմնվելով բնության, նրա հարստության, կենսաբանական բազմազանության, բնության մեջ փոխկապակցումների, ինչպես նաև այն ճշմարտության ըմբռնման վրա, որ բնությունը համայն մարդկության հարստությունն է.

բ) գործունեական. այն արտահայտվում է դպրոցականների՝ բնության բարիքներից ճիշտ և խնայողաբար օգտվելու կարողության մեջ. գտնում ենք, որ այս գործոնին անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել, քանզի սովորողների կոնկրետ բնապահպանական գործունեությունը թույլ է տալիս դատել ընդհանուր էկոլոգիական կուլտուրայի մակարդակի մասին.

գ) գեղագիտական-զգացմունքային. համարում ենք, որ գեղագիտական ճաշակն սկսում է զարգանալ մարդու մեջ գեղագիտական զգացմունքներ հարուցելուց, որը նպաստում է բնության հանդեպ ներդաշնակ վերաբերմունքի ձևավորմանը, ինչն էլ պայմանավորում է էկոլոգիապես գրագետ վարք բնության նկատմամբ: Մարդը, որ հասկանում և ընդունում է բնության գեղեցկությունը, ավելի շատ է գիտակցում այն պահպանելու անհրաժեշտությունը և ակտիվորեն ներգրավվում է բնապահպանական և բնավերականգնողական գործունեության մեջ.

դ) արժեքակողմնորոշային. նախատեսում է սովորողների մեջ բնության՝ որպես մեծագույն արժեքի հանդեպ վերաբերմունքի ձևավորում: Մեր կարծիքով՝ մարդու գործունեությունը բնության մեջ նույնպես արժեքային գործոն է.

ե) անձնային. սրա հիմքն իր ազդեցությունը բնության վրա (կենցաղային և տնտեսական գործունեության տարբեր բնագավառներում) էկոլոգիապես նպատակահարմար դարձնելու ձգտող մարդու գործունեությունն է: Այս նպատակներին հասնելու համար մարդն անձնական փորձի հիման վրա որդեգրում է գործունեության նպատակադիր ալգորիթմ՝ էկոլոգիական վիճակի վերլուծություն - հիմնախնդրի քննարկում, կշռադատում - գործողությունների պլանավորում-նպատակամետ գործունեություն - արդյունքների վերլուծում - սեփական գործողությունների գնահատում.

զ) երկրագիտական. այս գործոնն ունի բարձր բարոյագեղագիտական ներուժ, քանի որ նախատեսում է մերձակա բնասոցիալական միջավայրի ուսումնասիրում:

է) տնտեսագիտական - իրավական. ենթադրում է մարդու՝ բնության նկատմամբ ունեցած պատասխանատվության, իրավունքների, բնօգտագործման ռացիոնալ ձևերի և նորմերի իմացություն:

Բնական միջավայրի կարևոր առանձնահատկությունների ուսումնասիրումը թույլ է տալիս ավելի լի-

արժեքորեն կյանքի կոչել մարդու էկոլոգիական գործունեության գլխավոր սկզբունքները:

Հիմնվելով էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը միտված մեր հետազոտությունների արդյունքների վրա՝ սահմանել ենք առանձին, ներդաշնակորեն փոխկապակցված և փոխպայմանավորված չափորոշիչներ, որոնք թույլ են տալիս որոշել դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի ձևավորվածության աստիճանը, ինչը բավական կարևոր է ինչպես մեթոդիկայի մշակման, այնպես էլ դպրոցականների ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացման համար: Պետք է նշել, որ էկոլոգիական կուլտուրայի չափորոշիչներից յուրաքանչյուրն արտահայտում է անձի ընդհանուր կուլտուրայի ինչ-որ կողմը: Այդ բոլոր կողմերը միասին ուսումնասիրելու դեպքում միայն կարելի է պայմանականորեն համարել, որ դրանք կազմում են դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի հիմքը:

Մեր հետազոտություններն անցկացրել ենք ինչպես անմիջականորեն՝ դասերի ընթացքում, այնպես էլ՝ դասերից դուրս: Հատուկ ուշադրություն է դարձվել դասարանական և արտադասարանական տարբեր տեսակի աշխատանքների կազմակերպման արդյունավետությանը (դասեր, էքսկուրսիաներ, խաղեր, վիկտորինաներ և այլն), որոնք անցկացվել են թե՛ ինքնուրույն, թե՛ ամառային էկոլոգիական արշավների ժամանակ:

Սովորողների ճանաչողական, գեղագիտական, բարոյաիրավական, հասարակայնորեն անհրաժեշտ գործունեության կազմակերպման մեթոդական միջոց է հանձնարարությունների համակարգը, որ ներառում է բնության պահպանության պահանջի և անձնական կարիքների, բնությունից մարդու և հասարակության ակնկալիքների ճիշտ զուգորդումը, բնական պայմանների և պաշարների պահպանման ու օգտագործման ձևերի, օրենքների, նորմերի, նպատակների և արժեքների հիմնավորումը, գործունեության իրավական կողմի պահպանումը և բնօգտագործման հեռանկարի բացահայտումը:

Ուսումնական միջառարկայական կապերի հաստատումը էկոլոգիական գիտելիքների համակարգի զարգացման, էկոլոգիայի հիմունքների տիրապետման պարտադիր պայմանն է, այդ պատճառով հատուկ նշանակություն է տրվել դպրոցականների էկոլոգիական գործունեության մեջ տարբեր ուսումնական առարկաների հնարավորությունների օգտագործմանը:

Մեր փորձարարական աշխատանքների իրականացման ժամանակ օգտագործվել են կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության, «Իրավունք» առարկայաշարի, կերպարվեստի, երգ-երաժշտության ընձեռած հնարավորությունները, իսկ էկոլոգիական շաբաթներ, տասնօրյակներ, ամսյակներ անցկացնելու և նախապատրաստական քարոզչական աշխատանքների համար՝ արտասահմանյան և հայրենական գիտնականների գիտական ժառանգությունը:

Պրակտիկ գործունեության համակարգայնությունը ապահովում էր գործնական հանձնարարությունների կատարումը, նպաստում, որ թեմաների աստիճանական բարդացմամբ փուլ առ փուլ խորանան սովորողների էկոլոգիական գիտելիքները:

Ընտրվել են որոնողահետազոտական աշխատանքի այնպիսի տեսակներ և թեմաներ, բնապահպանական և քարոզչական գործունեության այնպիսի ձևեր, որոնք համապատասխանում էին դպրոցականների էկոլոգիական գիտելիքների մակարդակին և տարիքային առանձնահատկություններին: Հատուկ ուշադրություն է դարձվել գործնական աշխատանքների էկոլոգիական բովանդակության ընտրությանը, որը պետք է ներդաշնականորեն միահյուսվեր կենսաբանության դասընթացի հետ՝ ուսուցվող ծրագրային նյութին համապատասխան:

Ընտրվել են նաև կոնկրետ բնական համալիրներ, կենդանիների և բույսերի տեսակներ:

Փորձերն ուղղված են եղել սովորողների՝ բնության հանդեպ արժեքային, պրակտիկ և ճանաչողական վերաբերմունքի զարգացման միասնության ապահովմանը: Ընդսմին՝ հատուկ կարևորություն է տրվել բնության հետ անմիջական շփմանը, դպրոցականների՝ բնության մեջ էկոլոգիապես, իրավականորեն գրագետ և նպատակահարմար գործունեության կազմակերպմանը: Նշված խնդիրների լուծումը, բացի դպրոցականներին տարբեր պրակտիկ աշխատանքներ ներառելը, իրականացել է նաև նրանց խաղային գործունեության, բարոյական ընտրության իրավիճակներում, ստեղծագործական աշխատանք-շարադրություններ գրելու, նկարելու, ալբոմներ պատրաստելու աշխատանքների մեջ ներգրավելու միջոցով:

Դեռահասների էկոլոգիական կուլտուրայի ձևավորման ուղղությամբ կրթադաստիարակչական աշխատանքների բովանդակությունն ու ձևերը նախատեսում էին աշխատանքային և բարոյական ակտիվության զարգացում, մարդկային որակների ձևավորում:

Փորձարարական աշխատանքներում հատուկ ուշադրություն է դարձվել բնության հանդեպ բարոյաիրավական և գեղագիտական վերաբերմունքին, ինչի համար էլ անցկացվել են արտադասարանական միջոցառումներ բնության և բնապահպանության իրավական նորմերի, գեղագիտական հատկությունների ընկալման ուղղությամբ՝ հիմնվելով արվեստի վրա: Հիմնական մեթոդներն էին՝

- գեղագիտական բնույթի ուսումնական նյութերի դիտումներ.
- բնական նյութերից կոմպոզիցիաների (կառուցվածքների) ստեղծում.
- ստեղծագործական մրցույթներ բնության (գեղանկար, բանաստեղծություն, շարադրություն) վերաբերյալ.
- բնօգտագործման իրավական տեսանկյունը բնորոշող խաղեր:

Դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի ձևավորման արդյունավետության համար պահանջվել է՝

- միավորել տեսությունը և պրակտիկան.
- սովորողներին ներգրավել համալիր գործնական աշխատանքների՝ աստիճանաբար բարդացող համակարգ.
- սովորողներին զինել շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակն ուսումնասիրելու տարբեր մեթոդիկաներով.
- ապահովել սովորողի՝ էկոլոգիական հիմնախնդիրների լուծման անհատական հետաքրքրվածությունը.
- ապահովել սովորողների ինքնուրույնությունը էկոլոգիական գիտելիքների ձեռք բերման և օգտագործման համար:

Ելնելով հետազոտման խնդիրներից՝ սահմանվել, հիմնավորվել և փորձերով ստուգվել է գործնական աշխատանքների տեսակների, ձևերի և թեմաների ներքոբերյալ ցանկը, որը ներկայացնում է դպրոցականների գործունեության ամբողջական համակարգը՝ ուղղված նրանց էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը:

Այդ համակարգում կարևոր է համարվել դիտողականության զարգացումը, ուղիներ որոնելու և որոշումներ ընդունելու կառավարչական գործառույթ-

ների ձևավորումը, ինչպես նաև՝ դրանց իրականացումը կոնկրետ գործունեության մեջ:

Էկոլոգիական կուլտուրայի ձևավորման աշխատանքներից ամենաբարդը, թերևս, սովորողների մեջ էկոլոգիական գաղափարներ քարոզելու կարողությունների մշակումն է: Այդ կարողությունների զարգացումը սերտորեն կապված է սովորողների՝ կազմակերպչական աշխատանքի փործին տիրապետելու հետ: Մանկավարժական ավելի բարձր արդյունավետություն է դիտվում այն դեպքում, երբ դպրոցականները պլանավորում և կազմակերպում են աշխատանքը, հանդես են գալիս էկոլոգիական գաղափարների քարոզչությամբ: Այդ դեպքում առավել պատրաստված և ընդունակ աշակերտները հանդես են գալիս քարոզիչների դերում (դասախոսների, էքսկուրսավարների), մյուս դպրոցականները մասնակցում են պլանավորմանը, աշխատանքի արդյունքների գնահատմանը: Հետևաբար՝ դպրոցի մանկավարժական հանրույթի խնդիրներից մեկը դպրոցականների մեջ քարոզչական կարողությունների ձևավորումն է, որն արտահայտվում է էկոլոգիական գաղափարների քարոզչության ուղղությամբ ակտիվ աշխատանք վարելու ձգտման և ցանկության մեջ, իսկ դրանց հիմքում ընկած է համոզմունքն առ այն, որ էկոլոգիական ճգնաժամի վտանգի հաղթահարումը հնարավոր է միայն համայն մարդկության ջանքերի միավորման դեպքում:

Քարոզչական աշխատանքի ձևերը

| Աշխատանքի ձևը | Աշխատանքի նպատակը |
|---|---|
| Էկոժամանակագրություն | Տեղեկատվություն հավաքելու գործը դպրոցականներին սովորեցնում է հետևել պարբերական մամուլին, սիստեմատիկաբար կարդալ թերթեր և ամսագրեր, դիտել և ունկնդրել հեռուստառադիոհաղորդումներ, նպաստում է աշխարհում էկոլոգիական ինչ-ինչ իրադարձությունների մասին տեղեկանալուն, ինչպես նաև լայնացնում և խորացնում է սովորողների ընդհանուր և էկոլոգիական մտահորիզոնը: |
| Ցուցավահանակներ | Բնապահպանական թեմաներով ցուցավահանակների մշակումն ու պատրաստումը նպաստում է ճիշտ արժեքային կողմնորոշումների ձևավորմանը և շրջապատող բնական միջավայրի հանդեպ պատասխանատու վերաբերմունքին. ցուցավահանակների ձևավորման մրցույթները դպրոցականներին հնարավորություն են տալիս արտահայտել իրենց վերաբերմունքն էկոլոգիայի հիմնախնդիրների հանդեպ: |
| Ստեղծագործական ցուցահանդեսներ | Նպաստում են շրջապատող միջավայրի հանդեպ հուզական-անձնային վերաբերմունքի ձևավորմանը, էկոլոգիական կուլտուրայի բարոյական հիմքերի մշակմանը: |
| Էկոլոգիական տասնօրյակներ, շրջակա միջավայրի օր, շաբաթ, էկոլոգիական միամսյակ | Նպաստում են էկոլոգիայի վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքների խորացմանը և ընդլայնմանը, հետաքրքրություն են առաջացնում առարկայի և այն ուսումնասիրելու, ինքնուրույն աշխատանքի, ստեղծագործելու հանդեպ, զարգացնում են էկոլոգիական գաղափարներ քարոզելու կարողությունը, հնարավորություն են տալիս մեկտեղել դպրոցի և հասարակության ջանքերը էկոլոգիական կրթության գործում: |
| Համաժողովներ | Նպաստում են էկոլոգիական գիտելիքների և գաղափարների քարոզչությանը: |
| Դասախոսություններ, հանդիպումներ տնտեսագետների և իրավաբանների հետ | Նպաստում են բնօգտագործման տնտեսական և իրավական հարցերի իմացությանը: |

Փորձարարական դպրոցներում անցկացվող քարոզչական աշխատանքներն ընդգրկել են արտադասարանական աշխատանքների այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ էկոժամանակագրության համար նոր տեղեկությունների հավաքումը, մշակումը և դրանց հիման վրա բանավոր հայտարարություններ և զեկուցումներ պատրաստելը, ինչպես նաև միշտ գործող վահանակների ձևավորումը՝ «Հարազատ երկիր Հայաստան»,«Էկոժամանակագրություն» և այլն: Ստեղծագործական ցուցավահանակները, նկարների, շարադրությունների մրցույթների կազմակերպումն իրականացվել է ինչպես առանձին, այնպես էլ համալիր կերպով՝ շրջակա միջավայրի օրը, շաբաթը, տասնօրյակը, էկոլոգիական գիտելիքների միամսյակը անցկացնելու ժամանակ:

Էկոժամանակագրության աշխատանքները պետք է սկսել սովորողների մեջ անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու և մշակելու հմտությունների պատվաստումից: Դրա համար պետք է կազմակերպել համապատասխան թերթերի և ամսագրերի կոլեկտիվ քննարկումներ, ընտրել անհրաժեշտ հոդվածները, այնտեղից դուրս գրել պիտանի հաղորդագրությունները: Այդ նյութերի հավաքման գործում մեծ օգնություն կարող են ցուցաբերել գրադարանավարները:

Մեր փորձերի ժամանակ ուսուցիչներն ընտրում էին 3-4 սովորողից բաղկացած ոչ մեծ խմբեր և յուրաքանչյուրին հանձնարարում հավաքել էկոլոգիական նորություններ: Փորձը ցույց է տալիս, որ սովորողները մեծ հաճույքով, առավել արդյունավետ այդ աշխատանքները կատարում են խմբերով: Հաշվի առնելով դպրոցականների հետաքրքրությունները՝ ուսուցիչները մի խմբին հանձնարարում էին նյութեր հավաքել ամբողջ Հայաստանի մասշտաբով, մյուսին՝ հետևել արտասահմանյան երկրների այսպես կոչված էկոլոգիական նորույթներին, երրորդին՝ հավաքել տեղի էկոլոգիական տեղեկատվությունը: Հավաքած տեղեկատվությունը ներկայացվում էր կենսաբանության կաբինետում մշտական գործող վահանակի վրա՝ «էկոլոգիական նորություններ» խորագրի ներքո: Հանրապետական էկոլոգիական նորությունները տեղադրվում էին վահանակի առաջին հատվածում և միավորվում էին մեկ ընդհանուր՝ «Մեր երկրում» խորագրի տակ:

Հատուկ ուշադրություն է դարձվել տեղական՝ մարզային տեղեկատվության հավաքմանը և մշակմանը: Դրան սովորաբար հատկացվում էր վահանակի 2-րդ հատվածը, որը վերնագրված էր՝ «Մեր մարզը»: Վահանակի 3-րդ հատվածը զբաղեցնում էին միջազգային էկոլոգիական հաղորդագրությունները: Վահանակի վրա էկոժամանակագրությունն արտացոլող նյութերի այդպիսի տեղադրումը սովորեցնում է աշակերտներին չդասակարգված փաստերը ներկայացնել տրամաբանորեն կարգավորված հերթականությամբ: Մի շարք դեպքերում վահանակի վրա տեղադրվում էին պինդ գունավոր մեծ թղթերի վրա կատարված էկոլոգիական նորությունների մոնտաժներ: Նրանք պարունակում էին ամենատարբեր բնույթի նորույթ-նյութեր կամ նվիրված էին լինում ինչ-որ կարևոր թեմայի: Սովորաբար թեմատիկ նյութերը պետք է նվիրված լինեին հարազատ բնությանը՝ հազվագյուտ ու պահպանվող բույսերին և կենդանիներին, հարազատ մարզի կամ քաղաքի բնական և մշակութային հուշարձաններին:

Բնապահպանական գաղափարների քարոզչության գործում լայն հնարավորություններ ընձեռող աշխատանքի ձևեր են, ինչպես նշվել է, էկոլոգիական տասնօրյակը, միամսյակը և շաբաթը, շրջակա միջավայրի օրը: Էկոլոգիական դաստիարակության համակարգի փորձարարական դպրոցներում դրանք դարձել էին կենտրոնական միջոցառումներ:

Որպես օրինակ ներկայացնենք մեր կողմից կազմակերպված «Մեր Երկիրը միակն է» խորագրով էկոլոգիական տասնօրյակի կազմակերպման և անցկացման ընթացքը: Տասնօրյակի խնդիրներն էին՝

- սովորողների էկոլոգիական գիտելիքների մակարդակի որոշումը.
- էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանման բնագավառում մտահորիզոնի ընդլայնումը, էկոլոգիայի հիմնախնդիրների հանդեպ ճանաչողական հետաքրքրության ակտիվացումը.
- հարազատ երկրամասի բնության նկատմամբ պատասխանատվության զգացման արթնացումը և զարգացումը.
- շրջակա միջավայրի պահպանման ժամանակակից հիմնախնդիրների լուծման համար ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ձևավորումը:

Անցկացված տասնօրյակը մեր կողմից նախորոշված էր որպես միջառարկայական: Հաշվի առնելով դպրոցական էկոլոգիական կրթությանն առանձնահատուկ նշանակություն տալու անհրաժեշտությունը՝ մեր առջև խնդիր դրեցինք՝ տասնօրյակի կազմակերպման գործին ներգրավել տարբեր առարկաների ուսուցիչների: Դրա համար ուսուցիչների հետ անցկացվել էին նախնական զրույցներ, յուրաքանչյուր դասարանի համար մշակվել էին կոնկրետ հանձնարարություններ: Տասնօրյակը նախապատրաստեց կազմկոմիտեն, որում ընդգրկված էին դպրոցի տնօրենը, արտադասարանական աշխատանքների գծով փոխտնօրենը, կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության ուսուցիչները և բարձր դասարանների աշակերտները: Կազմկոմիտեն օգտագործում էր յուրօրինակ «Ուղեգրեր», որոնցում գրվում էին դպրոցականների համար կոնկրետ հանձնարարություններ և գրանցվում էին դրանց կատարման արդյունքները: Տասնօրյակի նախօրեին դպրոցի միջանցքի ցուցափեղկերից մեկում հայտնվեց գունագեղ ձևավորված մի ծրագիր, որը հայտարարում էր բոլոր միջոցառումների և ստեղծագործական աշխատանքների մրցույթների մասին: Մյուս ցուցափեղկում տեղադրված էր տասնօրյակի գեղեցիկ ձևավորված օրագիրը՝ «Երեկ, այսօր, վաղը»՝ ամսաթվերը փոխելու հարմարանքով, հաջորդ օրվա գովազդով, ընթացիկ ծրագրով և ձեռք բերված արդյունքներով: Այդպիսի յուրահատուկ օրացույցը կազմկոմիտեին հնարավորություն էր տալիս օպերատիվ կերպով լուսաբանել տասնօրյակի ընթացքը, իսկ մյուս բոլոր սովորողներին և ուսուցիչներին՝ հետևել նրա աշխատանքներին:

---

## FROM OUR EXPERIENCE OF FORMATION OF PUPILS ECOLOGICAL CULTURE

LAURA ASATRYAN
Candidate of Pedagogy, Docent

**Summary**

In the article there are questions, connected with ecological, cultural, esthetic, moral, juridical components of education of pupils.

The article includes experimental researches, which help to influence ecological and cultural education.

## ИЗ НАШЕГО ОПЫТА ФОРМИРОВАНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ У ШКОЛЬНИКОВ

ЛАУРА АСАТРЯН
Кандидат педагогических наук, доцент

Резюме

В статье рассмотрены вопросы, связанные с экономическими, культурными, эстетическими, моральными, юридическими составляющими средствами воспитания школьников.

Представлены данные экспериментального исследования, с помощью которых можно воздействовать на эффективность экологического и культурного воспитания.

# ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԱՐՄԵՆ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ**
*Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի տնտեսա իրավական ֆակուլտետի մագիստրանտ*

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար նշանակալի դեր ունի ապահովագրության ինստիտուտի զարգացումը: Ապահովագրությունը պաշտպանում է մարդուն՝ ապահովելով հասարակության սոցիալ-տնտեսական կայունությունը, տնտեսական անվտանգությունը և կայուն նյութական բարեկեցությունը: Այն նաև արտադրական փոխհարաբերությունների կարգավորման ու զարգացման անհրաժեշտ գործոն է, որն իրենով ենթադրում է հասարակական և արտադրական ոլորտի նյութական կորուստների փոխհատուցման գործընթաց, կարևորագույն պայման՝ անընդհատ և անխափան վերարտադրության համար: Այսպիսով՝ կարելի է ասել, որ որքան զարգացած է երկրի ապահովագրական համակարգը, այնքան զարգացած է նրա տնտեսությունը, և, բնականաբար, հակառակը:

Ապահովագրությունը Հայաստանում նոր երևույթ չէ. այն գործում է դեռ 20-րդ դարի սկզբից, սակայն այն ժամանակներում ապահովագրական գործունեություն իրականացվում էր միայն պետության կողմից, չկային մասնավոր ապահովագրական ընկերություններ: Հայաստանի անկախացումից հետո ապահովագրությունը հանրապետությունում սկսեց ընթանալ նոր հունով, կանոնակարգվեց ապահովագրական գործունեությունը. 1996թ. նոյեմբերի 19-ին ընդունվեց «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, իսկ նոյեմբերի 29-ին՝ նրանից բխող՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական կազմակերպությունների գործունեության մասին» ՀՀ Կառավարության թիվ 368 որոշումը: Հետագայում՝ 1998 թ., ընդունվեց ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որտեղ ամբողջ մի գլուխ (54) նվիրված է ապահովագրությանը: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ապահովագրական տեսչությունն ապահովագրական գործունեության նկատմամբ պետական կառավարման լիազորված մարմին է, որ վերահսկողություն է իրականացնում ապահովագրական գործունեության նկատմամբ:

Վերջին 8 տարիների ընթացքում ձևավորվել է ՀՀ ապահովագրական դաշտը, որն ունի ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմեր:

«Ապահովագրության մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության ապահովագրական ընկերությունները կարող են իրականացնել կյանքի և այլ ապահովագրության տեսակների գծով ապահովագրական գործառնություններ, սակայն դրանց չնչին մասն է, որ մեր երկրում փաստացի իրականացվում է ՝ համապատասխան վերաապահովագրական պաշտպանվածություն չունենալու պատճառով: Հնարավոր չէ իրականացնել մեծածավալ ռիսկերի ապահովագրություն՝ առանց միջազգային վերաապահովագրական մեխանիզմների կիրառման, այն է՝ ավիացիոն ռիսկերի, զբոսաշրջիկների, բեռների, խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ապահովագրություն, ինչպես նաև՝ պարտադիր կերպով իրականացվող ապահովագրական տեսակներից՝ սոցիալական, բժշկական, կանաչ քարտի ապահովագրություն, մի շարք զարգացած երկրների հանգույն՝ նաև գյուղատնտեսական բերքի ապահովագրություն: Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է միայն սոցիալական ապահովագրություն:

Մեր հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բարեկամական հարաբերություններն իրենց ներգործությունն են ունեցել նաև ապահովագրության ոլորտում: Այսպես. եթե ուսումնասիրենք Ռուսաստանի Դաշնության ապահովագրության ինստիտուտի զարգացման պատմությունը և համեմատենք այն Հայաստանի Հանրապետության ապահովագրության զարգացման պատմության հետ, կտեսնենք, որ ժամանակագրական առումով նրանք շատ զուգահեռներ ունեն: Օրինակ՝ ՌԴ - ում «Ապահովագրության մասին» օրենքն ընդունվել է 1991 թ., ՀՀ-ում՝ 1996 թ., ՌԴ - ում քաղաքացիական օրենսգրքի ապահովագրության մասին գլուխը կազմվել է 1995 թ., ՀՀ-ում՝ 1998 թ.: Նշենք, որ ՀՀ «Ապահովագրության մասին» օրենքը և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերը հենվում են երկու՝ եվրոպական և ռուսական մեթոդաբանության սկզբունքների և փորձի վրա՝ հաշվի առնելով, անշուշտ, տեղական առանձնահատկությունները: Օրինակ՝ «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքից բխող նորմատիվ ակտերում հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ձևերի մշակման հիմքում դրվել են ռուսական ստանդարտները: ՌԴ-ում բժշկական ապահովագրությունը կրում է պարտադիր բնույթ. «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նոր նախագծով ևս բժշկական ապահովագրությունը դառնալու է պարտադիր:

Ներկայումս հանրապետությունում կան ապահովագրական և բրոքերական ընկերություններ: 1998 թ. ստեղծվեց Ապահովագրողների շահերի պաշտպանության հայկական ասոցիացիան:

Կատարելով մի շարք ուսումնասիրություններ՝ հանգել ենք այն եզրակացության, որ հանրապետությունում ապահովագրական համակարգի զարգացման ոչ բավարար մակարդակի հիմնական պատճառներից մեկն այն է, որ բնակչությունը լրիվ չի պատկերացնում, թե ի՛նչ է ապահովագրությունը: Մեր քաղաքացիներից ոմանց մոտ ձևավորվել է այն թյուր կարծիքը, թե ապահովագրական ընկերությունները հակված են խաբելու, յուրացնելու ապահովագրավճարները, և կանխորոշված ժամանակ ապահովագրական հատուցումներ չեն տրվելու: Մինչդեռ միշտ պետք է հիշել, որ ապահովագրական գործարքի հիմքը պիտի կազմի ապահովագրողի և ապահովագրվողի փոխվստահությունը: Կարելի է նաև նշել, որ որոշակի ռիսկերի ապահովագրությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց տալիս է հանգստություն. չէ՞ որ ապահովագրվելով և որոշակի գումար՝ ապահովագրավճար (ընդ որում՝ մուծված վճարները մեծ չեն, քանի որ ապահովագրական հատուցումները շատ դեպքերում գերազանցում են ապահովագրավճարները) մուծելով՝ նրանք հետագայում կարող են խուսափել ֆինանսական մեծ բարդություններից:

Արդի պայմաններում ՀՀ ապահովագրական գործունեությամբ զբաղվող ընկերությունները պետք է ուսումնասիրեն ապահովագրության միջազգային փորձը, իրականացնեն ավելի արդյունավետ ռազմավարություն, որի հիմնական ուղղություններից են՝ գործակալական ապարատի ճիշտ օգտագործումը, բրոքերների հետ ճիշտ համագործակցությունը, ինչպես նաև գովազդային գործունեության իրականացումը: Ուսումնասիրելով ՀՀ ապահովագրական դաշտը՝ կարելի է դյուրությամբ նկատել, որ նշվածները կամ չեն իրականացվում, կամ էլ ճիշտ չեն իրականացվում: Օրինակ, ապահովագրության հետ կապված տեղեկատվության տարածում կամ գովազդ չի իրականացվում ոչ մի տեղեկատվական համակարգով, և, ինչպես արդեն նշել ենք, բնակչությունն ընդհանուր առմամբ չգիտի ապահովագրական ընկերությունների մասին: Հարկ է նաև նշել, որ ապահովագրական ընկերությունները հիմնականում աշխատում են իրավաբանական անձանց հետ, սակայն ճիշտ ռազմավարության դեպքում կարելի է հասնել նրան, որ «կազմավորվի» ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց՝ ապահովագրվել ցանկացողների մեծ բանակ:

Վերլուծության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ, այնուամենայնիվ, ՀՀ ապահովագրական համակարգը գնալով զարգանում է: Այդ նպատակով կատար-

վում են որոշակի քայլեր. օրինակ, օրենսդրական բարեփոխում-ուղղումներ են մտցվել «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում, արդեն կազմված է օրենքի նոր նախագիծը, աշխատանքներ են կատարվում ինչպես ոչ կյանքի, այնպես էլ կյանքի ապահովագրության տեսակների ընդլայնման ուղղությամբ, համագործակցության համար կնքվում են պայմանագրեր այլ երկրների ապահովագրական կազմակերպությունների հետ:

Պետք է նշել, որ արդի ժամանակաշրջանում տեղեկատվական, տեխնոլոգիական, տնտեսական, կառավարման համակարգերը դժվար է պատկերացնել առանց համակարգչային և հաշվողական տեխնիկայի: Դրանց կիրառումը մեծապես նպաստում է համապատասխան գործունեության արագ և բարձր որակով իրականացմանը:

Ուսումնասիրելով վերը նշվածի կիրառությունը զարգացած տնտեսություն, կայացած և կայուն ապահովագրական համակարգ ունեցող երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա, այսօր արդեն՝ ՌԴ և այլն)՝ պարզ է դառնում, որ այս երկրներում ապահովագրությունը հիմնականում գովազդվում է ինտերնետի միջոցով: Այս երկրների ապահովագրական ընկերություններն առավելագույն չափով են օգտվում ինտերնետի՝ այդ ժամանակակից տեղեկատվական հսկա համակարգի ընձեռած հնարավորություններից: Ինտերնետն անսահմանափակ հնարավորություններ է տալիս ապահովագրական կառույցներին՝ իրենց գործունեության մասին հանրությանը տեղեկացնելու առումով: Կան ինչպես առանձին ընկերություններին պատկանող ինտերնետային էջեր, որոնցում նկարագրված են տվյալ ընկերության ստեղծման պատմությունը, իրականացվող ապահովագրական տեսակները, հասցեները, այսինքն՝ մանրամասն տեղեկություններ նրանց գործունեության մասին, այնպես էլ կարող է լինել ընդհանուր մեկ հասցե, որով տրվում է տվյալ երկրի ապահովագրական համակարգի մասին մանրամասն տեղեկատվություն՝ օրենքների, ընկերությունների, նորությունների և այլնի մասին: Այս ամենը, բնականաբար, ցանկալի արդյունք է տալիս:

Մինչդեռ ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները գրեթե չեն օգտագործվում հայաստանյան ապահովագրական համակարգում, ինչը մեծապես խանգարում է հանրապետության ապահովագրական համակարգի արագ զարգացմանը:

Ըստ այդմ էլ, ՀՀ ապահովագրական համակարգը զարգացնելու նպատակով, անհրաժեշտ է ստեղծել միջազգային ստանդարտներին համապատասխան, ՀՀ ապահովագրական համակարգն ամբողջովին նկարագրող ինտերնետային էջ:

Ինտերնետային էջը կարելի է կառուցել հետևյալ կերպ.

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԱՍ

1. Ապահովագրությունը ՀՀ-ում
2. Ապահովագրական համակարգի կանոնակարգումը
- «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը.
- «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական կազմակերպությունների գործունեության մասին» ՀՀ Կառավարության թիվ 368 որոշումը.
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (գլուխ 54).
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ապահովագրական տեսչությունը.
- ՀՀ հարկային օրենսդրությունը (ապահովագրության մասով).
3. Ապահովագրական ընկերությունները
4. Ապահովագրական բրոքերները
5. Ապահովագրական ծառայություններ մատուցող կազմակերպությունները
6. Ապահովագրական գործի մասնագետներ պատրաստող բուհերը
7.Նորություններ

## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՄԱՍ

1. Այս ինտերնետային էջն իրենից պետք է ներկայացնի հարաշարժ և հարափոփոխ համակարգ, տվյալների շտեմարան՝ համապատասխան կառուցվածքով, և այն հեշտ և պարզ կերպով պետք է մատուցվի օգտագործողին.

2. Էջը կարող է պարունակել «Web forum», որը հնարավորություն կտա բոլոր շահագրգիռ գործարարներին շփվել և քննարկել փոխշահավետ խնդիրներ.

3. «FAQ» (frequently asked questions) բաժին, որը թույլ կտա ապահովագրության գծով մասնագետների հաճախակի հանդիպումները հարցատուների հետ.

4. Տեղեկատվությունը պետք է լինի հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով:

Ինտերնետային էջը հնարավորություն կտա հանրապետության ապահովագրական համակարգի գործունեությունը մոտեցնել զարգացած տնտեսությամբ երկրների չափանիշներին, որի շնորհիվ կբարձրանա հանրապետության ապահովագրական համակարգի վարկանիշը: Իսկ մեկ ընդհանուր էջում պարունակվող ՀՀ ապահովագրական համակարգի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը կօգնի ավելի հեշտ կողմնորոշվել անհրաժեշտ խնդիրների շուրջ, որը, անշուշտ, նշանակալիորեն կխթանի է ՀՀ ապահովագրական համակարգի զարգացումը:

---

## CHARACTER REFERENCE OF INSURANCE SYSTEM OF RA

**ARMEN ARZUMANYAN**
Master of Economics Department of Armenian Agriculture Academy

**Summary**

The RA is now on its way of economic development and heir the development of insurance field has a great role.

Insurance in the RA started to develop since 1996 when the RA Law on Insurance was accepted, and now we can already see the considerable achievements in this field. However the population is not informed enough, that is why we suggest implementation of it in insurance field of RA which will rise the efficiency of the insurance activities.

## ХАРАКТЕРИСТИКА СТРАХОВОЙ СИСТЕМЫ РА

АРМЕН АРЗУМАНЯН
Магистрант факултета экономических наук Армянской сельскохозяйственной академии

Резюме

Республика Армения сейчас находится на пути экономического развития, и в этом плане развитие страхового поля имеет важное значение.

В нашей республике страховое дело начало развиваться принятием закона РА "О страховании" в 1996 году, сегодня уже можно заметить результаты. Однако население еще не достаточно информировано о сфере страхования. В связи с этим мы предлагаем увеличить использование информационных технологий, что в значительной степени повысит эффективность страховой деятельности.

# ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ «ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ»-ՈՒՄ

**ՄԱԳԴԱԼԱ ԹԱՌՈՅԱՆ**
*Բանասեր*

«Գիրք սաղմոսաց»-ում[1] Աստծո արդարությունն աղերսող աղոթողը Ա սաղմոսում երանելի է համարում այն մարդուն, որը չի հետևում ամբարիշտների խորհրդին, չի գնում մեղավորների ճանապարհով, չի նստում չարակամների աթոռներին, որովհետև գիտի աստվածային օրենքների ճշմարտացիությունն ու անոքիչ ուժը: Երկնային տիրակալի պատգամները կատարող մարդկանց Դավիթ մարգարեն[2] նմանեցնում է ջրի հոսանքի մոտ աճած ծառի, որի տերևները չեն թափվում, և որը ժամանակին է պտղաբերում … Ամբարիշտներն անզոր են և նման են քամուց քշված փոշու: Երկրի վրա արդարություն հաստատողները դատավորներն են, որոնք պարտավոր են երկյուղալից հարգանքով և անվերապահորեն ծառայել և չմոլորվել իրենց իսկ ընտրած ճանապարհի ոլորաններում: Աստծուց հույս, կարեկցանք ու արդարություն խնդրող անհատը սաղմոսից սաղմոս իր գոհունակությունն է արտահայտում բազմաթիվ, բազմաբնույթ նեղությունների մեջ խաղաղություն գտնելու, նենգավորների խորհուրդների կործանման, ըստ աստվածային ճշմարտության դատվելու համար: Է սաղմոսում աղոթողը համոզված է, որ արդարները խաղաղություն կունենան, իսկ մեղավորները կընկնեն «հզոր, արդար և երկայնամիտ» տիրակալի աղեղների տակ: Սաղմոսում Աստված ներկայանում է որպես արդարության աթոռին նստած դատավոր, որը դատում է ոչ միայն անհատներին, այլև՝ ժողովրդին՝ ուղղամտությամբ: Տերը չի կարող չհետևել, չքննել և՛ արդարներին, և՛ ամբարիշտներին: Անտունին ապավեն, նեղության մեջ ընկածին մշտապես օգնական լինելով՝ նա չի մոռանում ոչ մի արարածի, թեև մշտապես զգում է նաև, որ ամբարիշտի ամբարտավանալուց այրվում է «աղքատը» (էջ 22)[3]:

ԺԱ սաղմոսում աղոթք է առաքվում առ Աստված՝ «աղքատի տառապանքի և անտունի հեծության համար».

Այժմ ես կելնեմ, - ասում է Տերը, - կբերեմ իմ փրկությունը և կապահովեմ նրանց (էջ 25):

Մարգարեն վստահում է աստվածային խոստմանը, որովհետև համոզված է, որ «Տիրոջ խոսքերը սուրբ խոսքեր են, ինչպես ընտիր ու փորձված արծաթ՝ յոթնապատիկ սրբված և զտված հողից» (էջ 25):

Աստծուն ժխտելը և հավատից հեռանալը տանում է անօրինականությունների ահագնացման և բազմացման:

Տերը երկնքից նայեց մարդկանց բոլոր որդիներին՝
Տեսնելու, թե կա՞ մի իմաստուն, որ Աստծուն փնտրի:
Խոտորեցին բոլորը և անպիտան դարձան,
Չկա բարություն անող, մինչև իսկ մեկը չկա՛:

Աստծո զարմանքը մեծանում է.

Ինչպե՞ս է, որ չեն գիտակցում նրանք,
Որ անօրենություն են գործում,
Ովքեր ուտում են իմ ժողովրդին
Որպես հացի կերակուր
Եվ չեն աղոթում Տիրոջը (ԺԳ, էջ 27):

Սաղմոսասացը համոզված է, որ նրանք, «ում ընթացքն անբիծ է, և գործը արդար», պետք է բնակվեն սուրբ լեռան վրա: Բոլոր ժամանակների համար դատապարտելի են լեզվով նենգացողը, ընկերոջը չարիք բերողը, իր արծաթը վարձու տվողը, իրավունքի դիմաց կաշառք առնողը (ԺԴ): Սաղմոսասացը համոզված է, որ տատասկոտ է արդարության ճանապարհը, սակայն նա աղերսում է.

Հաստատիր շավիղն իմ քո ճանապարհին,
որ ընթացքս չխոտորվի (ԺԶ, էջ 31):

Աստծո արարչագործությունն անսահման է, և սաղմոսներից յուրաքանչյուրի մեջ բացվում է մի նոր էջ: ԺԷ սաղմոսում աղոթողն Աստծուն ընդունում է իբրև «փրկության եղջյուր», որովհետև ինքը շրջապատված է «մահվան երկունքով»: «Անօրինության հեղեղն ու մահվան որոգայթները» ամեն վայրկյան հասնում և կործանում են, սակայն նա հույս ունի, որ նեղության մեջ ընկածի աղաղակի սրտառուչ ձայնը կհասնի Աստծուն: ԺԷ սաղմոսում տարերային ուժով է պատկերված Արարչի հզորությունը: Աստված ամենակարող է: Նա ընդունակ է զայրույթի պահին ցածրացնել երկինքը, խավարը ծածկույթ դարձնել, հրեղեն կայծակներ արձակելով՝ որոտալ երկնքից: Նա իրեն ապավինածներին դուրս է հանում բազում ջրերից, փրկում է հզոր թշնամիներից և ատողներից, որովհետև լիասիրտ հատուցվում են նրանք, ովքեր արդար են, և որոնց ձեռքերը մաքուր են:

Աղոթող և հուսացող անձը համոզված է, որ «Տիրոջ պատվիրանները լույս են և լույս են տալիս աչքերին», «Տիրոջ արդարությունն ուղիղ է. այն սրտեր է ուրախացնում, իսկ դատաստանները ոչ միայն ճշմարիտ և արդար, այլև ցանկալի են ոսկուց և շատ թանկագին քարերից» (ԺԸ, էջ 41):

Աստծուց կարեկցանք և գթություն հուսալով՝ սաղմոսասացը վկայում է, որ ինքը Տիրոջն է հանձնվել … դեռ չծնված. մոր որովայնից, մոր ստինքներից է Աստված նրա հույսը դարձել. չէ՞ որ վտանգները, «գերցուլերը ու շահագործողների խմբերը պաշարել են իրեն»: Նոր աղերսանք - աղաղակով է նա դիմում Բարձրյալին.

Եվ սիրտս հալած մոմ դարձավ
Որովայնիս մեջ:
Խեցու նման չորացավ իմ զորությունը,
Լեզուս քիմքիս կպավ:

Նա խնդրում է, որ Տերն իր օգնությունը հեռու չտանի և իրեն ազատի «առյուծի բերանից» (ԻԱ, էջ 47, 48):

Սաղմոսասացն ամեն խնդրանքից հետո իր հավատարմությունն է շեշտում՝ Աստծուն մեծարելով.

Գալիք սերունդներին պիտի պատմեմ Տիրոջ մասին,
Ժողովրդին պիտի պատմեմ արդարության մասին,
Որը պիտի ծնվի, որին Տերը ստեղծեց (ԻԱ, էջ 49):

Քայլ առ քայլ, աղոթքից աղոթք զորանում է սաղ-

մոսագրի հավատը, քանի որ.

Թեկուզ գնամ մահվան ստվերի միջով,
Չարից պիտի չվախենամ,
Որովհետև, Տեր, դու ինձ հետ ես (ԻԲ, էջ 50):

Աստծո արդարությանն սպասող սաղմոսերգուն խնդրում է չհիշել մանկության և անգիտության մեղքերը, այլ հիշել միայն ըստ աստվածային ողորմության, չէ՞ որ «Տիրոջ բոլոր ճանապարհները գթառատ և ճշմարիտ են նրանց համար, ովքեր պահում են նրա վկայությունն ու ուխտը» (ԻԴ, էջ 54, 55):

Մարգարեն համոզված է, որ Աստծո գթությունները հավիտենական են, սակայն ինքը չի ուզում միայն խնդրել և ստանալ. նա ձգտում է իմանալ դեպի ճշմարտությունն ընթացող աստվածային շավիղները: Կարծես նա ուզում է Աստծուն ուրախացնել իր մաքուր վարքով և չխաթարված էությամբ.

Ես ատեցի չարերի ժողովը
Եվ չնստեցի ամբարիշտների հետ:

Նա մերժում է այն «արյունահեղ մարդկանց, որոնց ձեռքերը անօրենության մեջ են, և նրանց աջը լի է կաշառքով» (ԻԵ, էջ 56):

Աղոթողը ձգտում է դառնալ Աստծո ճանապարհի օրենսգետը: Նա չի ուզում, որ ամբարիշտները անպատիժ մնան, ուզում է, որ «համրանան նենգ շրթունքները, որոնք ամբարտավանությամբ և արհամարհանքով չարախոսում էին արդարին» (Լ, էջ 67): Նա ցանկանում է , որ արդարները ուրախանան և ցնծան Տիրոջով և «տասնաղի քնարով սաղմոս ասեն նրան» (ԼԲ, էջ 71):

Սաղմոսասացը համոզված է, որ «Տիրոջ աչքերը արդարների վրա են, նրա ականջները` նրանց աղոթքներին, չէ՞ որ բազում են արդարների նեղությունները, սակայն արդարին ատողը կզղջա» (ԼԲ, էջ 74): Աղոթողը ցանկանում է, որ Աստված այնպիսի արդարությամբ դատի, որ «խայտառակվեն ու ամաչեն» ուրիշների դժբախտությամբ ուրախացողները, և, ընդհակառակը, «Թող ցնծան և ուրախանան բոլոր նրանք, ովքեր իմ արդարությունն են կամենում » (ԼԴ, էջ 77):

Աստված չի կարող չդատել և՛ մեղավորներին, և՛ մեծախոսներին, քանի որ նրա «արդարությունը լեռների պես է» (ԼԵ, էջ 79):

Արդարության շավիղներով գնացող անհատները երբեմն թուլանում են, որովհետև այս աշխարհի հզորները, նյութապաշտները, իրենց շրջապատելով ոսկյա զրահներով, կարծես դառնում են անխոցելի, սակայն սաղմոսասացը հորդորում է.

Մի՛ նախանձիր չարերին, ո՛չ էլ նրանց,
Ովքեր անօրենություն են գործում,
Քանզի խոտի պես նրանք կչորանան շուտով...

Ամենածանր պահերին նա համոզում է հույսի մեջ չպարտվել.

Տիրոջը հայտնի՛ր քո ճանապարհները և նրան հուսա,
Նա այնպես կանի,որ արդարությունը
լույսի պես երևա,
Եվ իրավունքը` ինչպես կեսօր:

Սաղմոսների հեղինակը համոզված է, որ «չարերը շուտով կատակեն, իսկ Տիրոջն սպասողները կժառանգեն երկիրը» (ԼԶ, էջ 81 ): Նա գիտի նաև, որ «Մեղավորները կկորչեն, իսկ Տիրոջ թշնամիները իրենց փառքի ու վերելքի ժամին կսպառվեն, ինչպես ծուխն է պակասում» (էջ 82): Տերն օգնում է միշտ, որ ուղղվի մարդու ընթացքը: Սաղմոսասացը հորդորում է բարություն անել, խուսափել չարից: Արդարը չի կարող արհամարհվել: Նրա զավակը չի կարող հաց մուրալ, չէ՞ որ «արդարի միտքը իմաստություն է խորհում, և Տիրոջից է նրա փրկությունը» (ԼԶ, էջ 83, 84):

ԼԹ սաղմոսում հեղինակը ավետում է, որ Տերը լսել է իր աղոթքը և նրան հանել «տառապանքի հողից, կավից և տիղմից» (էջ 90): Ինքը Տիրոջ արդարությունը չի ծածկել իր սրտում և դրանք ավետել է իր ժողովրդին մեծ եկեղեցիներում:

Աղոթողն ինքն իրեն էլ է գնահատում, որովհետև Աստծո «բարի պատգամներն են բխում իր սրտից», և իր «արքայության գավազանը ողորմության գավազան է» (ԽԴ, էջ 102):

Նա համոզում է չվախենալ, երբ մարդը հարստանում է, երբ մեծանում է նրա տան փառքը, որովհետև մեռնելիս հետը ոչինչ չի տանի, և «նրա տան փառքը իր հետ չի քաղվի» (ԽԸ, էջ 100):

Աղոթողը միայն սրտով մաքուր ապրողների անունից չի խոսում. նա ցանկանում է Աստծո օգնությամբ նորոգել այնպիսի ուղիղ հոգի իր ներսում, որ կարողանա անօրեններին էլ սովորեցնել Աստծո ճանապարհներն այնպես, որ ամբարիշտները վերադառնան դեպի Արարիչը, որ իր «լեզուն ցնծա արդարությամբ», չէ՞ որ «Աստծո պատարագը խոնարհ հոգին է: Մաքուր սիրտը և խոնարհ հոգին Աստված չի արհամարհում (Ծ, էջ 116):

ԾԱ սաղմոսում հեղինակը շարունակում է քննել հզորներին, որոնք ածելիի պես սրում են իրենց նենգությունը, սակայն նրանց համար, ովքեր բարությունից ավելի չարություն են սիրում, չկա ոչ մի փրկություն, իսկ Աստծուն հուսացողները նման են «պտղալից ձիթենու» (էջ 117): Եվ «ուրախ կլինի արդարը` տեսնելով հատուցումը» (ԾԷ, էջ 128): Նա համոզված է նաև, որ «բոլոր սրտով ուղիղները» պիտի պարծենան Աստծով (ԿԳ, էջ 140): Աղոթողը չի ծանձրանում գոհության խոսքեր մրմնջալուց. «Սուրբ է քո տաճարը, սքանչելի արդարությամբ» (ԿԴ, էջ141):

ԿԶ սաղմոսում հեղինակը վկայում է, որ Աստված արդարությամբ է դատում անհատներին, ժողովուրդներին և երկրի ազգերին: Արդարություն ակնկալողը երբեմն ապավինում է առատ ողորմությանը և փրկության ճանապարհի ճշմարտությանը, որովհետև չի ուզում, որ նրան «կլանեն ջրի պտույտները և անդունդների խորքերը իրեն չընկղմեն» (ԿԸ, էջ 151):

Աղոթողի սիրտը համբերում է երկար նախատինքների և թշվառության, սակայն ոչ ոք չի տրտմում նրա հետ, նրա վերքերին ցավեր են ավելանում, ուստի հալածվածն իրավունք ունի խնդրելու Բարձրյալից` զայրանալ.

Թող ջնջվեն նրանք քո կյանքի դպրությունից
Եվ չգրվեն քո արդարների հետ (ԿԸ, էջ 153):

Աստծուն հուսացողն այլևս չի ամաչում իր ապրած օրերի համար.

Թեպետ բազում նեղություն և չարչարանքներ
Ցույց տվիր ինձ, դարձյալ մխիթարեցիր ինձ

Եվ երկրի խոր անդունդներից հանեցիր ինձ
(Ղ, էջ 157):

ՂԱ սաղմոսը կարծես հոգու ամենամաքուր ու խոր օվկիանոսից ժայթքած մի զուլալ կոհակ լինի՝ ձոնված արդարությանն ու արարչագործությանը, Աստծո շնորհին ու ողորմությունը ժառանգած Թագավորի Որդուն.

Թող լեռները ժողովրդին խաղաղություն բերեն,
Եվ բլուրներն՝ արդարություն (ՂԱ, էջ 158):

Թագավորի Որդուն սաղմոսասացը մեծարում է այսպիսի տողերով.

Նա իրավունք կտա ժողովրդի աղքատներին
Եվ կպահպանի անտունների որդիներին
Եվ կխոնարհեցնի ամբարտավաններին:
Կապրի ու կմնա արևի հետ, լուսնից առաջ,
Սերնդե-սերունդ:
Պիտի իջնի անձրևի պես գեղմի վրա
Եվ ինչպես ցող երկիրը կցողի:
Նրա օրոք կծագի արդարությունը,
Խաղաղությունը կտիրի մինչև վախճանը լուսնի
(էջ 158):

ՂԴ սաղմոսը գոհության աղոթք է Տիրոջը, որի «ձեռքի բաժակը լի է անապական ջրով» (էջ 167):

Աղոթողն ուզում է, որ այդ անապական ջրից խմեն նաև բոլոր մեղավորները, որովհետև այդպես միայն «կփշրվեն մեղավորների բոլոր եղջյուրները» (ՂԴ, էջ 167,168):

ՁԴ սաղմոսը ներբողում է Արարչի ներողամտությունը.

Ներեցիր ժողովրդիդ անիրավությունը,
Լռեցրիր քո ամբողջ բարկությունը (էջ 191):

Աստծո մեծ սիրո և անոքիչ ներողամտության շնորհիվ՝ «ողորմությունն ու ճշմարտությունը պիտի հանդիպեն, արդարությունն ու խաղաղությունը պիտի համբուրվեն» (ՁԴ, էջ 191): Սաղմոսասացը համոզված է դրանում, որովհետև Աստծո Աթոռը հաստատված է արդարության և իրավունքի վրա (ՁԸ, էջ 199): Աստված բարձր է, զորավոր, դրա համար էլ նա է միակը, որ կարող է դատել երկիրը (ՂԳ, էջ 211): ՂԳ սաղմոսում խոսվում է այն իրավունքի մասին, որը դեռ չի հասել կատարյալին.

Տերն իր ժողովրդին չի՛ մերժի
Եվ չի՛ անտեսի իր ժառանգությունը,
Մինչև որ իրավունքները արդար դառնան,
Եվ բոլոր սրտով ուղիղները ընդունեն այն (էջ 211):

ՂԵ սաղմոսը լի է օրհնաբանությամբ, որովհետև գովերգվում են Արարչի սքանչելի գործերը.

Թող երկինքը ուրախանա, և Երկիրը ցնծա,
Թող զվարճանա ծովն իր լիությամբ,
Թող ցնծան դաշտերը և ամեն ինչ, որ կա նրանցում:
Այնժամ թող ցնծան անտառի բոլոր ծառերը,
Տիրոջ երեսից, որ գալիս է,
Գալիս է դատելու Երկիրը (էջ 216):

ՂԶ սաղմոսում գոհության ձայնն ավելի է զորեղանում, երբ խոսվում է իրավունքի և արդարության վրա հիմնված Աթոռի մասին: Ակնարկ կա այն ժողովուրդների մասին, որոնք տեսել են Աստծո բարձր Աթոռի փառքը.

Թող ամաչեն բոլոր նրանք, ովքեր կուռքերին են
երկրպագում
Եվ ովքեր պարծենում են իրենց պատկերներով
(էջ 217):

Սաղմոսասացը միշտ հիշում է, որ մարդը հողեղեն արարած է.

Մարդու օրերը խոտի են նման.
Ծաղկում են ինչպես վայրի ծաղիկ (ՃԲ, էջ 229):

Հողի գերագույն գտվածքը՝ Աստծո պատկերը կրող մարդ-անհատը ամենաողբերգական պահերին անգամ կարող է մխիթարություն գտնել, որովհետև «Տիրոջ ողորմությունը հավիտյանս հավիտենից իր երկյուղածների վրա է, և նրա արդարությունը՝ որդուց որդի» (ՃԲ, էջ 229):

Աղոթողը հիշում է նաև հայրերի և որդիների մեղքերը, անօրինություն և հանցանք գործածներին և երանի է տալիս նրանց, ովքեր պահում են իրավունքը և ամեն ժամ արդարություն են գործում: Մեղքերի ծովում չընկղմվելու համար պետք է զգոն լինել և չգայթակղվել, իսկ «զգոնության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (ՃԺ, էջ 255): Գոհության աղոթքը շարունակվում է նաև ՃԺԷ սաղմոսում: Հաջորդ սաղմոսում աղոթողը խնդրում է սովորեցնել արդարության ճանապարհները, ուսուցանել արդարությունը (ՃԺԸ, էջ 269): Նա շարունակում է խորհել իր ընտրած ճանապարհի ճշմարտացիության մասին, թեև՝

Մեղքի լարերը պատեցին ինձ,
Բայց քո օրենքները ես չմոռացա (էջ 272):

Արդարության դասերը սովորելուց հետո սաղմոսասացը խնդրում է իրեն իմաստուն դարձնել՝ աստվածային պատգամները սովորելու համար:

Աստծո օգնությամբ նա ատում է չարի բոլոր ճանապարհները, որովհետև՝

Քո խոսքը ճրագն է իմ ոտքերի
Եվ լուսավորում է իմ շավիղները (էջ 276):

Անօրեններին ատեցի և քո օրենքը սիրեցի:
Դու իմ օգնականն ու փրկիչն ես,
Եվ ես քո խոսքին հուսացի:
Հեռացե՛ք ինձնից, չարեր,
Որ ես իմ Աստծու պատվիրանները քննեմ.
Օգնի՛ր ինձ ըստ քո խոսքի և պահպանիր ինձ
Եվ մի՛ ամաչեցնի ինձ իմ հույսի մեջ (ՃԺԸ, էջ 277):

Զորացած օրենքների իմացությամբ և աստվածային պատվիրաններով՝ նա կարողանում է իրավունք և արդարություն գործել, թեև լինում են պահեր, որ թուլանում է.

Ջրի վտակներ իջան իմ աչքերից,
Որովհետև չպահեցին քո օրենքները (էջ 279):

Աղոթողը տառապում է, որովհետև ցանկանալով ցանկանում է, որ իր թշնամիները ևս ընդունեն Աստծո ողորմությունն ու պատվիրանները: ՃԻԴ սաղմոսում Դավիթ մարգարեն խոսում է մոլորյալների մասին և համոզված է, որ Տերն արդեն իր ժողովրդի շուրջն է և չի թողնի «մեղավորների գավազանը արդարների ժառանգության վրա» (էջ 289): Մի այլ սաղմոսում

խոսվում է ամբարտավանների մասին, որոնք՝

Թակարդի լարեր ձգեցին ոտքերիս առջև
Եվ շավղիս շուրջ գայթակղություն դրին
(ճԼԹ, էջ 311):

ճԽ սաղմոսում աղոթքը բարձրանում է անուշահոտ խնկի նման: Աստված է միայն տեսնում «աղքատի դատաստանը և անտունի իրավունքը»: Սաղմոսասացը խնդրում է Տիրոջը՝ «պահապան դնել իր բերանին և ամուր դուռ՝ իր շուրթերին, որ սիրտը չխոտորվի չարության խոսքով» (էջ 313): Հաջորդ սաղմոսում նա նորից է վկայում, որ իրեն հալածողներն ավելի հզոր եղան: Նորից ու կրկին խնդրում է Բարձրյալին՝ իրեն ցույց տալ այն ճանապարհը, որով պիտի գնա.

Հոգիս ինչպես երկրի հող, ծարավի է քեզ …
(ճԽԲ, էջ 316):
Քո արդարությամբ պիտի հանես հոգիս նեղությունից,
Քո ողորմությամբ պիտի կործանես իմ թշնամիներին
(ճԽԲ, էջ 317):

Նա համոզված է, որ «Տերը սիրում է արդարներին, պահպանում է պանդուխտներին, ընդունում է որբերին և այրիներին և կործանում ամբարիշտների ճանապարհները» (ճԽԷ, էջ 323-324):

«Գիրք սաղմոսաց»-ում անընդհատ ղողանջող օրհնության մեղեդին վերջին խոսքերի մեջ կարծես թաթախված է երգեհոնային ջինջ երաժշտությամբ, ուրախությամբ ու ցնծությամբ:

… Ամփոփենք թարգմանչի՝ Ասողիկ եպիսկոպոսի գնահատությամբ. «Սաղմոսները չեն կաղապարվում ժամանակ հասկացության սահմաններում … Աղոթքը չի ընդգրկում տիրույթ և սահման:

Դավթի սաղմոսները դարձնելով ճրագներ՝ առաջ ընթանանք խավարի միջով, որպեսզի հաղթանակած ժառանգենք երանելի և փրկարար Այգաբացը Տիրոջ փրկության … » (էջ 5-6):

---

1 «Գիրք Սաղմոսաց»: Թարգմանությունը գրաբարից Ասողիկ եպիսկոպոսի- Ս. Էջմիածին, 1995, 332 էջ:
Այս գիրքը նվիրվել է Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին, նաև՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց երջանկահիշատակ Հայրապետի հոգելույս հիշատակին:
Գրքի նախաբանում թարգմանիչը՝ Ասողիկ եպիսկոպոսը, մեր ջութակ-այբուբենի ոսկեղենիկ լեզվով բնութագրում է սաղմոսների ոգեղեն էությունը . «Սաղմոսները Տիեզերական պատմության տասնալարյան քնարի այն թրթռուն ու ոգենորող հնչյուններն են, որոնցով աղերսող անձը պատմում է «ի խորոց սրտի» իր հոգու ողբերգությունը» (էջ 4):
«Սաղմոսները հավիտենական մարդու ներքին ապրումների կոհակումներն են ՝ մաքրազարդ և աստղալից երկնքի ներքո, որոնց արարիչն է փրկութեան Տերը՝ Աստված, որն իր «մշտական վայելչությամբ» հոգում է մարդու ընթացքը» (էջ 5):
Սաղմոսասացը ներկայացված է այսպես. «Մեղսալից կյանքը թողած ետևում, ճաշակած կյանքի բոլոր բարիքներն ու դառնությունները, մարդկային փառքի բոլոր աստիճաններով բարձրացած և, ի վերջո, ապաշխարած և մաքրված, Տիրոջ լուսե պատմուճանը ստացած Դավիթ մարգարեի սրտառուչ աղոթքներն են սաղմոսները» (էջ 5):

2 «Դավիթ՝ սիրեցյալ, կրտսերագույնն յորդիս Յեսսէի, ի ցեղեն Յուդայ, ծնեալ ի Բեթլէհէմ 1085-ին: Տէրոջ օծեալը, ընտրեալ Աստուծոյ լինել թագաւոր Իսրայելի: Այս պաշտօնին համար օծուեցավ Սամուելէ մարգարէէն…
Դավիթ յաջողութեան և բացարձակ իշխանութեան ապականիչ ազդեցութենէն բոլորովին զերծ չմնաց: Շատ և սաստիկ փորձութիւններ ունեցավ:
Խոնարհութեամբ յանձն առավ յանդիմանութիւնն ու պատիժը, և խնդրեց ու գտավ շնորհս Աստուծմէ:
Յաճախ նեղութիւնք յորդոր եղան անոր խոնարհիլ և չլինել յանձնապաստան:
Դավիթ ունէր բարձր աստիճանի իմացութիւն և հանճար:
Անոր գլխաւոր յատկութիւնն էր միամիտ և ջերմեռանդ հաւատք:
Հմուտ աշխարհավար, գոռ պատերազմող և քաջ բանաստեղծ էր:
Սաղմոսներն են աստուածազդեցիկ երգեր, որ կը պարունակեն ոչ սակավ մարգարէական պատգամներ» (Բառարան Սուրբ Գրոց. Կոստանդնուպոլիս: Տպագրութիւ Ա. Յակոբ Պօյաճեան, 1881 թ. (էջ 133-134):

3 Այսուհետև «Գիրք սաղմոսաց»-ից մեջբերումները կտրվեն կից փակագծերում՝ սաղմոսի տառանիշ համարով ու էջով կամ միայն էջով:

---


## MYSTERY OF FAIRNESS IN PSALTER

MAGVALA TAROYAN
Philologist

**Summary**

In the article is mentioned God's fairness supplicated the psalmest's concerning sorrows of world life and difficulties. Each prayer gives hope and deep faith to writer of the prayer – because God's power is always with him and he not only asks but also tends to teach and helps those who want to walk with God. Author of psalm the Prophet David thanks to his great intellect created "A World of Poetry" describing people sorrows.

In our times the spiritual values became very weak and it is very difficult to keep all kind and highly developed characteristic levels of person. For this reasons the article has modern breath.



## ТАИНСТВО СПРАВЕДЛИВОСТИ В ПСАЛТЫРЕ

МАГВАЛА ТАРОЯН
Филолог

Резюме

В статье подчеркивается внутренная тревога душевное волнение, мольба моляшегося о справедливости. С каждой молитвой усиливается вера автора Псалтыря, ибо с ним милосердие Бога, но стремится учить и помогать тем, кто хочет идти по земленым тропам, созданным Творцом.

Пророк Давид, автор Псалтыря, благодаря своим глубоким познаниям, смог создать поэтический мир человеческих страданий.

В наше время изменились духовные ценности людей, трудно сохранить человечное в человеке.

В этом смысле статья преобретает современное звучание.

# HOW DO WE WANT TO SEE OUR SCHOOLS TODAY?

*SVETLANA MINASYAN*
*Candidate of Pedagogy*

The development of a democratic society is a lengthy and widely discussed process. This article will attempt to analyze a proposed model of development, the community school. The word 'democracy' comes from the Greek term, 'power of the people'. The democratic principle of community schools emphasizes self-government and the expression of the will of the people, and thus promotes the active involvement of citizens in the socio-political process.

Both society and the state face a common task today to reform schools to fulfill the needs of today's community residents, students, and teachers. To reform schools means to take an active part in the process of running schools, which should be based on democratic principles. The educational process should correspond with the interests of students, teachers, and parents, and all of their capabilities should be taken into consideration. Community residents are informed of laws, leading bodies are appointed by elections, and the voice of minorities are taken into account. In short, these are the foundations of a community school.

Community schools are a socio-pedagogical phenomenon that has various principles and components. The socio-pedagogical phenomenon is a process in which independent mentalities are formed and skills of self-independence are gained, empowering people to make their own choices on developmental strategies. Self-government is considered as a collective evolution: the 'collective' develops skills that enable collaboration with various social groups and help the population to take part in making informed decisions.

Educational goals, organizational structures, contents, and teaching methods, always ultimately reflected a social order of society and were changed depending on its necessities.

In the midst of a socio-economic crisis, not all schools decided to take the risky step of searching for new forms and models for the improvement of the educational system and school as a whole. There are numerous models; all of them are geared toward the democratization of schools in their own ways. The principal approaches of the community school differ from one another, but certain components remain the same.

As for the democratization of the educational process, it depends on the proposed system of management inside and outside the school and it is built on the relationship between students, parents, and teachers, as well as on the "Teacher and Student Councils". During the development of educational methods at the various levels of community schools, we should keep principles of openness, practical direction, and volunteerism.

Volunteerism activities can yield a large economic effect on schools and society. Volunteerism as a process has its principles: to serve without compensation and to support socially significant work and programs that are important for society. The 'socially significant' element in the volunteer initiative bears a practical character that contributes to the enhancement of activeness and commitments of community residents and partners. Volunteer work must be systematic, continual, and effective. Therefore, certain conditions are required. These conditions are established by members of local associations and other interested individuals at the school. Having analyzed all points of view of volunteer association members, volunteers and the Teacher and Student Council discuss the problems, the various opinions, causes and effects, methods, and future events for community schools. They study the social conditions and resources of schools, elaborate on the various community problems, clarify the necessary services and cultural events, and establish the interaction with the mass media.

When we speak about the infrastructure of civil society, we focus on the mechanism of the community school: we consider volunteerism as a potential opportunity to solve social problems and have a positive effect on the economy for state and non-governmental structures and associations.

Volunteers have knowledge and skills that are so lacking during this transitional period in developing countries that suffer from the outflow of educated emigrants. This education factor strongly influences the formation of civil society.

There are a lot of problems and difficulties in our life; however we can overcome them if community residents undertake the improvement of their life together with the efforts local schools. Such "democratic participation" of local communities can provide solutions to their shared local problems and difficulties.

The most important difficulties are the following: the material and social issues of families and schools, the lack of new technologies and state support program, the passivity of local self government bodies in providing material and technical support, and the lack of professionals who specialize in the management of community schools. In addition, the transition to self-financing complicates the organizing work of schools and detracts from the schools' image. The following question arises: How to make schools viable? Distrust is felt on the side of the population and partners. An imperfect legislative base, conservatism, the lack of time, and low salaries all influence the educational process and the formation of civic society. Thus we can enumerate the whole range of difficulties, which we must overcome. But how can we do it? Step by step, we must take these difficulties into consideration while drawing up a plans, attracting sponsors, international funds, and state programs into a social partnership.

What does 'partnership' mean? It means the establishment and development of a mutually beneficial relationship between the school, teachers, students, community residents, and sponsors for a joint resolution of shared problems. The establishment of such interaction is necessary for all sides. These sides should understand the situation very well, should be informed, and clearly know its benefit that it generates for society in order to promote active and energetic improvements to social and educational structures.

When work is well organized and the schools are well managed, "trusteeships" between schools, parents, students, and volunteers can become a source for resolving significant issues and play a significant role for improving important socio-educational issues.

Let's give some examples of community schools in Europe and in CIS countries: In England, school councils are leading bodies; they make decisions, develop school rules, manage a school budget, and report to parents. School councils consist of community residents, parents, students, and private citizens who become authorized representatives. In Russia, school councils are legal entities. They manage and run a school where representatives of various NGOs and state establishments can assemble.

In Poland, schools have councils where groups of people choose their representatives — of teachers, parents, students, community residents, and establishments — and enjoy equal membership rights. Councils devise school rules and manage financial and educational issues. The decisions of school councils possess legal authority and are not subject to challenges. In Denmark, school councils consist of community members, councils of the elderly, teachers, and students. They define the number of students in each class, the number of non-mandatory subjects, the vacation schedule, and rules of behavior. They resolve collaborative issues among schools and social problems.

